

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼ ՍԱՐԱՆ**

**ՍԱՐՈՅԱՆ ՊԱՐԳԵՎ ԿՈԼՈՂՅԱՅԻ**

**ՎԱՐՉԱՐԱՐՈՒ ԹՅԱՄԲ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒ ՑՈՒՄԸ**

**Ա Տ Ե Ն Ա Խ Ո Ս Ո Լ Թ Յ Ո Լ Ն**

ԺԲ.00.02 – «Հանրային իրավունք՝ սահմանադրական, վարչական, ֆինանսական, մոլեկուլային, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտու թյամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի աստիճանի հայցման

Գիտական ղեկավար՝ իրավ. գիտ. թեկնածու ,  
դոցենտ Ռ. Հ. Եղյան

ԵՐԵՎԱՆ 2016

**ԲՈՎԱՆԴԱԿՈԼ ԹՅՈԼ Ն**

**ՆԵՐԱՃՈԼ ԹՅՈԼ Ն .....4**

**ԳԼՈՒԽ1.**

**ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ ՊՍՏՃԱՌԿԱՆՑ ՎՆԱՍԻ ՀԱՄԱՐ ՊՍՏԱՍԻՄԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԻՄՔԵՐՆ ՈՒ ՊՅՅՄԱՆՆԵՐԸ .....13**

§1. Վարչարարողության ամբ պատճառված վնասի համար պատասխանատվության հիմքերը .....13

§2. Վարչարարողության ամբ պատճառված վնասի համար պատասխանատվության առաջացման հիմքը և պայմանները ..... 29

**ԳԼՈՒԽ2.**

**ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԻՐԱՎԱԶՍՓՈՒԹՅԱՆ ԴՍՏԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ՎԻՃԱՐԿՈՒՄԸ ԵՎ ԴՐԱՆՑՈՎ ՊՍՏՃԱՌԿԱՆՑ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՅԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....48**

§1. Նորմատիվ իրավական ակտի իրավաչափության վիճարկման գործով ՀՀ վարչական դատարանի դատական ակտի իրավական ուժը .....48

§2. Նորմատիվ իրավական ակտի իրավաչափության վիճարկման գործով ՀՀ վարչական դատարանի դատական ակտի նշանակությունը վարչարարողության ամբ պատճառված վնասի հատուցման համար .....58

§3. Օրենքով նախատեսված դեպքերում նորմատիվ իրավական ակտի չընդունելու անգործության, նորմատիվ իրավական ակտի նախագծի, ինչպես նաև բարենպաստ վարչական ակտի վիճարկման հնարավորությունը ՀՀ օրենսդրության ամբ .....75

**ԳԼՈՒԽ3.**

**ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ ՊՍՏՃԱՌԿԱՆՑ ՎՆԱՍԻ ՀԱՄԱՐ ՊՍՏԱՍԻՄԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՅՄԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ .....87**

§1. Վարչական ակտի վարչական բողոքարկման և դատական կարգով վիճարկման ժամկետներին վերանայման չափանիշները .....87

§2. Վարչարարողության ամբ պատճառված վնասի հատուցման պահանջի մասին հայցի հարուցումը, վնասի հատուցում տրամադրելու մասին

վարչական ակտի եվ դատարանի վճռի  
կատարումը .....97

§3. Վնասի հատուցումը վնաս պատճառած վարչարարությունն  
իրականացրած վարչական մարմնի իրավահաջորդության դեպքում  
.....112

§4. Վարչական ակտի գոյության նկատմամբ վստահությանը  
պատճառված վնասի հատուցումը  
.....123

§5. Հետադարձ պահանջի ներկայացումը վնաս պատճառած  
վարչարարությունն իրականացրած պաշտոնատար անձի դեմ  
.....134

**ԵՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ** .....142

**ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ, ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ  
ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿ** .....148

**Ն Ե Ր Ա Ն ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

**Ասե՛նախոսու թյան թե՛մայ ի արդիականու թյու լը: ԶԶ**

սահմանադրու թյան<sup>1</sup> 3-րդ հոդվածը հռչակում է, որ Զայաստանի Զանրապետու թյու լում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվու թյու լնն իր իրավու լնքների և ազատու թյու լնների անքակտելի հիմքն է: ԶԶ սահմանադրու թյան լույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ մարդու և քաղաքացու հիմնական իրավու լնքների և ազատու թյու լնների հարգումն ու պաշտպանու թյու լընը հանրային իշխանու թյան պարտականու թյու լններն են:

Սահմանադրական հիշյալ նորմը պետու թյան առաջնահերթ պարտականու թյու լններից մեկն է համարում մարդու հիմնական իրավու լնքների և ազատու թյու լնների պաշտպանու թյու լընը: Նշված խնդրի լուծումն առավելապես կարևորվում է այն դեպքերում, երբ մարդու իրավու լնքները և ազատու թյու լնները խախտել են պետական մարմինների և (կամ) դրանց պաշտոնատար անձանց անօրինական գործողու թյու լնների կամ անգործու թյան հետևանքով: Զայաստանի Զանրապետու թյան՝ որպես իրավական պետու թյան գլխավոր խնդիրներից մեկը պետք է լինի հենց պետական մարմինների գործողու թյու լնների արդյու լնքում անձանց խախտած իրավու լնքների վերականգնումը: Դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողու թյու լնների կամ անգործու թյան հետևանքով վնաս կրած անձանց՝ վնասի հատուցում ստանալու իրավու լնքն ամրագրվեց սահմանադրական բարեփոխու մների արդյու լնքում: Պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողու թյու լններով կամ անգործու թյամբ պառճառված վնասի հատուցում ստանալու իրավու լնքի իրականացումը երաշխավորող լիարժեք օրենսդրական կարգավորու մների առկայու թյան անհրաժեշտու թյու լընը դարձել է հրատապ խնդիր: Ասվածն ամբողջական է դառնում այն համատեքստում, որ պետական մարմինների կողմից իրենց վերապահված այս կամ այն լիազորու թյան իրականացումն արդեն իսկ կարող է անձի համար առաջացնել որոշակի անբարենպաստ հետևանքներ, սակայն դրանց

<sup>1</sup> Տե՛ս ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118:

առաջացման վտանգը չի կարող հիմք լինել տվյալ լիազորության իրականացումից հրաժարվելու համար: Վնասի պատճառման հնարավորությունը չի կարող բացառել վարչարարության իրականացումը, ուստի վարչարարությամբ պատճառված վնասի հատուցում ստանալու իրավունքի իրական պաշտպանությունը պահանջում է օրենսդրական գործուն կառուցակարգերի ամրագրում:

Նշված հարցի կապակցությամբ ՀՀ գործող օրենսդրության ուսումնասիրությունը վկայում է, որ գործող կարգավորումները միանշանակ չեն: Մասնավորապես՝ հարցը գուճահեռ կարգավորման է ենթարկվում ՀՀ քաղաքացիական օրենսգրքով<sup>1</sup> և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով<sup>2</sup>: Դրա արդյունքում առաջանում է մի իրավիճակ, երբ հստակ չէ պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց գործողություններով կամ անգործությամբ պատճառված վնասի հատուցման պահանջների առարկայական ընդդատություն հարցը: Որպես դրա տրամաբանական ու անխուսափելի հետևանք՝ հակասական է նաև ՀՀ-ում ձևավորված դատական պրակտիկան, քանի որ ընդհանուր իրավասության դատարանները երբեմն քննում և լուծում են այնպիսի վնասի հատուցման վերաբերյալ գործեր, որի առաջացման հիմքը գտնվում է հանրային իրավունքի շրջանակներում, և, ըստ այդմ, առկա է լինում հանրային իրավահարաբերություններին բխող վեճ: Մինչդեռ ՀՀ վճռաբեկ դատարանն իր միջարքորոշումներով արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավահարաբերությունների նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսդրությունը կիրառելի չէ: Այս համատեքստում անհրաժեշտ է հստակ տարբերակում կատարել ընդհանուր իրավասության դատարանի և վարչական դատարանի իրավասության միջև՝ սահմանելով այն չափանիշները, որոնցով պետք է յուրաքանչյուր կոնկրետ դեպքում որոշվի առարկայական ընդդատությունը:

<sup>1</sup> Ընդունվել է 05.05.1998թ., ուժի մեջ է մտել 01.01.1999թ.: Տե՛ս ՀՀՊՏ 1998.08.10/17(50)

<sup>2</sup> Ընդունվել է 18.02.2004թ., ուժի մեջ է մտել 31.12.2004թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2004.03.31/18(317): Այսուհետ՝ նաև Օրենք:

Առկա կարգավորումները կարելի է թերի համարել նաև այն առումով, որ չեն սահմանում վնասի հատուցման լիարժեք ընթացակարգ. վնասի հատուցում տրամադրելու ընթացակարգը սահմանող իրավանորմերով տրված կարգավորումն անարդյունավետ է այն առումով, որ առանձին դեպքերում կարող է վնաս պատճառած վարչական մարմինն զրկել սեփական գործողություններով վնասի հատուցում տրամադրելուց: Խնդիրը վերաբերում է նրան, որ վիճահարույց է վարչական մարմինների կողմից վարչարարության հետևանքների վերացման, վնասի հատուցման վերաբերյալ վարչական ակտերի փաստացի կատարման և մի շարք այլ հարցերի կանոնակարգումը:

Ատենախոսության մեջ բարձրացված այս և բազմաթիվ այլ հարցերի արդյունավետ լուծմանն ուղղված առաջարկների ներկայացման անհրաժեշտությունը պայմանավորում է սույն հետազոտության արդիականությունը:

**Չետազոտության թեմայի մշակվածության աստիճանը:**

Չանրային իշխանության իրականացմամբ պատճառված վնասի հատուցմանն առնչվող խնդիրներն ուսումնասիրման են ենթարկվել տարբեր հեղինակների կողմից: Այս հարցերի վերաբերյալ հրատարակված աշխատություններում որոշակի թիվ են կազմում նաև ատենախոսությունները:

Պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ պատճառված վնասի համար պատասխանատվության հետ կապված հարցերի հետազոտմանն ուղղված աշխատությունների մեջ կարելի է հիշատակել Գ. Դանիելյանի, Ն. Այվազյանի, Ռ. Եղյանի, Ս. Ս. Ալեքսեևի, Կ. Բ. Յառոշենկոյի, Ա. Ա. Պոդոպրիգոռայի, Ա. Լ. Մակովսկու, Ե. Պ. Չեռնովոլի և այլ ոց աշխատությունները<sup>1</sup>:

Սակայն հարկ է նկատել, որ, չնայած ռուսական աղբյուրներում խնդրո առարկա թեմայի տեսական մշակումների, հայրենական իրավաբանական գրականության մեջ բացակայում է վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման ինստիտուտը համակողմանի ուսումնասիրման ենթարկված աշխատությունները:

<sup>1</sup> Այս մասին ավելի մանրամասն տե՛ս օգտագործված գրականության ցանկում:

**Յեռագոտու թյան օբյեկտը:** Յեռագոտու թյան օբյեկտ են հանդիսանում վարչարարության պատճառով վնասի հատուցում ստանալուց բխող նյութաիրավական և դատավարական հարաբերությունները:

**Յեռագոտու թյան առարկան:** Յեռագոտու թյան առարկա են հանդիսանում վարչարարության պատճառով վնասի հատուցում ստանալու կարգը սահմանող նյութաիրավական և դատավարական նորմերը, ինչպես նաև դրանց կիրառման պրակտիկան:

**Յեռագոտու թյան նպատակը և խնդիրները:** Յեռագոտու թյան նպատակը վարչարարության պատճառով վնասի հատուցումը կարգավորող իրավանորմերի և պրակտիկայի կատարելագործման նպատակով համապատասխան առաջարկներ մշակելն է: Այդ նպատակի իրագործումը պահանջում է հետևյալ խնդիրների լուծումը.

1) հստակեցնել պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց կողմից պատճառով վնասի հատուցման նորմատիվ հիմքը,

2. սահմանել վարչարարության պատճառով վնասի համար պատասխանատվության առաջացման փաստական հիմքն ու պայմանները,

3. բացահայտել նորմատիվ իրավական ակտերի ընդունմամբ եզրափակվող գործունեության՝ որպես վարչարարության իրականացմամբ հասցված վնասի հատուցման առանձնահատկությունները,

4. առանձնացնել վարչարարության պատճառով վնասի հատուցման ընթացակարգի նյութաիրավական և դատավարական կողմերին առնչվող տեսական և գործնական բնույթի հիմնախնդիրները և առաջարկել դրանց լուծման տարբերակներ:

**Յեռագոտու թյան տեսական հիմքը:** Յեռագոտու թյան համար որպես տեսական հիմք են ընդունվել վարչարարության պատճառով վնասի հատուցմանն առնչվող առանձին հարցերի վերաբերող հայրենական և արտասահմանյան տարբեր հեղինակների աշխատություններ: Այդ հեղինակների թվում կարելի է նշել Գ. Դանիելյանին, Ն. Այվազյանին, Ռ. Եղյանին, Գ. Մուղնեցյանին, Տ.

Բարսեղյանին, Ն. Ռ. Սկոբիչկինային, Օ. Վ. Միխայլենկոյին, Ա. Լ. Բուրկովին, Ս. Վ. Նիկիտինին և այլ հեղինակների<sup>1</sup>:

**Չետագոտության իրավական և փորձառական հիմքերը:**

Չետագոտության ընթացքում ուսումնասիրման են ենթարկվել և վերլուծվել ՀՀ և արտասահմանյան երկրների՝ պետական մարմինների և դրանց պաշտոնատար անձանց կողմից պատճառված վնասի հատուցման հետ կապված հարաբերության նկատմամբ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը: Բացի այդ, հետազոտվել են թեմային առնչվող Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումները, ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումները, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի, վերաքննիչ դատարանի և առաջին ատյանի դատարանի դատական ակտերը:

**Չետագոտության մեթոդաբանական հիմքը:**

Չետագոտության ընթացքում կիրառվել են ինչպես ընդհանուր գիտական՝ ինդուկցիայի, դեդուկցիայի, անալիզի, սինթեզի և այլն, այնպես էլ մասնավոր գիտական՝ իրավահամեմատական, համակարգակառուցվածքային և այլ մեթոդներ:

**Չետագոտության գիտական նորույթը:**

Ատենախոսության գիտական նորույթն արտացոլված է պաշտպանության ներկայացվող դրույթներում և ատենախոսության եզրակացության մեջ հեղինակի կողմից կատարված տեսական ընդհանրացումներում և գործնական բնույթի առաջարկության նկատմամբ:

**Պաշտպանության ներկայացվող դրույթներն են՝**

1. Ներկայումս գործող իրավակարգավորման համաձայն՝ նորմատիվ ակտն անվավեր ճանաչելու մասին ՀՀ վարչական դատարանի որոշումն այն դեպքերում, երբ դրան հետադարձ ուժ չի տրվում, հիմք է նորմատիվ ակտի իրավաչափության ստուգման հարցով դիմած և այն անձանց վերաբերյալ ընդունված միայն անբողոքարկելի չդարձած վարչական ակտերի անվավեր ճանաչման համար, ովքեր վարչական դատարանի որոշման հրապարակման օրվա դրությամբ պահպանում են նույն հարցով դատարան դիմելու իրավունքը: Մենք գտնում ենք, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված այդ իրավակարգավորումը վերանայման

<sup>1</sup> Այս մասին ավելի մանրամասն տե՛ս օգտագործված գրականության ցանկում:



կարիք ունի, քանի որ այն նորմատիվ ակտի իրավաչափության վիճարկման գործով դատական ակտի ազդեցությունը սահմանափակում է միայն անբողոքարկելի չդարձած վարչական ակտերի շրջանակով՝ անտեսելով օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերը: Ուստի աշխատանքի մեջ փորձ է արվել հիմնավորել ու, որ բեկանման ենթակա պետք է լինեն նաև նորմատիվ ակտի՝ անվավեր ճանաչված դրույթի վրա հիմնված և վարչական դատարանի դատական ակտի հրապարակման պահի դրույթամբ օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերը:

2. Վարչական մարմինների կողմից նորմատիվ իրավական ակտի վիճարկվող դրույթի շարունակական ոչ իրավաչափ կիրառմամբ անձանց խախտված իրավունքների պաշտպանությունը գործունե դարձնելու անհրաժեշտությունից ելնելով՝ աշխատանքի մեջ առաջարկվել է վարչական դատարանին վիճարկվող նորմատիվ ակտի բովանդակությունը բացահայտել ու լիազորություն վերապահել: Որպես նշված առաջարկության շարունակություն՝ հիմնավորվել է այն հանգամանքը, որ այդ լիազորության կիրառմամբ ընդունված վարչական դատարանի որոշումը հիմք կդառնա ինչպես վիճարկվող դրույթի սխալ կիրառմամբ ընդունված վարչական ակտերի վերանայման, այնպես էլ այդ դրույթի հետագա իրավաչափ կիրառման համար:

3. Անձինք կարող են վնաս կրել ոչ միայն նորմատիվ ակտի դրույթի կիրառման, այլև իրենց իրավաչափ գործողություններով դրա իրացման արդյունքում: ՀՀ օրենսդրությունը չի պարունակում դրույթ, որը հնարավորություն կտար նորմատիվ ակտն անվավեր ճանաչելու մասին որոշմանը հետադարձ ուժ տրվելու դեպքում ստանալու նորմատիվ ակտի անմիջական իրացման հետևանքով կրած վնասի հատուցում: Վարչական դատարանի որոշմանը հետադարձ ուժ տալը հնարավորություն է տալիս ստանալու միայն նորմատիվ ակտի կիրառմամբ պատճառված վնասի հատուցում, իսկ անվավեր ճանաչված նորմատիվ ակտի իրացմամբ պատճառված վնասի հատուցմանը ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը չի անդրադարձնում: Անհրաժեշտ համարելով դատավարական օրենքով նշված հարցի սպառնիչ կարգավորումը՝ ատենախոսության մեջ առաջ է քաշվել այն գաղափարը, որ այդպիսի

դեպքերում անձի իրավունքների պաշտպանության եղանակը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 111-րդ հոդվածի հիման վրա վարչական մարմնի տիրապետման անցած գույքը վերադարձնելու պահանջ ներկայացնելն է՝ որպես անհիմն հարստացում:

4. Հաշվի առնելով օրենսդրական ակտով ուղղակիորեն նախատեսված հարցի կարգավորման առնչությամբ ենթաօրենսդրական ակտ չընդունելու անգործության արդյունքում անձանց խախտված իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունը՝ աշխատանքի մեջ հիմնավորվել է, որ նպատակահարմար է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով որպես գործողության կատարման հայցի առանձին առարկա սահմանել նորմատիվ իրավական ակտ ընդունելու և վարչական մարմնին պարտավորեցնելը, իսկ որպես ճանաչման հայցի առանձին առարկա՝ նորմատիվ իրավական ակտ չընդունելու ձևով դրսևորվող անգործությունը՝ ոչ իրավաչափ ճանաչելը:

5. Ատենախոսության մեջ հիմնավորվել է այն գաղափարը, որ վարչական մարմնի կողմից վնասի հատուցման դիմումը սահմանված ժամկետում չքննարկվելը պետք է մեկնաբանվի որպես վերջինիս կողմից վնասի հատուցումից հրաժարում: Նման պայմաններում, որպեսզի վնասի հատուցման վերաբերյալ վարչական վարույթի հարուցումը և իրականացումը չհամարվեն վնասի հատուցման համար անհրաժեշտ պայմաններ, և անձի խախտված իրավունքների վերականգնման գործընթացը չդառնա անարդյունավետ, առաջարկվել է օրենսդրության մեջ համապատասխան փոփոխություն կատարել և անձին դատական կարգով անմիջականորեն վնասի հատուցում պահանջելու հնարավորություն վերապահել նաև վարչական մարմնի կողմից վնասի հատուցման վերաբերյալ դիմումը չքննարկվելու դեպքում:

6. ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ, թե ինչպես պետք է կատարվի վնասի հատուցում տրամադրելու մասին վարչական ակտը: Ներկայումս սահմանված կարգը վերաբերում է միան բյուջեից գումարի բռնագանձում նախատեսող դատական ակտերի կատարմանը, իսկ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցումն իրականացվում է վարչական ակտով, որի կատարման վերաբերյալ

կարգավորում նախատեսված չէ: Այդ կապակցությամբ առաջարկվել է վարչական ակտի հիման վրա վնասի հատուցում տրամադրել ու լիազորությունը վերապահել ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ նաև հաշվի առնելով այն, որ պետական բյուջեից անմիջական բռնագանձում նախատեսող դատական ակտերի կատարման կարգը խիստ անարդյունավետ է, և նպատակահարմար չէ այն կիրառել վնասի հատուցման վերաբերյալ վարչական ակտերի նկատմամբ:

7. Քանի որ վարչարարության հետևանքների վերացումը զուտ միայն վարչական ակտի ընդունման միջոցով շատ հաճախ կարող է անհնարին լինել և երբեմն վարչական մարմնից պահանջում է տարաբնույթ գործողությունների կատարում, աշխատանքի մեջ հիմնավորվել է վարչարարության հետևանքների վերացումը գործնականում հնարավոր դարձնել ուն ուղղված օրենսդրական փոփոխություն կատարելու անհրաժեշտությունը, և այդ կապակցությամբ ներկայացվել է համապատասխան առաջարկություն:

8. Որոշակի դեպքերում անձի համար բարենպաստ վարչական ակտով վերջինիս իրավունքների խախտման հնարավորությունը և, հետևաբար, բարենպաստ վարչական ակտերով խախտված իրավունքների վերականգնման անհրաժեշտությունը հաշվի առնելով՝ աշխատանքի մեջ փորձ է կատարվել հիմնավորելու առանձին դեպքերում բարենպաստ վարչական ակտի վիճարկման հնարավորության նախատեսումը:

**Յետազոտության տեսական և գործնական նշանակությունը:**

Յետազոտության նշանակությունը, առաջին հերթին, դրսևորվում է նրանում, որ ատենախոսությունը վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման ինստիտուտը կազմող իրավական նորմերի ամբողջական ուսումնասիրմանն ուղղված աշխատանք է, որում փորձ է արված վեր հանելու նաև գործնական բնույթի ինդիքներ և դրանց հաղթահարման նպատակով ներկայացնելու առաջարկներ: Պայմանավորված դրանով՝ ատենախոսությունն ունի գործնական նշանակություն վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման հետ կապված հարաբերությունները կարգավորող իրավանորմերի կիրառման պրակտիկայի կատարելագործման առումով, ինչպես նաև այն համատեքստում, որ դրանում հնչեցված

առաջարկները կարող են հաշվի առնվել օրենսդրական փոփոխություններ կատարելիս:

Բացի այդ, անենախոսությունը ընդգրկում է տեսական բնույթի եզրահանգումներ, որոնք կարող են օգտագործվել այնպիսի դասընթացներում, որոնց դասավանդման առարկան առնչվում է վարչարարությանն ընդհանրապես և վարչարարության մեջ պատճառված վնասի հատուցմանը՝ մասնավորապես:

**Չեղարկության արդյունքների փորձարկումը:**

Անենախոսությունը պատրաստվել է ԵՊՅ սահմանադրական իրավունքի ամբիոնում: Չեղիսակը անենախոսության հիմնական մասերի շարադրման ընթացքում մշտապես կապ է պահպանել իր գիտական ղեկավարի, ինչպես նաև ամբիոնի անդամների հետ, և տարբեր առանցքային դրույթներ անենախոսության մեջ ամրագրվել են նախապես համաձայնեցնելու ց հետո:

Անենախոսության էությունն արտացոլող գաղափարների շուրջ հեղինակը հանդես է եկել գիտական ելույթներով, և դրանք արտացոլվել են տպագրված գիտական հոդվածներում, որոնք լույս են տեսել տարբեր ամսագրերում:

**Անենախոսության կառուցվածքը:**

Անենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, դրանցում ընդգրկված 10 պարագրաֆներից, եզրակացությունից և օգտագործված իրավական ակտերի, գրականության և պրակտիկայի նյութերի ցանկից:

**ԳԼՈՒԽ 1. ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՐ ՊԱՏՃԱՌԿԱՅ ՎՆԱՍԻ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՌԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՓԱՏՏԱԿԱՆ ՀԻՄՔԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

**§1. ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՐ ՊԱՏՃԱՌԿԱՅ ՎՆԱՍԻ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՌԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ**

Իրավական պետության մեջ մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտ կողմերից մեկը դրանց պաշտպանությունն է պետական մարմինների անօրինական գործողություններից: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ իշխանական գործողությունների կատարումն արդեն իսկ վնասի պատճառման վտանգ է պարունակում, սակայն նույնիսկ վնասի առաջացման վտանգի առկայությունը չի կարող հաշվի առնվել, առավել ևս արգելք հանդիսանալ պետական մարմնի կողմից իր լիազորությունների իրականացման համար: Այդ է պատճառը, որ չափազանց կարևոր նշանակություն է ձեռք բերում պետական մարմինների գործողություններով (այդ թվում՝ վարչարարությամբ) պատճառված վնասի հատուցմանն առնչվող հարցերի պատշաճ իրավական կարգավորումը:

Հայաստանի Հանրապետությունում պետական մարմինների գործողություններով պատճառված վնասի հատուցման իրավական կարգավորումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով: Պետական մարմինների գործողությունների հետևանքով հասցված վնասի հատուցում ստանալու իրավունքի միաժամանակյա ամրագրումն օրենսդրության տարբեր (մասնավոր-իրավական և հանրային-իրավական) ճյուղերին պատկանող օրենսդրական ակտերում որոշակի տարըմբռնում է

առաջացնում վարչարարությանը պատճառված վնասի հատուցման  
ինստիտուտի իրավական բնույթի վերաբերյալ :

Իրավաբանական գրականության մեջ այս հարցի շուրջ  
գոյություն ունեցող տեսակետները բաժանվում են երեք հիմնական  
խմբի: Առաջին խումբը հեղինակները վարչարարությանը պատճառված  
վնասի հատուցումը դիտում են որպես քաղաքացիաիրավական  
պատասխանատվության միջոց<sup>1</sup>, հեղինակների երկրորդ խումբը այն  
համարում է միջոցառումներ իրավական ինստիտուտ<sup>2</sup>, իսկ երրորդ  
խումբը կազմող մոտեցման կողմնակիցների դիրքորոշման  
համաձայն՝ վարչարարությանը պատճառված վնասի հատուցումը պետք  
է իրականացվի հանրային-իրավական հիմքերից ելնելով<sup>3</sup>: Երրորդ  
տեսության կողմնակիցներից է, օրինակ, Ա. Ա. Պոդոպրիգորան, որը  
վարչարարությանը պատճառված վնասի հատուցումը համարում է ոչ  
թե իրավաբանական պատասխանատվության, այլ իրավունքի  
պաշտպանության միջոց:

Վարչարարությանը պատճառված վնասի հատուցման հարցերը  
քաղաքացիական իրավունքի կարգավորման առարկայից դուրս է  
դիտում նաև Գ. Ս. Մուդնեցյանը՝ այդ դիրքորոշումը հիմնավորելով  
վնասը վարչական մարմինների հանրային իշխանական  
գործառնության իրականացմամբ պատճառված լինելու  
հանգամանքով<sup>4</sup>: Մեկ այլ հեղինակային կոլեկտիվ պետական  
մարմինների գործունեությանը պատճառված վնասի հատուցման  
առնչվող նորմերի զետեղումը քաղաքացիական օրենսդրության մեջ  
բացատրում է հետևյալ կերպ. «... չնայած նրան, որ ՀՀ քաղաքացիական  
օրենսգրքում տեղ են գտել օտար, այդ օրենսգրքին ոչ հատուկ  
առանձին նորմեր, մասնավորապես՝ պետական մարմինների  
գործողությունների արդյունքում քաղաքացիներին և

<sup>1</sup> Տե՛ս, օրինակ, Черновол Е. П. Возмещение вреда, причиненного незаконными действиями государственных и общественных организаций, а также должностных лиц, Дис. ... канд. Юрид. Наук.-М., 1983, էջ 69:

<sup>2</sup> Տե՛ս, օրինակ, Элькин П. С. Толкование и применение норм уголовно-процессуального права. – М., 1967, էջ 28:

<sup>3</sup> Տե՛ս Безлепкин Б. Т. Возмещение ущерба, причиненного гражданину незаконными действиями органов дознания, предварительного следствия, прокуратуры и суда. М., 1985, էջեր 35-38:

<sup>4</sup> Տե՛ս ՀՀ վարչական իրավունք: Ուսումնական ձեռնարկ /ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Դանիելյանի. – Երևանի պետ. համալս. – ԵՊՀ հրատ., 2012, էջ 443:

իրավաբանական անձանց պատճառված վնասի հատուցման վերաբերյալ, պարզ է, որ դա եղել է գուտապրագմատիկ լուծում...»<sup>1</sup>:

Վարչարարության մեջ պատճառված վնասի հատուցման նկատմամբ 33 քաղաքացիական օրենսգրքի նորմերի կիրառման հնարավորության հարցին մենք կանդորադառնանք աշխատանքի սույն պարագրաֆի հետագա շարադրանքում և 2-րդ պարագրաֆում: Մինչ այդ, հաշվի առնելով վարչարարության մեջ պատճառված վնասի հատուցման ինստիտուտի իրավական բնույթի վերաբերյալ հակասական տեսակետների առկայությունը, վարչարարության մեջ պատճառված վնասի հատուցման իրավական հիմքերը բացահայտելու նպատակով անհրաժեշտություն է առաջանում պարզաբանելու այն հարցը, թե արդյոք վարչարարության մեջ պատճառված վնասի հատուցումը կարող է համարվել քաղաքացիաիրավական պատասխանատվություն, թե՛ ոչ: Քաղաքացիաիրավական պատասխանատվությունը բնութագրվում է նրանով, որ իրավախախտի համար առաջացնում է լրացուցիչ անշահավետ հետևանքներ, որոնք գոյություն ունենում են երկու կողմից իրավախախտի պահը: Քաղաքացիաիրավական պատասխանատվության միջոց համարվող սանկցիայի կիրառումն օժտված է իրավախախտի համար դրամական գումարի կորուստ առաջացնելու հատկանիշով: Այս տեսանկյունից ակնհայտ է, որ քաղաքացիաիրավական հարաբերություններից բխող վնասի հատուցումը, որը չի առաջացել վարչական մարմինների կողմից իրենց վրա դրված պետախախտական լիազորությունների իրականացման արդյունքում, քաղաքացիաիրավական պատասխանատվության միջոց է: Սակայն քաղաքացիաիրավական դատում պատճառված վնասի հատուցումն իր առանձնահատկություններով չի կարող նույնացվել վարչարարության մեջ պատճառված վնասի հատուցմանը: Որպես քաղաքացիաիրավական պատասխանատվության միջոց՝ վնասների հատուցումն իրագործում է նախական խիչ, դատարարական, պատժիչ և փոխհատուցման գործառնություններ:

Քաղաքացիաիրավական պատասխանատվության նախական խիչ գործառնություն էություն ունի այն է, որ անշահավետ գույքային հետևանքների առաջացման սպառնալիքով ապահովվում է անձի

<sup>1</sup> Տե՛ս Հարցեր և պատասխաններ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի վերաբերյալ (Երկրորդ լրամշակված հրատարակություն), Եր. 2007, էջեր 177-178:

իրավաչ ափ վարքագիծը: Այլ կերպ ասած՝ հակաիրավական վարքագծի հետևանքով հնարավոր վնասների հատուցման պարտականությունն առաջանալու սպառնալիքը կանխում է անձի կողմից հակաիրավական վարքագծի դրսևորումը՝ դրանով իրականացնելով նախական խիչ գործառույթ: Վարչարարության իրականացման պարագայում վնասների առաջացման սպառնալիքը չի կարող ունենալ նախական խիչ նշանակություն, քանի որ վարչարարության իրականացման արդյունքում անձին վնասի պատճառումը դեռևս չի նշանակում, որ վարչական մարմինը վարչարարությունն իրականացնելիս գործել է ոչ իրավաչ ափ: Ավելին, նույնիսկ այն դեպքերում, երբ վարչական մարմինն նախապես հայտնի է վարչարարության արդյունքում վնաս պատճառելու անխուսափելիությունը, ապա այդ հանգամանքը վերջինիս համար չի կարող իր լիազորությունների չիրականացման հիմք հանդիսանալ: Յետևաբար, ի տարբերություն քաղաքացիաիրավական հարաբերություններում պատճառված վնասի, որի հատուցման սպառնալիքն ունի նախական խիչ նշանակություն, վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման պարագայում նախական խիչ գործառույթի մասին չի կարող խոսք լինել: Այստեղ վարչական մարմինն առաջնորդվում է իր վրա դրված լիազորությունների իրականացման անհրաժեշտությունից ելնելով, և հնարավոր վնասների առաջացումը չի կարող կանխել վերջինիս կողմից վարչարարության իրականացումը, քանի որ, ինչպես նշվեց, վարչարարության իրավաչ ափության հարցը կախված չէ վնաս պատճառելու հանգամանքից:

Նախական խիչ գործառույթին իր բովանդակությամբ բավականին մոտ է վնասների հատուցման՝ որպես քաղաքացիաիրավական պատասխանատվության միջոցի դաստիարակչական գործառույթը: Գույքային կորուստների առաջացմամբ պատասխանատվության միջոցների կիրառումը հարկադրում է անձին զերծ մնալ հակաիրավական վարքագիծ դրսևորելուց: Այս համատեքստում կարելի է նշել, որ քաղաքացիաիրավական պատասխանատվության միջոցների կիրառումը հոգեբանական բնույթ է կրում այն առումով, որ դաստիարակչական գործառույթի իրազորումը կախված է ոչ միայն և ոչ այնքան ուղղակի ներգործության միջոցների կիրառումից, որքան իրավախախտում կատարած անձի կամքից:



Այս պիսոյով, քաղաքացիաիրավական սանկցիաների դաստիարակչական գործառնությունների մաստղը անձի մոտ հետագայում իրավաչափ գործելու կամքի ձևավորումն է: Նման պայմաններում, բնականաբար, վարչարարությունը պատճառված վնասի հատուցումը չի կարող դիտվել որպես պետության՝ հանձին իրավասու պետական մարմնի, նկատմամբ կիրառվող պատասխանատվության միջոց: Պատասխանատվության միջոցների կիրառմանը բնութագրական դաստիարակչական գործառնությունը տվյալ դեպքում առկա լինել չի կարող, քանի որ հակառակ պարագայում կստացվի, որ դրանով մենք փորձում ենք պետական մարմնի կամ պաշտոնատար անձի մոտ ձևավորել հետագայում իրավաչափ գործելու կամք: Այդ դեպքում կստացվի, որ իրավաչափ գործելու կամքի ձևավորման նպատակ հետապնդելով՝ մենք ընդունում ենք տվյալ պահին պետական մարմնների կամ պաշտոնատար անձանց մոտ նման կամքի բացակայությունը, որպիսի հանգամանքը, բնականաբար, հակասում է իրավական պետության բոլոր սկզբունքներին և խարխուլում դրա հիմքերը:

Այլ հարց է, որ որոշակի առումով դաստիարակչական գործառնությունների իրականացման տարրեր կարող են առկա լինել պաշտոնատար անձի դեմ պետության կամ համայնքի կողմից հետադարձ պահանջներ կայացնելիս: Սակայն հարկ է նկատի ունենալ, որ պետության կամ համայնքի կողմից վարչարարությունը պատճառված վնասի հատուցման ոչ բոլոր դեպքերում է վերջինս ձեռք բերում պաշտոնատար անձի դեմ հետադարձ պահանջներ կայացնելու իրավունք: Դրա համար անհրաժեշտ է, որպեսզի պաշտոնատար անձի կողմից վնասը պատճառված լինի դիտավորությունը կամ անփութությունը, ինչից կարելի է ենթադրել, որ վարչարարության ոչ իրավաչափ ճանաչումը դեռևս ուղղակիորեն չի վկայում պաշտոնատար անձի կողմից դիտավորություն կամ անփութություն դրսևորելու և վերջինիս նկատմամբ դաստիարակչական գործառնությունների իրականացնելու անհրաժեշտության մասին:

Քաղաքացիաիրավական պատասխանատվության կարևորագույն սոցիալ-տնտեսական բնութագրիչներից է նաև փոխհատուցման գործառնությունների իրականացումը: Գույքային պատասխանատվության

նպատակը հենց տուժողի կրած վնասների լրիվ կամ մասնակի հատուցումն է: Քաղաքացիաիրավական պատասխանատվության պարագայում փոխհատուցման գործառույթի դերն այնքան է կարևորվում, որ գույքային պատասխանատվության ծավալը որոշվում է՝ ելնելով տուժողին հասցված վնասների չափից: Բնականաբար, վարչարարությանը պատճառված վնասի համար պատասխանատվության դեպքում ևս էական նշանակություն ունի ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով տուժած անձին պատճառված վնասների փոխհատուցումը, սակայն վարչարարությանը պատճառված վնասի հատուցման պարագայում առկա է այն առանձնահատկությունը, որ վնասի հատուցումն Օրենքի պահանջով հնարավորության դեպքում պետք է կատարվի վարչարարության հետևանքները վերացնելու եղանակով, այսինքն՝ մինչև ոչ իրավաչափ վարչարարության իրականացումը եղած դրությունը վերականգնելու միջոցով: Վարչարարության առաջացրած հետևանքները վերացնելու անհնարիչության դեպքում միայն հնարավոր է վնասը հատուցել դրամական միջոցներով: Քաղաքացիական իրավահարաբերություններում վնասի հատուցման եղանակների որևէ առաջնահերթություն սահմանված չէ, և բնեղենով վնասների հատուցման եղանակը դրամական միջոցներով հատուցման նկատմամբ չունի կիրառման առաջնայնություն: Այս առումով կարելի է փաստել, որ վարչարարությանը պատճառված վնասի հատուցմանը, ի տարբերություն քաղաքացիական իրավահարաբերություններից բխող վնասի հատուցման, բնորոշ է ոչ թե փոխհատուցման, այլ իրավավերականգնող գործառույթը:

Այսպիսով, որպես ամբողջ վերոշարադրյալի ամփոփում՝ կարելի է եզրակացնել, որ վարչարարությանը պատճառված վնասի հատուցումն իր առանձնահատկություններով չի համապատասխանում քաղաքացիաիրավական պատասխանատվության առաջացման հատկանիշներին: Տվյալ դեպքում կարող է առավել ապես խոսք լինել ոչ թե պետության քաղաքացիաիրավական պատասխանատվության, այլ օբյեկտիվ-քաղաքական օրինաչափություններից, սոցիալ-բարոյական պատկերացումներից և, ընդհանրապես, պետության

խնդրներին ց բխող՝ վնասը հատուցելու վերջինիս պարտականության մասին<sup>1</sup>:

Վարչարարության մեջ պատճառված վնասի հատուցման կապակցության մեջ ծագող հարաբերությունների հանրային-իրավական բնույթը հաստատվում է նաև նրանով, որ այս հարաբերություններն օժտված են հանրային իրավահարաբերություններին բնորոշ բոլոր առանձնահատկություններով: Նշվածը հիմնավորելու նպատակով նպատակահարմար ենք գտնում բացահայտել հանրային և մասնավոր իրավահարաբերությունների առանձնահատուկ գծերը և դրանք միմյանցից սահմանազատելու չափանիշները:

Ընդհանուր ձևով մասնավոր իրավունքը կարելի է բնորոշել որպես իրավական նորմերի համակցություն, որոնք ուղղված են մասնավոր անձանց միջև առաջացող հարաբերությունների կարգավորմանը, իսկ հանրային իրավունքը կազմում են պետական մարմինների գործունեության կարգը սահմանող նորմերը: Ասվածից հետևում է, որ իրավանորմերը հանրայինի կամ մասնավորի դասակարգելու հիմքերը հասարակության մեջ դրանց իրականացրած դերը և դրանցող պաշտպանվող շահերի բնույթն են: Վերոհիշյալով պայմանավորված՝ կարելի է առանձնացնել հանրային և մասնավոր իրավունքները միմյանցից տարանջատող հետևյալ առանձնահատկությունները. հանրային և մասնավոր իրավահարաբերությունների հիմնական տարբերությունը կապված է պետական իշխանության սուբյեկտի անմիջական մասնակցության հետ: Հանրային են այն իրավահարաբերությունները, որոնց պարտադիր կարգով մասնակցում է պետությունը (իր մարմինների միջոցով)՝ որպես հարկադիր իշխանության կրող, իսկ մասնավոր իրավահարաբերություններում պետության մասնակցությունը բացակայում է, կամ եթե վերջինս մասնակցում է, ապա մյուս սուբյեկտների հետ հավասար հիմունքներով՝ որպես պարզապես գույքային շահերի, այլ ոչ որպես պետական հարկադիր

---

<sup>1</sup> Ст'ю Подопрігора А. А. Реабілітація в уголовном процесі Росії. Дисс. канд. юрид. наук. Ростов-на-Дону. 2004, էջ 4:

իշխանություն ան կրող<sup>1</sup>: Այսպիսով, հանրային  
 իրավահարաբերությունների գլխավոր  
 առանձնահատկություններից մեկն այն է, որ այս  
 իրավահարաբերությունների պարտադիր մասնակից է հանդիսանում  
 պետաիշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը: Որպես  
 այդպիսին հանդիսանում է պետությունը, սակայն հարկ է նկատի  
 ունենալ, որ ընդհանրապես իրավահարաբերությունների  
 պետությունը չի կարող մասնակցել անմիջականորեն: Հանրային  
 իրավահարաբերության շրջանակներում կոնկրետ պետաիշխանական  
 բնույթի լիազորությունները պետության անուսից իրականացնում  
 է այս կամ այն պետական մարմինը, որը, ըստ էության, հանդես է  
 գալիս որպես կապող օղակ պետության և հանրային  
 իրավահարաբերության մյուս մասնակցի միջև: Ասվածից բխում է, որ  
 կոնկրետ իրավահարաբերությանը մասնակցող պետական մարմինը ոչ  
 թե սեփական, այլ պետությանը պատկանող լիազորություններն է  
 իրականացնում, և այս տեսանկյունից այդ լիազորությունների  
 իրականացումը նրա համար ոչ միայն իրավունք է, այլև  
 պարտականություն: Ինչ վերաբերում է մասնավոր-իրավական  
 հարաբերություններին, ապա այստեղ իրավահարաբերության  
 մասնակիցներն իրենք են հանդիսանում իրենց  
 լիազորությունների տնօրինողները: Պետաիշխանական  
 լիազորությունների իրականացման կարգը հստակ սահմանված է  
 օրենքով, և այդ կարգից շեղումներ չեն թույլատրվում, մինչդեռ  
 մասնավոր իրավահարաբերությունների պարագայում դրանց  
 մասնակիցները ինքնուրույն են և սեփական հայեցողությամբ են  
 որոշում իրենց իրավունքներից օգտվելու հարցը: Այլ կերպ ասած՝  
 մասնավոր իրավահարաբերության մասնակցի վրա չի կարող դրվել  
 իրեն պատկանող իրավունքից օգտվելու պարտականություն,  
 մինչդեռ պետաիշխանական լիազորությունների սուբյեկտի համար  
 տվյալ լիազորության իրականացումը նաև պարտականություն է:  
 Հանրային իրավահարաբերությանը պետաիշխանական  
 լիազորություններով օժտված սուբյեկտի պարտադիր  
 մասնակցության հատկանիշը պայմանավորում է այս  
 իրավահարաբերությունների մյուս առանձնահատկությունը.

<sup>1</sup> Ст'у Тарановский Ф. В. Энциклопедия права. 3-е изд.- СПб.: издательство «Лань», 2001, էջ 560:

հանրային իրավահարաբերության մասնակիցներն իրավաբանորեն հավասար չեն: Այստեղ կողմերից մեկը հանդես է գալիս թելադրողի, իսկ մյուսը՝ կատարողի դերում: Մասնավոր իրավահարաբերություններում մասնակիցներն իրավաբանորեն հավասար են: Մասնավոր իրավահարաբերության կողմերից որևէ մեկը չի ենթարկվում մյուսին, սակայն հարկ է նկատել, որ նրանք երկուսն էլ այս պարագայում ենթարկվում են իրենց միջև առաջացած իրավահարաբերության շրջանակներից դուրս գտնվող երրորդ կողմի՝ պետությանը, որը ընդհանուր գծերով որոշում է մասնավոր իրավահարաբերության բովանդակության սահմանները, և որին կարող են դիմել մասնավոր իրավահարաբերության կողմերը՝ իրենց միջև ծագած վեճերը լուծելու նպատակով<sup>1</sup>: Յենց ասվածում է դրսևորվում հանրային-իրավական և մասնավոր-իրավական կարգավորման մեթոդների տարբերությունը: Յանրային իրավունքում գործում է իմպերատիվ կարգավորման մեթոդը, մասնավորում՝ դիսպոզիտիվ: Մասնավոր իրավահարաբերությունների կամ դիսպոզիտիվ իրավական կարգավորման դեպքում պետությունը որոշում է այն ընդհանուր սահմանները, որոնց շրջանակներում կոնկրետ իրավահարաբերության մասնակիցները հնարավորություն ունեն ընտրելու իրենց թույլատրելի վարքագծի տարբերակները: Օրինակ, ՅՅ քաղաքացիական օրենսգրքում մեծ թիվ են կազմում դիսպոզիտիվ նորմերը, որոնցով սահմանված կարգը գործում է միայն այն դեպքում, երբ այդ նորմով կարգավորվող կոնկրետ նյութական իրավահարաբերության մասնակիցներն իրենց միջև ձեռք բերված համաձայնությամբ նորմով սահմանված կարգից տարբերվող կարգ չեն նախատեսել: Ինչ վերաբերում է հանրային իրավունքում գործող իմպերատիվ կարգավորման մեթոդին, ապա կոնկրետ հանրային իրավահարաբերության մասնակիցներն իրենց վարքագծի տարբերակը ընտրելու հնարավորություն չունեն: Պետաիշխանական լիազորությունների իրականացումը կրում է պարտադիր բնույթ, հստակ սահմանված է այդ լիազորությունների իրականացման ընթացակարգը, և կողմերը չեն կարող հրաժարվել այդ լիազորությունների իրականացումից կամ ընտրել դրանց

<sup>1</sup> Ст'у Ильин И. А. Общее учение о праве и государстве. О сущности правосознания. Том 4. Москва, էջ 106:

իրականացման՝ օրենքով նախատեսվածից այլ տարբերակ: Այս տեղ տեղին է նաև նշել, որ Ե. 2. Բեկբաևի պնդմամբ մասնավոր իրավահարաբերությունների առաջացման համար պահանջվում է երկու կողմերի կամքի համաձայնեցում, մինչդեռ հանրային իրավահարաբերությունների պարագայում մեկ կողմի կամքը արդեն իսկ բավարար է իրավահարաբերության առաջացման համար<sup>1</sup>: Այս առումով հատկանշական է, որ ըստ Ե. Բ. Լուպարևի և համահեղինակների՝ սուբյեկտիվ հանրային իրավունքի իրականացման համար անհրաժեշտ է պետաիշխանական բնույթի լիազորություններով օժտված սուբյեկտի առկայություն: Որպես մասնավոր օրինակ՝ նկարագրվում է այն իրավիճակը, երբ որևէ տրանսպորտային միջոցի վարորդ խնդրանքով դիմում է ճանապարհային ոստիկանության տեսուչին, որպեսզի վերջինս կանխի մեկ այլ վարորդի կողմից երթևեկության կանոնների շարունակական խախտումները<sup>2</sup>:

Ընդհանրացնելով հանրային իրավահարաբերությունների առանձնահատկությունները՝ կարելի է գալ այն համոզման, որ վարչարարության պատճառված վնասի հատուցման շուրջ ծագող հարաբերություններն աչքի են ընկնում հանրային իրավահարաբերություններին բնութագրական վերոհիշյալ հատկանիշներով: Մասնավորապես՝ քննարկվող իրավահարաբերության պարտադիր մասնակից է հանդիսանում վնաս պատճառած վարչական մարմինը՝ օժտված պետաիշխանական լիազորություններով, այդ մարմնի և վնաս կրած անձի միջև հարաբերության առաջացման համար անհրաժեշտ և բավարար է միայն տուժողի կողմից վնասի հատուցում տրամադրելու վերաբերյալ դիմումի ներկայացումը, այսինքն՝ չի պահանջվում նաև իրավահարաբերության երկու կողմերի կամքի համաձայնեցում, և վարչական մարմին համապատասխան դիմում ներկայացվելու դեպքում վերջինս պարտավոր է իրականացնել վնասի հատուցման կապակցությամբ իր պետաիշխանական լիազորությունները, և, վերջապես, տուժողի՝ վնասի հատուցում ստանալու իրավունքի

<sup>1</sup> Ст'у Бекбаев Е. 3. Проблема начала в теоретическом познании правовой системы (попытка обоснования). Астана. 2009, էջ 101:

<sup>2</sup> Ст'у Лупарев Е.Б., Добробаба М.Б., Мокина Т.В. Общая теория публичных правоотношений: монография, էջ 263:

իրականացումը կարող է ապահովվել միայն վարչական մարմնի անմիջական մասնակցությամբ, քանի որ Օրենքով վերջինիս վնասի հատուցման վերաբերյալ դիմումի ներկայացումը համարվում է անհրաժեշտ պայման: Անհրաժեշտ է նաև նշել, որ Օրենքով վարչարարության մեջ պատճառված վնասի հատուցում ստանալու գործընթացն ինքնին համարվում է վարչարարություն, որը եզրափակվում է հատուցման պահանջը բավարարելու կամ մերժելու վերաբերյալ վարչական ակտի ընդունմամբ: Իսկ վարչական ակտը հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով ընդունվող անհատական իրավական ակտ է, հետևաբար վարչարարության մեջ պատճառված վնասի հատուցումը պատկանում է հանրային իրավունքի ոլորտին:

Վերոշարադրյալը ցույց է տալիս, որ վարչարարության մեջ պատճառված վնասի հատուցման համար էական նշանակություն ունի այն հարցի պարզաբանումը, թե արդյոք վնասը պատճառվել է պետական մարմինների կամ պաշտոնատար անձանց իշխանական բնույթի լիազորությունների իրականացման հետևանքով, թե վնասի առաջացումը արդյունք է վերջիններիս այլ գործողությունների: Խնդիրն այն է, որ պետական (վարչական) մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց կողմից վնասի պատճառման ոչ բոլոր դեպքերը կարող են դիտարկվել վարչարարության մեջ պատճառված վնասի համատեքստում: Եթե ֆիզիկական կամ իրավաբանական անձին վնասը հասցվել է պետական մարմինների այնպիսի գործողություններով, որոնք իրենց բնույթով վարչարարության իրականացում չեն հանդիսանում, ապա այդ գործողությունների հետևանքով պատճառված վնասի համար պատասխանատվության հարցը չի կարգավորվում Օրենքի դրույթներով: Յետևաբար, պետք է հաշվի առնել, որ վարչարարության մեջ պատճառված վնասի համար պետության պատասխանատվությունը սահմանող Օրենքի դրույթները կիրառելի են միայն այն դեպքերի նկատմամբ, երբ վնասի առաջացումն արդյունք է պետական (վարչական) մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց կողմից իրենց իշխանական բնույթի լիազորությունների իրականացման: Իր հետ ենթակայական հարաբերությունների մեջ չգտնվող անձի իրավունքների և պարտականությունների վրա ազդելու՝ օրենքով նախատեսված

պետական մարմնի կամ դրա պաշտոնատար անձի հնարավորությունը դիտվում է որպես վերջինիս գործողությունը իշխանական որակելու չափանիշ: Յետևաբար Օրենքով սահմանված պատասխանատվության վերաբերյալ կանոնների կարգավորման ներքո պետք է դիտարկել միայն վարչական մարմնի կողմից պետության անունից իր իշխանական բնույթի լիազորությունների իրականացման հետևանքով անձանց վնաս պատճառելու դեպքերը<sup>1</sup>:

Այսպիսով, գործնական առումով չափազանց մեծ կարևորություն ունի վարչարարության իրականացման հետևանքով պատճառված վնասը վարչական մարմինների՝ վարչարարության իրականացում չհանդիսացող գործողություններով պատճառված վնասից տարբերակելու հարցը: Դրանից է կախված, թե տվյալ դեպքում պատճառված վնասը ենթակա է հատուցման Օրենքով սահմանված կարգով, թե այդ վնասի հատուցումը պետք է դիտարկել վնաս պատճառելուց բխող քաղաքացիաիրավական հարաբերության համատեքստում՝ որպես քաղաքացիաիրավական պատասխանատվության միջոց: Դատական պրակտիկայից վերցված առանձին գործերի ուսումնասիրումը, թերևս, կնպաստի նշված խնդրի պարզաբանմանը, ուստի նպատակահարմար ենք գտնում խնդրի քննարկումն իրականացնել այս հարցի կապակցությամբ ՀՀ դատական ատյանների կողմից տրված մեկնաբանությունների հաշվառմամբ:

Դիմելով առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ հայցվոր Վ-ն պահանջել էր ՀՀ ԱՆ ԴԱՅԿ ծառայությանը պարտավորեցնել հատուցել իրեն պատճառված վնասը: Իր հայցադիմումի հիմքում Վ-ն դրել էր այն հանգամանքը, որ վարչական դատարանի վճռով ՀՀ ԱՆ ԴԱՅԿ ծառայության գործողությունները ճանաչվել են ոչ իրավաչափ, և այդ գործողություններով իրեն վնաս է հասցվել: Դատարանի վճռով գործի վարույթը կարճվել է այն պատճառաբանությամբ, որ հարկադիր կատարման ծառայության կողմից իրականացված վարչարարությամբ պատճառված վնասի համար պետության պատասխանատվության հարցը կարգավորվում է Օրենքի 7-րդ բաժնի դրույթներով, ուստի ՀՀ ԱՆ ԴԱՅԿ ծառայության իրականացրած

<sup>1</sup> Ст'я Скобычкина Н. Р. Возмещение вреда, причиненного федеральными государственными органами, а также их должностными лицами. Дисс. ... к.ю.н., Екатеринбург-2007, էջ 47:



վարչարարությունը ամբ պատճառված վնասի հատուցման պահանջը ենթակա է ՀՀ վարչական դատարանի քննությանը<sup>1</sup>:

Վկայակոչված դատական ակտի ուսումնասիրությունը վկայում է, որ վարչարարության իրականացման արդյունք հանդիսացող վնասի հատուցումը դատարանը չի դիտել որպես քաղաքացիաիրավական հարաբերությունների դաշտում պատճառված վնաս, հակառակ պարագայում չէր կարճի գործի վարույթը այն դատարանի քննությանը ենթակա չլինելու հիմքով:

Մեկ այլ գործով վերաքննիչ վարչական դատարանն էր վարչական գործի վարույթը կարճել այն վարչական դատարանի քննությանը ենթակա չլինելու պատճառաբանությամբ: Այդ գործի նախապատմությունը և փաստերը հետևյալն են. հայցվոր ընկերությունը ՀՀ վարչական դատարան հայցադիմում էր ներկայացրել ընդդեմ ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանական պետական տեսչության՝ ծանուցագրի միջոցով գումարի վճարման պարտավորություն սահմանելու ձևով արտահայտված բնապահպանական պետական տեսչության գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին: Գործի լուծման համար էական համարվող և հայցադիմումի հիմքում ընկած հիմնական փաստական հանգամանքների համաձայն՝ տեսչությունը հայցվոր ընկերությունում իրականացրել էր բնապահպանական օրենսդրության պահանջների կատարման ճշտության ստուգում: Ստուգման արդյունքներով բացահայտվել էին ընկերության կողմից թույլ տրված բնապահպանական օրենսդրության պահանջների որոշակի խախտումներ: Ստուգման ակտով նաև հաստատվել է այդ խախտումների հետևանքով շրջակա միջավայրին վնաս պատճառելու փաստը: Բացահայտված խախտումների համար ընկերության տնօրենը տեսչության որոշմամբ ենթարկվել է վարչական պատասխանատվության: Դրանից բացի, ընկերությունը ծանուցում է ստացել տեսչությունից՝ իրավախախտումներով շրջակա միջավայրին պատճառված վնասը հատուցելու վերաբերյալ: Ընկերությունը, վճարելով ծանուցագրով առաջադրված գումարի մի մասը, դիմել էր վարչական դատարան ծանուցագրի միջոցով գումար

<sup>1</sup> Տե՛ս Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ թիվ ՏԴ1/0093/02/13 քաղաքացիական գործով 27.02.2014թ. վճիռը:

վճարելու պարտավորությունն սահմանելու՝ տեսչության գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին՝ միևնույն ժամանակ հայցադիմումի մեջ նշելով, որ մտադիր է հետագայում պահանջել իրեն պատճառված գույքային վնասի հատուցում, որպիսին ընկերությունը դիտում էր ծանուցագիրն ստանալուց հետո իր կատարած մասնակի վճարումը: ՀՀ վարչական դատարանի վճռով ընկերության հայցը բավարարվել է, և ոչ իրավաչափ է ճանաչվել բնապահպանական պետական տեսչության վիճարկվող գործողությունը: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանն իր որոշմամբ կարճել էր գործի վարույթը: Որոշումը վերաքննիչ վարչական դատարանը հիմնավորել է հետևյալ կերպ. հանրային իրավահարաբերությունները ձևավորվում, ծագում են վարչարարության իրականացման ընթացքում, հետևաբար վարչական դատարանին ընդդատյա են այն խումբ գործերը, որոնք արդյունք են վարչարարության իրականացման: Հասցված վնասի հատուցում պահանջելու վերաբերյալ ծանուցումը ընդհանրապես չի հանդիսանում վարչարարության արդյունք, և դրանով հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման դաշտում չի մերժվում, միջամտություն չի կատարվում, չի սահմանափակվում անձի իրավունքների իրականացումը, որևէ պարտականություն չի դրվում նրավրա, ուստի այդ ծանուցման միջոցով ընկերությանը գումարի վճարման պարտավորությունն առաջադրելու գործողություններն այդ դաշտում վարչական դատավարության կարգով չեն կարող գնահատվել: Ծանուցագրով պահանջվող վնասի հատուցումը ոչ թե վարչաիրավական, այլ քաղաքացիաիրավական ինստիտուտ է, քանի որ այն հետևանք է վարչարարության իրականացման՝ չնայած այն հանգամանքին, որ որպես պատասխանող հանդես է գալիս պետական մարմինը<sup>1</sup>:

Նշված դատական ակտի կայացման հիմքում ևս ընկած է այն տրամաբանությունը, որ վնասի հատուցմանն առնչվող գործերը վարչական դատարանի քննության առարկա կարող են դառնալ միմիայն վարչարարության իրականացման ոլորտին առնչվելու պարագայում:

---

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի՝ թիվ ՎԳ/9652/05/13 վարչական գործով 07.10.2014թ. որոշումը:  
26

Եթե վնասի առաջացման պատճառ են հանդիսանում պետական մարմինների այլ (տեխնիկական և այլ բնույթի) գործողությունները, ապա պատասխանատվության հարցն այլ կերպ էլ ուծվում: Նշված պատճառաբանությամբ ՌԴ Չելյաբինսկ քաղաքի շրջանային դատարանն իր որոշմամբ բեկանել էր ստորադաս դատարանի որոշումը, որը բավարարել էր պետության դեմ ներկայացված քաղաքացու հայցը՝ այն հիմնավորմամբ, որ իր ավտոմեքենային վնաս է պատճառվել ճՈ աշխատակիցների կողմից այն տուգանային հրապարակ տեղափոխելիս: Վերադաս դատարանը նշված վնասը համարել է պատճառված ոչ թե ճՈ ծառայողների վարչափշխանական բնույթի գործողության կատարման, այլ սովորական ճանապարհատրանսպորտային պատահարի արդյունքում: Վերոհիշյալի հաշվառմամբ դատարանը պատասխանատվության առաջացման իրավական հիմք էր դիտել ՌԴ քաղաքացիական օրենսգրքի 1068-րդ (ՅՅ քաղաքացիական օրենսգրքի 1062-րդ) հոդվածը, այսինքն՝ որպես աշխատողի պատճառած վնասի համար գործատուի պատասխանատվություն<sup>1</sup>:

Այս նույն տրամաբանությամբ որպես պետության անուսից կատարվող փշխանական գործողություններով պատճառված վնասի համար պետության պատասխանատվության առաջացման հիմք չի կարող դիտվել, օրինակ, ծառայողական ավտոմեքենայով ծառայողական պարտականությունները կատարելիս ճՈ ծառայողների կողմից այլ անձի ավտոմեքենային վնասի պատճառումը: Այդ դեպքում պատասխանատվության հարցը լուծելիս պետք է ղեկավարվել առավել վտանգի աղբյուրների փոխներգործության արդյունքում առաջացած վնասի համար պատասխանատվություն սահմանող ՅՅ քաղաքացիական օրենսդրության դրույթներով<sup>2</sup>:

Պետք է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ բացի այն, որ պետական մարմինների գործողություններով վնաս պատճառելու ոչ բոլոր դեպքերում են կիրառման ենթակա Օրենքի դրույթները, նաև վարչարարությամբ պատճառված վնասի դեպքում առանձին հարցերի լուծման նպատակով քաղաքացիական օրենսդրության նորմերի

<sup>1</sup> St'u постановление президиума Челябинского областного суда от 18 мая 2005 года (надзорное производство 4г05-713) из архива Советского районного суда г. Челябинска.

<sup>2</sup> St'u Скобычкина Н. Р., նշված աշխատությունը, էջ 50:

կիրառումն անխուսափելի է: Խնդիրն այն է, որ վնաս պատճառելու ց  
բխող պարտավորությունների վերաբերյալ բոլոր ընդհանուր  
դրույթներն ամրագրված են հենց ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, և  
վարչարարության մեջ պատճառված վնասի հատուցման հարցի լուծումն  
անխուսափելիորեն թելադրում է նաև այդ ընդհանուր դրույթների  
կիրառման անհրաժեշտություն: Մասնավորապես, յուրաքանչյուր  
կոնկրետ դեպքում վնասի առկայության, վնասի չափի որոշման,  
պատճառահետևանքային կապի առկայության, պաշտոնատար անձի դեմ  
պետության կամ համայնքի հետադարձ պահանջի ներկայացման, այդ  
պահանջները քննարկելիս պաշտոնատար անձանց  
գործողություններում դիտավորության կամ անփութության  
առկայության և այլ հարցերի լուծումը տրվում է քաղաքացիական  
օրենսդրության հիման վրա: Բացի այդ, առանձին դեպքերում Օրենքը  
որևէ կոնկրետ հարցի կարգավորման նպատակով հղում է կատարում  
ՀՀ քաղաքացիական օրենսգրքին: Օրինակ, այդպիսի հղում առկա է  
վարչարարության հետևանքով անձի առողջությանը պատճառված  
վնասի հատուցման ծավալի որոշման, գործարար համբավի  
պաշտպանության, կերակրողին կորցնելու հետևանքով վնասի  
հատուցման և այլ հարցերի կապակցությամբ: Վարչարարության մեջ  
պատճառված վնասի համար պատասխանատվության վերաբերյալ  
Օրենքով հատուկ կանոնների ամրագրումը չի կարող ընդհանրապես  
բացառել քաղաքացիական օրենսդրության նորմերի կիրառման  
հնարավորությունը: Սակայն, մյուս կողմից, ասվածը հիմքեր չի  
տալիս վարչարարության մեջ պատճառված վնասի համար  
պատասխանատվությունը նույնացնել քաղաքացիաիրավական  
պատասխանատվության հետ: Դրան վերաբերող առանձին նորմերի  
կիրառումը վարչարարության մեջ պատճառված վնասի հատուցումից  
բխող իրավահարաբերությունների նկատմամբ ի սկզբանե պետք է  
բացառել: Խոսքը, մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի  
1076-րդ հոդվածի 3-րդ մասին է վերաբերում, որի համաձայն՝  
դատարանը կարող է նվազեցնել քաղաքացու կողմից պատճառված  
վնասի հատուցման չափը՝ հաշվի առնելով վերջինիս գույքային  
դրությունը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ վնասը պատճառվել  
է դիտավորյալ կատարված գործողություններով: Ակնհայտ է, որ այս  
նորմը չի կարող կիրառվել վարչարարության մեջ պատճառված վնասի

հատուցման դեպքում: Իրավական պետության մեջ անձի իրավունքների և ազատությունների երաշխավորվածության գաղափարը ենթադրում է, որ բոլոր այն դեպքերում, երբ անձին վնաս է պատճառվել պետախի խանական բնույթի հակաօրինական գործողությունների կատարման հետևանքով, ապա պետությունը՝ ի դեմ իրավասու մարմնի, պարզելով, որ անձի իրավունքների խախտումը տեղի է ունեցել հանրային իշխանության իրականացման հետևանքով, պարտավոր է վերացնել սեփական գործողությունների արդյունքում թույլ տրված անձի իրավունքների խախտումները: Վարչարարության մեջ պատճառված վնասը հատուցելու պարտականությունը և քաղաքացիաիրավական հարաբերություններից բխող վնասը հատուցելու պարտականությունը բովանդակային կտրվածքով չեն համընկնում, քանի որ հանրային իշխանության մարմնի պարտականությունը շատ ավելի ընդգրկուն է. այն ներառում է նաև մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների երաշխավորվածությունը, տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում սահմանադրական նորմերով ամրագրված քաղաքականության իրականացումը և այլն: Այդ նույն տրամաբանությամբ Օրենքով նախատեսված է վարչարարության մեջ պատճառված վնասի հատուցում լրիվ ծավալով, և լրիվ ծավալով հատուցման կանոնից որևէ բացառություն սահմանված չէ: Ավելի ն, Օրենքը մինչև իրավունքի խախտման պահը եղած դրության կամ դրան համարժեք այլ դրության վերականգնման եղանակով վնասի հատուցմանը դրամական միջոցներով հատուցման նկատմամբ առաջնայնություն է տալիս, ինչը ևս վկայությունն է այն հանգամանքի, որ ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով անձի խախտված իրավունքների լիարժեք և ամբողջական վերականգնման կանոնը գործում է առանց բացառությունների: Հատկանշական է նաև այն, որ ՀՀ-ում ձևավորված դատական պրակտիկան բացառում է վարչարարությունը ոչ իրավաչափ ճանաչելու և դրանով պատճառված վնասի հատուցման պահանջների միաժամանակյա ներկայացումը դատական կարգով: Այդ կարգավորումը նախատեսվել է այն նկատառումից ելնելով, որ վարչարարության ոչ իրավաչափ ճանաչումից հետո վարչական մարմնին պետք է հնարավորություն տրվի վնաս կրած անձի

դիմումով ինքնուրույն լուծելու վնասի հատուցման հարցը, վերացնելու ոչ իրավաչափ վարչարարության հետևանքները: Եթե վերջինս չի իրականացնում այդ լիազորությունը կամ անձը գտնում է, որ դրա իրականացմամբ խախտվում են Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված իր իրավունքները, ապա վերջինս կարող է վարչական մարմնի դեմ համապատասխան հայցատեսակով դիմել դատարան:

Բացի այդ, նույնիսկ այն դեպքերում, երբ առանձին հարցերի կարգավորման նպատակով կիրառվում են քաղաքացիական օրենսդրության նորմերը, ապա այդ ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել վարչարարությամբ պատճառված վնասի համար պատասխանատվության առանձնահատկությունները: Խոսքը վերաբերում է այդ պատասխանատվության առաջացման փաստական հիմքին և պայմաններին առնչվող առանձնահատկություններին, որոնցով թելադրված է մի շարք եկան հարցերում տարբերակված մոտեցում ցուցաբերելու անհրաժեշտությունը<sup>1</sup>:

## **§2. ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՒԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՀԻՄՔԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

Այսպիսով, ատենախոսության նախորդ շարադրանքում արդեն պարզեցինք, որ վարչարարությամբ պատճառված վնասի համար պատասխանատվությունը պետք է դիտարկել քաղաքացիաիրավական պատասխանատվության համատեքստում: Այդ մասին են վկայում նաև վարչարարությամբ պատճառված վնասի համար պատասխանատվության առաջացման հիմքի և պայմանների առանձնահատկությունները, որոնցով վարչարարությամբ պատճառված վնասի հատուցումն էականորեն տարբերվում է վնասների հատուցման քաղաքացիաիրավական ինստիտուտից: Չնայած գոյություն ունեցող տարբերություններին՝ վարչարարությամբ պատճառված վնասի համար պատասխանատվության հիմքի և պայմաններին

<sup>1</sup> Վարչարարությամբ պատճառված վնասի համար պատասխանատվության փաստական հիմքին, պայմաններին, դրանց առանձնահատկություններով պայմանավորված վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման համար անհրաժեշտ փաստերի ապացուցման պարտականության բաշխման կանոնների տարբերություններին և այլ հարցերի անդրադարձ կկատարվի հաջորդ պարագրաֆում:

առանձնահատկությունները քաղաքացիները համար նպատակահարմար ենք գտնում նշված հարցերի քննարկումն իրականացնել պատճառոված վնասի համար քաղաքացիաիրավական պատասխանատվության առաջացման հիմքին և պայմաններին առնչվող խնդիրների զուգահեռ վերլուծության մեջ: Նշված մոտեցման կիրառումն արդյունավետ կլինի նաև այս երկու ինստիտուտների տարբերություններն ընգծելու առումով:

Քաղաքացիաիրավական պատասխանատվության հիմքը փաստկամ փաստերի խումբ է, որոնց առկայության պարագայում օրենքի կամ օրենքին չհակասող պայմանագրի ուժով առաջանում է պատասխանատվություն<sup>1</sup>:

Քաղաքացիաիրավական պատասխանատվության կիրառումը սուբյեկտիվ իրավունք է, իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածով սուբյեկտիվ քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմք է համարվում այլ անձի վնաս պատճառելը, այսինքն՝ վերջինիս սուբյեկտիվ իրավունքները խախտող գործողությունների կատարումը: Հետևաբար, պատասխանատվության առաջացման մասին խոսք կարող է լինել միայն իրավախախտում թույլ տալու պահից: Նույնը վերաբերում է նաև քաղաքացիաիրավական պատասխանատվությանը, որը կարող է ծագել միայն այլ անձի սուբյեկտիվ քաղաքացիական իրավունքների խախտման դեպքում և միայն այն պարագայում, երբ իրավագործական ղեկավարող իրավունքների պաշտպանության այդ եղանակին<sup>2</sup>:

Վերը նշվածը նշանակում է, որ չի կարելի հիմնավորված համարել Դ. Կ. Մատվենի պնդումն առ այն, որ քաղաքացիաիրավական պատասխանատվության միակ և ընդհանուր հիմքը քաղաքացիական իրավախախտման կազմն է, որի տարրեր հեղինակը համարում է հակաիրավական վարքագիծը, վնասների առաջացումը, պատճառական կապը հակաիրավական վարքագծի և վնասների առաջացման միջև և իրավախախտողի մեղքը<sup>3</sup>: Նշված մոտեցումը խոցելի է այն պատճառաբանությամբ, որ քաղաքացիաիրավական

<sup>1</sup> Տե՛ս Антимонов Б. С. Основания договорной ответственности социалистических организаций. М., 1962, էջ 28:

<sup>2</sup> Տե՛ս Բարսեղյան Ս. Վ. Գույքային պատասխանատվության ինստիտուտի էվոլյուցիան և արդիական հիմնահարցերը: Երևանի պետ. համալսարան: Երևանի համալս. հրատ., Երևան, 2006:

<sup>3</sup> Տե՛ս Матвеев Г. К. Основания гражданско-правовой ответственности. М., 1970, էջ 5:

պատասխանատվութիւնը համարվող շատ սանկցիաների կիրառումը հնարավոր է նաև քաղաքացիական իրավախախտման կազմի վերոհիշյալ տարրերից մեկի կամ նույնիսկ մի քանիսի բացակայութեամբ: Օրինակ, պարտավորութեան կատարումը կետանցելու հետևանքով տուժանքի գանձման համար չի պահանջվում վնասների, հետևաբար նաև պարտապանի կողմից պարտավորութեան խախտման և վնասների միջև պատճառական կապի առկայութիւնը: Ուստի հակաիրավական վարքագծի, վնասների, պատճառական կապի և մեղքի մասին կարող է խոսք լինել բացառապէս որպէս սուբյեկտիվ իրավունքների կոնկրետ խախտման համար պատասխանատվութեան կիրառումն ապահովող օրենքով նախատեսված պայմանների, որոնցից յուրաքանչյուրի կամ մի քանիսի առկայութեան հետ օրենքը կամ պայմանագիրը կապում է իրավախախտի նկատմամբ պատասխանատվութեան կիրառման՝ իրավազոր անձի իրավունքի առաջացումը<sup>1</sup>:

Քաղաքացիական փորձական պատասխանատվութեան ծագման հիմքից բխում է, որ պատասխանատվութեան կիրառման անհրաժեշտ պայման է դիտվում անձի իրավունքների և օրենքով պահպանվող շահերի խախտումը: Գ. Ֆ. Շերշենևիչն իրավացիորեն նշում է, որ վնաս պատճառելուց բխող պարտավորութեան առաջացման համար միայն օբյեկտիվ իրավունքի խախտումը բավարար չէ, և անհրաժեշտ է նաև սուբյեկտիվ իրավունքի խախտումը<sup>2</sup>: Ե. Լ. Նևզգոդինան նշում է, որ վնասի հատուցման պարտավորութիւնը ծագում է հենց վնաս պատճառելու փաստից և հենց այն պատճառով, որ խախտվում է տուժողի սեփականութեան իրավունքը, որի պաշտպանութիւնը շուկայական հարաբերութիւնների պայմաններում կարող է իրապէս իրականացվել նաև պարտավորաիրավական եղանակներով՝ մասնավորապէս վնասների հատուցմամբ կամ համարժեք գույքի բնեղենով տրամադրմամբ<sup>3</sup>: Նման պայմաններում գտնում ենք, որ չի կարող հիմնավորված համարվել Ա. Կուրբատովի այն տեսակետը, որի համաձայն՝ պատճառված վնասի համար պատասխանատվութեան առաջացման համար բավարար է միայն իրավունքի նորմի խախտումը, և

<sup>1</sup> Տե՛ս Բարսեղյան Ս. Մ., նշված աշխատությունը, էջ 224:

<sup>2</sup> Տե՛ս Шершеневич Г. Ф. Учебник русского гражданского права. Казан, 1896, 2-е издание, էջ 528:

<sup>3</sup> Տե՛ս Невзгодина Е. Л. Вред как условие возникновения деликтных обязательств в гражданском праве. Вестник Омского университета. Серия «Право». 2009. № 3 (20). էջ 29:



վնասի հատուցման պարտավորությունը կարող է ծագել նաև իրավախախտի կողմից հանրության առջև ունեցած իր պարտավորությունների չկատարման հետևանքով: Որպես իր արտահայտած տեսակետի հիմնավորում՝ Ա. Կուրբատովը որպես օրինակ նշում է ավտոտրանսպորտային միջոցի օգտագործմամբ ճանապարհային երթևեկության կանոնները խախտելու հետևանքով այլ անձի տրանսպորտային միջոցին վնասի պատճառման դեպքը և պնդում, որ այդ դեպքում իրեն պատկանող գույքին պատճառված վնասի հատուցում պահանջելու իրավունքը տուժողի մոտ ծագում է ոչ թե նրանից, որ վերջինս ճանապարհային երթևեկության կանոնների պահպանման պահանջի իրավունք ունի, այլ հենց այդ կանոնների խախտման փաստից<sup>1</sup>: Փաստորեն, դրանով հեղինակը փորձում է հիմնավորել, որ քաղաքացիաիրավական պատասխանատվության առաջացման հիմքը օբյեկտիվ իրավունքի խախտումն է, և, ըստ այդմ, գործողության կամ անգործության հակաիրավականության տակ հենց օբյեկտիվ իրավունքի՝ իրավական նորմի խախտումը պետք է հասկանալ: Սակայն ակնհայտ է, որ ճանապարհային երթևեկության անվտանգության կանոնների խախտման դեպքում որևէ քաղաքացիաիրավական պատասխանատվության մասին խոսք չէր լինի՝ առանց այլ անձի գույքային վնաս պատճառելու: Այդ է պատճառը, որ մենք ամբողջովին կիսում ենք այն հեղինակների կարծիքը, ըստ որի՝ վնասի հատուցման քաղաքացիաիրավական պատասխանատվություն կարող է առաջանալ բացառապես այլ անձի սուբյեկտիվ քաղաքացիական իրավունքների խախտման առկայության պարագայում: Ի տարբերություն քրեական իրավունքի, որտեղ պատասխանատվության առաջացման համար բավարար է ձևական հանցակազմի առկայությունը՝ առանց վնաս պատճառելու, քաղաքացիական իրավունքում առանց վնասի պատճառման չի կարող ծագել պարտավորություն<sup>2</sup>: Քաղաքացիական իրավունքի գաղափարախոսությանը համապատասխան՝ հակաիրավականության տեսանկյունից գնահատման պետք է արժանանա ոչ թե գործողությունը կամ անգործությունը, այլ

<sup>1</sup> Ст'у Курбатов А. Субсидиарная ответственность руководителей при несостоятельности (банкротстве) возглавляемых ими кредитных организаций // Хозяйст- во и право. – 2007. – № 7. էջ 7:

<sup>2</sup> Ст'у Невзгодина Е. Л. նույն աշխատությունը, էջեր 28-29:

սուբյեկտիվ իրավունքի խախտումը<sup>1</sup>: Ոչ տուժողին, ոչ դատարանին չի հետաքրքրում, թե իրավախախտի կոնկրետ որ գործողությունը կամ անգործությունն է դարձել վնասի առաջացման պատճառ: Օրենքը նույնպես պատասխանատվության առաջացումը կախման մեջ չի դնում այն հարցից, թե պարտապանի կոնկրետ որ գործողությունը կամ անգործությունն է առաջացրել այդ խախտումը: Օրենքին հետաքրքրում է բուն իրավախախտման փաստը<sup>2</sup>: Ա. Ս. Շևչենկոն նույնպես այն տեսակետն է պաշտպանում, որ վնասի հատուցման քաղաքացիաիրավական պատասխանատվության առաջացման համար պահանջվում է ոչ միայն օբյեկտիվ, այլև սուբյեկտիվ իրավունքի խախտում: Այնուհետև հեղինակն ավելացնում է, որ քաղաքացիական իրավունքում սուբյեկտիվ իրավունքների խախտումը հնարավոր է նաև առանց օբյեկտիվ իրավունքի խախտման: Դատեղի ունի, օրինակ, այն քաղաքացիական իրավունքների և պարտականությունների խախտման դեպքում, որոնք բխում են օրենքով չնախատեսված, սակայն օրենքին չհակասող պայմանագրերից: Հետևաբար ի տարբերություն իրավունքի այլ ճյուղերի՝ քաղաքացիական իրավունքում սուբյեկտիվ իրավունքների խախտման հիմնավորումը միայն կոնկրետ նորմերի խախտման համատեքստում հնարավոր է:

Վկայակոչված տեսակետների ամփոփման արդյունքում կարելի է հանգել այն եզրակացության, որ օրենքը պատճառված վնասի համար քաղաքացիաիրավական պատասխանատվության առաջացումը կապում է տուժողին վնաս պատճառելու փաստի հետ՝ առանց նշանակություն ունեցող այն հարցին, թե ինչպիսի բնույթ ունեցող գործողությունը կամ անգործությունն է հանգեցրել այդ վնասի առաջացմանը: Ուստի կարող ենք փաստել, որ նույնիսկ այն դեպքերում, երբ վնասի առաջացման պատճառ են դառնում, առաջին հայացքից, օբյեկտիվ իրավունքով չարգելված և, հետևաբար, իրավաչափ գործողությունները, միևնույնն է, անձի համար առաջանում է այդ վնասի հատուցման պարտավորություն: Հետևաբար, ինչ-որ առումով քաղաքացիական իրավունքում գործողության կամ անգործության հակաիրավականությունը դրսևորվում է այլ անձի վնաս պատճառելու մեջ: Վնասի պատճառման հանգամանքը դառնում է

<sup>1</sup> Տե՛ս Բարսեղյան Ս. Կ., նույն աշխատությունը, էջ 235:

<sup>2</sup> Տե՛ս Брагинский М. И., Витрянский В. В. Договорное право: общие положения. М., 1997, էջ 442:

կատարված գործողության իրավաչափության գնահատման չափանիշ, և, ըստ այդմ, վնաս պատճառած բոլոր գործողությունները պետք է համարել հակաիրավական: Իրավաբանական գրականության մեջ այս մոտեցումը հայտնի է «գլխավոր դելիկտ» անվանմամբ: Գլխավոր դելիկտի համակարգի հիմքը ցանկացած վնասի պատճառում հակաօրինական ճանաչելն է: Դաթոլյլ է տալիս յուրաքանչյուր վնասի պատճառում դիտել որպես քաղաքացիական իրավախախտում, ինչը թույլ կտա խուսափելու այն բոլոր արարքների անհարկի թվարկումից, որոնցով հասցված վնասը ենթակա է հատուցման<sup>1</sup>: Նույն գաղափարն արտացոլված է նաև Օ. Վ. Միխայլենկոյի աշխատություններում: Վերջինս այն կարծիքն է արտահայտում, որ «գլխավոր դելիկտի» կանոնը բխում է քաղաքացիական իրավունքին հատուկ դիսարգիտիվ կարգավորման մեթոդից: Նման պայմաններում, քանի որ հնարավոր չէ օրենսդրորեն սպառիչ կերպով ամրագրել անձի բոլոր հնարավոր սուբյեկտիվ քաղաքացիական իրավունքները և դրանց բոլոր խախտումները, այդ իրավունքների պաշտպանությունը գործուն դարձնելու նպատակով ամրագրվել է դրանց խախտման ընդհանուր արգելք: Ուստի անձին վնասի պատճառում դիտվում է որպես վերջինիս սուբյեկտիվ քաղաքացիական իրավունքների խախտում, ինչն արգելված է<sup>2</sup>:

«Գլխավոր դելիկտի», այսինքն՝ անձին վնասի պատճառման յուրաքանչյուր դեպք իրավախախտում դիտելու կանոնը քաղաքացիագետները տարածում են նաև պետական մարմինների գործունեության արդյունքում պատճառված վնասի հատուցման պարտավորության վրա: Վերջիններիս նման եզրահանգման գալու հիմք է տալիս այն հանգամանքը, որ նրանք յուրաքանչյուր վնասի հատուցում՝ անկախ նրանից, թե իրավունքի որ ճյուղի նորմերով կարգավորվող գործողության հետևանքով է այն պատճառվել, դիտարկում են քաղաքացիաիրավական պատասխանատվության ինստիտուտի շրջանակներում: Այդ մոտեցումը վերջիններիս թույլ

<sup>1</sup> St'u Маковский А. Л. Гражданская ответственность государства за акты власти //Гражданский кодекс России. Проблемы. Теория. Практика: Сборник памяти С. А. Хохлова /Отв. ред. А. Л. Маковский. Исследовательский центр частного права.-М.: Международный центр финансово-экономического развития, 1998, էջ 104:

<sup>2</sup> St'u Михайленко О. В. Имущественная ответственность за вред, причиненный осуществлением публичной власти: теоретические аспекты и проблемы ее реализации на практике, М., "Волтерс Клувер", 2007, էջ 61:

Ե տվել առաջ քաշելու պետական մարմինների գործողությունների (անգործության), ինչպես նաև նրանց հրապարակած ակտերի հակաիրավականության կանխավարկածը: Այդ մոտեցումը բացատրվում է նրանով, որ քանի որ քաղաքացիական իրավունքում վնասի պատճառման ցանկացած դեպք համարվում է հակաիրավական, հետևաբար, ի սկզբանե, որպես հակաիրավական պետք է դիտել նաև վնաս հասցրած պետական մարմինների գործողությունները, անգործությունը կամ ակտերը: Պետական մարմինների ակտերի հակաիրավականության կանխավարկածի գոյությունը փորձ է արվում հիմնավորելու այդ ակտերի վիճարկման վերաբերյալ դատական գործերով ապացուցման պարտականության բաշխման կանոնից ելնելով: Ն. Ռ. Սկոբչիչկինան, մասնավորապես, նշում է, որ պետական մարմնի կամ դրա պաշտոնատար անձի գործողության հակաօրինականության ապացուցման պարտականության բաշխման հարցը լուծված է ի օգուտ տուժողի, ինչն ամբողջությամբ համապատասխանում է «գլխավոր դելիկտի» կանոնին<sup>1</sup>: Օրենքը իրավական ակտի ընդունման համար հիմք ծառայած հանգամանքների ապացուցման պարտականությունը դնում է այդ ակտն ընդունած մարմնի վրա, ինչից հետևում է, որ հակաիրավականության կանխավարկածը տարածվում է նաև իշխանական ակտերով վնասի պատճառման դեպքերի վրա<sup>2</sup>:

Այսպիսով, նշված հեղինակները, պետական մարմինների գործունեությամբ պատճառված վնասի հատուցման նկատմամբ կիրառելի համարելով վնասի հատուցման համար քաղաքացիական պատասխանատվությանը վերաբերող կանոնները, առաջ են քաշում պետական մարմինների և դրանց պաշտոնատար անձանց գործողությունների, անգործության և ակտերի հակաիրավականության կանխավարկածը՝ այդ մոտեցումը հիմնավորելով այն պատճառանությամբ, որ քանի որ քաղաքացիական իրավունքում վնասի պատճառման յուրաքանչյուր դեպք ի սկզբանե համարվում է հակաիրավական, ուստի հակաիրավական պետք է համարել նաև վնաս պատճառած իշխանական

<sup>1</sup> St' u Скобычкина Н. Р., նշված աշխատությունը, էջ 61:

<sup>2</sup> St' u Андреев Ю. Н. Ответственность государства за причинение вреда: цивилистические аспекты. Юридический центр Пресс, 2013, էջ 73:

ակտերը: Մենք չենք կիսում այս հեղինակների կարծիքը: Վերջիններիս կողմից հաշվի չի առնվում պետական մարմինների գործունեության հատուկ բնույթը: Ի վերջո, բոլոր պետական մարմինները, իրականացնելով իրենց վերապահված լիազորությունները, իրենց առջև դրված խնդիրներով և գործունեությամբ նպատակաուղղված են պետության գործառնությունների իրագործման ապահովմանը: Պետական մարմինների յուրաքանչյուր գործողություն կարող է անձին վնաս հասցնել ու սպառնալիք պարունակել, սակայն այդ սպառնալիքը չի կարող հիմք լինել պետական մարմնի համար համապատասխան լիազորության իրականացումից հրաժարվելու համար: Եթե նույնիսկ պետական մարմնի պաշտոնատար անձնի սկզբանե գիտակցի, որ իր համար պարտադիր կատարման ենթակա գործողությամբ անձին պատճառելու է վնաս, ապա, միևնույնն է, նա չի կարող ձեռնպահ մնալ այդ գործողության կատարումից՝ դա պատճառաբանելով անձին հնարավոր վնաս հասցնելու հանգամանքով: Ուստի ակնհայտ է, որ պետական մարմինների պարագայում վերջիններիս կատարած գործողություններով վնասի պատճառումը չի կարող դիտվել որպես այդ գործողությունների իրավականության գնահատման չափանիշ: Եթե պետական մարմնի այս կամ այն գործողությամբ անձին պատճառվել է վնաս, սակայն տվյալ պետական մարմինը լիազորված է եղել այդ գործողությունը կատարելու և այդ ընթացքում վերջինիս կողմից պահպանվել են այդ գործողության կատարման կանոնները, ապա դրա հակաիրավականության մասին խոսք լինել չի կարող: Վնասի պատճառման փաստը այստեղ երկրորդական նշանակություն է ձեռք բերում: Չարկ է նկատել, որ վարչական ակտի իրավաչափության կանխավարկածի առկայության մասին իրավական դիրքորոշում է արտահայտել նաև ՀՀ վճռաբեկ դատարանը, որի իմաստն այն է, որ յուրաքանչյուր վարչական ակտ համարվում է իրավաչափ և ենթակա է կատարման, քանի դեռ այն օրենքով սահմանված կարգով չի վիճարկվել և անվավեր ճանաչվել<sup>1</sup>:

Վարչական ակտերի և, ընդհանրապես, պետական մարմինների բոլոր գործողությունների (անգործության) իրավաչափության

<sup>1</sup> Տե՛ս, օրինակ, ՎԴ2/0278/05/09 վարչական գործով 25.06.2010թ. որոշումը կամ ՎԴ/2085/05/12 վարչական գործով 30.04.2015թ. որոշումը:

կանխավարկածից ելնելը թելադրված է այն անհրաժեշտությամբ, որ հակառակ մոտեցման պարագայում կասկածի տակ կդրվի ամբողջ պետական գործունեությունը:

Պետական մարմինների գործողությունների իրավաչափության կանխավարկածը նշանակում է, որ պետական մարմինների գործունեությամբ պատճառված վնասի հատուցման իրավահարաբերություններում քաղաքացիական իրավունքին հատուկ «գլխավոր դելիկտի» կանոնը չի կարող գործել: Ինչպես նշեցինք, «գլխավոր դելիկտի» կանոնը ենթադրում է վնաս պատճառած ցանկացած գործողության հակաիրավականություն, իսկ վարչական ակտի իրավաչափության կանխավարկածը նշանակում է, որ նույնիսկ վնաս պատճառելու դեպքում իշխանական գործողությունը կամ ակտը չի կարող համարվել հակաիրավական, եթե այն ընդունվել է սահմանված կանոններին համապատասխան: Այսպիսով, «գլխավոր դելիկտի» կանոնը հանրային իրավունքում բախվում է վարչական ակտի իրավաչափության կանխավարկածի սկզբունքին, որին էլ պետք է տրվի առաջնայնությունը:

Չաշվի առնելով, որ իշխանական գործողությունների և ակտերի իրավաչափության կանխավարկածի գործողության պայմաններում հանրային իրավունքի բնագավառում «գլխավոր դելիկտի» կանոնը գործել չի կարող, որոշ հեղինակներ վարչարարությունում պատճառված վնասի հատուցումը քաղաքացիաիրավական դելիկտային պարտավորությունների շրջանակներում դիտարկելը հիմնավորելու նպատակով առաջարկում են պետության դելիկտային պատասխանատվության երկակի բնույթի տեսությունը: Այդ տեսության իմաստն այն է, որ պետության՝ վնասի հատուցման պարտավորությունը ենթադրում է պետական մարմնի կամ դրա պաշտոնատար անձի գործողությունների հակաիրավականության երկու տեսակների առկայությունը՝ քաղաքացիաիրավական, որը դրսևորվում է հենց վնասի պատճառման մեջ, և վարչաիրավական, որը դրսևորվում է վնաս պատճառած գործողությունը դրա կատարման համար սահմանված կանոնների խախտմամբ կատարված լինելու մեջ<sup>1</sup>: Սակայն այս հարցում պետք է

<sup>1</sup> St'u Кун А. А. Противоправность и вина в обязательствах по возмещению вреда, причиненного гражданину актами власти // Правоведение. - Л.: Изд-во Ленингр. ун-та, 1984, № 3. - էջեր 91-93:

համաձայնել Ա. Լ. Մակովսկու հետ, ով խոսում է այն մասին, որ նմանատիպ դեպքերում պետական մարմնի գործողության երկակի հակաիրավականության պահանջ առաջադրելու հիմքերը բացակայում են, քանի որ եթե վնաս պատճառած գործողությունը իրավաչափ է, ապա դրա «քաղաքացիաիրավական հակաիրավականությունը», այսինքն՝ վնասի պատճառումը, որևէ իրավական հետևանք չի առաջացնում<sup>1</sup>: Վնաս պատճառող պետական մարմնի կամ դրա պաշտոնատար անձի գործողության հակաիրավականության բնութագիրը, որպես կանոն, քաղաքացիական իրավունքի շրջանակներից դուրս է գտնվում: Այդ գործողության իրավաչափությունը ենթակա է գնահատման իրավունքի այն ճյուղի նորմերի տեսանկյունից, որի շրջանակներում այն կատարվել է: Հետևաբար, վարչարարության իրականացման ոլորտում անձին պատճառված վնասի հատուցումը կախված է նրանից, թե արդյոք իրավաչափ, թե ոչ իրավաչափ գործողություններով է պատճառվել այդ վնասը, մինչդեռ քաղաքացիաիրավական հարաբերություններում պատճառված ցանկացած վնաս ենթակա է հատուցման՝ անկախ նրանից, թե ինչ գործողության հետևանքով է այն պատճառվել, եթե, իհարկե, վնաս պատճառող անձը չի ապացուցում իր մեղքի բացակայությունը վնասի պատճառման մեջ:

Վարչարարության մեջ պատճառված վնասի համար պատասխանատվության նշված առանձնահատկությունները պայմանավորում են նաև վարչական մարմնի կամ դրա պաշտոնատար անձի մեղքի վերաբերյալ տարբերակված մոտեցում ցուցաբերելու անհրաժեշտություն: Յու. Ն. Անդրեևը վնաս հասցնելու համար պետական մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց պատասխանատվության առաջացման պարտադիր պայման է համարում նաև մեղքի առկայությունը և ընդգծում, որ անձը ճանաչվում է անմեղ, եթե վնաս պատճառած գործողությունը կատարելիս դրսևորել է հետևողականության և շրջահայացության պահանջվող մակարդակ<sup>2</sup>: Հեղինակի արտահայտած այս մտքից հետևում է, որ պետական մարմնի համար վնասի հատուցման պարտավորություն կարող է ծագել այն դեպքում, երբ վերջինս վնասի կանխման

<sup>1</sup> Տե՛ս Маковский А. Л., նշված աշխատ., էջ 106:

<sup>2</sup> Տե՛ս Андреев Ю. Н., նշված աշխատ., էջ 80:

ուղղությունը բավարար և անհրաժեշտ հետևողականություն և շրջահայացություն չի դրսևորել: Յեղիևակի հետմեննք համաձայն ենք այն առումով, որ իր լիազորությունները վարչական մարմինը չի կարող իրականացնել կամայական ձևով և պարտավոր է ապահովել մարդու իրավունքների երաշխավորվածությունը: Սակայն վարչարարության ոլորտում առանձնահատկությունը, ինչպես նշվեց, այն է, որ վարչարարության իրականացումն առանձին դեպքերում անխուսափելիորեն կարող է հանգեցնել անձի համար վնասի առաջացման, որպիսի հանգամանքը, սակայն, չի կարող վարչարարության իրականացումից հրաժարվելու հիմք լինել: Ասվածից բխում է, որ վարչարարության իրականացման հետևանքով վնասի առաջացման դեպքում վարչարարությունն իրականացնող անձի մեղքի հարցը պետք է դիտարկել ոչ թե այդ վարչարարության հետևանքների՝ առաջացած վնասների նկատմամբ վերջինիս ունեցած վերաբերմունքի, այլ բուն վարչարարության իրավաչափության կամ ոչ իրավաչափության կապակցությամբ վերջինիս ունեցած վերաբերմունքի համատեքստում: Ասվածը վերաբերում է նրան, որ քաղաքացիաիրավական հարաբերությունների ոլորտում անձն ազատվում է վնասը հատուցելու պարտավորությունից, եթե ապացուցում է, որ այն իր մեղքով չի պատճառվել: Այսինքն՝ քաղաքացիական իրավունքում առավելապես կարևորվում է բուն վնասի պատճառման փաստը, և եթե անձը ապացուցում է, որ վնասն իր մեղքով չի պատճառվել, ապա նա ազատվում է այն հատուցելուց՝ անկախ նրանից, թե իր ինչպիսի գործողությունների հետևանքով է հասցվել վնասը: Յետևաբար քաղաքացիական իրավունքում առաջնային է համարվում վնասի պատճառման փաստի նկատմամբ անձի վերաբերմունքի հարցը, մինչդեռ վարչարարության ոլորտում այդ նույն մոտեցումը չի կարող գործել: Այստեղ անձը նախապես կարող է իմանալ վնաս պատճառելու հնարավորության մասին, ուստի անհրաժեշտ է վերջինիս մեղքը գնահատել ոչ թե վնաս պատճառելու հնարավորության, այլ կատարված գործողության իրավականության կամ հակաիրավականության հարցում ունեցած վերաբերմունքից ելնելով: Եթե քաղաքացիաիրավական հարաբերություններում անձը կարող է ապացուցել վնասի պատճառման մեջ իր մեղքի բացակայությունը, ապա, թերևս, հնարավոր չէ պատկերացնել, թե



ինչպես վարչարարությունն իրականացրած պետական մարմինը կամ պաշտոնատար անձը կարող է ապացուցել իր մեղքի բացակայությունը վարչարարության ոչ իրավաչափության հարցում: Քաղաքացիական իրավունքում անձը համարվում է անմեղ, եթե ապացուցում է, որ վնասի առաջացումը կանխելու նպատակով ձեռնարկել է իրենից կախված բոլոր քայլերը: Վարչարարության ոլորտում վնասը ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով հասցված է ինչևէ ու դեպքում դժվար է պատկերացնել, թե ինչպես անձը կարող է ապացուցել իր մեղքի բացակայությունը, այսինքն՝ ինչպես նա կարող է մեղք չունենալ վարչարարությունը օրենքի խախտմամբ իրականացրած է ինչևէ ու հարցում: Ասվածից հետևում է, որ կատարված իշխանական գործողության ոչ իրավաչափ է ինչևէ ու բոլոր դեպքերում այն կատարած պետական մարմնի կամ պաշտոնատար անձի մեղքը մշտապես առկա է, քանի որ վերջինս գործնականում չի կարող տվյալ գործողությունը կատարել օրենքի խախտմամբ՝ միևնույն ժամանակ էլ ինչևէ ու անմեղ: Օրենքի խախտման բոլոր դեպքերում պաշտոնատար անձի մեղքը ոչ թե ենթադրվում է, այլ մշտապես առկա է: Մինչդեռ քաղաքացիական իրավունքում ինքնին վնասի առաջացումը չի վկայում այն պատճառած անձի մեղավորության մասին: Վերջինս գրկված է իր մեղավորությունը ժխտելու հնարավորությունից:

Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է հաշվի առնել, որ ՀՀ քաղաքացիական օրենսդրությունն առանձին դեպքերում քաղաքացիաիրավական պատասխանատվություն է նախատեսում նաև առանց մեղքի վնաս պատճառելու համար: Խոսքը, մասնավորապես, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս կամ առավել վտանգի աղբյուրով վնաս պատճառելու և այլ դեպքերի մասին է, երբ նույնիսկ վնաս պատճառած անձի մեղքի բացակայությունը նրան չի ազատում պատասխանատվությունից: Սակայն նշված դեպքերը կարելի է բացառություններ համարել ընդհանուր կանոնից, իսկ ընդհանուր կանոնն այն է, որ քաղաքացիաիրավական հարաբերություններին ոլորտում անձն ազատվում է վնասը հատուցելու պարտականությունից, եթե ապացուցում է, որ այն իր մեղքով չի պատճառվել:

Քաղաքացիաիրավական պատասխանատվության և վարչարարության մեջ պատճառված վնասի համար պատասխանատվության

առաջացման հիմքերի տարբերությունները և պատասխանատվության այդ երկու ոլորտներում հիշյալ տարբերություններով պայմանավորված մեղքի հարցին առնչվող առանձնահատկությունները կարելի է ընդգծել նաև ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից թիվ ԵԿԴ/2128/02/13 քաղաքացիական գործով 30.04.2015թ. որոշմամբ արտահայտված դիրքորոշման համառոտ քստում: Հայցվոր ընկերությունը հայցադիմում էր ներկայացրել դատարան ընդդեմ իր նախկին տնօրեն 2-ի՝ պահանջելով ընկերությանը պատճառված վնասի հատուցում: Հայցի հիմքում ընկած փաստական հանգամանքների համաձայն՝ հարկային մարմինների կողմից ընկերությունում իրականացվել է 2-ի՝ ընկերության տնօրեն եղած ժամանակաշրջանում պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմինների կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Ստուգման արդյունքներով ընկերությանն ԱԱՀ-ի գծով առաջադրվել է լրացուցիչ հարկային պարտավորություն: Ստուգումն իրականացնելու պահին 2-ն արդեն իսկ ազատված է եղել իր զբաղեցրած պաշտոնից: Դատարան ներկայացրած հայցով ընկերությունը 2-ից պահանջել է որպես վնասների հատուցում հօգուտ իրեն բռնագանձել լրացուցիչ վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարը՝ տույժերի և տուգանքների հետ միասին: Գործում առկա են եղել նաև փաստեր, որ զբաղեցրած պաշտոնից ազատվելուց հետո ընկերության նոր տնօրենին 2-ն նախազգուշացրել է ընկերությունում առդիտ անցկացնելու և հնարավոր հարկերը վճարելու, այդպիսով ընկերության հարկային ռիսկերը զրոյացնելու անհրաժեշտության մասին: Բացի այդ, ստուգման ակտը կազմելուց հետո 2-ն ընկերության նոր տնօրենին և մասնակիցներին տեղյակ է պահել, որ առկա է նույնանման փաստական հանգամանքներ ունեցող մեկ այլ գործով ստուգման ակտն անվավեր ճանաչելու մասին ՀՀ վարչական դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ: Առաջին ատյանի դատարանը բավարարել է ընկերության հայցը, իսկ վերաքննիչ քաղաքացիական դատարանը վճիռը թողել է օրինական ուժի մեջ: ՀՀ վճռաբեկ դատարանը բեկանել է վերաքննիչ դատարանի որոշումը և գործն ուղարկել նոր քննության: Իր որոշմամբ վճռաբեկ դատարանը կարևորել է իր արարքի վնասակար

հետևանքների նկատմամբ անձի հոգեբանական վերաբերմունքի հարցը՝ բառացիորեն արձանագրելով հետևյալը. «Քաղաքացիական իրավահարաբերություններում մեղքն արտահայտվում է անձի վերաբերմունքով ոչ միայն իր արարքի, այլև դրա հետևանքների նկատմամբ: Այսինքն՝ գուտ հակաիրավական արարք թույլ տալու փաստը դեռևս չի վկայում անձի մոտ մեղքի առկայության մասին, ուստի դատարանները նշված հանգամանքը գնահատելիս նաև պետք է պարզեն այդպիսի արարք թույլ տված անձի վերաբերմունքը հնարավոր բացասական հետևանքների նկատմամբ:

Եթե դիտավորության դեպքում վնաս պատճառած անձը ցանկանում է կամ անտարբերությամբ թույլ է տալիս իր հակաիրավական արարքի հետևանքների առաջացումը, ապա անզգուշության պարագայում անձը, մի դեպքում կանխատեսելով իր վարքի բացասական հետևանքները, առանց բավարար հիմքերի կարծում է, թե դրանք կկանխվեն, կամ մեկ այլ դեպքում՝ ընդհանրապես չի կանխատեսում իր արարքի հետևանքները, չնայած պարտավոր էր կանխատեսել:

Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն դեպքում, երբ անձը հակաիրավական գործողությունների կատարումից (կամ անգործության դրսևորումից) հետո մինչև բացասական հետևանքների վրա հասնելը պատշաճ կերպով ձեռնարկում է պատճառվելիք վնասը կանխելու ուղղությամբ օբյեկտիվորեն հնարավոր, անհրաժեշտ և իրենից կախված բոլոր միջոցները, ապա տվյալ իրավիճակում կարող է հավաստել ենթադրաբար վնաս պատճառած անձի մեղքի բացակայությունը: Հետևաբար, ենթադրյալ վնաս պատճառած անձի կողմից ձեռնարկված համապատասխան միջոցների վերաբերյալ ապացույցների առկայությունը, որոնք վկայում են նաև նման պայմաններում իրենից պահանջվող պատշաճ չափով հոգատարության և շրջահայացության դրսևորման փաստի մասին, կարող է հիմք հանդիսանալ տվյալ անձին պատճառված վնասի հատուցման պատասխանատվությունից ազատելու համար»:

ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից նշված որոշմամբ արտահայտված դիրքորոշումը ևս մեկ հաստատումն է այն պնդման, որ մասնավոր իրավահարաբերություններում առավելապես կարևորվում է բուն վնասի պատճառման փաստը, որն էլ հենց արարքը դարձնում է հակաիրավական: Ուստի մասնավոր հարաբերությունների տիրույթում անձի մեղքի հարցը պետք է գնահատվի վնասի առաջացման նկատմամբ նրա դրսևորած վերաբերմունքով: Վարչարարության իրականացման ոլորտում վնասի առկայությունը

և, հետևաբար, նաև անձի վերաբերմունքն այդ հարցում չեն կարևորվում, քանի որ այստեղ էական գործոնը վարչարարության իրավաչափության խնդիրն է, որն էլ, ինչպես արդեն նշվել է, որոշվում է ոչ թե վնասների առկայությունից ելնելով, այլ օրենսդրության համապատասխան ճյուղի նորմերին իրականացված վարչարարության համապատասխանությունն ստուգելով: Իսկ ինչ վերաբերում է վարչարարությունն իրականացնելուց հետո հնարավոր վնասի կանխման ուղղությամբ վարչական մարմնի կողմից միջոցներ ձեռնարկելուն, ապա դրա միակ հնարավոր եղանակը, թերևս, սեփական նախաձեռնությամբ վարչական ակտն անվավեր ճանաչելն է: Դա նշանակում է, որ այդ դեպքում ևս վարչարարության իրականացման ոլորտում հոգեբանական վերաբերմունքը դրսևորվում է բուն արարքի նկատմամբ, քանի որ այն անվավեր է ճանաչվում վարչական մարմնի կողմից դրա ոչ իրավաչափ լինելը գիտակցելու արդյունքում:

Վարչարարությամբ պատճառված վնասի համար պատասխանատվության առաջացման վերոհիշյալ առանձնահատկությունները պայմանավորում են վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման համար անհրաժեշտ հանգամանքների ապացուցման պարտականության կատարման հետ կապված որոշակի տարբերություններ: Քաղաքացիական իրավունքում վնասների հատուցման համար անհրաժեշտ հանգամանքներից վնասի առկայություն, վնաս պատճառած անձի հակաիրավական վարքագծի, վնասների և հակաիրավական վարքագծի միջև պատճառահետևանքային կապի առկայություն հանգամանքների ապացուցման պարտականությունը դրված է ենթադրյալ վնաս կրած անձի վրա, իսկ վնաս պատճառողը պետք է ապացուցի իր մեղքի բացակայությունը վնասի պատճառման մեջ: Վարչարարության ոլորտում ապացուցման բեռի բաշխումը պետք է կատարվի այլ կերպ: Այդ տարբերությունները պայմանավորված են, մի կողմից, նրանով, որ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման վերաբերյալ դիմում ներկայացնելու պահին արդեն իսկ վարչարարությունը ճանաչված է լինում ոչ իրավաչափ, և փաստորեն, ենթադրյալ վնաս կրած անձն արդեն իսկ կատարած է լինում հակաիրավական վարքագծի ապացուցման իր պարտականությունը, մյուս կողմից, հանրային

իրավունքում մնացյալ հանգամանքների ապացուցման կապակցությամբ օրենքն այլ կանոններ է սահմանում: Նախ՝ Օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի համաձայն՝ անձի համար ոչ բարենպաստ հանգամանքների ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը: Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի համաձայն՝ վարչական ակտում պետք է նշվեն այն բոլոր փաստական և իրավաբանական հանգամանքները, որոնք վարչական մարմնին հիմք են տվել համապատասխան որոշում կայացնելու համար:

Հիշյալ իրավադրույթների համադրումից հետևում է, որ վնասի հատուցման վերաբերյալ վարչական վարույթի արդյունքում վնասի հատուցումը մերժելու մասին վարչական ակտ կայացնելու դեպքում վարչական մարմինը՝ ի հիմնավորումն այդ ակտի, պետք է ապացուցի վնասների բացակայություն, դրանք ոչ իրավաչափ ճանաչված վարչարարության արդյունքում պատճառված չլինելու, ինչպես նաև իր մեղքի բացակայություն հանգամանքները<sup>1</sup>: Հետևաբար, վարչարարության ոլորտում պատճառված վնասի հատուցումն էականորեն քաղաքացիաիրավական պատասխանատվության կիրառումից տարբերվում է նաև այս տեսանկյունից:

Եթե ամբողջ վերոշարադրյալ իլույսի ներքո անդրադառնանք վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման հարաբերությունների նկատմամբ քաղաքացիական օրենսդրության նորմերի կիրառման հնարավորության հարցին, ապա կարելի է եզրակացնել, որ վնասի հատուցման վերաբերյալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 60-րդ գլխով սահմանված կանոնները կիրառելի են վարչարարությամբ պատճառված վնասի հատուցումից բխող իրավահարաբերությունների նկատմամբ՝ այնքանով, որքանով դրանց կիրառումը չի հակասում Օրենքի դրույթներին, ինչպես նաև պետական մարմինների գործողություններով պատճառված վնասը հատուցելու պետության պարտականության ելն է: «Ամփոփելով ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված վնասի հատուցման ինստիտուտի վերաբերյալ օրենսդրության ուսումնասիրությունը՝ անհրաժեշտ ենք համարում նկատել, որ տվյալ դեպքում այն ծավալով, որքանով չեն հակասում Օրենքի

<sup>1</sup> Պետք է նկատի ունենալ, որ, ինչպես պարզ դարձավ, մեղքն այստեղ էական դեր չի խաղում:

վերոհիշյալ նորմերին, կիրառելի են քաղաքացիական օրենսդրությամբ ամրագրված վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորությունների վերաբերյալ իրավական դրույթները...»<sup>1</sup>:

Վերջում կցանկանայինք որոշակի անդրադարձ կատարել նաև վնաս պատճառած վարչարարության և առաջացած վնասների միջև պատճառահետևանքային կապի վերաբերյալ խնդրին, քանի որ, ի տարբերություն մեղքի, որն այստեղ չունի սկզբունքային նշանակություն, պատճառահետևանքային կապի առկայությունը վնասը հատուցելու պարտավորության առաջացման համար անհրաժեշտ է: Վարչական ակտը, գործողությունը կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելն ինքնին չի վկայում այն մասին, որ անձը վնաս է կրել վարչարարության արդյունքում: Յետևաբար վարչարարության ոչ իրավաչափ լինելուց բացի, պահանջվում է նաև իրականացված վարչարարության և առաջացած վնասի միջև անմիջական պատճառահետևանքային կապի առկայություն: Իրավագիտության մեջ պատճառահետևանքային կապի վերաբերյալ ձևավորվել են տարբեր տեսություններ: Ն. Դ. Եգորովը, օրինակ, առաջ է քաշում ուղղակի և անուղղակի կապի տեսությունը: Ըստ նրա՝ պատճառված վնասի համար պատասխանատվության առաջացման պայման կարող է դիտվել միայն հակաիրավական վարքագծի և առաջացած վնասի միջև ուղղակի, անմիջական պատճառահետևանքային կապը: Ոչ ուղղակի, միջնորդավորված կապը իրավական արժեքավորում չի ստանում, հետևաբար եթե վնասը հակաիրավական վարքագծի միջնորդավորված արդյունք է, ապա չի կարող առաջ գալ պատասխանատվության հարց: Յետաբերքի է, որ Ն. Դ. Եգորովը որպես պատճառահետևանքային կապն ուղղակի կամ անուղղակի դիտելու չափանիշ դիտում է այն հանգամանքը, թե արդյոք վնասի առաջացմանը նախորդող դեպքերի հաջորդական զարգացման շղթայում հակաիրավական վարքագծի և վնասների միջև առկա են այլ փաստեր, որոնց հետ օրենքը կապում է պատասխանատվության առաջացումը, թե ոչ<sup>2</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Գ. Դանիելյան Վարչական վարույթ և դատավարություն: Ուսումնական ձեռնարկ /Եր.: Տիգրան Մեծ, 2011, էջ 140:

<sup>2</sup> Տե՛ս Гражданское право. Учебник. Под. Ред. А. П. Сергеева, Ю. К. Толстого. Часть 1. М., 1996, էջ 493:

Ն. Դ. Եգորովի առաջադրած տեսությունն իր հիմնադրույթներով մոտ է Օ. Ս. Իոֆֆեի կողմից առաջարկված հնարավորության և իրականության տեսությունը: Այդ տեսության էությունը հանգում է նրան, որ այս կամ այն հանգամանքի՝ առաջացած վնասակար հետևանքի հետ պատճառահետևանքային կապի մեջ գտնվելը կախված է նրանից, թե այդ հանգամանքը՝ որպես պատճառ, ստեղծում է վնասակար արդյունքի առաջացման վերացական, կոնկրետ հնարավորություն, թե արդյունքը հնարավորությունից դարձնում է իրական: Պատճառական կապ կարող է առկա լինել միայն վերջին երկու դեպքերում: Այն պարագայում, երբ հակաիրավական վարքագծի վնասակար հետևանքի առաջացման միայն վերացական հնարավորություն է ստեղծում, ուրեմն այն չի կարող համարվել վնասի առաջացման պատճառ<sup>1</sup>:

Նշված երկու տեսությունները, ըստ էության, միմյանց չեն հակասում: Ընդհակառակը, մենք այն կարծիքին ենք, որ դրանցից յուրաքանչյուրում արտահայտված գաղափարների համադրումը կարող է նպաստել յուրաքանչյուր կոնկրետ դեպքում հակաիրավական վարքագծի և առաջացած վնասի միջև պատճառական կապի առկայության կամ բացակայության հարցի ճիշտ լուծմանը: Այդ երկու տեսությունների էության վերլուծությունը մեզ թույլ է տալիս ընդհանուր եզրահանգման գալու առ այն, որ պատճառական կապի հարցը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում առանձին գնահատման առարկա է, և դրա առկայությունը որոշելիս առանցքային է համարվում այն գաղափարը, որ պատճառական կապի առկայության մասին կարող է խոսք լինել միայն այն դեպքում, երբ վնասի առաջացումը ոչ իրավաչափ վարչարարության տրամաբանական, անխուսափելի և անմիջական արդյունքն է: Այս տեսանկյունից մենք համաձայն ենք իրավագիտության մեջ արտահայտված այն տեսակետին, որ երևույթի առաջացման պատճառն անհրաժեշտ է տարբերել դրա առաջացմանը նպաստող պայմանից: Օրինակ, եթե անձի առողջությանը վնաս է հասցվում, սակայն վերջինս իր աշխատունակությունը կորցնում է նախկինում ունեցած հիվանդության պատճառով, որը գլուխ է բարձրացնում ստացված վնասվածքից, ապա տվյալ դեպքում անձի առողջությանը վնաս

<sup>1</sup> Ст'ю Иоффе О. С. Обязательственное право. М., 1975, էջեր 118-120:

պատճառով արարքի կատարումը պետք է դիտել ոչ թե որպես վերջինիս անաշխատունակության առաջացման բուն պատճառ, այլ պայման, որը այլ երևույթների հետ մեկտեղ նպաստել է այդ հետևանքի առաջացմանը<sup>1</sup>:

Ոչ իրավաչափ վարչարարության և առաջացած վնասի միջև պատճառահետևանքային կապի էության ըմբռնման և դրա առկայության հարցի ճիշտ գնահատման նպատակով, թերևս, օգտակար կլիներ դատական պրակտիկայից մի քանի գործերի ուսումնասիրումը, որոնցով վնասի հատուցման պահանջը մերժվել է հենց վարչական մարմնի հակաիրավական գործողության և վնասի միջև անմիջական պատճառական կապի բացակայության պատճառաբանությամբ: Մասնավորապես՝ հետաքրքրական է հետևյալ օրինակը. ընկերությունը հայց է ներկայացրել դատարան, որով պահանջել է պետությանն իր բռնագանձել որոշակի գումար՝ որպես դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության ոչ իրավաչափ գործողության հետևանքով իրեն պատճառված վնասի հատուցում: Չայցի հիմքում դրվել էին այն հանգամանքները, որ մեկ այլ դատական ակտով ոչ իրավաչափ է ճանաչվել հարկադիր կատարման ծառայության՝ ընկերության կողմից վարձակալական հիմունքներով օգտագործվող գույքի վրա արգելանք դնելու գործողությունը: Նշված գործողությունն անվավեր ճանաչելը պայմանավորված է եղել նրանով, որ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրության «Կատարողական վարույթի մասին» ՌԴ օրենքով<sup>2</sup> պարտապանի վարձակալած գույքի արգելադրումը պետք է իրականացվի դատական կարգով, մինչդեռ տվյալ դեպքում հարկադիր կատարողը արգելանք էր կիրառել սեփական որոշմամբ: Չայցվորը իր ներկայացրած հայցը հիմնավորում էր նաև նրանով, որ ոչ իրավաչափ կերպով վարձակալած սարքավորումների վրա արգելանք դնելու հետևանքով վերջինս զրկված է եղել դրանք նպատակային նշանակությամբ օգտագործելու հնարավորությունից, ինչի հետևանքով էլ կրել է վնաս՝ բաց թողնված օգուտի տեսքով: Դատարանները մերժել են հայցադիմումը՝ այն հիմնավորմամբ, որ

<sup>1</sup> Ст'у Гражданское право. Том 1, 3-е издание, отв. ред. Суханов Е. А.. Wolters Kluwer, М., 2010, էջեր 604-605:

<sup>2</sup> Ст'у «Կատարողական վարույթի մասին» ՌԴ օրենքը  
[https://www.consultant.ru/document/cons\\_doc\\_LAW\\_71450/:](https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_71450/)



հայ ցվորի ենթադրյալ կրած վնասի և հարկադիր կատարողի ոչ իրավաչափ գործողության միջև առկա չէ անմիջական պատճառահետևանքային կապ, քանի որ տվյալ դեպքում թույլ է տրվել միայն գույքն արգելանքի տակ վերցնելու ընթացակարգային խախտում, այն է՝ դատական կարգով արգելանք կիրառելու փոխարեն հարկադիր կատարողը այդ գործողությունը կատարել է իր որոշմամբ: Եթե համապատասխան պահանջով հարկադիր կատարողը դիմեր դատարան, ապա նրա պահանջը մերժելու հիմքեր առկա չէին լինի, ուստի ընթացակարգի խախտման հետևանքով արգելանք կիրառելու գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու և հայ ցվոր ընկերության ենթադրյալ կրած վնասների միջև առկա չէ պատճառահետևանքային կապ<sup>1</sup>:

Նշված դատական ակտով դատարանի արտահայտած դիրքորոշումից բխում է, որ հայ ցի մերժման հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ պարտապանի գույքի արգելադրումը, բոլոր դեպքերում, իրավաչափ է եղել, նրա գույքը, միևնույնն է, ենթակա է եղել արգելադրման: Չետևաբար ընթացակարգային կանոնների խախտման հիմքով արգելանք կիրառելու մասին որոշման անվավեր ճանաչումը չի վկայում այն մասին, որ անվավեր ճանաչված որոշման և ենթադրյալ կրած վնասների միջև կա ուղղակի և անհրաժեշտ պատճառահետևանքային կապ: Մենք կարծում ենք, որ տվյալ պայմաններում պատճառահետևանքային կապի մասին կարող էր խոսք լինել, եթե արգելանք դրվեր արգելադրման ոչ ենթակա որևէ գույքի վրա, և որոշումն անվավեր ճանաչվեր հենց այդ հիմքով:

Այսպիսով, պատճառականությունը բացահայտելիս առավել ապես կարևորվում է այն հանգամանքը, որ ոչ իրավաչափ վարչարարության և առաջացած վնասների միջև պատճառահետևանքային կապ կարող է առկա լինել, եթե վնասի առաջացումը հանդիսանում է իրականացված վարչարարության օբյեկտիվորեն անհրաժեշտ և ուղղակի արդյունքը: Եթե բացասական հետևանքները կարող էին առաջանալ նաև առանց ոչ իրավաչափ գործողությունների, ուրեմն դրանց միջև պատճառահետևանքային կապը բացակայում է:

<sup>1</sup> Տե՛ս <http://ppt.ru/news/60892>, 29.02.2016թ. դրությամբ:

**ԳԼՈՒԽ 2. ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԻՐԱՎԱԶԱՓՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ՎԻՃԱՐԿՈՒՄԸ ԵՎ ԴՐԱՆՑՈՎ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒ ՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՅ ԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**§1. ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԻՐԱՎԱԶԱՓՈՒԹՅԱՆ ՎԻՃԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒԺԸ**

Ինչպես արդեն հայտնի է, Օրենքի 3-րդ հոդվածով սահմանվում է, որ վարչարարությունն է համարվում նաև վարչական մարմինների՝ Նորմատիվ իրավական ակտերի ընդունմամբ եզրափակվող արտաքին ներգործությունն ունեցող գործունեությունը: Նույն օրենքով վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման նախապայման է համարվում այն իրավական ակտը սահմանված կարգով ոչ իրավաչափ ճանաչելը, որով անձին վնաս է պատճառվել: Նորմատիվ իրավական ակտերի պարագայում վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման նշված պայմանի պահպանումն աչքի է ընկնում որոշակի առանձնահատկություններով, որոնց առանձին կողմերի բացահայտումը կարող է կարևոր նշանակություն ունենալ Նորմատիվ իրավական ակտերի ընդունմամբ պատճառված վնասի հատուցման գործընթացի արդյունավետ իրագործման համար:

Այսպիսով, քանի որ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման համար, նախառաջ, պահանջվում է իրավական ակտի ոչ իրավաչափ ճանաչում, Նորմատիվ իրավական ակտերի ընդունմամբ պատճառված վնասի հատուցում ստանալու գործընթացում առաջին քայլը պետք է լինի տվյալ Նորմատիվ իրավական ակտի՝ օրենքով սահմանված կարգով անվավեր ճանաչումը: Նորմատիվ իրավական ակտերի վիճարկման կարգը սահմանված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով<sup>1</sup>, որի 5-րդ բաժնի՝ «Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ

<sup>1</sup> Ընդունվել է 05.12.2013թ., ուժի մեջ է մտել 07.01.2014թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2013.12.28/73(1013).1 Հոդ.1186.1:

գործերի վարույթը» վերտառույթ ամբ 26-րդ գլուխը համապարփակ կարգավորման է ենթարկում նորմատիվ իրավական ակտերի վիճարկման հետ կապված բոլոր հարցերը: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի հիշյալ գլխով նախատեսված կարգավորումներն ընդգրկում են հարցերի բավականաչափ այն շրջանակ, սակայն նորմատիվ իրավական ակտերի ընդունմամբ պատճառված վնասի հատուցման առանձնահատկությունների բացահայտման տեսանկյունից ատենախոսության շրջանակներում մեզ առավելապես հետաքրքրում է նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչելու մասին վարչական դատարանի դատական ակտի ընդունման հետևանքների վերաբերյալ հարցի պարզաբանումը:

Իրավաբանական գրականության մեջ գոյություն ունեն տարբեր մոտեցումներ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության ստուգման արդյունքում ընդունված դատական ակտերի իրավական բնույթի վերաբերյալ: Որոշ հեղինակներ ենթադրում են, որ նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչելու վերաբերյալ դատական ակտերը նեգատիվ իրավաստեղծագործության ակտեր են, և այդ տեսանկյունից դրանք պետք է դիտարկել որպես առանձին իրավունքի աղբյուրներ<sup>1</sup>: Հեղինակների մեկ այլ խումբ կարծում է, որ այդ դատական ակտերը որևէ առանձնահատուկ բովանդակություն չունեն և ընդամենը հանդիսանում են իրավունքի մեկնաբանման և կիրառման ակտեր, որոնցով հաստատվում է վիճարկվող նորմատիվ ակտի համապատասխանությունը կամ անհամապատասխանությունն ավելի բարձր իրավաբանական ուժով օժտված մեկ այլ նորմատիվ իրավական ակտի<sup>2</sup>: Վ. Ներսիսյանցը, օրինակ, այդ դատական ակտերը դիտում է գուտ որպես իրավաբանական փաստ, որի հետ իրավունքը կապում է որոշակի իրավական հետևանքների առաջացումը (տվյալ դեպքում վիճարկվող նորմատիվ ակտի ուժը կորցնելը, այն դատարանների կողմից չկիրառվելը և այլն), սակայն դրանք օրենսդրի կողմից նախապես սահմանված իրավական նորմով նախատեսված հետևանքներ

<sup>1</sup> Տե՛ս, օրինակ, Анишина В.И. Правовая природа актов судебного правотворчества //Журнал российского права. 2006. N 10. էջ 133:

<sup>2</sup>Տե՛ս, օրինակ, Ершов В.В. Административное право: теоретические, правотворческие и правоприменительные проблемы //Теоретические и практические проблемы административного правосудия. Материалы науч.-практ. конференции. М., 2006. էջ 50:

են, ուստի դատարանը, նորմատիվ ակտի իրավաչափ լինելը կամ չլինելը հաստատելով, նոր իրավական նորմ չի ստեղծում<sup>1</sup>:

Անվիճելի է այն, որ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի իրավաչափությունը գնահատելիս դատարանը իրականացնում է և՛ իրավունքի մեկնաբանություն, և՛ կիրառում, և այդ տեսանկյունից չի կարող կասկածի տակ դրվել նման դատական ակտերի իրավակիրառ բնույթը: Սակայն դրանով քննարկվող կատեգորիայի դատական ակտերի իրավական բնույթը չի սահմանափակվում: Խնդիրն այն է, որ այդ դատական ակտերի գործողությունը ներգործություն է ունենում նաև վիճարկվող նորմատիվ իրավական ակտի իրավական բնութագրերի վրա:

Այս տեսանկյունից հետաքրքրություն է ներկայացնում այն խնդրի պարզաբանումը, թե արդյոք նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության ստուգման արդյունքում ՀՀ վարչական դատարանի կողմից կայացված դատական ակտերը կարող են դիտարկվել նախադեպի՝ որպես իրավունքի աղբյուրի տեսակի շրջանակներում: Նախադեպի անգլոամերիկյան դոկտրինի համաձայն՝ պարտադիր է համարվում միայն դատական ակտի կայացման հիմքում դրված սկզբունքը<sup>2</sup>: Ինչ վերաբերում է նախադեպի ռոմանագերմանական դոկտրինին, ապա դրա հիմնական առանձնահատկությունն այն է, որ երբ դատարանի կողմից տրված որևէ մեկնաբանություն պահպանվում է երկար ժամանակահատվածի ընթացքում, և դրա վրա հիմնված մոտեցման արդյունքում տվյալ հարցի առնչությամբ ձևավորվում է միասնական դատական պրակտիկա, ապա դատարանի որոշումը ձեռք է բերում իրավունքի աղբյուրի նշանակություն: Հետևաբար, որպես այդպիսին կարող է հանդես գալ ոչ թե նախկինում կայացված մեկ դատական ակտ, այլ դատական կայուն պրակտիկան՝ դատական ակտերի հավաքական ամբողջությունը<sup>3</sup>:

Նորմատիվ ակտերի իրավաչափության ստուգման գործերով ՀՀ վարչական դատարանի ակտերը դիտարկելով նախադեպի անգլոամերիկյան և ռոմանագերմանական դոկտրինների լույսի

<sup>1</sup>Տե՛ս Нерсесянц В. С. О правоприменительной природе судебных актов //Судебная практика как источник права. М., 1997. էջեր 34-41:

<sup>2</sup> Տե՛ս Марченко М. Н. Источники права. М., 2008, էջ 628:

<sup>3</sup> Տե՛ս Օհանյան Վ. Իրավունքի աղբյուրների հիմնախնդիրը ՀՀ-ում (տեսագործական վերլուծություն), Ատենախոսություն, Երևան, 2009, էջ 67, 134:

ներքո՝ կարելի է եզրակացնել, որ դրանք չեն համապատասխանում նախադեպի առանձնահատկություններին: Անգլոամերիկյան դոկտրինի համեմատությամբ ՅՅ վարչական դատարանի քննարկվող ակտերի տարբերությունն այն է, որ պարտադիր է համարվում ոչ թե ակտի կայացման հիմքում ընկած սկզբունքը, այլ դատական ակտի եզրակալիչ մասը: Իսկ նախադեպի ռոմանագերմանական մոդելից ՅՅ վարչական դատարանի ակտերի տարբերությունն արտահայտվում է նրանում, որ իրավունքի աղբյուր կարող է համարվել ոչ թե որոշակի հարցի առնչությամբ կայացված դատական ակտերի կայուն համախումբը, այլ, առանձին վերցրած, մեկ դատական ակտ: Կարևոր է նշել նաև այն, որ նախադեպի դոկտրինի հիմքում ընկած է դատական ակտի պարտադիր լինելը միայն այլ գործեր քննող դատարանների համար, մինչդեռ նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչելու մասին ՅՅ վարչական դատարանի դատական ակտի պարտադիրությունը չի սահմանափակվում միայն դատարաններով, այլ ընդգրկում է բոլոր իրավակիրառ սուբյեկտներին<sup>1</sup>:

Ամբողջ վերոշարադրյալի ամփոփումը թույլ է տալիս հանգել ու այն եզրակացության, որ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության ստուգման գործերով ՅՅ վարչական դատարանի ակտն իր հատկանիշներով չի համապատասխանում դատական նախադեպի առանձնահատկություններին, հետևաբար իրավունքի աղբյուրների վերաբերյալ դասական մոտեցման շրջանակներում այն կարող է դիտարկվել նորմատիվ իրավական ակտերի համատեքստում:

Գիտության մեջ նորմատիվ իրավական ակտը երկար ժամանակ բնութագրվել է որպես բացառապես իրավական նորմամրագրող ակտ<sup>2</sup>: Ըստ այդմ՝ իրավունքի աղբյուրը բնորոշվում էր որպես միայն իրավական նորմի արտահայտման ձև: Իր մենագրության մեջ Ա. Վ. Միցկեվիչը առաջիններից էր, որ առաջարկեց իրավունքի աղբյուր հասկացությունը սահմանելիս ելնել ոչ այնքան իրավական նորմի ամրագրման, որքան օրենսդրի կամքի արտահայտման դրանպատակից:

<sup>1</sup> Սյա առումով հատկանշական է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչելու մասին ՀՀ վարչական դատարանի դատական ակտերը պաշտոնական հրապարակման պահից ՀՀ ամբողջ տարածքում պարտադիր են բոլորի համար:

<sup>2</sup> Տե՛ս, օրինակ, Мицкевич А. В. Акты высших органов советского государства: юридическая природа нормативных актов высших органов государственной власти и управления СССР / А.В. Мицкевич. – М.: Юридическая литература, 1967. էջ 22:

Ա. Լ. Բուրկովն այն կարծիքն է արտահայտում, որ որևէ մեկը չի կարող կասկածի տակ դնել որևէ օրենքում փոփոխություններ կատարելու կամ այն ուժը կորցրած ճանաչելու մասին օրենքի նորմատիվ բնույթը, թեկուզև այդ օրենքը կարող է նոր համապարտադիր վարքագծի կանոններ չսահմանել: Յետևաբար այդ նույն տրամաբանությամբ նորմատիվ իրավական ակտ պետք է համարել նաև նորմատիվ ակտերի վիճարկման վերաբերյալ ընդունված դատական ակտերը, քանի որ դրանցով ևս ուժը կորցրած է ճանաչվում նորմատիվ ակտը կամ դրա որևէ դրույթ<sup>1</sup>:

Այսպիսով, դատական ակտերը, որոնք պարունակում են վիճարկվող նորմատիվ իրավական ակտերի գնահատականը, իրենց գործողությունը տարածում են ոչ միայն նորմատիվ ակտի վիճարկման վերաբերյալ գործին մասնակցող անձանց, այլև անորոշ շրջանակի անձանց վրա, քանի որ այդ դատական ակտով անվավեր է ճանաչվում մինչ այդ իր գործողությունը անորոշ շրջանակի անձանց վրա տարածած նորմատիվ իրավական ակտը: Այս տեսանկյունից նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչելու վերաբերյալ ընդունված դատական ակտերը չեն կարող մեկնաբանվել լոկորպես իրավունքի կիրառման ակտեր:

Այսպիսով, իրավունքի աղբյուրը հասկացությունը՝ որպես պետական մարմինների իրավաստեղծ գործունեության արդյունք, պետք է արտահայտի իրավաստեղծ գործունեության և դրա արդյունքում ընդունված իրավական ակտի բնույթը, որը չի սահմանափակվում միայն վարքագծի նոր կանոնների ամրագրմամբ<sup>2</sup>: Իրավունքի աղբյուրի կամ նորմատիվ իրավական ակտի հասկացությունը պետք է արտահայտի ոչ թե իրավական նորմի հատկանիշները, այլ իրավաստեղծ գործունեության առանձնահատկությունները, որի տակ հասկացվում է պետական մարմինների, ինչպես նաև ժողովրդի՝ իրավական նորմերի սահմանմանը, փոփոխմանը կամ դադարեցմանն ուղղված գործունեությունը<sup>3</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Բурков А. Л. Акты судебного нормоконтроля как источники административного права, дисс. канд. юрид. наук, Тюмень-2005, էջ 66:

<sup>2</sup> Տե՛ս Բурков А. Л., նշված աշխատությունը, էջ 68:

<sup>3</sup> Տե՛ս Невинский В.В. Конституционный Суд РФ и правотворчество в России / В.В. Невинский // Вестник Конституционного Суда РФ. – 1997. – № 3. – էջ 69:

Նման պայմաններում կարելի է խոսել նաև քննարկվող դատական ակտերի իրավաստեղծ բնույթի մասին: Դրանք՝ որպես իրավունքի աղբյուր, կարելի է բնորոշել որպես նորմատիվ ակտի իրավաչափության ստուգման արդյունքում ընդունված որոշում, որով անվավեր է ճանաչվում (վերացվում է) վիճարկվող նորմատիվ իրավական ակտը կամ դրա որևէ առանձին դրույթ<sup>1</sup>: Նման պայմաններում, թերևս, նորմատիվ ակտերի իրավաչափության վիճարկման գործերով դատական ակտերին ավանդաբար ընդունված իրավունքի աղբյուրների շրջանակում պետք է տալ նորմատի ակտի նշանակություն: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը ևս նախատեսում է, որ ՀՀ առաջին ասյանի դատարանների, վերաքննիչ դատարանների և վճռաբեկ դատարանի՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի ակտն ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտին հակասող և անվավեր ճանաչելու վերաբերյալ կայացված ակտերը համարվում են նորմատիվ ակտեր (6-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ):

Հարկ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ թե՛ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը, թե՛ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը համապատասխան են համարում միայն ՀՀ վարչական դատարանի այն ակտերը, որոնցով վիճարկվող նորմատիվ ակտն անվավեր է ճանաչվում: Միայն այդ դատական ակտերը կարող են հիմք դառնալ անվավեր ճանաչված նորմատիվ ակտի կիրառմամբ ընդունված վարչական ակտերի վերանայման համար<sup>2</sup>:

Հիշյալ համատեքստում հետաքրքրություն է ներկայացնում այն հարցի պարզաբանումը, թե արդյո՞ք վարչական դատարանի՝ վիճարկվող նորմատիվ ակտն իրավաչափ ճանաչելու մասին դատական ակտերը ևս որոշակի պայմանների առկայության դեպքում չեն կարող ազդեցություն ունենալ այդ նորմատիվ ակտի վրա հիմնված վարչական ակտերի վրա: Այս հարցը պարզաբանելու նպատակով հարկ ենք համարում, նախառաջ, անդրադառնալ այն խնդրին, թե նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության վիճարկման գործերով ինչն է հանդիսանում դատական պաշտպանության առարկան, և ինչ խնդիրներ

<sup>1</sup> Տե՛ս Бурков А. Л., նշված աշխատությունը, էջ 73:

<sup>2</sup> Նորմատիվ ակտն անվավեր ճանաչելու մասին դատական ակտի ազդեցությանը վարչական ակտերի վրա անդրադարձ է կատարվում աշխատանքի հետագա շարադրանքում:

պետք է լուծի դատարանը վիճարկվող ակտի իրավաչափությանը գնահատելու համար: Նորմատիվ իրավական ակտի իրավաչափության վիճարկման գործերով անձի իրավական շահը կրում է անձնական բնույթ և ուղղված է վերջինիս խախտված սուբյեկտիվ իրավունքի պաշտպանությանը: Այս համատեքստում անհրաժեշտ է նկատի ունենալ, որ իրավական կարգավորման մեխանիզմի տեսանկյունից ոչ իրավաչափ նորմատիվ իրավական ակտի ընդունումն ինքնին չի հանգեցնում անձի սուբյեկտիվ իրավունքի խախտման<sup>1</sup>: վերջինիս իրավունքները խախտվում են նորմատիվ ակտի ոչ իրավաչափ դրույթի կիրառման հետևանքով: Յետևաբար անձի իրավական շահը դրսևորվում է նրանում, որպեսզի բացառվի իր նկատմամբ նորմատիվ իրավական ակտի ոչ իրավաչափ դրույթի կիրառումը: Բացի այդ, նորմատիվ իրավական ակտի անվավեր ճանաչումն ինքնին չի ապահովում անձի խախտված իրավունքների վերականգնումը: Դրա համար պահանջվում է նորմատիվ ակտի հիման վրա ընդունված վարչական ակտի վերացում կամ նորմատիվ ակտի կիրառմամբ պատճառված վնասների հատուցում: Այդ տեսանկյունից նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության վիճարկման վերաբերյալ գործերով դատական պաշտպանության արական ոչ թե անձի խախտված սուբյեկտիվ իրավունքն է, այլ վերջինիս՝ օրենքով պահպանվող շահը, որը դրսևորվում է նրանում, որ բացառվի ոչ իրավաչափ նորմատիվ ակտի կիրառումն անձի նկատմամբ, կամ անհրաժեշտ պայմաններ ստեղծվեն (հնարավորություն և ապահովվի) անձի խախտված իրավունքների վերականգնման համար<sup>2</sup>: Յանրային իրավադատաբերության ենթոլ գործերով անձի սուբյեկտիվ իրավունքի պաշտպանությունն իրականացվում է միջնորդավորված կերպով<sup>3</sup>: Այս առումով նորմատիվ ակտի իրավաչափության վիճարկման գործի վարույթը տարբերվում է վարչական ակտի վիճարկման գործի վարույթից, որտեղ դատական պաշտպանության

<sup>1</sup> Առանձին դեպքերում նորմատիվ իրավական ակտի ընդունումն անմիջականորեն կարող է անձին վնաս պատճառել, ինչպես օրինակ հանրային գերակա շահ ճանաչելու մասին ՀՀ կառավարության որոշումները, սակայն սույն աշխատության շրջանակներում այդպիսի վնասի հատուցման հարցը քննարկման առարկա չի դարձվում:

<sup>2</sup> St'u Никитин С. В. Судебный контроль за нормативными правовыми актами в гражданском и арбитражном процессе, М.: РАП, Волтерс Клувер, 2010, էջ 76:

<sup>3</sup> St'u Попова Ю. А. Теоретические проблемы судопроизводства по делам, возникающим из публично-правовых отношений: автореф. дис... канд. юрид. наук. М., 2001, էջ 21:



առարկան անմիջականորեն անձի խախտված իրավունքն է: Այդ դեպքում դատարանի խնդիրն է պարզել ու, թե արդյոք վարչական ակտն ընդունվել է կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի խախտմամբ, և արդյոք դրանով խախտվում են անձի սուբյեկտիվ իրավունքները, թե ոչ: Յետևաբար վարչական դատարանը վարչական ակտի վիճարկման վերաբերյալ գործի քննության ընթացքում կիրառման ենթակա իրավական նորմերը մեկնաբանում է այն սսպեկտով, որպեսզի պարզի դրանց խախտման հարցը: Նման դեպքերում դատարանի խնդիրն է վերհանել ու կիրառելի նորմի բուն բովանդակությունը, իմաստը՝ առանց դրա իմաստային նոր երանգների բացահայտման: Իրավիճակն այլ է նորմատիվ ակտերի վիճարկման պարագայում: Այս դեպքում դատարանը ավելի բարձր իրավաբանական ուժով օժտված նորմատիվ իրավական ակտին վիճարկվող նորմատիվ ակտի համապատասխանությունը պարզել ու նպատակով խնդիր ունի վերհանել ու վիճարկվող նորմատիվ ակտի դրույթի նոր իմաստային երանգներ, բացահայտել ու, թե ինչպես է պետք հասկանալ տվյալ իրավական նորմը: Դա պետք է արվի վիճարկվող նորմատիվ ակտի իրավաչափության գնահատման անհրաժեշտությունից ելնելով: Այս կապակցությամբ Ս. Վ. Նիկիտինը նշում է, որ նորմատիվ իրավական ակտի իրավաչափության վիճարկման գործով կայացված դատական ակտը կարող է հանդես գալ որպես նորմատիվ ակտի կարգավորիչ գործողության հստակեցման միջոց, երբ դրանով իրականացվում է նորմատիվ ակտի այս կամ այն դրույթի լայն կամ սահմանափակ մեկնաբանություն<sup>1</sup>: Այս կատեգորիայի գործերով կայացված դատական ակտը կարող է հանդես գալ որպես իրավական ներգործության լրացուցիչ միջոց դրանով վիճարկվող նորմատիվ ակտի այս կամ այն դրույթի կոնկրետացման դեպքում<sup>2</sup>: Իրավունքի կոնկրետացումը Յու. Ա. Գավրիլովան մեկնաբանում է որպես իրավական նորմի հստակեցում, մանրամասնեցում և զարգացում<sup>3</sup>: Չարգացումը արտացոլում է

<sup>1</sup> Տե՛ս Никитин С. В. , նշված աշխատ., էջ 10:

<sup>2</sup> Տե՛ս Баранов В. М., Лазарев В. В. Конкретизация права: понятие и пределы//Конкретизация законодательства как технико-юридический прием нормотворческой, интерпретационной, правоприменительной практики. Н. Новгород, 2008, էջ 1633:

<sup>3</sup> Տե՛ս Гаврилова Ю. А. Конкретизация правовых норм и толкование права по объему. изд-во ВолГУ, 2007, էջեր 40-48:

«անհրաժեշտի» մասին մեր պատկերացումները, այսինքն՝ ինչպիսին պետք է լինի իրավական նորմը նոր պայմաններում<sup>1</sup>: Ասվածից բխում է, որ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության ստուգման գործերով մեծապես կարևորվում է դատարանի՝ իրավական նորմի մեկնաբանման գործառույթը: Իրավունքի մեկնաբանման անհրաժեշտությունը, ի թիվս այլ գործոնների, պայմանավորված է նաև հասարակական հարաբերությունների դինամիկայով: Իրավական նորմերը, ելնելով դրանց ձևական որոշակիությունից, անփոփոխ են մնում մինչև օրենսդրական փոփոխություններ կատարելը, մինչդեռ հասարակական կյանքն այդ ամբողջ ընթացքում ենթարկվում է փոփոխությունների և ապրում շարունակական զարգացում: Դրա հետևանքով կարող է ստեղծվել մի իրավիճակ, երբ իրավական նորմը կիրառվի իր ընդունումից հետո զգալի փոփոխությունների ենթարկված հասարակական հարաբերությունների նկատմամբ<sup>2</sup>:

Նորմատիվ իրավական ակտի իրավաչափությունը պարզելիս դատարանը կարող է իրավական նորմի ավելի լայն մեկնաբանություն տալ՝ բացահայտելով, թե ինչ նոր բովանդակային կողմեր ունի իրավական նորմը և ինչպես է պետք հասկանալ ու կիրառել այն: Նշված դատողությունը բխում է նաև նորմատիվ իրավական ակտի իրավաչափության վիճարկման վերաբերյալ գործով պաշտպանության ենթակա օրենքով պահպանվող շահից, այն է՝ խախտված իրավունքների վերականգնման անհրաժեշտ նախադրյալների ապահովման անհրաժեշտությունից: Նորմատիվ իրավական ակտով անձի իրավունքները կարող են խախտվել ոչ միայն դրա ոչ իրավաչափ լինելու, այլև դրա առանձին նորմերի պարբերական ոչ ճիշտ կիրառման հետևանքով: Նորմատիվ ակտի այս կամ այն դրույթի սխալ կիրառման շրջանակների ընդլայնման դեպքում ընդունված վարչական ակտի վիճարկումը կդադարի անձի իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոց լինելուց, և նորմատիվ ակտի շարունակական ոչ իրավաչափ կիրառման կանխման տեսակետից վարչական ակտի վիճարկման վարույթը չի ծառայի անձի իրավունքների իրական պաշտպանությանը: Նորմատիվ իրավական

<sup>1</sup> Տե՛ս Գավրիլովա Ե. Ա. նշված աշխատ., էջեր 40-48:

<sup>2</sup> Տե՛ս Ալեքսանդրովա Լ. Ն. Толкование юридических норм и его влияние на судебную практику, изд-во Российский государственный педагогический университет имени А. И. Герцена, էջ 23:

ակտի իրավաչափ ափուլ թյուր ունը պարզել իս դատարանը պետք է հաշվի առնի, որ խնդիր ունի հնարավորություն ապահովելու անձի խախտված իրավունքների վերականգնման համար: Եթե անձի իրավունքների խախտումը հետևանք է թեկուզև իրավաչափ նորմատիվ ակտի առանձին դրույթի սխալ կիրառման, ընդ որում, սխալ կիրառումը արմատավորված է վարչական մարմինների գործունեության պրակտիկայում և կրում է շարունակական բնույթ, ապա այդ իրավունքների պաշտպանության համար անհրաժեշտ պայմանների ստեղծման խնդիրը դատարանի կողմից կարող է լուծվել վիճարկվող, սակայն իրավաչափ նորմատիվ ակտի սխալ կիրառման պրակտիկային վերջ դնելով: Ընդ որում, ինչպես նշվեց, այդ խնդիրը չի կարող լուծվել նորմատիվ ակտի առանձին դրույթի սխալ կիրառմամբ ընդունված վարչական ակտի վիճարկման վերաբերյալ գործի քննության արդյունքում, որովհետև իրավունքի կոնկրետացում այդ գործերով դատարանը չի իրականացնում: Այս կապակցությամբ հարկ է նաև ընդգծել, որ ինչքան էլ պաշտպանության ենթակա շահը կրում է անձնական բնույթ, ակնհայտ է, որ նորմատիվ իրավական ակտի ընդունումը շոշափում է անորոշ շրջանակի անձանց շահերը, քանի որ կարգավորում է անորոշ շրջանակի անձանց միջև առաջացող հասարակական հարաբերությունները: Յետևաբար նորմատիվ իրավական ակտի վիճարկման վերաբերյալ գործերով, մասնավոր շահից բացի, պաշտպանության ենթակա են նաև հանրային շահերը: Յանրային շահերի պաշտպանությունից ելնելով՝ ակնհայտ է, որ նորմատիվ ակտի առանձին դրույթների սխալ մեկնաբանմամբ վարչական ակտերի ընդունման պրակտիկայի արմատավորումը նաև անորոշ շրջանակի անձանց իրավունքների խախտման վտանգ է պարունակում, ուստի նորմատիվ ակտի իրավաչափ ունը ստուգել իս դրա վիճարկվող, սակայն իրավաչափ դրույթի ճիշտ կիրառման պայմանների սահմանումը պետք է համարել հիմնավորված: Այդ կերպ կլուծվի խախտված իրավունքների վերականգնման անհրաժեշտ նախադրյալների ապահովման խնդիրն այն դեպքերում, երբ խախտումը տեղի ունի վիճարկվող նորմատիվ ակտի սխալ կիրառման հետևանքով, և սխալ կիրառումը վարչական մարմինների կողմից կրում է շարունակական բնույթ:

Այս ափսոսով, վարչական դատարանը, վիճարկվող նորմատիվ ակտը ճանաչելով իրավաչափ, պետք է հնարավորություն ունենա բացահայտելու դրա բովանդակությունը, որպիսի հանգամանքն էլ կարող է կանխել այդ նորմատիվ ակտի հետագա սխալ մեկնաբանումն ու կիրառումը վարչական մարմինների կողմից: Այս կտրվածքով խնդիրն այն է, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի համաձայն՝ «Իրավական ակտը պետք է մեկնաբանվի դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները: Իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը»: Մենք գտնում ենք, որ իրավական ակտի մեկնաբանման վերաբերյալ օրենքի հիշյալ դրույթը ուղղակի հակասության մեջ է տեսական հարթությունում ձևավորված մոտեցման հետ, ըստ որի՝ իրավական նորմի մեկնաբանությունն ինքնին ենթադրում է դրա բովանդակության որոշակի փոփոխում: Կարծում ենք, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածում խոսքը պետք է գնարոչ թե իրավական ակտի մեկնաբանման, այլ պարզաբանման մասին:

Հաշվի առնելով ամբողջ վերոշարադրյալը, ինչպես նաև նորմատիվ ակտերի իրավաչափության ստուգման գործերով դատական ակտերի նորմատիվ բնույթը՝ մենք այն կարծիքին ենք, որ ՀՀ վարչական դատարանին պետք է տրվի նորմատիվ ակտերի իրավաչափության ստուգման արդյունքում այդ նորմատիվ ակտն իր կողմից բացահայտված բովանդակությամբ իրավաչափ ճանաչելու լիազորություն: Այդ լիազորության կիրառմամբ ընդունված դատական ակտը հիմք կլինի ոչ միայն վիճարկվող նորմատիվ դրույթը սխալ կիրառած և անձի սուբյեկտիվ իրավունքը խախտած վարչական ակտի վերանայման համար, այլ և կբացառի նորմատիվ ակտի իրավաչափության վիճարկման խնդրով դիմած անձի և անորոշ շրջանակի անձանց իրավունքների հետագա խախտումները նորմատիվ դրույթի ոչ իրավաչափ կիրառման արդյունքում:

**§2. ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԻ ԻՐԱՎԱԶԱՓՈՒԹՅԱՆ ՎԻՃԱՐԿՄԱՆ ԳՈՐԾՈՎ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ ՊՍՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒ ՑՄԱՆ ՀԱՄԱՐ**

«Վարչարարություն հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 96-րդ հոդվածով սահմանված է վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման նախապայման. մասնավորապես՝ այդ հոդվածի համաձայն՝ վնասի հատուցում չի իրականացվում, քանի դեռ վարչական մարմնի իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը, որով անձին վնաս է հասցվել, սահմանված կարգով ոչ իրավաչափ ճանաչվել, բացառությամբ սույն օրենքի 109-րդ հոդվածով նախատեսված դեպքերի: Նշված հոդվածի բովանդակությունն ինչ բխում է, որ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման նախապայմանը վնաս հասցրած վարչական մարմնի իրավական ակտը սահմանված կարգով ոչ իրավաչափ ճանաչվել է: Այս առնչությամբ որոշակի առանձնահատկություններով տարբերվում է դատական կարգով նորմատիվ իրավական ակտերի անվավեր ճանաչումը՝ որպես վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման նախապայման: Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության վիճարկման վերաբերյալ գործերի վարույթը նախատեսված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով, որի՝ «Հատուկ վարույթներ» վերտառությամբ 5-րդ բաժնի 26-րդ գլուխը կարգավորում է նշված վարույթի հետ կապված բոլոր հարցերը: Սակայն ատենախոսության շրջանակներում մեզ հետաքրքրում է վիճարկվող նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչվելու մասին ՀՀ վարչական դատարանի դատական ակտի իրավական հետևանքների հարցը՝ հատկապես այն մասով, որը վերաբերում է նշված դատական ակտի գործողությունը դրան նախորդած հասարակական հարաբերությունների վրա տարածելուն: Այլ կերպ ասած՝ մեր նպատակը վիճարկվող նորմատիվ իրավական ակտը կամ դրա վիճարկվող դրույթն անվավեր ճանաչվելու մասին դատական ակտի հետադարձ ուժին առնչվող առանձին հարցերի քննարկումն է, որոնք նշանակություն ունեն նորմատիվ իրավական ակտի անվավեր ճանաչումից հետո վարչարարությամբ պատճառված վնասի հատուցում ստանալու գործընթացում: Մեր առջև դրված նպատակից ելնելով՝ առավել նպատակահարմար է քննարկումն սկսել նրանից, թե արդյոք վիճարկվող նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչվելու մասին դատական ակտն օժտված է կատարողականության հատկանիշով, և եթե այո, ապա ինչ պետք է հասկանալ այդ դատական

ակտի կատարման ներքո: Իրավաբանական գրականության մեջ նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչելու մասին դատական ակտի կատարման հարցի շուրջ հեղինակների շրջանում չի նկատվում միակարծություն:

Քննարկվող դատական ակտերի կատարողականության հատկանիշի բացակայության մասին տեսակետ է հայտնել Մ. Ա. Կլեպիկովան՝ նշելով, որ այս կատեգորիայի դատական գործերով դատական ակտի հարկադիր կատարում հնարավոր է<sup>1</sup>: Օ. Ա. Բեկը նշում է, որ նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչելու մասին դատական ակտը՝ որպես ճանաչման մասին ակտ, հարկադիր կատարման կարիք չունի<sup>2</sup>: Ա. Լ. Բուրկովը նշում է, որ նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչելու մասին գործերով կատարողական վարույթ, որպես այդպիսին, առկա է: Տվյալ դեպքում, սակայն, հեղինակը պարզաբանում է, որ պետք է նկատի ունենալ, որ խոսքը վերաբերում է դատական ակտի՝ որպես իրավահարազ ակտի կատարողական վարույթի բացակայությանը, այլ ոչ թե առհասարակ կատարման բացակայությանը: Ըստ նրա՝ շահագրգիռ անձը, իր ձեռքում ունենալով նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչելու մասին դատական ակտը, կարող է ձեռնամուխ լինել իր խախտված իրավունքների վերականգնմանը, մասնավորապես՝ անվավեր ճանաչված նորմատիվ իրավական ակտի հիման վրա ընդունված անհատական ակտի անվավեր ճանաչմանը և այլն: Յեղինակն իր այդ եզրահանգումը հիմնավորում է երկու փաստարկներով. նախ՝ քննարկվող դատական ակտերի երկակի բնույթով, ինչը դրսևորվում է նրանում, որ բացի իրավունքի նորմերը կիրառելուց, դատարանը նաև իրավաստեղծ գործունեություն է իրականացնում՝ նորմատիվ ակտի վիճարկվող դրույթը վերացնելով: Յետևաբար հանդիսանալով իրավունքի աղբյուր՝ դատական ակտն օժտված է նույնպիսի իրավաբանական ուժով, ինչ բոլոր մյուս նորմատիվ իրավական ակտերը: Այդ առումով վերջինիս կատարման տակ պետք է ուղղակիորեն հասկանալ հասարակական հարաբերությունների

<sup>1</sup> St'u Клепикова М. А. Проблемы правового положения органов принудительного исполнения в исполнительном производстве: автореф. дис. ... канд. юрид. наук. Екатеринбург, 2001, էջ 8:

<sup>2</sup> St'u Бек О. А. Производство по делам об оспаривании нормативных правовых актов: автореф. дис. канд. юрид. наук. М., 2007, էջ 157:

Նկատմամբ դրա կիրառումը: Այսինքն՝ նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչելու մասին դատական ակտն սկսում է ուղղակիորեն գործել անվավեր ճանաչված նորմատիվ ակտի փոխարեն: Այս տեսանկյունից որևէ նշանակություն չունի նաև դատական ստուգման ենթարկված նորմատիվ իրավական ակտում այն ընդունող մարմնի կողմից հետագա փոփոխությունների կամ լրացումների կատարելը կամ ակտը վերացնելը, քանի որ դատական ակտի՝ որպես իրավունքի աղբյուրի կատարումն ուղղակիորեն ենթադրում և նշանակում է հետագայում դրա անմիջական կիրառումը հասարակական հարաբերությունների նկատմամբ: Երկրորդ՝ Ա. Լ. Բուրկովը դատական ակտերի կատարման համար կատարողական վարույթի բացակայությունը պատճառաբանում է նաև դրանց արստրակտ բնույթով: Դա նշանակում է, որ նորմատիվ իրավական ակտերի վիճարկման գործերով դատարանը քննում է ոչ թե փաստի, այլ իրավունքի մասին վեճ, որի լուծման արդյունքում պատասխանողը դատական ակտով որևէ գործողության կատարման չի պարտավորեցվում<sup>1</sup>:

Չատկանշական է նաև այն, որ նույն աշխատության մեջ Ա. Լ. Բուրկովը նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչելու մասին դատական ակտի կատարման կապակցությամբ անհրաժեշտ պայման է համարում միայն դրա հրապարակումը: Այս համատեքստում հարկ ենք համարում նաև ավելացնել, որ նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչելու մասին դատական ակտի կատարմանն ուղղված առանձին գործողությունների կատարումը՝ որպես հենց դատական ակտի կատարում, դիտում են նաև այլ հեղինակներ: Օրինակ՝ Օ. Վ. Իսայենկովան և Յա. Ս. Գրիշինան ենթադրում են, որ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության վիճարկման վերաբերյալ գործերով կայացված դատական ակտերի կատարումը դրանց հրապարակումն է<sup>2</sup>, մինչդեռ Յու. Ա. Պոպովան քննարկվող կատեգորիայի դատական ակտերի կատարման գործողությունն է

<sup>1</sup> Տե՛ս Бурков А. Л. նշված աշխատ., էջեր 134-135:

<sup>2</sup> Տե՛ս Исаенкова О.В., Гришина Я.С. Судебные акты по делам, возникающих из публичных правоотношений: законная сила и исполнимость//Исполнительное право. 2006. N 1.

համարում անվավեր ճանաչված նորմատիվ ակտն ընդունած մարմնի կողմից այն վերացնելը<sup>1</sup>:

Մյուս կողմից, դատավարական գրականության մեջ վերջին տարիներին պաշտպանվում է կատարողականության՝ որպես բլոր տեսակի դատական ակտերին բնորոշ հատկանիշի գաղափարը: Ա. Կ. Սերգունը կատարողականությունը համարում է բլոր տեսակի դատական որոշումների ընդհանուր հատկանիշ<sup>2</sup>: Վ. Վ. Յարկովը նույնպես կարծում է, որ օրինական ուժի մեջ մտած յուրաքանչյուր դատական ակտ ենթակա է կատարման<sup>3</sup>: Ի. Ա. Նևսկին կատարողականությունը համարում է նաև ճանաչման մասին դատական ակտերին բնորոշ հատկանիշ<sup>4</sup>:

Ս. Վ. Նիկիտինը, պաշտպանելով նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչելու մասին դատական ակտերի կատարողականության հատկանիշի առկայության գաղափարը, այդ դատական ակտերի կատարման գործընթացն առավել արդյունավետ դարձնելու նպատակով առաջարկում է օրենսդրորեն դատարանի համար սահմանել հնարավորությունն ոչ միայն որոշման եզրափակիչ մասով անվավեր ճանաչված նորմատիվ իրավական ակտն ընդունած մարմնին պարտավորեցնելու փոփոխել կամ վերացնել նորմատիվ իրավական ակտի անվավեր ճանաչված դրույթը, այլ և սահմանելու այն ժամկետը, որի ընթացքում պետական մարմինը պարտավոր է կատարել այդ պարտականությունը<sup>5</sup>:

Խորամուխ չլինելով նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչելու մասին դատական ակտի կատարմանն ուղղված կատարողական գործողությունների կատարման՝ Ս. Վ. Նիկիտինի կողմից առաջարկվող կարգի սահմանման նպատակահարմարության հարցի քննարկման մեջ՝ մենք կիսում ենք վերջինիս մոտեցումն

<sup>1</sup>St'u Попова Ю. А. Теоретические проблемы судопроизводства по делам, возникающих из публично-правовых отношений: автореф. дис. . д-ра юрид. наук. М., 2001, էջ 85:

<sup>2</sup> St'u Сергун А. К. Проблемы исполнительного производства в советском гражданском процессе: автореф. дис. ... д-ра юрид. наук. М., 1980, էջ 17:

<sup>3</sup>St'u Ярков В. В. Право апелляционного и кассационного обжалования лицами, не участвовавшими в деле в гражданском и арбитражном процессе: сравнительный анализ//Арбитражные суды: теория и практика правоприменения. Сб. ст. к 75-летию Арбитражного суда Свердловской области. Екатеринбург, 2006, էջ 39:

<sup>4</sup> St'u Невский И. А. Исполнимость судебных постановлений как внутреннее проявление результата судебной деятельности//Исполнительное право. 2006. N 3.

<sup>5</sup> St'u Никитин С. В. նշված աշխատ., էջ 156:



այն հարցում, որ չի կարելի համաձայնել Ա. Լ. Բուրկովի այն պնդմանը, համաձայն որի՝ նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչվելուց հետո այդ ակտն ընդունած մարմնի կողմից ակտի վերացմանը կամ փոփոխմանն ուղղված որևէ գործողություն կատարելու անհրաժեշտություն առկա չէ: Բնականաբար, նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչվելու մասին դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու պահից անվավեր ճանաչված նորմատիվ ակտի գործողությունը դադարում է, այդ պահից սկսած դրավրա հիմնված անհատական ակտերն այլևս չեն կարող կիրառվել: Այս առումով դատարանի որոշումն օրինական ուժի մեջ մտնելու պահից ձեռք է բերում պարտադիրության հատկանիշ, և այդ պահից սկսած դրանով անվավեր ճանաչված նորմատիվ ակտի գործողությունն ինքնըստինքյան դադարում է: Սակայն հարկ է նկատի ունենալ, որ այդ նույն կանոնը չի կարող գործել այն դատական և վարչական ակտերի պարագայում, որոնք ընդունվել են նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչվելու մասին դատական ակտի կայացումից առաջ: ՀՀ վարչական դատարանի դատական ակտով անվավեր ճանաչված նորմատիվ իրավական ակտն ընդունած մարմնի կողմից դրան անվավեր ճանաչված դրույթի վերացում կամ փոփոխություն չի պահանջվում միայն այդ ակտի հետագա գործողության մասով, քանի որ այդ պահից սկսած անվավեր նորմատիվ ակտի դրույթը կարելի է պարզապես կիրառել, և դրահամար չի պահանջվում դատական կարգով անվավեր ճանաչված դրույթի անվավերության լրացուցիչ հաստատում այն ընդունած մարմնի կողմից: Իսկ երբ խոսքը վերաբերում է դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց առաջ ընդունված անհատական ակտերի անվավերությանը, որոնք ընդունվել են անվավեր ճանաչված նորմատիվ իրավական ակտի հիման վրա, ապա այս պարագայում ակնհայտ է դատական ակտի հետադարձ գործողությունն ապահովող որոշակի գործողությունների կատարման անհրաժեշտությունը: Հակառակ պարագայում կբացակայի այն կառուցակարգը, որի միջոցով դատական ակտը կարգավորիչ ներգործություն է ունենալու նաև իրեն նախորդած հասարակական հարաբերությունների նկատմամբ:

Նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչվելու մասին վարչական դատարանի դատական ակտերի հետադարձ ուժի էությունը

բացահայտելու և այդ հարցն առավել խորությամբ ըմբռնելու նպատակով նպատակահարմար ենք գտնում այն պարզաբանել ՅՅ վարչական դատարանի՝ նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչելու մասին դատական ակտի և ՅՅ սահմանադրական դատարանի՝ նորմատիվ ակտի դրույթը սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին որոշման հետադարձ գործողությունը սահմանող իրավական նորմերի համեմատական վերլուծության համատեքստում: Դատվում է այն նկատառումից ելնելով, որ համանման այդ երկու ինստիտուտները սահմանող իրավական նորմերը, ընդհանուր առմամբ, միանման իրավական կարգավորում նախատեսելով հանդերձ, բովանդակային առումով միմյանցից որոշակիորեն տարբերվում են, և այդ տարբերությունների ուսումնասիրումը կարող է նպաստել, մի կողմից, ՅՅ վարչական դատարանի ակտերի հետադարձ գործողության էության լիարժեք ընթացմանը, մյուս կողմից, գործող օրենսդրական կարգավորումների միասնականության ապահովմանն ուղղված առաջարկների ներկայացմանը:

Թե՛ ՅՅ վարչական դատարանի դատական ակտերի, թե՛ ՅՅ սահմանադրական դատարանի որոշումների պարագայում ընդհանուր կանոնն այն է, որ վիճարկվող ակտն իր իրավաբանական ուժը կորցնում է այն անվավեր ճանաչելու մասին որոշման ուժի մեջ մտնելու պահից, սակայն և՛ ՅՅ վարչական դատավարության օրենսգիրքը, և՛ «Սահմանադրական դատարանի մասին» ՅՅ օրենքը<sup>1</sup> նշված ընդհանուր կանոնից սահմանել են բացառություններ: Մասնավորապես՝ ՅՅ վարչական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նորմատիվ իրավական ակտը վարչական դատարանի կողմից կարող է անվավեր ճանաչվել այդ ակտի ուժի մեջ մտնելու պահից, եթե նման որոշում չընդունելը կարող է ծանր հետևանքներ առաջացնել հանրության կամ պետության համար: Նույնաբովանդակ նորմ է ամրագրված նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՅՅ օրենքում, որի 68-րդ հոդվածի 12-րդ մասի համաձայն՝ ՅՅ սահմանադրական դատարանն իրավասու է իր՝ վիճարկվող նորմատիվ իրավական ակտն ամբողջությամբ կամ մասամբ սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին

<sup>1</sup> Ընդունվել է 01.06.2006թ., ուժի մեջ է մտել 01.07.2006թ.: Տե՛ս ՅՅՊՏ 2006.06.21/32(487) Յոդ.645:

որոշումը տարածելու նաև այդ որոշման ուժի մեջ մտնելուն նախորդած իրավահարաբերության ներքին վրա, եթե դաչանելը կարող է ծանր հետևանքներ ունենալ հանրության կամ պետության համար: Վիճարկվող նորմատիվ ակտն անվավեր ճանաչելու մասին վարչական դատարանի դատական ակտին հետադարձ ուժ տալը դրսևորվում է նրանում, որ անբողոքարկելի դարձած անհատական ակտերը և օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը, որոնք ընդունվել են անվավեր ճանաչված նորմատիվ ակտի հիման վրա դրա ուժը կորցնելուն նախորդող վերջին երկու տարվա ընթացքում, ենթակա են վերանայման՝ նոր հանգամանքներով վերանայման համար սահմանված կանոններին համապատասխան (վարչ. դատ. օր.-ի 199-րդ հոդվածի 8-րդ մաս): ՀՀ սահմանադրական դատարանի՝ վիճարկվող նորմատիվ ակտը սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին որոշումը դրա ուժի մեջ մտնելուն նախորդող հարաբերության ներքին վրա տարածելը նշանակում է անվավեր ճանաչված նորմատիվ ակտի վրա հիմնված՝ սահմանադրական դատարանի որոշումն ուժի մեջ մտնելուն նախորդող վերջին երեք տարվա ընթացքում ընդունված և կատարված վարչական և դատական ակտերի՝ օրենքով սահմանված կարգով վերանայում («Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 12-րդ մասի 2-րդ պարբերություն):

ՀՀ վարչական դատարանի և ՀՀ սահմանադրական դատարանի ակտերի հետադարձ գործողությունը սահմանող օրենսդրական դրույթների համեմատության արդյունքում կարելի է նկատել որոշակի բովանդակային տարբերություններ: Խոսքը, առաջին հերթին, վերաբերում է այն պահին, որից սկսած տարածվում է համապատասխան դատական ակտի հետադարձ գործողությունը: Վարչական դատարանի դատական ակտի պարագայում դա նորմատիվ իրավական ակտն ուժը կորցնելու պահն է, այսինքն՝ անվավեր ճանաչված նորմատիվ ակտի ուժը կորցնելու պահին նախորդող վերջին երկու տարվա ընթացքում ընդունված անհատական և դատական ակտերն են ենթակա վերանայման, իսկ սահմանադրական դատարանի որոշման դեպքում դրա հետադարձ գործողությունն սկսվում է հենց սահմանադրական դատարանի որոշման ուժի մեջ մտնելու պահից և տարածվում դրան նախորդող վերջին երեք տարվա

ընթացքում ընդունված և կատարված վարչական և դատական ակտերի վրա: Այսինքն՝ ՀՀ վարչական դատարանի կայացրած դատական ակտի առանձնահատկությունն այն է, որ դրա հետադարձ գործողությունն սկսում է հաշվարկվել անվավեր ճանաչված նորմատիվ իրավական ակտն ուժը կորցնելու պահից սկսած: Սակայն հարկ է նկատի ունենալ, որ, ինչպես արդեն պարզ դարձավ, նորմատիվ իրավական ակտի իրավաչափության վիճարկման վերաբերյալ գործերով ընդունված վարչական դատարանի դատական ակտին հետադարձ ուժ տալը նշանակում է, որ վարչական դատարանը վիճարկվող նորմատիվ իրավական ակտն անվավեր է ճանաչում այդ ակտի ուժի մեջ մտնելու պահից: Այլ կերպ ասած՝ վարչական դատարանը նման դեպքերում նորմատիվ ակտն իրավական ուժը կորցրած է ճանաչում այդ ակտի ուժի մեջ մտնելու պահից: Փաստորեն ստացվում է, որ այդ պարագայում նորմատիվ իրավական ակտի ուժի մեջ մտնելու և ուժը կորցրած ճանաչվելու պահերը համընկնում են: Նորմատիվ իրավական ակտն իր իրավական ուժը կորցրած է ճանաչվում հենց ուժի մեջ մտնելու պահից սկսած: Նման պայմաններում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված այն դրույթը, համաձայն որի՝ վերանայման ենթակա են անվավեր ճանաչված նորմատիվ իրավական ակտի ուժը կորցնելու նախորդող երկու տարվա ընթացքում ընդունված անհատական և դատական ակտերը, բնականաբար, դառնում է իմաստազուրկ, քանի որ այդ նորմով տրված իրավական կարգավորման տրամաբանությունից ստացվում է, որ պետք է վերանայվեն անվավեր ճանաչված նորմատիվ իրավական ակտի ուժի մեջ մտնելուց առաջ ընդունված անհատական և դատական ակտեր: Այն հայտ է, որ նման ակտերի վերանայում ուղղակիորեն հնարավոր չէ, քանի որ ընդհանրապես չեն կարող առկա լինել այնպիսի անհատական կամ դատական ակտեր, որոնք հիմնված են անվավեր ճանաչված նորմատիվ իրավական ակտի վրա, սակայն ընդունվել են այդ նորմատիվ ակտի ուժի մեջ մտնելուց առաջ: Նման անտրամաբանական իրավիճակի հանգեցնող օրենսդրական կարգավորման մեջ համապատասխան փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունն այն հայտ է: Մասնավորապես՝ ողջամիտ տարբերակ է թվում «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի օրինակով նորմատիվ ակտն անվավեր ճանաչելու մասին վարչական

դատարանի դատական ակտի հետադարձ գործողության հաշվարկման սկզբնական պահ համարել հենց այդ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահը:

Այսպիսով, ամփոփելով վերոհիշյալը՝ կարելի է բնութագրել նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչելու մասին վարչական դատարանի դատական ակտի՝ այդ նորմատիվ ակտի վրա հիմնված վարչական և դատական ակտերի վրա ունեցած ազդեցությունը: Այդ ազդեցությունը մեծապես կախված է այն հանգամանքից, թե վարչական դատարանի դատական ակտին կամ սահմանադրական դատարանի որոշմանը հետադարձ ուժ տրվում է, թե ոչ: Նորմատիվ ակտն անվավեր ճանաչելու մասին վարչական դատարանի դատական ակտին հետադարձ ուժ տալու դեպքում այդ նորմատիվ ակտի վրա հիմնված անբողոքարկելի դարձած այն անհատական ակտերը, ինչպես նաև օրինական ուժի մեջ մտած այն դատական ակտերը, որոնք ընդունվել են նորմատիվ ակտն անվավեր ճանաչելու մասին դատական ակտի՝ օրինական ուժի մեջ մտնելուն նախորդող երկու տարվա ընթացքում, ենթակա են վերանայման նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով տվյալ անհատական ակտերի վերանայման համար օրենքով սահմանված կարգով: Այլ կերպ ասած՝ վարչական դատարանի դատական ակտին հետադարձ ուժ տալու դեպքում այն դառնում է նոր հանգամանք, որի հիմքով օրենքով սահմանված կարգով վերանայվում են այդ դատական ակտի՝ օրինական ուժի մեջ մտնելուն նախորդող երկու տարվա ընթացքում ընդունված վարչական և դատական ակտերը: Իսկ ինչ վերաբերում է դատական ակտին հետադարձ ուժ չտալուն, ապա այդ դեպքում դրա առաջացրած հետևանքները սահմանված են վարչական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասերով, որոնց համակարգային վերլուծության հետևում է, որ նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչելու հետևանքը (դատական ակտին հետադարձ ուժ չտալու պարագայում) այդ նորմատիվ ակտի կիրառմամբ ընդունված անբողոքարկելի չդարձած վարչական ակտերի անվավեր ճանաչումն է օրենքով սահմանված կարգով: Ի դեպ, անվավեր ճանաչման ենթակա են ոչ միայն նորմատիվ ակտի իրավաչափության վիճարկման պահանջով դիմած անձանց նկատմամբ կիրառված վարչական ակտերը, այլ և այն վարչական ակտերը, որոնք

կիրառվել են այն անձանց նկատմամբ, ովքեր նորմատիվ ակտն անվավեր ճանաչելու պահանջ չեն ներկայացրել, սակայն այդ իրավունքը վարչական դատարանի դատական ակտը հրապարակվելու օրվա դրույթով պահպանում են՝ հաշվի առնելով նորմատիվ ակտի վիճարկման համար սահմանված ժամկետները:

Վարչական դատարանի դատական ակտին հետադարձ ուժ չտալու դեպքում այն կարող է հիմք դառնալ միայն անվավեր ճանաչված նորմատիվ ակտի դրույթի կիրառմամբ ընդունված վարչական ակտերի անվավեր ճանաչման համար: Յետևաբար նման դեպքերում վարչական դատարանի դատական ակտը որևէ ազդեցություն չի ունենում անվավեր նորմատիվ ակտի վրա հիմնված դատական ակտերի վրա: Նշված եզրահանգումը բխում է այն իրողությունից, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասերում խոսքը գնում է 192-րդ հոդվածի 1-ին մասում նշված անձանց մասին, իսկ վերջիններս դատական ակտով իրենց նկատմամբ նորմատիվ ակտի վիճարկման պահանջով վարչական դատարան չեն կարող դիմել:

Կարծում ենք, որ նման կարգավորում նախատեսելով՝ օրենսդիրը հակասական մոտեցում է դրսևորել տարբերակում չպահանջող հանգամանքների նկատմամբ: Մասնավորապես՝ անհասկանալի է, թե ինչ տրամաբանությամբ վարչական դատարանի դատական ակտը պետք է ազդեցություն ունենա և՛ վարչական, և՛ դատական ակտերի վրա դրան հետադարձ ուժ տալու դեպքում, իսկ չտալու դեպքում՝ միայն անվավեր ճանաչված նորմատիվ ակտի կիրառմամբ ընդունված վարչական ակտերի վրա: Չէ՞ որ թե՛ դատական, թե՛ վարչական ակտով կիրառվում է այն նույն իրավական նորմը, որը ճանաչվել է անվավեր: Մեր կարծիքով, վերանայման օբյեկտի տեսակով պայմանավորված տարբերակված մոտեցում ցուցաբերելը չի կարող որևէ պարագայում արդարացված համարվել, քանի որ այստեղ որպես էլ ակետ պետք է ընդունել մարդու իրավունքների և օրինական շահերի պատվանությունը: Իսկ երբ խոսքը վերաբերում է անվավեր ճանաչված նորմատիվ ակտի դրույթի կիրառմանը, ապա ակնհայտ է այդ նորմի կիրառման հետևանքով մարդու իրավունքների և օրինական շահերի խախտման փաստը՝ անկախ այն հանգամանքից, թե այդ կիրառումը տեղի է ունեցել դատական, թե

վարչական ակտով: Այս առումով առաջարկում ենք, որպեսզի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նորմատիվ ակտի դրույթն անվավեր ճանաչելու մասին վարչական դատարանի դատական ակտը հիմք չի նի ոչ միայն նորմատիվ ակտի կամ դրա դրույթի իրավաչափությունը ստուգելու հարցով վարչական դատարան դիմած և այդ իրավունքը վարչական դատարանի որոշումը հրապարակվելու օրվա դրությամբ պահպանած անձանց վերաբերյալ ընդունված անբողոքարկելի չդարձած վարչական ակտերի անվավեր ճանաչման, այլ և այդ նույն ժամանակաշրջանում ընդունված և օրինական ու ժիմեջ չմտած դատական ակտերի բեկանման համար, քանի որ, ինչպես արդեն նշեցինք, թե՛ դատական, թե՛ վարչական ակտով կիրառվում է նույն հակասահմանադրական դրույթը:

Այսպիսով, վերը շարադրվածը ամփոփելով՝ կարելի է փաստել, որ նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչելու մասին դատական ակտը դրան հետադարձ ու ժողովուրդ պարագայում հիմք է հանդիսանում անվավեր ճանաչված նորմատիվ ակտի վրա հիմնված վարչական ակտերի՝ օրենքով սահմանված կարգով անվավեր ճանաչման համար: Այս առումով հետաքրքիր է այն հարցի պարզաբանումը, թե նորմատիվ ակտն անվավեր ճանաչելու մասին դատական ակտի առկայության պայմաններում ինչպես պետք է իրականացվի այդ նորմատիվ իրավական ակտի կիրառմամբ պատճառված վնասի հատուցումը:

Այս տեսանկյունից Ի. Վ. Պանովան և Կ. Ա. Միխայլովան այն տեսակետն են արտահայտել, որ նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչելու մասին դատական ակտին հետադարձ ու ժողովուրդ կամ չտալը ընդամենը այդ որոշման դատավարական հետևանքն է, որը որևէ կերպ չի ազդում նորմատիվ ակտի անվավերության խնդրով դիմած անձի՝ այդ նորմատիվ ակտի հետևանքով իրեն պատճառված վնասի հատուցում ստանալու նյութական իրավունքի իրականացման վրա<sup>1</sup>: Հեղինակներին նման եզրահանգման գալու համար հիմք է տվել Ռուսաստանի Դաշնության Բարձրագույն արբիտրաժային դատարանի նախագահության 31.05.2011թ. թիվ 145 տեղեկատվական նամակում ամրագրված այն ձևակերպումը, որ նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչելու և վնասի հատուցման պահանջները կարող են

<sup>1</sup> Ст'у Панова И. А., Михайлова К. А., նշված աշխատ., էջ 18:

միացվել և ներկայացվել մեկ հայցադիմումով<sup>1</sup>: Դրանից հեղինակները եզրակացրել են, որ վնասի հատուցում պահանջելու միակ նախապայմանը նորմատիվ ակտի անվավեր ճանաչումն է: Սակայն, մեր կարծիքով, նորմատիվ ակտի կիրառմամբ ընդունված վարչական ակտի առկայության պարագայում այդ տրամաբանությամբ հարցին մոտենալը ճիշտ չէ: Հարկավոր է նկատի ունենալ, որ այս դեպքում վնասը պատճառվում է ոչ թե նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, այլ դրա կիրառմամբ: Դա պայմանավորված է նրանով, որ նորմատիվ ակտն ինքնին իր ընդունմամբ չի կարող որևէ մեկին վնաս պատճառել: Վնասի առաջացումը պայմանավորված է դրան իրավաչափ դրույթի կիրառմամբ որևէ կոնկրետ իրավահարաբերության շրջանակներում: Այսինքն՝ վնասը կարող է պատճառվել նորմատիվ ակտի գործողության ուղորտում ընդգրկվող անձանց նկատմամբ դրան իրավաչափ դրույթի կիրառման հետևանքով: Այս տեսանկյունից մենք համաձայն ենք Ի. Վ. Պանովայի և Կ. Ա. Միխայլովայի արտահայտած այն մտքին, որ բոլոր դեպքերում վնասի հատուցում պետք է պահանջել ոչ թե անհատական իրավակիրառ, այլ նորմատիվ ակտն ընդունած մարմնից<sup>2</sup>: Այդ եզրահանգումը բացատրվում է նրանով, որ ինքնին անհատական իրավակիրառ ակտի ընդունմամբ չէր պատճառվի վնասը, եթե այն հիմնված չլիներ հետագայում ոչ իրավաչափ ճանաչված նորմատիվ ակտի դրույթի վրա, այսինքն՝ վնասի առաջացման հիմքում բոլոր դեպքերում ընկած է հենց նորմատիվ ակտի հակաիրավականությանը: Սակայն, միևնույն ժամանակ, ակնհայտ է, որ նորմատիվ իրավական ակտի անվավեր ճանաչումն ինքնին չպետք է դիտել որպես վնասի հատուցում պահանջելու իրավունքի առաջացման համար անհրաժեշտ և բավարար միակ նախապայման, քանի որ, անկախ այն հանգամանքից, որ նորմատիվ ակտի ընդունմամբ է պայմանավորված վնասի առաջացումը, միևնույնն է, վնասը անմիջականորեն պատճառվում է այդ նորմատիվ ակտի կիրառմամբ ընդունված անհատական ակտով: Տվյալ դեպքում որևէ նշանակություն չունի այն հանգամանքը, որ իրավակիրառ ակտն ընդունած մարմինը, ըստ էության, գործել է իրավաչափ, քանի որ անհատական ակտի ընդունման ժամանակ այդ ակտի հիմքում ընկած

<sup>1</sup> Տե՛ս տեղեկատվական նամակը, [http://www.arbitr.ru/as/pract/vas\\_info\\_letter/37489.html](http://www.arbitr.ru/as/pract/vas_info_letter/37489.html).

<sup>2</sup> Տե՛ս Панова И. А., Михайлова К. А. նշված աշխատ., էջ 23:



Նորմատիվ ակտը դեռևս ոչ իրավաչափ ճանաչված չի եղել: Հետևաբար, քանի որ վնասի պատճառմանն անմիջականորեն հանգեցրել է վարչական ակտի ընդունումը, վնասի հատուցումն էլ տրամաբանորեն կախված է այդ անհատական ակտի ճակատագրից: Վնասների հատուցման հարցի վերջնական լուծումը պետք է դիտարկել նորմատիվ ակտն անվավեր ճանաչելու մասին դատական ակտի հիման վրա վարչական ակտի վերանայման արդյունքներից կախվածությամբ անհամառոտորեն:

Այսպիսով, ակնհայտ է, որ նորմատիվ ակտն անվավեր ճանաչելու մասին դատական ակտի դատավարական հետևանքների՝ դրան հետադարձ ուժ տալ -չ տալ ու հարցը չի կարելի վնասի հատուցում պահանջելու իրավունքի իրականացման հարցից մեկուսացված դիտարկել: Դատական ակտի հետադարձ ուժով է որոշվում վերանայման ենթակա վարչական ակտերի, հետևաբար և դրանով պայմանավորված այն անձանց շրջանակը, ովքեր իրենց վերաբերյալ ընդունված վարչական ակտերի անվավեր ճանաչումից հետո կարող են ձեռք բերել նաև նորմատիվ իրավական ակտն ընդունած մարմնից վարչարարությունը՝ որպես նորմատիվ ակտի ընդունմամբ պատճառված վնասի հատուցում պահանջելու իրավունք: Հետևաբար, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 96-րդ հոդվածի այն նորմը, համաձայն որի՝ վնասի հատուցում չի կարող պահանջվել, քանի դեռ իրավական ակտն օրենքով սահմանված կարգով ոչ իրավաչափ չի ճանաչվել, պետք է դիտարկել և մեկնաբանել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածով նախատեսված իրավակարգավորումների հետ համադրման համառոտորեն այն առումով, որ նորմատիվ ակտն անվավեր ճանաչելը կարող է հիմք լինել վնասի առաջացմանն անմիջականորեն հանգեցրած վարչական ակտի ոչ իրավաչափ ճանաչման, որն էլ, իր հերթին, վնասի հատուցում պահանջելու իրավունքի ծագման համար:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածի 8-րդ մասի ձևակերպումից հետևում է, որ նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչելու մասին դատական ակտի հետադարձ գործողությունը տարածվում է միայն այդ նորմատիվ ակտի կիրառման վերաբերյալ ընդունված անհատական ակտերի վրա:

Ասվածը դրսևորվում է նրանում, որ նորմատիվ իրավական ակտը ուժի մեջ մտնելու պահից անվավեր ճանաչվելու դեպքում դրա ուժը կորցնելուն նախորդող երկու տարվա ընթացքում այդ ակտի կիրառմամբ ընդունված անհատական ակտերը շահագրգիռ անձանց պահանջով կարող են վերանայվել նոր հանգամանքի հիմքով: Այլ կերպ ասած՝ ներկայիս օրենսդրական կարգավորմամբ նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչվելու մասին ՀՀ վարչական դատարանի դատական ակտի հետադարձ գործողությունը դրսևորվում է միայն այն դեպքերում, երբ առկա է վիճարկվող նորմատիվ իրավական ակտի դրույթների կիրառում: Իրավագիտության մեջ իրավունքի կիրառումը բնորոշվում է որպես պետական գործունեության տեսակ, որն ուղղված է իրավական կարգադրագրերի կենսագործմանը: Իրավակիրառումը կոնկրետ գործի լուծումն է, որը տեղի է ունենում իրավասու պետական մարմնի կողմից օրենքի դրույթը կոնկրետ անձանց և փաստական հանգամանքների վրատարածելով<sup>1</sup>:

Իրավունքի կիրառման վերոհիշյալ բնորոշումից հետևում է, որ այն իրավական նորմերի իրացման ձևերից մեկն է: Իրավական նորմերի կիրառման անհրաժեշտությունն ծագում է այն դեպքերում, երբ իրավական նորմը չի կարող ինքն իրեն իրացվել, և պահանջվում է իրավասու պետական մարմնի միջամտություն: Օրինակ, հանցագործության կատարումն այն իրավաբանական փաստն է, որի հետքերական իրավունքի նորմը կապում է նորմով նախատեսված սանկցիայի իրագործումը, սակայն սանկցիան չի կարող ինքնին իրագործվել: Միևնույն ժամանակ, իրավունքի իրացումը շատ հաճախ կարող է տեղի ունենալ նաև առանց պետական մարմնի միջամտության, առանց վերջինիս կողմից կոնկրետ գործի կարգավորմանն ուղղված իրավակիրառ ակտի ընդունման: Իրավունքի իրացումը հասարակական հարաբերությունների մասնակիցների իրավաչափ գործողություններում իրավական նորմերի կենսագործման ընթացքը և արդյունքն է<sup>2</sup> կամ սուբյեկտիվ իրավական պարտականությունների կատարման, սուբյեկտիվ իրավունքների

<sup>1</sup> Ст'у Мальцева Л. В. Применение права в современном обществе, էջ 1:

<sup>2</sup> Ст'у Алексеев С. С. Механизм правового регулирования в социалистическом государстве. - М.: Юрид. лит., 1966. - էջ 171:

օգտագործման և իրավական արգելքների պահպանման ընթացքը<sup>1</sup>:  
Իրավունքի իրացման այս սահմանումից բխում է, որ, օրինակ,  
իրավական նորմով ամրագրված պարտականության կամովին  
կատարումն անձի կողմից ևս իրավունքի իրացում է, որը տեղի է  
ունենում առանց դրա կիրառման: Յետևաբար, նորմատիվ իրավական  
ակտի իրացումը կարող է ապահովվել ոչ միայն դրա դրույթների  
կիրառմամբ (դրա դրույթների կիրառման հիման վրա իրավակիրառ  
ակտ ընդունելով), այլև այդ նորմատիվ ակտով սահմանված  
պարտականությունները կատարելով կամ իրավունքներն  
օգտագործելով: Բնականաբար, հասարակական հարաբերությունների  
մասնակիցների օրինաչափ գործողություններով (առանց  
իրավակիրառման) նորմատիվ իրավական ակտերի դրույթների  
իրացման հնարավորությունն առկա է նաև ՀՀ վարչական  
դատավարության օրենսգրքով սահմանված կարգով վիճարկման  
առարկա հանդիսացող նորմատիվ իրավական ակտերի պարագայում:  
Սակայն, ինչպես արդեն նշվեց, օրենսգիրքը կարգավորման է  
ենթարկել միայն նորմատիվ իրավական ակտերի կիրառման դեպքը:  
Անվավեր ճանաչված նորմատիվ իրավական ակտի անմիջական իրացման  
հետևանքով անձանց հնարավոր խախտված իրավունքների  
վերականգնումն ապահովող որևէ կառուցակարգ օրենսգրքով  
նախատեսված չէ, մինչդեռ ակնհայտ է, որ դատական ակտի հետադարձ  
ուժը պետք է որոշակի ազդեցություն ունենա ոչ միայն անվավեր  
ճանաչված նորմատիվ ակտի դրույթների կիրառման, այլև  
անմիջական իրացման դեպքերի վրա: Ներկայիս օրենսդրական  
կարգավորումներով ստացվում է, որ դատական ակտին հետադարձ ուժ  
տալու դեպքում անձի խախտված իրավունքների վերականգնման  
հնարավորությունն է նախատեսվում անվավեր ճանաչված նորմատիվ  
ակտի կիրառմամբ ընդունված անհատական ակտի վերանայման  
իրավունք տալով, սակայն դատական ակտի հետադարձ ուժը որևէ կերպ  
չի ապահովում անձի իրավունքների պաշտպանությունը նորմատիվ  
ակտի անմիջական իրացման դեպքում: Եթե անվավեր է ճանաչվում  
անձանց իրավաչափ գործողություններով անմիջականորեն իրացված  
նորմատիվ ակտի որևէ դրույթ, ապա արդյո՞ք առկա չէ

<sup>1</sup> Տե՛ս, օրինակ, Кожевников С. Н. Реализация права, юридическое толкование, законность. - Н. Новгород: Издательство «Общество «Интерсервис», 2002. - էջ 7:

հնարավորությունն նաև նմանատիպ դատական ակտերին հետադարձ գործողությունն հաղորդելու: Ներկա դրությամբ գործող կարգավորումներով ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը նման հնարավորությունն չի ընձեռում: Ասվածը առավել պատկերավոր դարձնելու նպատակով այն քննարկենք հետևյալ օրինակով. «ՀՀ-ում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզավորման կարգն ու լիցենզիայի ձևը հաստատելու և ՀՀ կառավարության 2007 թվականի մարտի 22-ի N655-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 11.12.2014թ. N 1471-Ն որոշման<sup>1</sup> 20-րդ կետով ուղևորափոխադրումների մեջ ներգրավված ավտոմոբիլներին ներկայացվող պահանջներից մեկը ուղեսրահում սակաչափիչի տեղադրումն է: Որոշման այդ կետը նշանակում է, որ ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիա ստանալու նպատակով դիմած անձինք պետք է իրենց ավտոմոբիլը կահավորեն սակաչափիչով, այլապես լիցենզիայի տրամադրումն այդ հիմքով նրանց կմերժվի: Բնականաբար, սակաչափիչի տեղադրման համար լիցենզիա ստանալու ցանկությունն ունեցող անձինք կրում են լրացուցիչ ծախսեր: Եթե պատկերացնենք, որ ՀՀ կառավարության որոշման հիշյալ կետը ՀՀ վարչական դատարանի կողմից ճանաչվում է անվավեր, ապա հարց է առաջանում, թե արդյոք այդ կետի պահանջը փաստացի կատարած անձինք իրավունք են ստանում պահանջելու սակաչափիչ ձեռք բերելու համար իրենց կրած ծախսերի փոխատուցում: Բնականաբար, այդ պահանջը մինչև նորմատիվ ակտի հիշյալ կետի անվավեր ճանաչման պահը կատարած անձանց համար նման հնարավորություն կարող է առաջանալ միայն այն դեպքում, երբ ՀՀ վարչական դատարանի դատական ակտին տրվի հետադարձ ուժ, ինչի հնարավորությունը, սակայն, ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում: Այդ հնարավորության բացակայությունը կարելի է բացատրել այն տրամաբանությամբ, որ օրենսգիրքը նշված ծախսերը չի դիտել որպես վնաս, քանի որ դրա դիմաց անձը պետությունն իրավունք է ստացել ծավալելու որոշակի ձեռնարկատիրական գործունեություն: Սակայն, մյուս կողմից, պետք է նկատի ունենալ, որ այդ կետի անվավեր ճանաչումը

<sup>1</sup> Ընդունվել է 11.12.2014թ., ուժի մեջ է մտել 06.01.2015թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2014.12.27/74(1087).1 Հոդ.1248.7:

նշանակում է, որ պետությունն ի սկզբանե պարտավոր է եղել մնացած պայմանների պահպանման դեպքում այդ իրավունքը անձին տալ առանց սակաչափիչ տեղադրելու, հետևաբար այդ սարքը տեղադրելու համար անձի կատարած ծախսերը եղել են չհիմնավորված, ոչ անհրաժեշտ, անձը դրանք չպետք է կրեր ի սկզբանե: Հարցին այս տեսանկյունից մոտենալիս ակնհայտ է դառնում անձի մոտ վնասի առկայությունը, քանի որ այդ գումարները նա չէր ծախսի հասարակական շրջանառության սովորական պայմաններում, եթե անվավեր ճանաչված նորմատիվ ակտի դրույթն ի սկզբանե այդ ակտում ամրագրված չլիներ:

Բացի այդ, հարկ է նաև ընդգծել, որ նմանատիպ դեպքերում նորմատիվ ակտը դրա ուժի մեջ մտնելու պահից անվավեր ճանաչելը որևէ կերպ չի կարող խախտել վարչական ակտի գոյության նկատմամբ անձի վստահության պաշտպանության սկզբունքը: Խոսքը վերաբերում է նրան, որ ՀՀ կառավարության հիշյալ որոշման հիման վրա անձանց տրված ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիաների անվավերության հարց չի առաջանում, հետադարձ ուժով օժտված դատական ակտը որևէ ազդեցություն չի ունենում այդ բարենպաստ վարչական ակտերի վրա և վերջիններիս վերանայման կամ բեկանման հիմք չի կարող դառնալ: Դա բացատրվում է նրանով, որ անվավեր է ճանաչվում միայն նորմատիվ ակտի մեկ առանձին վերցրած դրույթ, որը չի ազդում այդ նորմատիվ ակտի կիրառմամբ ընդունված վարչական ակտերի իրավաչափության վրա:

Այսպիսով, ամբողջ վերոշարադրյալ ի ամփոփումից դառնում է ակնհայտ, որ նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչելու մասին ՀՀ վարչական դատարանի դատական ակտին հետադարձ ուժ տալը պետք է հիմք լինի նաև այդ ակտի անվավեր ճանաչված դրույթն անմիջականորեն իրացրած անձանց խախտված իրավունքների վերականգնման համար: Եթե բոլոր շահագրգիռ անձինք նորմատիվ իրավական ակտի անվավեր ճանաչված դրույթի կիրառման վերաբերյալ իրենց նկատմամբ ընդունված վարչական ակտերը վերանայելու հնարավորություն ունեն, եթե այդ վարչական ակտերն ընդունվել են նորմատիվ իրավական ակտի ուժը կորցնելու նախորդող երկու տարվա ընթացքում, ապա գտնում ենք, որ նույն տրամաբանությամբ նորմատիվ իրավական ակտի անվավեր

ճանաչված դրույթն անմիջականորեն իրացրած անձինք ևս պետք է հնարավորություն ունենան վերականգնելու իրենց խախտված իրավունքները, եթե նորմատիվ ակտի ոչ իրավաչափ դրույթի իրացման հետևանքով նրանց պատճառվել է վնաս: Անհրաժեշտ համարելով բարձրացված հարցի՝ դատավարական օրենքով կարգավորման անհրաժեշտությունը, նշենք, որ քննարկված և նմանատիպ դեպքերում անձի իրավունքների պաշտպանության եղանակը Օրենքի 111-րդ հոդվածով սահմանված կարգով վարչական մարմինն գույքի վերադարձման պահանջ ներկայացնելն է՝ որպես անհիմն հարստացում:

**§3. ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽՏԵՍՎԱԾ ԴԵՊԵՐՈՒՄ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏ ԶԸՂՈՒՆԵԼՈՒ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ, ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԻ ՆԱԽԳԾԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԲԱՐԵՆՊԱՍՏ ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԻ ՎԻՃԱՐԿՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԶՅ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ**

Օրենքի 3-րդ հոդվածը սահմանում է, որ վարչարարությունն է համարվում վարչական մարմինների՝ արտաքին ներգործություն ունեցող այն գործուներությունը, որը եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտի ընդունմամբ, ինչպես նաև այն գործողությունը կամ անգործությունը, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ: Այդ դրույթից հետևում է, որ վարչարարությունն է համարվում նաև նորմատիվ ակտի ընդունմամբ եզրափակվող արտաքին ներգործություն ունեցող վարչական մարմինների գործուներությունը: Ընդ որում, Օրենքը տարբերակում է վարչական մարմինների՝ նորմատիվ ակտի ընդունմամբ եզրափակվող գործուներությունը վերջիններիս այն գործողություններից, որոնք անձանց համար առաջացնում են փաստական հետևանքներ: Ասվածից բխում է, որ վարչական մարմինների՝ նորմատիվ ակտի ընդունմանն ուղղված գործուներությունը և անձանց համար փաստական հետևանքներ առաջացնող գործողությունները չեն նույնանում, և անհրաժեշտ է

դրանք դիտարկել որպես վարչարարության երկու առանձին տեսակներ: Այլ կերպ ասած՝ նորմատիվ ակտի ընդունմանն ուղղված գործունեությունը չի կարող դիտարկվել որպես անձանց համար փաստական հետևանքներ առաջացնող գործողություն: Նշված համատեքստում գործնական առումով մեծ կարևորություն է ներկայացնում այն հարցի պարզաբանումը, թե օրենքով նախատեսված դեպքերում օրենքի կատարումն ապահովվելու ն ուղղված նորմատիվ ակտերի չընդունման պարագայում ՀՀ օրենսդրությամբ անձանց իրավունքների պաշտպանության ինչպիսի կառուցակարգեր են ամրագրված: Ակնհայտ է, որ նմանատիպ դեպքերում առկա է վարչական մարմնի կողմից անգործության դրսևորում, և խնդիրն այն է, թե այդ անգործության արդյունքում անձանց խախտված իրավունքների պաշտպանության ապահովման երաշխավորմանն ուղղված ինչ միջոցներ են նախատեսված ՀՀ օրենսդրությամբ: Օրենքի և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի համապատասխան հոդվածների համադրված վերլուծությունը վկայում է այն մասին, որ անգործության դեմ դատական պաշտպանության իրավունքի իրացմանն են ուղղված պարտավորեցման, գործողության կատարման և ճանաչման հայցերը: Ընդ որում, պարտավորեցման հայցով վարչական մարմինը պարտավորեցվում է ընդունելու անձի համար բարենպաստ վարչական ակտ, որի ընդունումը վերջինիս մերժվել է, գործողության կատարման հայցով վարչական մարմինը պարտավորեցվում է կատարելու վարչական ակտի ընդունմանը չառնչվող որոշակի գործողություններ, իսկ ճանաչման հայցով ոչ իրավաչափ է ճանաչվում այլ ևս իրավաբանական ուժ չունեցող անգործությունը: Այսպիսով, պարտավորեցման հայցի դեպքում վարչական մարմնի անգործությունը դրսևորվում է այն բարենպաստ վարչական ակտը չընդունելով, որը տվյալ դեպքում վարչական մարմինը պարտավոր էր ընդունել, իսկ գործողության կատարման հայցի պարագայում անգործությունը վերաբերում է կատարման ենթակա որոշակի գործողության չկատարմանը: Ինչպես արդեն պարզ դարձավ Օրենքի 3-րդ հոդվածով ամրագրված վարչարարության հասկացության սահմանումից, այդ գործողությունը վարչարարության առանձին տեսակ է, որն ուղղված է անձանց համար փաստական հետևանքներ

առաջացնելու և չի կարող նույնանալ նորմատիվ ակտի ընդունմամբ եզրափակվող գործունեության հետ: Այդ մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ օրենսդիրը որպես առանձին հայցատեսակ նախատեսել է պարտավորեցման հայցը, ինչը նշանակում է, որ գործողության կատարման հայցով վարչական մարմինը նաև չի կարող պարտավորեցվել ընդունելու բարենպաստ վարչական ակտ: Այդ նույն տրամաբանությամբ վարչական մարմինը գործողության կատարման հայցի միջոցով նաև նորմատիվ ակտ ընդունելու և պարտավորեցվել չի կարող, քանի որ, ինչպես նշվեց, վարչական և նորմատիվ ակտերի ընդունմամբ եզրափակվող գործունեությունը և վարչական մարմինների՝ անձանց համար փաստական հետևանքներ առաջացնող գործողությունը օրենքով նախատեսված են որպես վարչարարության երկու առանձին ուղղություններ: Ասվածից կարելի է եզրահանգել, որ ՀՀ-ում գործող ներկայիս օրենսդրական կարգավորման պայմաններում անգործությունը վերաբերում է միայն վարչական ակտ չընդունելուն և փաստական հետևանքներ առաջացնող գործողություն չկատարելուն, ինչի արդյունքում անձը զրկված է նաև օրենսգրքի 68-րդ հոդվածով սահմանված ճանաչման հայցի միջոցով նորմատիվ ակտի չընդունմամբ դրսևորվող վարչական մարմնի անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու հնարավորությունից: Այնինչ ակնհայտ է, որ առանձին դեպքերում օրենքով նախատեսված դեպքերում այս կամ այն հարցի կարգավորման նպատակով նորմատիվ ակտի չընդունումը կարող է հանգեցնել անձանց իրավունքների խախտման: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե իրավական ակտում նախատեսված նորմի պահանջի կատարում կարող է միայն իրականացվել այդ իրավական ակտով նախատեսված իրավական այլ ակտի ընդունմամբ, կամ դրա կատարումն ուղղակիորեն պայմանավորված է իրավական այլ ակտի ընդունմամբ, ապա իրավական ակտն այդ նորմի մասով գործում է համապատասխան իրավական այլ ակտն ուժի մեջ մտնելու պահից: Չնայած վկայակոչված նորմի ամրագրմանը՝ մենք կարծում ենք, որ բացառված չեն այնպիսի իրավիճակները, երբ, չնայած իրավական



ակտում հղում է կատարվում մեկ այլ իրավական ակտ ընդունելու անհրաժեշտությամբ, սակայն հղում կատարող իրավական ակտը կարող է գործել նաև առանց համապատասխան այլ իրավական ակտն ընդունելու, կամ դրա գործողությունը ուղղակիորեն պայմանավորված չէ այլ իրավական ակտի ընդունմամբ: Այլ կերպ ասած՝ առանձին դեպքերում, երբ նույնիսկ որևէ իրավական ակտում նշում է կատարվում տվյալ ակտով նախատեսված առանձին հարց կարգավորելու նպատակով մեկ այլ իրավական ակտ ընդունելու անհրաժեշտության մասին, այդ ակտը, ընդհանուր առմամբ, կարող է գործել նաև առանց մեկ այլ իրավական ակտի ընդունմամբ կարգավորում պահանջող հարցի լուծման: Սակայն, դրա հետ մեկտեղ, առանձին դեպքերում որևէ օրենքով նախատեսված հարցի կարգավորման նպատակով համապատասխան ենթաօրենսդրական ակտի չընդունումը կարող է իրական սպառնալիք ստեղծել անձանց իրավունքների և օրինական շահերի համար: Որպես օրինակ՝ կարող ենք նշել «Օրգանական գյուղատնտեսության մասին» ՀՀ օրենքի<sup>1</sup> 5-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, որի համաձայն՝ պարենային հումքի վերամշակման գործընթացում օգտագործվող հավելու մների և բաղադրամասերի անվանացանկը և կիրառման կարգը պետք է սահմանի ՀՀ կառավարությունը: Ներկայումս ՀՀ կառավարությունը իր որոշմամբ չի սահմանել այդ հավելու մների և բաղադրամասերի անվանացանկը և կիրառման կարգը, ինչի հետևանքով պարզ չէ, թե ինչ հավելու մներ կարող են օգտագործվել պարենային հումքի վերամշակման գործընթացում, ինչպիսին են կիրառման առանձնահատուկ պայմաններ պահանջող հավելու մների օգտագործման սահմանափակումները, որ հավելու մների օգտագործումն է արգելվում և այլն: Ստացվում է, որ պարենային հումք վերամշակող սուբյեկտները ազատ են հավելու մների և բաղադրամասերի օգտագործման հարցում, և նման պայմաններում հայտնի չէ, թե դրա հետևանքով տուժած անձիք օրենսդրությամբ նախատեսված ինչ միջոցով կարող են պաշտպանել իրենց խախտված իրավունքները: Մինչդեռ նման կերպ դրսևորվող անգործության ոչ իրավաչափ ճանաչումն անհրաժեշտ է դրա հետևանքով անձանց խախտված իրավունքների վերականգնման նպատակով: Նշված ինդիքը

<sup>1</sup> Ընդունվել է 08.04.2008թ., ուժի մեջ է մտել 14.05.2009թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2008.05.14/28(618) Հոդ.451

կարող է վերապահորեն լուծում ստանալ զուտ տեսական բնույթի դատողությունների համատեքստում: Ասվածը վերաբերում է նրան, որ անձանց համար փաստական հետևանքներ առաջացնող գործողություն մենք կարող ենք դիտել նաև վարչական մարմինների՝ արտաքին ներգործություն ունեցող նորմատիվ ակտի ընդունմամբ եզրափակվող գործունեությունը: Այս եզրահանգումը հիմնավորվում է այն իրողությամբ, որ նորմատիվ իրավական ակտի ընդունումը փոփոխություններ է առաջացնում նաև անձանց փաստական կարգավիճակում, հետևաբար, այն հանգեցնում է նաև փաստական հետևանքների: Նման տեսանկյունից հարցին մոտենալ իսկ վարչական մարմինն իր կողմից ընդունման ենթակա նորմատիվ իրավական ակտի ընդունմանը կարելի է պարտավորեցնել գործողության կատարման հայցի միջոցով: Սակայն նշված եզրահանգմանը, ինչպես նշվեց, պետք է մոտենալ որոշակի վերապահումներով, քանի որ այն կարող է հիմնավոր համարվել միայն տեսական հարթության վրա: Իսկ գործող օրենսդրական կարգավորմամբ նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ եզրափակվող գործունեությունը և փաստական հետևանքներ առաջացնող գործողությունը (որի կատարմանը պարտավորեցնելու ձևը, ինչպես պարզ դարձավ, գործողության կատարման հայցի ներկայացումն է), կարգավորված են որպես վարչարարության երկու առանձին ուղղություններ: Այսպիսով, մենք գտնում ենք, որ նպատակահարմար կլիներ, եթե ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով որպես գործողության կատարման հայցի առանձին առարկա դիտվեր նաև նորմատիվ իրավական ակտ ընդունելու ն վարչական մարմինն պարտավորեցնելը, իսկ ճանաչման հայցի առարկա՝ նորմատիվ ակտ չընդունելու ձևով դրսևորվող անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելը:

Հետաքրքրություն է ներկայացնում նաև այն հարցի պարզաբանումը, թե արդյոք օրենքով սահմանված կարգի խախտմամբ ընդունված նորմատիվ իրավական ակտը կարող է դառնալ դատական վերահսկողության առարկա: Այս կապակցությամբ իրավաբանական գրականության մեջ արտահայտված տեսակետները տարբեր են: Մի խումբ հեղինակներ պաշտպանում են այն մոտեցումը, որ օրենքով սահմանված կարգի խախտմամբ ընդունված նորմատիվ իրավական

ակտերը չեն կարող վիճարկվել որպես նորմատիվ ակտ, քանի որ դրանք, սահմանված կարգով ուժի մեջ չմտնելով, ձեռք չեն բերել իրավաբանական ուժ: Վ. Մ. Ժուլյկովը նշում է, որ այն իրավական ակտը, որը չի համապատասխանում ընդունման և ուժի մեջ մտնելու համար սահմանված պահանջներին, չի կարող դիտվել որպես նորմատիվ իրավական ակտ, կիրառվել կամ վիճարկվել որևէ մեկի կողմից<sup>1</sup>: Ս.Վ. Պոտապենկոն նույնպես ընդգծում է, որ իրավական ակտը որպես նորմատիվ ակտ կարող է որակվել ոչ միայն նորմատիվ ակտի բովանդակային հատկանիշների առկայության, այլև ուժի մեջ մտնելու համար սահմանված ձևի պահպանման պարագայում<sup>2</sup>:

Ելնելով նշված տեսակետներից՝ կարելի է ենթադրել, որ օրենքով սահմանված կարգի խախտմամբ ընդունված նորմատիվ իրավական ակտի վիճարկման դատավարական հետևանքը պետք է լինի վիճարկման դիմումի ընդունումը մերժելը կամ գործի վարույթը կարճելը՝ վեճը դատարանին ենթակաչլինելու հիմքով:

Ինչպես արդեն նշվեց, իրավաբանական գրականության մեջ գոյություն ունի նաև հակառակ տեսակետ, ըստ որի՝ նորմատիվ իրավական ակտի ընդունման և գործողության մեջ դնելու պայմանների խախտումը պետք է դիտել ոչ թե որպես այդ ակտի վիճարկման դիմումի վարույթ ընդունումը մերժելու, այլ որպես այդ դիմումը բավարարելու հիմք<sup>3</sup>:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, սահմանելով նորմատիվ իրավական ակտի հասկացությունը, այդպիսին համարում է օրենքով սահմանված կարգով ընդունված պաշտոնական գրավոր փաստաթուղթը, որն ուղղված է իրավական նորմերի սահմանմանը, փոփոխմանը և դադարեցմանը: Նշված սահմանումից կարող է այն տպավորությունն ստեղծվել, որ նորմատիվ ուժ կարող են ունենալ միայն օրենքով սահմանված կարգով ընդունված գրավոր փաստաթղթերը: Ուստի բոլոր այն դեպքերում, երբ չի պահպանվել նորմատիվ ակտի ընդունման կամ

<sup>1</sup>St'u Научно-практический комментарий к Гражданскому процессуальному кодексу Российской Федерации/под ред. В.М. Жуйкова, В.К. Пучинского, М.К. Треушникова. էջեր 120-121 :

<sup>2</sup> St'u Потапенко С. В. Разграничение нормативных и ненормативных правовых актов при рассмотрении дел, возникающих из публичных правоотношений//Российская юстиция. 2003. N 6. էջ 31:

<sup>3</sup> St'u Комментарий к Гражданскому процессуальному кодексу Российской Федерации [Текст] / С. А. Алехина, А. Т. Боннер, В. В. Блажеев [и др.] ; отв. ред. М. С. Шакарян. - М. : ТК Велби, Изд-во Проспект, 2003. էջ 416:

ուժի մեջ մտնելու համար սահմանված կարգը, ապա նորմատիվ ակտ, որպես այդպիսին, առկա չի լինում, քանի որ նորմատիվ ակտի հատկանիշներից մեկն էլ դրա ընդունման՝ օրենքով սահմանված կարգի պահպանումն է: Սակայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով սահմանված է, որ նորմատիվ իրավական ակտի իրավաչափությունը ստուգելիս դատարանը, ի թիվս այլ հանգամանքների, պետք է հաշվի առնի նաև նորմատիվ ակտի ընդունման և գործողության մեջ դնելու՝ օրենքներով սահմանված կարգի պահպանվածությունը: Դրանից հետևում է, որ եթե գործի քննության ընթացքում դատարանը պարզի, որ վիճարկվող նորմատիվ իրավական ակտը ընդունվել կամ գործողության մեջ է դրվել օրենքներով սահմանված կարգի խախտմամբ, ապա դա հիմք է դատարանի համար այդ ակտի անվավերությունը հաստատելու համար: Յետևաբար, նորմատիվ ակտի ընդունման կամ գործողության մեջ դնելու համար օրենքով սահմանված կարգը չպահպանելը նորմատիվ ակտի անվավերության հիմքերից մեկն է: Դա կարելի է բացատրել նրանով, որ նորմատիվ ակտի ընդունման ձևական պայմանները, ընդհանուր առմամբ, վերաբերում են այդ ակտի ընդունման կարգին, ուստի դրանցից յուրաքանչյուրը չպահպանելը հանգեցնում է նորմատիվ ակտի ընդունման՝ օրենքով սահմանված կարգի խախտման: Եթե որպես ել ակետ ընդունվի այն գաղափարը, որ օրենքով սահմանված կարգի խախտմամբ ընդունված ակտը չի կարելի համարել նորմատիվ ակտ, ապա կստացվեր, որ յուրաքանչյուր ձևական պայմանի խախտում ինքնին կվկայեր այն մասին, որ նորմատիվ ակտի ոչ բոլոր հատկանիշներն են պահպանված, ուստի, որպես այդպիսին, նորմատիվ ակտ առկա չէ: Օրինակ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը նորմատիվ ակտերի իրավաչափությունը գնահատելիս անհրաժեշտ է համարում հաշվի առնել նաև իրավական ակտի պահանջվող տեսակը կամ այն ընդունած մարմնի լիազորությունների թույլատրելի սահմանը: Իրավական ակտի պահանջվող տեսակի կամ ակտն ընդունած մարմնի լիազորությունների թույլատրելի սահմանի խախտումը կարելի է որակել որպես նորմատիվ ակտի ընդունման կարգի խախտում, ուստի այդ խախտումների առկայության պարագայում ևս նույն հիմնավորմամբ կարելի կլիներ պնդել, որ իրավական ակտը

Նորմատիվ չէ և չի կարող վիճարկվել որպես այդպիսին: Ակնհայտ է, որ նման պայմաններում նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու՝ անձի համար օրենսդրորեն երաշխավորված իրավունքը կենթարկվեր անհարկի սահմանափակման, ինչն էլ, իր հերթին, կհանգեցներ դատական պաշտպանության իրավունքի խախտման: Հետևաբար ակնհայտ է, որ նորմատիվ ակտը իրավաչափ համարելու անհրաժեշտ պայմաններից մեկը այդ ակտի ընդունման և ուժի մեջ դնելու՝ օրենքով սահմանված կարգի պահպանումն է, և եթե դատարանը գործի քննության ընթացքում պարզի նշված կարգի խախտման փաստը, ապա դա հիմք է ոչ թե գործի վարույթը կարճելու, այլ նորմատիվ ակտն անվավեր ճանաչելու համար:

Այսպիսով, եթե ամփոփենք ամբողջ վերոշարադրյալը, ապա կարելի է եզրակացություն անել հետևյալի մասին. եթե նույնիսկ նորմատիվ իրավական ակտի ընդունման կամ այն գործողության մեջ դնելու կարգը ձևական առումով չի պահպանվել, ուստի, ըստ էության, ուժի մեջ մտած նորմատիվ իրավական ակտ գուտ ձևական առումով առկա չէ, սակայն դրակիր առմամբ խախտվում կամ կիրառման պարագայում կարող են խախտվել անձանց իրավունքները, ապա այդ նորմատիվ ակտը կարող է վիճարկվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով: Տվյալ պարագայում որպես էլ ակտ դիտվում է այդ ակտի փաստացի գործողության (կիրառման) հետևանքով անձանց իրավունքների և օրինական շահերի խախտման կամ այդպիսի վտանգի առկայության հանգամանքը: Այս տեսանկյունից գտնում ենք, որ տրամաբանական և հիմնավորված կլիներ նաև նորմատիվ ակտերի նախագծերի իրավաչափությունը դատական կարգով վիճարկելու հնարավորության ամրագրումը: Ինչպես նշվեց, նորմատիվ ակտի ընդունման կամ այն գործողության մեջ դնելու կարգի խախտման պարագայում ձևական առումով այդ ակտն ուժի մեջ չի մտնում, սակայն օրենսդիրը այդ ակտը հենց այդ հիմքով վիճարկելու հնարավորությունն է տալիս, եթե դրա կիրառմամբ խախտվում են անձանց իրավունքները կամ կխախտվեն, եթե ակտը կիրառվի նրանց նկատմամբ: Նույն տրամաբանության մեջ, եթե նորմատիվ ակտի նախագիծն իր բովանդակությամբ այնպիսին է, որ այն անձանց իրավունքների և օրինական շահերի խախտման լուրջ

վտանգ է պարունակում կամ, այլ կերպ ասած, այդ տեսքով ընդունվելու և կիրառվելու դեպքում կխախտի անձանց իրավունքները, ապա վերջիններս պետք է հնարավորություն ունենան վիճարկելու նաև նմանատիպ նախագծերը: Ասվածը առավել ամբողջական է դառնում այն համատեքստում, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 192-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով անձը հնարավորություն ունի վիճարկելու նաև իր նկատմամբ անմիջականորեն չկիրառված նորմատիվ ակտի իրավաչափությունը, եթե այն իր իրավունքների խախտման վտանգ է պարունակում: Ուստի նորմատիվ ակտի վիճարկման իրավունքի առաջացման անհրաժեշտ պայման չի կարող լինել այդ ակտի փաստացի կիրառմամբ անձի իրավունքների խախտման փաստը. նման իրավունքի առաջացման համար բավարար է նաև նորմատիվ ակտի կիրառման դեպքում անձի իրավունքների խախտման վտանգի առկայությունը: Այս համատեքստում առաջարկում ենք ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 191-րդ հոդվածով դատական կարգով վիճարկման առարկա դիտել ոչ միայն այդ հոդվածում թվարկված նորմատիվ իրավական ակտերը, այլ նաև դրանց նախագծերը: Ընդ որում, մենք այն կարծիքին ենք, որ ՀՀ նախագահի, ՀՀ կառավարության և վարչապետի որոշումների պարագայում անձինք նշված նորմատիվ ակտերի նախագիծը վիճարկելու իրենց իրավունքը կարող են իրականացնել մինչև նշված նախագծերը ակտն ընդունող մարմին վերջնական քննարկման ներկայացնելը, իսկ գերատեսչական և տեղական ինքնակառավարման մարմինների նորմատիվ ակտերի պարագայում՝ մինչև դրանց՝ ՀՀ արդարադատության նախարարությունում պետական իրավական փորձաքննության և պետական գրանցման ժամկետի ավարտը:

Վարչարարության ոլորտում անձանց իրավունքների պաշտպանության տեսանկյունից անչափ կարևոր է նաև այն հարցը, թե արդյո՞ք անձն ունի իր համար բարենպաստ համարվող վարչական ակտի վիճարկման իրավական հնարավորություն: Այս հարցին պատասխանելու նպատակով անհրաժեշտ է քննարկել Օրենքով սահմանված վարչական ակտերի տեսակները՝ ըստ անձանց համար առաջացրած հետևանքների բնույթի: Օրենքի 53-րդ հոդվածը նախատեսում է վարչական ակտի հետևյալ տեսակները՝ բարենպաստ,

միջամտող և զուգորդվող: Բարենպաստ է համարվում այն վարչական ակտը, որի միջոցով վարչական մարմիններն անձանց տրամադրում են իրավունքներ կամ նրանց համար ստեղծում են այդ անձանց փաստացի կամ իրավական դրույթ ունը բարելավող ցանկացած այլ պայման: Միջամտող վարչական ակտի ընդունման դեպքում վարչական մարմինը մերժում, միջամտում, ընդհուպ սահմանափակում է անձանց իրավունքների իրականացումը, որևէ պարտականություն է դնում նրանց վրա կամ որևէ այլ եղանակով վատթարացնում է անձի փաստական կամ իրավական դրույթ ունը: Իսկ զուգորդվող վարչական ակտերն այն ակտերն են, որոնք միաժամանակ պարունակում են բարենպաստ և միջամտող վարչական ակտերով սահմանվող դրույթներ: Օրենքի 69-րդ հոդվածը անձանց իրավունք է տալիս իրենց իրավունքների պաշտպանության նպատակով բողոքարկելու վարչական ակտերը, այդ թվում՝ զուգորդվող վարչական ակտերի միջամտող դրույթները: Օրենքի 69-րդ հոդվածի՝ «այդ թվում՝ զուգորդվող վարչական ակտերի միջամտող դրույթները» ձևակերպումից բխում է, որ հիշյալ նորմը վարչական ակտերի բողոքարկման իրավունքը սահմանափակել է միայն միջամտող և զուգորդվող ակտերի շրջանակով: Դրանից բխում է, որ անձն իրավունք ունի բողոքարկելու միայն այն վարչական ակտերը կամ վարչական ակտերի այն մասերը, որոնցով նրան մերժվում է որևէ իրավունքի տրամադրումը, նրա վրա որևէ պարտականություն է դրվում կամ նրա փաստական կամ իրավական դրույթ ունը վատթարանում է այլ կերպ: Առկա կարգավորումից բխում է, որ բարենպաստ վարչական ակտերը, քանի որ անձանց համար չեն առաջացնում նշված հետևանքները (իրավունքի տրամադրման մերժում և այլն), չեն կարող դառնալ բողոքարկման առարկա: Սակայն հարկ է նկատի ունենալ, որ առանձին դեպքերում նույնիսկ բարենպաստ վարչական ակտի ընդունումը, օրինակ՝ անձին վերջինիս կողմից հայցվող իրավունքի տրամադրումը, կարող է վարչական մարմնի կողմից ուղեկցվել այնպիսի փաստական և իրավական հիմնավորումներով, որոնք այլ իրավահարաբերություններում կարող են խախտել անձի իրավունքները կամ այդպիսի խախտման սպառնալիք առաջացնել: Խոսքն այնպիսի դեպքերի մասին է, երբ վարչական մարմինը,

ընդհանուր առմամբ, բավարարում է անձի խնդրանքը և նրան տրամադրում հայցվող իրավունքը, սակայն ակտի ընդունման հիմնավորումները տարբերվում են դիմումատուի մատնանշած հիմնավորումներից, և վերջինս մտավախություն ունի, որ նման հիմնավորումներով վարչական ակտի ընդունումը կարող է այլ անձանց հետ հարաբերություններում հանգեցնել իր իրավունքների խախտման: Ներկայիս իրավակարգավորմամբ Օրենքը թույլ չի տալիս վարչական ակտը բողոքարկել դրա ընդունման հիմնավորումների մասով: Այդ պնդումը բացատրվում է նրանով, որ բողոքարկման իրավունք անձն ունի միայն միջամտող ակտերի և գուգորդվող ակտերի միջամտող դրույթների կապակցությամբ, իսկ դրույթի միջամտող լինելը որոշվում է միմիայն վարչական ակտի եզրափակիչ մասից ելնելով: Անձին հայցվող իրավունքի տրամադրումն արդեն իսկ դիտվում է որպես բարենպաստ վարչական ակտի ընդունում, և նշանակություն չի տրվում այն հանգամանքին, թե արդյոք այդ ակտի ընդունման հիմնավորումները ցանկալի են եղել անձի համար կամ արդյոք չեն խախտում կամ չեն կարող խախտել վերջինիս իրավունքները: Յետևաբար, վարչական ակտի հիմնավորումներին համաձայն չլինելը և դրանք անձի համար փաստացի «ոչ բարենպաստ» լինելը, ընդհանուր առմամբ, վարչական ակտը չեն դարձնում միջամտող: Վարչական ակտը որպես միջամտող որակելու համար անհրաժեշտ է, որպեսզի անձին մերժվի իրավունքի տրամադրումը, նրա վրա պարտականություն դրվի և այլն: Մեր կողմից քննարկվող իրավիճակում վարչական ակտերն անձի համար նման սահմանափակումներ չեն առաջացնում, ուստի չեն դիտվում որպես միջամտող ակտեր և բողոքարկման ենթակա չեն:

Մենք այն կարծիքին ենք, որ անձի իրավունքները կարող են խախտվել, հետևաբար դրանց պաշտպանություն պետք է տրվի ոչ միայն միջամտող վարչական ակտերի, այլ և այնպիսի բարենպաստ վարչական ակտերի ընդունման դեպքում, որոնցում տրված հիմնավորումները, տարբերվելով դիմումատուի նշած հիմնավորումներից, վերջինիս իրավունքների խախտման վտանգ են ստեղծում այլ իրավահարաբերություններում: Որպես օրինակ կարելի է դիտարկել այն դեպքը, երբ դատապարտյալն իրեն ներում շնորհելու խնդրագիր է ներկայացնում այն հիմքով, որ պատժի կրման ընթացքում իրեն



դրսևորել է բարեխղճորեն, և նրա խնդրանքը բավարարվում է, սակայն այն հիմքով, որ վերջինս տառապում է պատժի հետագա կրմանը խոչընդոտող հիվանդությամբ: Նշված վարչական ակտով ոչ միայն անուղղակիորեն հերքվում է անձի կողմից բարեխղճ վարքագիծ դրսևորելը, այլև ակտում կարող է նշվել այնպիսի հիվանդություն, որը կարող է դատապարտյալի համար հետագայում խոչընդոտել ինչպես աշխատանքային հարաբերությունների մեջ մտնելու առումով: Կամ անձը դիմում է ներկայացնում իր կողմից ինքնակամ իրականացված կառույցն օրինականացնելու վերաբերյալ, նրա դիմումը բավարարվում է, սակայն որոշման մեջ ինքնակամ կառույցի գտնվելու վայրն այնպես է նկարագրվում, որից ստացվում է, որ կառույցը մասամբ գտնվում է հարևան սեփականատիրոջ հետ վեճի առարկա հանդիսացող տարածքում: Նման վարչական ակտի ընդունումը կարող է հիմք դառնալ հետագայում ինքնակամ կառույցի քանդման պահանջ ներկայացնելու և այլնի համար: Բերված օրինակները վկայում են այն մասին, որ բարենպաստ վարչական ակտը ևս կարող է խախտել հասցեատիրոջ իրավունքները, և առանձին դեպքերում անհրաժեշտ է դրա բողոքարկման հնարավորություն ունենալ: Հետաքրքրական է, որ նույն խնդիրը կարող է առկա լինել նաև դատավարության ոլորտում, երբ կողմերից մեկի օգտին կայացված վերջնական դատական ակտը կողմը ցանկանում է բողոքարկել այն փաստերի մասով, որոնց հետ ինքը համաձայն է՝ դրանով կանխելով այդ փաստերի՝ նախադատելի դառնալու հանգամանքը: Այս առումով վկայական արժանի է թիվ ԵԿԴ/1762/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.07.2011թ. որոշումը<sup>1</sup>: Այդ որոշմամբ վերաքննիչ դատարանը կողմի բերած վերաքննիչ բողոքը բավարարել էր՝ փոփոխելով վերջինիս օգտին կայացված վճռի պատճառաբանական մասը և այն թողնելով օրինական ուժի մեջ իր որոշմամբ հաստատված փաստերով: Այսինքն՝ վերաքննիչ դատարանը բավարարել էր առաջին ատյանի դատարանի հաստատած փաստերի մասով բերված վերաքննիչ բողոքը՝ չնայած այն հանգամանքին, որ առաջին ատյանի դատարանի դատական ակտը կայացվել էր բողոք բերած կողմի օգտին: Պետք է նշել նաև, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ

<sup>1</sup> Տե՛ս նրոշումը <http://datalex.am/?app=AppCaseSearch:>

հոդվածը, ամրագրելով վարչական ակտերի վիճարկման իրավունքը, վարչական ակտերի տեսակների առումով որևէ վերապահում չի նախատեսում և դատարան դիմելու իրավունքը չի պայմանավորում միայն վարչական ակտերի միջամտող կամ գույքորոշող տեսակներով, այլ բավարարվում է միայն ընդհանուր առմամբ վարչական ակտերը վիճարկելու իրավունքի ամրագրմամբ: Հիշյալ տեսանկյունից մենք նաև գտնում ենք, որ վարչական ակտի հասցեատիրոջ հիմնավորումների անտեսումը վարչական ակտը ընդունելիս կարող է նաև անձին բարոյական վնաս պատճառել, քանի որ վերջինիս մոտ կարող է այնպիսի տպավորություն ստեղծվել, որ իր մատնանշած փաստերը և փաստարկները որևէ կարևորություն չեն ներկայացնում վարչական մարմնի համար և չեն կարող դրվել ակտի ընդունման հիմքում, և վարչական մարմինն այդ ակտն ընդունել է որպես «որպես բարի կամքի դրսևորում»: Մինչդեռ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ որոշակի դեպքերում նաև հոգեբանական տեսանկյունից անձի համար կարող է անչափ կարևոր լինել վարչական ակտն իր համար ցանկալի հիմնավորումներով ընդունվելու հանգամանքը:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ գտնում ենք, որ վարչական ակտերի բողոքարկման իրավունքի ամրագրման տեսանկյունից Օրենքը վերանայման կարիք ունի: Առաջարկում ենք որպես վարչական ակտի միջամտող դրույթ դիտել այն դեպքերը, երբ, թեկուզև վարչական ակտի եզրափակիչ մասով դիմումատուի խնդրանքը բավարարվում է, սակայն այլ հիմնավորումներով, և վերջինս ապացուցում է իր մատնանշած հիմնավորումների օրինականությունն ու անհրաժեշտությունը: Այդ կապակցությամբ առաջարկում ենք Օրենքի 53-րդ հոդվածի բ) կետը շարադրել հետևյալ կերպ. «Միջամտող վարչական ակտն այն վարչական ակտն է, որի միջոցով վարչական մարմինները մերժում, միջամտում, ընդհուլ սահմանափակում են անձանց իրավունքների իրականացումը, որևէ պարտականություն են դնում նրանց վրա, ցանկացած այլ եղանակով վատթարացնում են նրանց իրավական կամ փաստական դրությունը կամ թեկուզև տրամադրում են իրավունք, սակայն ակտի հասցեատիրոջ կողմից նշված հիմնավորումներից տարբերվող այլ այնպիսի հիմնավորումներով, որոնք կարող են խախտել վերջինիս իրավունքները»: Այդպիսի ձևակերպմամբ Օրենքի 69-րդ հոդվածի

ուժով անձը կարող է բողոքարկել կամ դատական կարգով վիճարկել նաև նշված բարենպաստ ակտերը, քանի որ դրանցում տրված այլ հիմնավորումները կհամարվեն միջամտող դրույթներ:

### **ԳԼՈՒԽ 3. ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՐ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՅՄԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

#### **§1. ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԵՎ ԴՍՏԱԿԱՆ ՎԱՐԳՈՎ ՎԻՃԱՐԿՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածով սահմանվում են վարչական դատարանի հայց ներկայացնելու ժամկետները: Այդ հոդվածը տարբեր հայցատեսակների ներկայացման համար նախատեսում է ոչ միասնական ժամկետներ: Վարչական դատարանի հայց ներկայացնելու ժամկետների կապակցությամբ մեզ հետաքրքրում է այդ ժամկետների իրավական բնույթի հարցը, ուստի հաշվի առնելով, որ տարբեր հայցատեսակների համար սահմանված ժամկետները միևնույն բնույթի ունեն, քննարկման ընթացքում մեզ համար որպես օրինակ կդիտարկենք վիճարկման հայց ներկայացնելու համար սահմանված երկամսյա ժամկետը:

Վարչական դատարանի վիճարկման հայցով դիմելու ժամկետի իրավական բնույթի վերաբերյալ գիտության մեջ առաջ են քաշվել տարբեր մոտեցումներ: Այդ մոտեցումների տարբերակման հիմքում ընկած է այն խնդիրը, թե վարչական դատարանի դիմելու ժամկետն իր բնույթով նյութաիրավական, թե դատավարական ժամկետ է: Այդ խնդրի լուծման եղանակից կախված՝ տարբեր կերպ է լուծվում նաև այդ ժամկետը բաց թողնելու հետևանքների հարցը: Վարչական ակտի վիճարկման հայց ներկայացնելու ժամկետը դատավարական ժամկետ համարելու դեպքում դրա բացթողնման հետևանքը պետք է լինի հայցադիմումը վերադարձնելը կամ այն վարույթ ընդունելուց հետո գործի վարույթը կարճելը, իսկ քննարկվող ժամկետը որպես

Նյութափրավական ժամկետ դիտելու պայմաններում դրա բացթողումը կհանգեցնի ներկայացված հայցի մերժման, սակայն գործն այդ դեպքում կքննվի ըստ էության: Այլ կերպ ասած՝ վարչական դատարան դիմելու ժամկետը դատավարական կամ նյութափրավական դիտելու տարբերությունը դրսևորվում է դրա բացթողնման արդյունքում առաջացող հետևանքների մեջ. առաջին դեպքում գործը դատարանում ընդհանրապես չի քննվում, և գործի վարույթը ավարտվում է այն պահին, երբ դատարանը հաստատում է ժամկետի բացթողնման փաստը, իսկ երկրորդ դեպքում գործը քննվում է ըստ էության, սակայն հայցը մերժվում է:

Վիճարկման հայց ներկայացնելու ժամկետի իրավական բնույթի հետ կապված հարցը փորձենք քննարկել հետևյալ հարցադրումների լույսի ներքո. 1. այն պետք է դիտարկել որպես հայցային վաղեմության կրճատ ժամկետ, 2. վիճարկման հայց ներկայացնելու ժամկետը դատավարական ժամկետ է, 3. վարչական դատարան դիմելու ժամկետը հայցային վաղեմության ժամկետից տարբերվող այլ նյութափրավական ժամկետ է, որը դատարանը կիրառում է առանց մյուս կողմի միջևորդության:

Վիճարկման հայց ներկայացնելու ժամկետը կրճատ հայցային վաղեմության ժամկետ դիտելու մոտեցման առավելություններից մեկն այն է, որ այդ դեպքում վարչական ակտի վիճարկման վերաբերյալ գործը քննվում է ըստ էության, և գործն ըստ էության լուծող դատական ակտով կարող է գնահատական տրվել վարչական ակտի իրավաչափությանը: Սակայն հարկ է նկատի ունենալ, որ այդ մոտեցումը ունի նաև թերություն: Խոսքը վերաբերում է նրան, որ վիճարկման հայց ներկայացնելու ժամկետին այդ տեսանկյունից մոտենալու պարագայում զգալիորեն կարող է կրճատվել վարչական ակտի վիճարկման հայց ներկայացնելու հնարավորությունը ունեցող անձանց շրջանակակը, քանի որ, ինչպես հայտնի է, հայցային վաղեմության ժամկետը բացթողնելու հարգելի պատճառ են համարվում միայն հայցվորի անձի հետ անխզելիորեն կապված հանգամանքները: Դա նշանակում է, որ եթե առկա է վիճարկման հայց ներկայացնելու ժամկետի բացթողնման հարգելի, սակայն ոչ հայցվորի անձի հետ անխզելիորեն կապված պատճառ, ապա այդ ժամկետը ենթակաջ է վերականգնման:

Բացի այդ, ինչպես իրավացիորեն նշում է Ա. Վ. Սկվորցովը, քննարկվող ժամկետը չի կարող որակվել որպես հայցային վաղեմության կրճատժամկետ, քանի որ դրան կատմամբ կիրառելի չեն հայցային վաղեմության ընդհատմանը վերաբերող քաղաքացիական օրենսդրության դրույթները<sup>1</sup>: Ինչպես հայտնի է, հայցային վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվում է սահմանված կարգով հայց հարուցելով կամ պարտապանի կողմից պարտքը ճանաչելու մասին վկայող գործողություններ կատարելով: Ս. Վ. Սկվորցովի պնդմամբ հայցային վաղեմության ժամկետի ընդհատման վերոհիշյալ հիմքերը վերաբերում են գույքային բնույթ ունեցող քաղաքացիական հարաբերություններին<sup>2</sup>: Մենք համաձայն ենք նշված տեսակետին, քանի որ վարչական ակտի վիճարկումը ենթադրում է անձի և վարչական մարմնի միջև ուղղահայաց իրավահարաբերությունների առկայություն: Այտեղ առկա չեն պարտավորական հավասար հարաբերություններ, հետևաբար վարչական մարմինը չի կարող անձի նկատմամբ ճանաչել իր պարտքը: Ավելին, եթե նույնիսկ վերանանք վարչական մարմնի և անձի միջև առաջացող իրավահարաբերությունների հանրային-իրավական բնույթից և փորձենք «պարտք» եզրույթը ինչ-որ կերպ կիրառելի դարձնել այս հարաբերությունների նկատմամբ, առավելագույնը որպես վարչական մարմնի կողմից իր պարտքի ճանաչում կարող ենք դիտել վերջինիս կողմից ոչ իրավաչափ վարչական ակտի անվավեր ճանաչումը, որն էլ ոչ թե հայցային վաղեմության ժամկետի ընդհատման, այլ վիճարկման հայցի մերժման հիմք կդառնա, քանի որ այն, ըստ էության, նման պայմաններում կդառնա առարկայ ազուրկ:

Այսպիսով, ակնհայտ է, որ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված հայցային վաղեմության ժամկետի վերաբերյալ կանոնները վարչական դատարանի վիճարկման հայց ներկայացնելու ժամկետի նկատմամբ չեն կարող կիրառելի լինել:

Ինչ վերաբերում է դատավարական ժամկետին, ապա այն օրենքով սահմանված կամ դատարանի կողմից նշանակված այն ժամանակահատվածն է կամ ժամանակի կոնկրետ պահը, որի ընթացքում կամ հենց այդ պահին դատարանը կամ դատավարության այլ

<sup>1</sup> Տե՛ս Скворцов А.В. К вопросу о применении части 4 статьи 198 АПК РФ, էջ 7:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 7:

մասնակիցներն իրավունք ունեն կամ պարտավոր են կատարելու առանձին դատավարական գործողություններ<sup>1</sup>: Նշված սահմանումից ելնելով՝ Ա. Ա. Ալեշկինը նշում է, որ ժամկետը դատավարական համարելու չափանիշը դրա ընթացքում դատավարական գործողությունների կատարումն է<sup>2</sup>: Բացի այդ, անհրաժեշտ ենք համարում նաև ընդգծել, որ դատավարական ժամկետները իրավունքի գիտության մեջ բնորոշվում են որպես իրավադարձացնող ժամկետներ, քանի որ դրանց լրանալով անձը զրկվում է համապատասխան դատավարական գործողությունը կատարելու իրավունքից: Այդ իրավունքը դադարում է գոյություն ունենալուց: Բ. Ա. Ֆեդորովիչը նշում է, որ դատարան դիմելու ժամկետը սահմանող նորմը չի կարգավորում որևէ դատավարական գործողություն կատարելու կարգը, այլ սահմանափակում է դատարան դիմելու անձի իրավունքը, այլ կերպ ասած՝ սահմանափակում է անձի հայցի իրավունքը<sup>3</sup>: Յեղիևակը պնդում է, որ այդ ժամկետն անհրաժեշտ է տարբերակել իրավադարձացնող ժամկետից, որի լրանալը հանգեցնում է անձի նյութական իրավունքի դադարեցման: Քննարկվող ժամկետի ընթացքում դատարանն իրականացնում է խախտված իրավունքների հարկադիր պաշտպանություն, իսկ դրա լրանալու կապակցությամբ դատական պաշտպանության դիմած անձի հայցի մերժումը չի ազդում անձի իրավունքի գոյության վրա:

Եթե ամբողջացնենք վերոհիշյալ դիրքորոշումները, ապա կարող ենք փաստել, որ դատարան դիմելու ժամկետի նյութաիրավական, այլ ոչ թե դատավարական լինելն արտահայտվում է նրանում, որ դրա ազդեցությունը դրսևորվում է նյութական իրավունքի ոլորտում: Դատական պաշտպանության իրավունքը անձի նյութական իրավունքի անբաժանելի մասն է, որի կորուստը ազդում է խախտված իրավունքի ներքին բովանդակության վրա՝ թուլացնելով դրա գոյությունը: Յետևաբար դատարան դիմելու ժամկետի լրանալը, զրկելով անձին իր իրավունքների հարկադիր

<sup>1</sup> St'u Исаева, Е. В. Процессуальные сроки в гражданском и арбитражном процессе. М., 2005. էջ 95:

<sup>2</sup> St'u Алешкин А. А. применение исковой давности как способ сокращения срока рассмотрения дела, Вестник Челябинского государственного университета. 2011. № 35(250). Право. Вып. 30. էջ 66:

<sup>3</sup> St'u Федорович Б. А. О последствиях несоблюдения срока обращения в арбитражный суд с заявлением о признании ненормативного правового акта недействительным, էջ 2:

պաշտպանությունն իր համարում է խախտված իրավունքի վիճակի վրա՝ չդադարեցնելով դրագոյությունը<sup>1</sup>: Այլ կերպարող ենք ասել, որ անձը չի զրկվում իր իրավունքից, սակայն զրկվում է դրահարկադիր պաշտպանությունն ստանալուց (նյութաիրավական առումով հայցի) իրավունքից, բայց, միևնույնն է, դատավարական առումով հայցի իրավունքը պահպանում է<sup>2</sup>: Ելնելով դրանից՝ Բ. Ա. Տեդորովիչը եզրահանգում է, որ դատարան դիմելու ժամկետի բացթողնման պատճառների հարգելի լինելու և, ըստ այդմ, ժամկետը վերականգնելու հարցին դատարանը պետք է անդրադարձնա՞նք թե՛ միջանկյալ դատական ակտով, այն է՝ պատճառը հարգելի չհամարելու դեպքում հայցադիմումը վերադարձնելու մասին որոշմամբ կամ այն վարույթը նդունելուց հետո գործի վարույթը կարճելու մասին որոշմամբ, այլ պետք է իրականացնի գործի ըստ էության քննությունն այդ հարցին լուծում տավերջնական դատական ակտով: Ա. Վ. Սկվորցովը նույնպես պաշտպանում է նշված տեսակետը՝ դա պատճառաբանելով նրանով, որ հայցի հարուցումը դատավարական գործողությունն է, այլ անձի խախտված իրավունքի դատական պաշտպանության իրավունքի իրականացման դատավարական ձևը, ինչը նշանակում է, որ դատարան դիմելու ժամկետն անցած լինելու պատճառաբանությամբ ներկայացված հայցը վերադարձնելը կամ գործի վարույթը կարճելը անձին կզրկի դատական պաշտպանության իրավունքից<sup>3</sup>: Դրանից ելնելով՝ հեղինակը, ով ժխտում էր քննարկվող ժամկետը նաև կրճատ հայցային վաղեմության ժամկետ լինելու վերաբերյալ արտահայտված կարծիքները, սակայն, միևնույն ժամանակ, կողմ էր դրա նյութաիրավական բնույթին, առաջարկում է այն դիտարկել որպես հայցային վաղեմության ժամկետից տարբերվող այլ նյութաիրավական ժամկետ, որը դատարանը կիրառում է առանց կողմի միջնորդության<sup>4</sup>:

Այսպիսով, գիտության մեջ առկա մոտեցումների ամփոփման արդյունքում կարող ենք գալ այն եզրահանգման, որ հեղինակների գերակշիռ մասը մերժում է դատարան դիմելու ժամկետի դատավարական բնույթն այն հիմնավորմամբ, որ այդ ժամկետի

<sup>1</sup> Տե՛ս Алешкин А. А., նշված աշխատ., էջ 66:

<sup>2</sup> Տե՛ս Федорович Б. А., նշված աշխատ., էջ 2:

<sup>3</sup> Տե՛ս Скворцов А. В նշված աշխատ., էջ 8:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 11:

լրանալով՝ անձի խախտված նյութական իրավունքը չի դադարում, պարզապես անձը զրկվում է դրա հարկադիր պաշտպանությունից (նյութափրավական առումով հայցի իրավունքից), սակայն ոչ դատարան դիմելու իրավունքից (դատավարական առումով հայցի իրավունքից), մինչդեռ դատավարական ժամկետի անցնելը անձին այդ ժամկետի ընթացում կատարման ենթակա գործողությունը կատարելու իրավունքից զրկում է: Այս ամենի արդյունքում վերջիններս եզրահանգում են, որ նույնիսկ քննարկվող ժամկետը լրացած լինելու պայմաններում դատարանը պետք է իրականացնի գործի ըստ էության քննություն և ժամկետի բացթողնման անդրադառնագործն ըստ էության լուծող դատական ակտով:

Մենք այն կարծիքին ենք, որ վարչական դատարան վիճարկման հայցով դիմելու ժամկետի բնույթի վերաբերյալ վեճերն ինչ-որ առումով արհեստական են: Դա պայմանավորված է, առաջին հերթին, նրանով, որ մեծ նշանակություն ունի այն հարցը, թե ինչպես է օրենսդիրը կարգավորել ժամկետը բաց թողնելու հետևանքների հարցը: Գիտության մեջ խնդրո առարկա ժամկետի նյութափրավական բնույթը պաշտպանող հեղինակները՝ որպես իրենց դիրքորոշումը հիմնավորող փաստարկ, շեշտադրում են այն հանգամանքը, որ իրենց երկրի օրենսդրությամբ վարչական ակտի վիճարկման համար դատարան դիմելու ժամկետի բացթողումը նախատեսված չէ որպես հայցի վերադարձման կամ գործի վարույթի կարճման հիմք: Այս տեղից հարց է առաջանում, թե այն դեպքում, երբ համապատասխան օրենսդրական կարգավորումները փոփոխվեն, և սահմանվեն այդ ժամկետի բացթողնման այլ հետևանքներ, արդյոք դահիմք է լինելու նաև գիտության մեջ ձևավորված մոտեցումները փոխելու համար: Թերևս, տեսական բնույթի դատողություններում որպես ուղենիշ չեն կարող ընդունվել գործող օրենսդրական կարգավորումները, քանի որ դրանք կարող են փոփոխության ենթարկվել: Բացի այդ, ինչպես նշվեց, ի հիմնավորումն դատարան դիմելու ժամկետի նյութափրավական բնույթ ունենալու հանգամանքի՝ նշվում է, որ դրա լրանալու արդյունքում անձի իրավունքը չի դադարում, այլ անձը զրկվում է դրա հարկադիր պաշտպանություն և ստանալու հնարավորությունից: Մենք գտնում ենք, որ այս համատեքստում որևէ նշանակություն չունի, թե անձը իր իրավունքների հարկադիր



պաշտպանությունն չի ստանա գործն ընդհանրապես չքննվելու, թե քննվելու, սակայն հայցը նույն պատճառաբանությամբ մերժվելու հետևանքով: Թե՛ հայցը վերադարձնելու կամ գործի վարույթը կարճելու, թե՛ հայցը մերժելու հիմքում ընկած է նույն պատճառը՝ ժամկետի բացթողումը, հետևաբար կարևոր չէ, թե ինչ եղանակով է մերժվում անձի իրավունքների հարկադիր պաշտպանությունը: Եթե նույնիսկ գործը քննվի ըստ էության, և դատարանի կողմից գնահատական տրվի վիճարկվող վարչական ակտի իրավաչափությանը, սակայն հայցը մերժվի վիճարկման հայց ներկայացնելու ժամկետն անցած լինելու պատճառաբանությամբ, ապա, միևնույնն է, հայցվորը չի կարողանա այդ վարչական ակտով պատճառված վնասի հատուցում ստանալ, քանի որ դրա համար պահանջվում է վարչական ակտի անվավեր ճանաչում, որպիսի պահանջն անձին մերժվել է: Յետևաբար այն պնդումը, որ անձը զրկվում է միայն նյութաիրավական առումով հայցի իրավունքից, սակայն նրա դատական պաշտպանության իրավունքը չի դադարում, այնքան էլ հիմնավորված չէ, որովհետև, վերջին հաշվով, անձին հենց վերջինիս իրավունքների հարկադիր պաշտպանությունն է մերժվում ժամկետը լրացած լինելու պատճառաբանությամբ:

Բացի այդ, կարևորն այն է, որ անձը բոլոր դեպքերում զրկված չէ իր գործի ըստ էության քննությունն ստանալու հնարավորությունից, եթե նա ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով: Անկախ նրանից, թե զուտ տեսականորեն վիճարկման հայց ներկայացնելու ժամկետը մենք դիտում ենք որպես դատավարական, թե նյութաիրավական ժամկետ, այն ենթակա է վերականգնման, իսկ վարչական ակտով անձի խախտված իրավունքը՝ պաշտպանության, եթե ժամկետի բացթողնման պատճառը հարգելի է: ՅՅ վարչական դատավարության օրենսգրքով վիճարկման հայց ներկայացնելու ժամկետն ամրագրված է որպես դատավարական ժամկետ: Այն բաց թողնելը հիմք է ներկայացված հայցադիմումը վերադարձնելու համար, եթե չի ներկայացվել ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդություն, իսկ միջնորդություն ներկայացված լինելու և դատարանի կողմից այն չբավարարվելու դեպքում հայցի ընդունումը մերժվում է: Եթե դատարանը գործի քննության ընթացքում է պարզում սահմանված ժամկետից ուշ

հայ ցաղիմու մի ներկայացման հանգամանքը, ապա գործի քննության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը: Այս իրավակարգավորումներից բխում է, որ ժամկետի վերականգնման մասին միջնորդությունը բավարարվելու դեպքում գործը քննվում է ըստ էության: Ընդ որում, օրենսգրքի համապատասխան դրույթները ժամկետի վերականգնումը կապում են միայն այն բաց թողնելու պատճառները հարգելի լինելու հանգամանքի հետ, և նշանակություն չի տրվում նրան, թե վիճարկվող վարչական ակտի ուժի մեջ մտնելուց հետո ինչքան ժամանակ է անցել, այսինքն՝ անձը ինչքան է ուշացրել հայ ցաղիմու մի ներկայացումը: Ասվածից հետևում է, որ անձը, ով գտնում է, որ վարչական ակտով խախտվել են իր իրավունքները և օրինական շահերը, կարող է ցանկացած ժամանակ վարչական դատարան այդ վարչական ակտի վիճարկման հայ ց ներկայացնել՝ հայցի հետ միաժամանակ ներկայացնելով նաև բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն, և եթե այդ միջնորդության քննարկման արդյունքում դատարանը գտնի, որ սահմանված ժամկետից ուշ հայցի ներկայացումը պայմանավորված է հարգելի պատճառով, ապա բավարարում է միջնորդությունը և իրականացնում գործի ըստ էության քննություն՝ անկախ վարչական ակտի ուժի մեջ մտնելուց հետո անցած ժամանակահատվածից: Օրենքի 71-րդ հոդվածով սահմանվում են վարչական ակտի բողոքարկման ժամկետները և վարչական ակտն անբողոքարկելի դառնալու կարգը: Չամաձայն այդ հոդվածի 1-ին մասի՝ վարչական բողոքը կարող է բերվել վարչական ակտն ուժի մեջ մտնելուց հետո 2 ամսվա ընթացքում: Նույն հոդվածը նաև նախատեսում է, որ վարչական ակտի բողոքարկման ժամկետն անցնելուց հետո այն դառնում է անբողոքարկելի, սակայն անձը կարող է վերականգնել բողոքարկման ժամկետը այն հարգելի պատճառով բաց թողնելու դեպքում: Սակայն, մյուս կողմից, նույն հոդվածը նաև ամրագրում է դրույթ այն մասին, որ բողոքարկման ժամկետը լրանալուց մեկ տարի անցնելուց հետո անձը այլևս չի կարող բողոքարկել վարչական ակտը, քանի որ այդ դեպքում նա նաև զրկվում է ժամկետը վերականգնելու հնարավորությունից, եթե նույնիսկ այն իրականում հարգելի պատճառով է բաց թողել: Այս իրավակարգավորումից բխում է, որ վարչական ակտի բողոքարկման

առավել ազույն ժամկետը դրա ուժի մեջ մտնելու օրվանից մեկ տարի երկու ամիս է: Նշված ժամկետն անցնելուց հետո վարչական ակտի բողոքարկման որևէ ընթացակարգ օրենքը չի նախատեսում, առավել ևս թույլ չի տալիս նույնիսկ հարգելի պատճառով բաց թողնված բողոքարկման ժամկետը վերականգնել: Սակայն անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Օրենքի 71-րդ հոդվածով սահմանված բողոքարկման ժամկետները վերաբերում են միայն վարչական ակտի վարչական կարգով բողոքարկմանը և չեն տարածվում դատական կարգով բողոքարկման վրա: Նման դիրքորոշում է հայտնել նաև ՀՀ վճռաբեկ դատարանը օրենքի 71-րդ հոդվածի կիրառման իրավական վերլուծության համատեքստում: ՀՀ վճռաբեկ դատարանը, մասնավորապես, նշել է, որ օրենքի դրույթները չեն տարածվում դատավարական իրավունքի նորմերով կարգավորվող հարաբերությունների վրա, իսկ 71-րդ հոդվածը, սահմանելով վարչական ակտի բողոքարկման ժամկետները, ըստ էության, սահմանում է դրա վարչական բողոքարկումը՝ ակտն ընդունած մարմնին կամ ակտն ընդունած մարմնի վերադաս մարմնին: Ընդ որում, վարչական ակտի բողոքարկման համար նախատեսված ժամկետի բացթողումը վարչական ակտն անբողոքարկելի է դարձնում միայն վարչական կարգով<sup>1</sup>:

Այսպիսով, ստացվում է, որ Օրենքի իմաստով վարչական ակտի անբողոքարկելի դառնալու նշանակություն չի տրվում վարչական ակտը դատական կարգով վիճարկելու ժամանակ: Այստեղ անձը վարչական ակտի ուժի մեջ մտնելուց ավելի, քան մեկ տարի և երկու ամիս անցնելուց հետո էլ զրկված չէ վիճարկման հայց ներկայացնելու հնարավորությունից, եթե ժամկետի բացթողման պատճառը հարգելի է: Այսինքն՝ միևնույն վարչական ակտը, որի վարչական կարգով բողոքարկման բոլոր հնարավորություններն սպառվել են, անձը կարող է վիճարկել դատարանում: Դա նշանակում է, որ միևնույն հարցի շուրջ իրավունքի տարբեր ճյուղերի նորմերով սահմանված են տրամաբանորեն միմյանց հակասող կարգավորումներ: Անհասկանալի է, թե ինչ տրամաբանություն է դրված դատական և վարչական կարգով վարչական ակտի բողոքարկման

<sup>1</sup> Տես, օրինակ, ՀՀ վճռաբեկ դատարանի՝ թիվ ՎԴ2/0216/05/09 վարչական գործով 02.04.2010թ. որոշումը:

իրավունքի իրականացման տարբերակված ընթացակարգերի սահմանման հիմքում: Ինչու՞ միևնույն պայմաններում վարչական ակտը պետք է վարչական կարգով դառնա անբողոքարկելի, սակայն դրա դատական կարգով վիճարկումը լինի միանգամայն հնարավոր: Մենք գտնում ենք, որ անկախ նրանից, թե ինդիքը գտնվում է դատավարական, թե նյութաիրավական կարգավորման դաշտում, դրա էությունը չի փոխվում. անհրաժեշտ է սահմանել վարչական ակտի թե՛ դատական, թե՛ վարչական կարգով բողոքարկման միասնական ընթացակարգ այն առումով, որ առանձին հարցերի, մասնավորապես՝ բողոքարկման ժամկետների տարբերակման անհրաժեշտություն տվյալ դեպքում առկա չէ: Բացի այդ, ներկայիս կարգավորումը կարող է նաև չարաչափումների տեղիք տալ և հանգեցնել դատարանների ծանրաբեռնվածության անհարկի ավելացման: Սակայն դա հարցի ընդամենը տեխնիկական կողմն է, այստեղ, ինչպես նշվեց, առավել կարևոր է այն, որ միևնույն բովանդակություն ունեցող հարցին տարբեր օրենսդրական ակտերով տարբեր լուծումներ են տրվել, և այս առումով դրանց համապատասխանեցման և միասնականացման անհրաժեշտությունն ակնհայտ է: Մեր կարծիքով, որևէ նշանակություն չպետք է տրվի վարչական ակտի վիճարկման եղանակին, և որոշակի ժամկետ անցնելը պետք է հիմք դառնա նաև դատական կարգով վարչական ակտի անբողոքարկելի դառնալու համար: Հիշյալ համատեքստում Օրենքով և վարչական դատավարության օրենսգրքով սահմանված վարչական ակտի վիճարկման ժամկետների միասնականացման նպատակով առաջարկում ենք, որպեսզի Օրենքով նախատեսված վարչական ակտի անբողոքարկելի դառնալու ժամկետներն անցնելը հիմք լինի նաև դատական կարգով վիճարկման համար ակտի անբողոքարկելի դառնալու համար:

Պետք է նաև ընդգծել, որ վարչական ակտի վարչական կարգով բողոքարկման և դատական կարգով վիճարկման ժամկետների հստակեցումը և միասնականացումը կարևոր են նաև այդ վարչական ակտով պատճառված վնասի հատուցում ստանալու տեսանկյունից: Օրենքի 101-րդ հոդվածը սահմանում է, որ վարչարարությանը պատճառված վնասի հատուցման պահանջը անձը կարող է ներկայացնել իրեն պատճառված վնասի մասին իմանալուց հետո

Երեք տարվա ընթացքում: Իսկ մեկ այլ՝ 110-րդ հոդվածի համաձայն՝ հատուցման մասին պահանջը կարող է ներկայացվել երեք տարվա ընթացքում՝ վարչական մարմնի կողմից վարչական ակտն անվավեր ճանաչվելու կամ վարչական ակտի առ ոչ ինչ լինելը հաստատվելու մասին վարչական վարույթի մասնակիցներին սույն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվանից սկսած: Այս երկու իրավական դրույթների միջև, ըստ էության, հակասություն չկա, քանի որ իրազեկման ինստիտուտը հավասարազոր է պատճառված վնասի մասին իմանալուն<sup>1</sup>: Յետևաբար, անձն իրեն պատճառված մասին, ըստ էության, իմանում է կամ, առնվազն, պարտավոր է իմանալ վարչական ակտն անվավեր ճանաչվելու պահից, և այդ պահից սկսած էլ հոսում է վնասի հատուցման պահանջի ներկայացման 3-ամյա ժամկետը: Ուստի, քանի որ վնասի հատուցման պահանջի իրավունքի իրականացումն ուղղակիորեն կախվածության մեջ է դրվում վարչական ակտն անվավեր ճանաչվելուց, հետևաբար վարչական ակտի վարչական և դատական կարգով վիճարկման ժամկետների հստակ օրենսդրական կարգավորման առկայությունն անհրաժեշտություն է:

**§2. ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅԱՆՁԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՅԻ ՀԱՐՈՒՑՈՒՄԸ, ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԻ ԵՎ ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃՌԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ**

Օրենքի 102-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ վարչական մարմնում վնասի հատուցման պահանջը քննարկվում և լուծվում է դիմումի քննարկման համար սույն օրենքով սահմանված ընդհանուր կանոններին համապատասխան: Օրենքի 100-րդ հոդվածի 2-րդ մասից հետևում է, որ վարչարարությանը պատճառված վնասի հատուցման պահանջը ներկայացվում է դիմումի միջոցով, որի նկատմամբ կիրառվում են վարչական վարույթ հարուցելու վերաբերյալ դիմումին վերաբերող կանոնները: Վերոհիշյալ օրենսդրական նորմերի համադրումից հետևում է, որ վարչարարությանը

<sup>1</sup> Տե՛ս Դանիելյան Գ., նշված աշխատ., էջ 134:

պատճառված վնասի հատուցման վերաբերյալ դիմումի հիման վրա վարչական մարմնի կողմից հարուցվում է վարչական վարույթ, որի արդյունքում վարչական մարմինը պետք է վարչական ակտ ընդունի վնասի հատուցում տրամադրելու կամ վնասի հատուցման տրամադրումը մերժելու վերաբերյալ: Յետևաբար վնասի հատուցումը մերժելու մասին որոշում կայացնելու դեպքում վարչարարության հետևանքով վնաս կրած անձը իր իրավունքների պաշտպանության նպատակով կարող է վարչական մարմնի դեմ պարտավորեցման հայց ներկայացնել ՀՀ վարչական դատարան՝ պահանջելով ընդունել այն բարենպաստ վարչական ակտը (տվյալ դեպքում վնասի հատուցման մասին որոշումը), որի ընդունումը մերժվել է վարչական մարմնի կողմից: Ասվածի համատեքստում կարող է խնդիր առաջանալ այն դեպքերում, երբ վարչական մարմինը, ստանալով վնասի հատուցման դիմումը, դրսևորում է անգործություն՝ չհարուցելով և չիրականացնելով վարչական վարույթ: Ընդ որում, հարկ է նշել, որ որպես վարչական մարմնի կողմից անգործության դրսևորում պետք է որակել ոչ միայն վնասի հատուցման վերաբերյալ դիմումին որևէ պատասխան չտրամադրելը, այլև այն դեպքերը, երբ, չնայած պատասխան տրամադրելուն, այն իր բովանդակությամբ այնպիսին է, որ դրանից ակնհայտ են վնաս պատճառած պետական մարմնի կողմից վարչական վարույթ չիրականացվելու և վնասի հատուցման վերաբերյալ ըստ էության որոշում կայացնելու համար նշանակություն ունեցող հանգամանքների չպարզման փաստերը: Մասնավորապես, գործնական կյանքում հաճախ է հանդիպում այնպիսի բովանդակությամբ պատասխան, ինչպիսին է, օրինակ, «հարցը ենթակա է լուծման դատական կարգով» և այլն: Ակնհայտ է, որ նմանատիպ դեպքերում վարչական մարմինը չի իրականացնում վարչական վարույթ, մինչդեռ վնասի հատուցման դիմում ստանալուց հետո վնասի հատուցման հիմքերի առկայությունը պարզելու նպատակով վերջինս պարտավոր է հարուցել և իրականացնել վարչական վարույթ: Օրենսդրական նման կարգավորման տրամաբանությունն այն է, որ վարչական մարմինը հնարավորություն ունենա իր կողմից իրականացված վարչական վարույթի արդյունքում շտկելու այն իրավիճակը, որն առաջացել է իր ոչ իրավաչափ վարչարարության

հետևանքով: Օրենքի 102-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ վարչական մարմնի կողմից վնասի հատուցման դիմումն ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժելու կամ դիմումը չքննարկելու դեպքում դակարող է բողոքարկվել վարչական ակտը, գործողությունը կամ անգործությունը բողոքարկելու համար օրենքով սահմանված կարգով: Նշված դրույթով տրված իրավակարգավորման համատեքստում հետաքրքրություն է ներկայացնում այն հարցը, թե օրենքով նախատեսված իրավունքի պաշտպանության որ եղանակից պետք է օգտվի անձը վարչարարության ամբողջությամբ պատճառված վնասի հատուցման դիմումը վարչական մարմնի կողմից չքննարկվելու, այլ կերպ ասած՝ վարչական վարույթ չհարուցելու և չիրականացնելու պարագայում: Նշված հարցադրմանը պատասխանելու նպատակով հերթականությամբ քննարկենք ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված հայցառեսակներից որևէ մեկի ներկայացման հնարավորության հարցը: Թվում է, թե նմանատիպ իրավիճակներում իրավունքի պաշտպանության ճիշտ եղանակը պարտավորեցման հայց ներկայացնելն է, քանի որ, ինչպես պարզ դարձավ, վնասի հատուցման պահանջի քննարկման արդյունքում վարչական մարմինը պետք է ընդունի վարչական ակտ՝ վնասը հատուցելու կամ հատուցումը մերժելու մասին: Սակայն պարտավորեցման հայց կարող է ներկայացվել այն դեպքում, երբ վնաս պատճառված վարչական մարմինը քննարկել է վնասի հատուցման դիմումը և իր որոշմամբ մերժել վնասի հատուցումը: Դա բխում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին մասից, որի համաձայն՝ պարտավորեցման հայց ներկայացնելու համար անհրաժեշտ է, որպեսզի անձին մերժված լինի բարենպաստ վարչական ակտի ընդունումը, իսկ վնասի հատուցման դիմումը չքննարկելու դեպքում առկա է այն միջամտող վարչական ակտը, որով մերժվում է բարենպաստ վարչական ակտի՝ վնասի հատուցման վերաբերյալ որոշման ընդունումը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածով նախատեսված է գործողության կատարման հայցը: Այդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ գործողության կատարման հայցով անձը կարող է պահանջել կատարել վարչական ակտի ընդունմանը

չուղղված գործողություն: ՀՀ սահմանադրական դատարանն իր 22.02.2011թ. ՍԴՈ-942 որոշմամբ այն իրավական դիրքորոշումն է արտահայտել, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց կողմից դրսևորվող անգործության արդյունքում անձանց խախտված իրավունքների և ազատության և ներքին դատական պաշտպանությունը երաշխավորելուն է կոչված ինչպես պարտավորեցման, այնպես էլ գործողության կատարման հայցը: Ընդ որում, պարտավորեցման հայցի դեպքում դատական պաշտպանությունն իրականացվում է ընդդեմ այնպիսի անգործության, որն առնչվում է վարչական ակտի ընդունմանը, իսկ գործողության կատարման հայցի դեպքում՝ այնպիսի անգործության, որը չի առնչվում վարչական ակտի ընդունմանը:

ՀՀ սահմանադրական դատարանի կողմից տրված մեկնաբանության լույսի ներքո գործողության կատարման հայցի ներկայացման համար պարտադիր պայման է հանդիսանում պետական մարմնի դրսևորած անգործության՝ վարչական ակտի ընդունմանը չառնչվելու հանգամանքը: Հիշյալ համատեքստում վարչական մարմնի այն անգործությունը, որը դրսևորվում է վնասի հատուցման վերաբերյալ վարչական վարույթ չհարուցելով և չիրականացնելով, չի կարող համարվել վարչական ակտի ընդունմանը չառնչվող անգործություն, իսկ վարչական վարույթ հարուցելու գործողությունը, համապատասխանաբար, վարչական ակտի ընդունմանը չուղղված գործողությունն՝ այն պարզ պատճառով, որ վարչական վարույթը հենց վարչական ակտի ընդունմանն ուղղված գործունեությունն է: Հետևաբար ստացվում է մի իրավիճակ, երբ քննարկվող պարագայում վարչական մարմնի դրսևորած անգործության դեպքում անձը չի կարող օգտվել գործողության կատարման հայց ներկայացնելու դատավարարական եղանակից, քանի որ անգործությունն առնչվում է վարչական ակտի ընդունմանը, սակայն, միևնույն ժամանակ, նպատակին չի ծառայի նաև պարտավորեցման հայցի ներկայացումը, քանի որ առկա չէ բարենպաստ վարչական ակտի ընդունումը մերժող միջամտող վարչական ակտ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասով գործողության կատարման հայց ներկայացնելու



հնարավորություն է նախատեսված նաև այն դեպքերի առնչությամբ, երբ օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտ չընդունելու հետևանքով այն համարվում է ընդունված: Այդ դեպքում գործողության կատարման հայցի առարկան է հանդիսանում օրենքով նախատեսված համապատասխան փաստաթղթի տրամադրումը: Հարկ է նկատել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի այդ դրույթը հիմնված է Օրենքի 48-րդ հոդվածի վրա, որով սահմանվում է, որ դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի արդյունքում օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտ չընդունվելու դեպքում այն համարվում է ընդունված: Օրենքի այս նորմի կիրառման վերաբերյալ իր կայացրած մի շարք որոշումներում ՀՀ վճռաբեկ դատարանը տվել է այն մեկնաբանությունը, որ քննարկվող դրույթը չի կարող մեկնաբանվել որպես հայցվող ցանկացած վարչական ակտի ընդունված լինելը հաստատող նորմ: Հայցվող վարչական ակտը, ինչպես նաև հայցվող իրավունքը պետք է հիմնված լինեն օրենքի հիման վրա, չխախտեն այլոց իրավունքներն ու ազատությունները: Հետևաբար նշված նորմի բովանդակության մաս պետք է կազմի նաև հայցվող վարչական ակտի իրավաչափությունը, որի առկայությունը հաստատվելուց հետո միայն հնարավոր կլինի փաստել վարչական ակտի և դրա հիման վրա ծագող իրավունքի գոյությունը: Վճռաբեկ դատարանը միաժամանակ արձանագրել է, որ վերոնշյալ հոդվածը չի ենթադրում վարչական մարմնի կողմից վարչարարությունն չիրականացվելու դեպքում վարչարարությունն իրականացված լինելու և հայցվորի կողմից պահանջվող վարչական ակտն ընդունված լինելու կանխավարկածի առկայություն<sup>1</sup>:

ՀՀ վճռաբեկ դատարանի վերոհիշյալ մեկնաբանությունների և վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման կարգավորմանն ուղղված նորմերի համադրումից կարելի է եզրակացնել, որ օրենքով սահմանված ժամկետում վնասի հատուցման վերաբերյալ որոշում չընդունելը չի կարող մեխանիկորեն մեկնաբանվել որպես վնասի հատուցման պահանջի բավարարման մասին վարչական ակտի ընդունում: Նման եզրահանգումը պայմանավորված է նրանով, որ վնասի հատուցման համար վարչական մարմինը վարչական վարույթի

<sup>1</sup> Տե՛ս, օրինակ, ՀՀ վճռաբեկ դատարանի՝ թիվ ՎԴ/2731/05/11 վարչական գործով 05.04.2013թ. որոշումը:  
105

արդյունքում պետք է պարզի վնասի հատուցման բավարար հիմքերի առկայությունը, հատուցման ենթակա վնասի չափը, հատուցման եղանակը և մի շարք այլ էական հանգամանքներ: Այլ կերպ ասած՝ վնասի հատուցման մասին որոշում կայացնելու համար անհրաժեշտ է էական համարվող տարբեր հանգամանքների բացահայտում, առանց որոնց հնարավոր չի լինի իրականացնել վնասի հատուցումը: Այդ է պատճառը, որ քանի դեռ վարչական մարմնի կողմից իրականացված վարչական վարույթի արդյունքում վերջինս չի պարզել վկայակոչված հանգամանքները և վնասի հատուցման հիմքերի բավարար լինելու մասին եզրահանգման չի եկել, ապա չի կարող խոսք լինել վնասի հատուցման մասին վարչական ակտն ընդունված համարվելու մասին: Հակառակ տրամաբանությամբ հարցին մոտենալու պարագայում պարզ չի լինի, թե ինչ չափով պետք է անձին հատուցում տրվի, արդյոք վնասը հատուցվելու է դրամական միջոցներով, թե վնասի հատուցումը հնարավոր է նաև ոչ իրավաչափ վարչարարության առաջացրած հետևանքները վերացնելու եղանակով և այլն:

Այսպիսով, վնասի հատուցման վերաբերյալ վարչական վարույթ չիրականացնելու անգործության դեմ անձի դատական պաշտպանության իրավունքը չի կարող իրականացվել պարտավորեցման կամ գործողության կատարման հայցներկայացնելու միջոցով: Նույնը վերաբերում է նաև վիճարկման հայցին, քանի որ առկա չի լինում այն վարչական ակտը, որի վերացման (անվավեր ճանաչման) համար պետք է ներկայացվի վիճարկման հայցը: Նման պայմաններում մնում է քննարկման առարկա դարձնել ճանաչման հայց ներկայացնելու հնարավորության հարցը: Ճանաչման հայցը նախատեսված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածով: Այդ հոդվածը հնարավորություն է նախատեսում ճանաչման հայցի միջոցով ճանաչել որևէ իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը, եթե մյուս հայցատեսակներից որևէ մեկը ներկայացնելը հնարավոր չէ, ճանաչել վարչական ակտի առնչինչ լինելը կամ ոչ իրավաչափ ճանաչել այլևս իրավաբանական ուժ չունեցող վարչական ակտը, կատարմամբ կամ որևէ այլ կերպ իրեն սպառած գործողությունը կամ անգործությունը: Քննարկման

առարկա խնդրի կապակցությամբ մեզ հետաքրքրում են որևէ իրավահարաբերության առկայությունը ճանաչելու և իրեն սպառած անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջները: Նշենք, որ վնասի հատուցմանն ուղղված վարչական վարույթի չհարուցումը և չիրականացումը չեն կարող ինքնին հանգեցնել վնասի հատուցման պահանջի բավարարման, քանի որ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչվելուց հետո դեռևս անհրաժեշտ է բացահայտել վնասի հատուցում տրամադրելու կամ հատուցման տրամադրումը մերժելու մասին որոշում կայացնելու համար էական նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ, որոնք գուտմիայն ցուցաբերված անգործությունը սահմանված կարգով ոչ իրավաչափ ճանաչելով հնարավոր չէ պարզել: Հետևաբար վնաս պատճառած վարչական մարմնի՝ վնասի հատուցման նպատակով վարչական վարույթ չիրականացնելու անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելը չի ապահովում ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով անձի խախտված իրավունքների պաշտպանությունը: Ինչ վերաբերում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավահարաբերության առկայության ճանաչման պահանջին, ապա այդ կապակցությամբ նախևառաջ նշենք, որ այդ պահանջը որոշակիորեն կապված է օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտը ընդունվելու հետևանքով այն ընդունված համարվելու դեպքում օրենքով սահմանված համապատասխան փաստաթղթի տրամադրման պահանջի հետ: ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Օրենքի 48-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ ինչպես վերը վկայակոչված, այնպես էլ այլ որոշումներում արձանագրել է, որ վարչական ակտը ընդունված համարելու պահանջը իր էությամբ ճանաչման հայց է, որով հայցվորը պահանջում է ճանաչել որևէ իրավահարաբերության առկայությունը: Մասնավորապես՝ թիվ ՎԴ/2731/05/11 վարչական գործով էական նշանակություն են ունեցել այն փաստերը, որ հայցվորը դիմել էր ՀՀ \$ինանսների նախարարությունն աուդիտորի որակավորում ստանալու նպատակով քննություններին մասնակցելու համար, սակայն ՀՀ \$ինանսների նախարարությունը այդպես էլ չէր անցկացրել համապատասխան քննությունները: Ելնելով այդ հանգամանքից՝ հայցվորը դատարան էր ներկայացրել աուդիտորի որակավորումը շնորհված համարելու

և որակավորման վկայական տրամադրելու պահանջի մասին հայց: ՀՀ վճռաբեկ դատարանը դադարակցել է որպես ճանաչման հայց՝ ուղղված այն իրավահարաբերության առկայության ճանաչմանը, որ հայցվորին աուդիտորի որակավորում է շնորհվել: Մեկ այլ՝ թիվ ՎԴ/4657/05/12 վարչական գործով հայցվորը հայցադիմում էր ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ի՝ գրավի իրավունքի դադարման պետական գրանցումը ընդունված համարելու պահանջի մասին: Հայցի հիմքում դրված էր այն հանգամանքը, որ գրավառու բանկը ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ին գրություն էր ուղարկել վեճի առարկա անշարժ գույքի նկատմամբ գրանցված գրավի իրավունքի դադարման պետական գրանցում կատարելու համար, սակայն կադաստրի պետական կոմիտեն ընթացք էր տվել դիմումին, ինչի հետևանքով հայցվորը հետագայում կանգնել էր բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքը կորցնելու վտանգի առջև: ՀՀ վարչական դատարանը 21.07.2014թ. վճիռ էր կայացրել հայցը բավարարելու մասին, որը վերաքննիչ վարչական դատարանը թողել էր անփոփոխ: ՀՀ վարչական դատարանը իր կայացրած վճռում վկայակոչել էր ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասը և արձանագրել, որ չնայած ներկայումս գործող վարչական դատավարության օրենսգրքը վարչական ակտն ընդունված համարելը ճանաչելու հայց ներկայացնելու հնարավորություն չի նախատեսում (այլ նախատեսում է գործողության կատարման հայցով համապատասխան փաստաթղթի տրամադրում պահանջելու իրավական հնարավորություն), սակայն հարկ է ղեկավարվել 2007թ. նոյեմբերի 28-ին ընդունված և 2014թ. հունվարի 7-ին ուժը կորցրած ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով, քանի որ հայցը ներկայացնելու ժամանակահատվածում ուժի մեջ է եղել այդ օրենսգրքը, ուստի անհրաժեշտ է գնահատել ներկայացված հայցի համապատասխանելը այդ օրենսգրքով սահմանված կանոններին:

Այսպիսով, քննարկվող վարչական գործով դատական ակտի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ գործով ևս դատարանը ներկայացված հայցը դիտել է որպես ճանաչման հայց՝ ուղղված այն իրավահարաբերության առկայության ճանաչմանը, որ գրավի իրավունքը դադարել է, սակայն այն բավարարելու մասին

վճիռ է կայացրել այն պատճառաբանությամբ, որ հայ ցի ներկայացման ժամանակ գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտ չընդունվելու հետևանքով այն ընդունված համարելու դեպքում գործողության կատարման հայ ցի միջոցով օրենքով նախատեսված համապատասխան փաստաթղթի տրամադրման պահանջ ներկայացնելու հնարավորությունը չի ընձեռել<sup>1</sup>: Ասվածից բխում է, որ ներկայումս գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի համաձայն գործող իրավակարգավորումների պայմաններում իրավահարաբերության առկայության ճանաչման պահանջի մասին հայ ցի ներկայացումը վնաս պատճառած վարչական մարմնի կողմից վնասի հատուցման ուղղված վարչական վարույթ չհարուցելու և չիրականացնելու անգործության դեպքում չի կարող հանգեցնել վնասի հատուցման մասին որոշումը ընդունված համարելուն: Այս եզրահանգումը հիմնված է հետևյալ հանգամանքների վրա. նախ՝ ինչպես արդեն նշվեց, ներկայումս գործում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասը, որը և ծառայում է անձի իրավունքների պաշտպանությանը վարչական վարույթ չիրականացնելու և օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտ չընդունվելու դեպքում: Սակայն արդեն պարզեցինք, որ այդ հայ ցի միջոցով անձը չի կարող մեխանիկորեն հասնել վնասի հատուցման մասին որոշումը ընդունված համարելուն: Երկրորդ՝ եթե նույնիսկ հաշվի չառնենք ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասը և փորձենք ճանաչման հայ ցի միջոցով ճանաչել այն իրավահարաբերության առկայությունը, որ սահմանված ժամկետում վարչական ակտ չընդունելով՝ վարչական մարմինը բավարարել է վնասի հատուցման դիմումը, ապա գտնում ենք, որ դա հնարավոր չէ նաև այն պատճառաբանությամբ, որ բացառված չէ հետագայում այլ հայցատեսակներ ներկայացնելու հնարավորությունը: Այլ հայցատեսակներով իրավունքների պաշտպանության անհնարիությունը նախապայմանը հնարավոր չէ պահպանել, քանի որ անգործությունը մեկ անգամ ճանաչման հայցով

<sup>1</sup> Հարկ ենք համարում ընդգծել, որ ՎԴ/4657/05/12 վարչական գործով այլ հայցատեսակներ ներկայացնելու հնարավորության հարցին անդրադառնալը նպատակահարմար չենք գտնում, քանի որ հայցը բավարարելով՝ դատարանն ըստ էության այլ հայցատեսակներ ներկայացնելը համարել է անհնարին:

ոչ իրավաչափ ճանաչվելու և ցուցաբերող չի բացառվում վարչական մարմնի կողմից վարույթի իրականացումը, և այդ դեպքում անձը կարող է վիճարկման կամ պարտավորեցման հայցի միջոցով ձեռնամուխ լինել իր իրավունքների պաշտպանությանը, եթե, իհարկե, վնասի հատուցումը մերժվի:

Ամբողջ վերոշարադրյալը ամփոփելով՝ կարելի է եզրակացություն անել այն մասին, որ վնաս պատճառած վարչարարությունն իրականացրած պետական մարմնի կողմից վնասի հատուցման դիմումը չքննարկելու դեպքում վնաս կրած անձը չի ունենում հնարավորություն օգտվելու իր իրավունքների պաշտպանության դատական եղանակից, քանի որ վարչական մարմնի այդ անգործության առանձնահատկությունները բացառում են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված հայցատեսակներից որևէ մեկը ներկայացնելու միջոցով խախտված իրավունքների վերականգնման հնարավորությունը: Ասվածի համատեքստում նպատակահարմար ենք գտնում անդրադառնալ թիվ ՎԴ/3961/05/10 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի կողմից 20.06.2011թ. կայացրած վճռում արտահայտված իրավական դիրքորոշմանը, որը հանգում է հետևյալին. այդ վճռով վարչական դատարանը վարչական մարմնի դրսևորած անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու և որպես հետևանք վնասի հատուցմանը պարտավորեցնելու պահանջների մասին հայցը բավարարել էր մասնակիորեն՝ միայն անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասով, իսկ վնասի հատուցմանը պարտավորեցնելու պահանջի մասով հայցը մերժել էր: Վճիռը վարչական դատարանը հիմնավորել էր նրանով, որ միայն վարչական մարմնի կողմից վնասի հատուցման դիմումի հիման վրա հարուցված վարույթում պարզված հանգամանքների քննարկման արդյունքում դատարանը կարող է գնահատական տալ, թե արդյոք իրավաչափ է վարչական մարմնի կողմից սահմանված վնասի հատուցումը: Մինչդեռ վարչական մարմինը դրսևորել է անգործություն, սակայն օրենքի պահանջների հաշվառմամբ պարտավոր էր պարզել, թե վնասի հատուցումը որ եղանակով պետք է իրականացվի, բավարար կամ համարժեք է արդյոք վնասի հատուցումը հետևանքների վերացման միջոցով, եթե այդ նախադրյալներից որևէ մեկն առկա չէ, ապա պետք է ապահովվի վնասի

հատուցումը դրամական միջոցներով, որոշի դրա չափը: Այսինքն, օրենսդիրը սահմանելով նման կարգ՝ վնասի հատուցման պահանջով նախ վարչական մարմնին դիմելու, հնարավորություն է տվել վարչական մարմնին շտկելու այն իրավիճակը, ինչը ստեղծվել է ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում, ինչը, սակայն, տվյալ դեպքում ի կատար է հանվել վարչական մարմնի կողմից:

Վերոնշյալ վճռի բովանդակության վերլուծությունը ակնհայտորեն վկայում է այն մասին, որ ՀՀ վարչական դատարանը վնասի հատուցման պարտադիր պայման է համարել վնասի հատուցման նպատակով վարչական վարույթ հարուցելը և իրականացնելը: Սակայն մենք այն կարծիքին ենք, որ նման դիրքորոշման պայմաններում, բացի վարչարարությամբ պատճառված վնասի հատուցում ստանալու համար օրենքով սահմանված այն նախապայմանից, որ վարչարարությունը պետք է օրենքով սահմանված կարգով ոչ իրավաչափ ճանաչվի, ի հայտ է գալիս մեկ այլ նախապայման ևս, այն է՝ վնաս պատճառած պետական մարմնի կողմից վնասի հատուցման վերաբերյալ վարչական վարույթի իրականացումը: Մենք գտնում ենք, որ վնասի հատուցում ստանալը վարչական վարույթի պարտադիր իրականացմամբ պայմանավորելը չի բխում օրենսդրի առաջադրած այն նպատակից, որ վարչարարությունը ոչ իրավաչափ ճանաչվելուց հետո վնաս պատճառած վարչական մարմնին պետք է հնարավորություն տալ ինքնուրունաբար վերացնելու վարչարարության հետևանքով անձի իրավունքների խախտումը: Եթե վնաս պատճառած իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչվելուց հետո վարչական մարմինը, վնասի հատուցման դիմումը ստանալով, օրենքով սահմանված կարգով և ժամկետում չի իրականացնում վարչական վարույթ և ընդունում վարչական ակտ, դա, ինչպես և վնասի հատուցումը մերժելու մասին վարչական ակտի ընդունումը, պետք է գնահատել որպես վարչական մարմնի կողմից կամովին վնասի հատուցումից հրաժարում, որպիսի պարագայում էլ անձը պետք է հնարավորություն ունենա անմիջականորեն ձեռնամուխ լինել իր խախտված իրավունքների դատական պաշտպանության իրականացմանը: Հակառակ մոտեցման պարագայում կստացվի, որ անձը, նախևառաջ, պետք է վարչական մարմնին դատական

կարգով պարտավորեցնի իրականացնել վնասի հատուցմանն ուղղված վարչական վարույթ, և միայն այդ վարույթի արդյունքում վնասի հատուցումը մերժվելու դեպքում այդ որոշումը վիճարկի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքին համապատասխան: Նման ընթացակարգը, բացի այն, որ արհեստականորեն ուռճացված և խախտված իրավունքների պաշտպանության ապահովման գործունեության խիստ անարդյունավետ է, այլև, ինչպես պարզ դարձավ, բացակայում է օրենքով նախատեսված այն միջոցը, որով հնարավոր է վարչական մարմնին հարկադրել հարուցելու, իրականացնելու վարչական վարույթ և ընդունելու վարչական ակտ: Հետևաբար, երբ անձը վնասի հատուցման դիմում է ներկայացնում վարչական մարմին, և վերջինս չի քննարկում այն, ապա պետք է համարել, որ անձն արդեն իսկ սպառել է արտադատական կարգով հատուցում ստանալու միջոցները և հատուցում ստանալու համար իրավունք ունի դիմելու դատարան<sup>1</sup>: Այդ կապակցությամբ առաջարկում ենք Օրենքի 102-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Վնաս պատճառած մարմնի կողմից վնասի հատուցման դիմումը չբավարարվելու, չքննարկվելու կամ այն դեպքում, երբ վնաս կրած անձը համաձայն չէ վնասի հատուցման չափին կամ եղանակին, ապանակարող է վնասի հատուցում պահանջել օրենքով սահմանված կարգով»: Դրանից կբխի, որ, քանի որ վնասի հատուցման հարցը լուծվում է վարչական ակտով, ապա վնաս կրած անձը կարող է պարտավորեցման հայցով պահանջել ընդունել բարենպաստ վարչական ակտ՝ վնասի հատուցում տրամադրելու մասին որոշում նաև այն դեպքերում, երբ վարչական մարմինը օրենքով սահմանված կարգով և ժակետում չի քննարկում դիմումը: Նման կարգավորման պայմաններում վարչական մարմինը նաև զրկված չի լինի դատարան գործի քննության ժամանակ վնասի առկայության, ոչ իրավաչափ վարչարարության և առաջացած վնասի միջև պատճառահետևանքային կապի առկայության, վնասի չափի, դրա հատուցման եղանակի և էական նշանակությունն ունեցող այլ հանգամանքների վերաբերյալ իր առարկությունները ներկայացնելու հնարավորությունից:

<sup>1</sup> Նման դիրքորոշում է հայտնել նաև ՀՀ վարչական դատարանը ՎԴ/2040/05/12 վարչական գործով 03.11.2014թ. կայացված վճռով:



Յետաքրքրությամբ ունենեցրեց այն հարցը, թե վնասի հատուցման մասին վարչական ակտ ընդունվելու պարագայում ինչ կարգով պետք է այն ի կատար ածվի: «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի<sup>1</sup> 15-րդ հոդվածի 13-րդ մասը սահմանում է, որ դատական ակտերի հիման վրա ՀՀ պետական բյուջեից բռնագանձման ենթակա գումարների դիմաց կարող է տրվել մինչև մեկ տարի ժամկետով փոխանցվող մուրհակ: Այս կապակցությամբ հարկ է նկատել, որ վնաս պատճառած պետական մարմնի կողմից վնասը կամովին չհատուցվելու դեպքում վնաս կրած անձի կողմից վերջինիս դեմ ենթակա է ներկայացման պարտավորեցման հայց, որի բավարարումը կարող է հանգեցնել վարչական մարմնի կողմից վնասի հատուցման մասին վարչական ակտ ընդունելուն: Յետևաբար ստացվում է, որ ՀՀ վարչական դատարանը գործող օրենսդրական կարգավորումների պայմաններում անմիջականորեն վճիռ չի կայացնում ՀՀ պետական բյուջեից գումար բռնագանձելու մասին: Դա նշանակում է, որ «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածը, ինչպես նաև այդ հոդվածի հիման վրա ընդունված «Դատական ակտերի հիման վրա ՀՀ պետական բյուջեից բռնագանձման ենթակա գումարների դիմաց փոխանցելի մուրհակների տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 07.08.2000թ. N 436 որոշումը<sup>2</sup> չեն կարող կիրառվել վնասի հատուցում տրամադրելու մասին վարչական ակտերի նկատմամբ, քանի որ դրանց գործողությունը սահմանափակված է միայն պետական բյուջեից անմիջականորեն գումար բռնագանձելու մասին դատական ակտերով, իսկ վարչարարության մեջ պատճառված վնասի հատուցման գործերով ՀՀ վարչական դատարանի դատական ակտը, ինչպես հայտնի դարձավ, ուղղված է միայն վնասը հատուցելու մասին վարչական ակտի ընդունմանը, որի կատարման կարգ, ստացվում է, ՀՀ-ում սահմանված չէ: Այս կապակցությամբ գտնում ենք, որ անձի խախտված իրավունքների իրական պաշտպանության ապահովման տեսանկյունից նպատակահարմար չէր լինի վնասի հատուցում տրամադրելու մասին վարչական ակտերը կատարել պետական բյուջեից գումարի բռնագանձում նախատեսող դատական ակտերի կատարման համար

<sup>1</sup> Ընդունվել է 24.06.1997թ., ուժի մեջ է մտել 21.08.1997թ.: Տե՛ս ՀՀՊՏ 1997.08.11/18:

<sup>2</sup> Ընդունվել է 07.08.2000թ., ուժի մեջ է մտել 08.09.2000թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2000.08.29/20(118):

սահմանված կարգով<sup>1</sup>: Քանի որ վարչարարության ամբ պատճառված վնասի համար պատասխանատվություն կրող սուբյեկտը ՀՀ-ն է, նման վարչական ակտը, անկախ այն հանգամանքից, թե այն վարչական մարմնի կողմից ընդունվել է կամովին, թե դրա ընդունմանը վերջինս պարտավորեցվել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքին համապատասխան, պետք է հիմք լինի ՀՀ ֆինանսական մարմնի՝ ֆինանսների նախարարության կողմից վնասի հատուցումն իրականացնելու համար:

Վարչարարության ամբ պատճառված վնասը կարող է դրսևորվել ոչ միայն վնաս կրած անձի դրամական կորուստներով, այլև վերջինիս փաստացի դրության վատթարացմամբ: Օրենքի 98-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ եթե վնասը որևէ փաստացի դրության՝ ի վնաս անձի փոփոխության մեջ է, ապա պատասխանատվություն կրողը պարտավոր է վերացնել դրա առաջացրած հետևանքները՝ նախկին դրության, իսկ եթե դա անհնար կամ անարդյունավետ է, ապա դրան համարժեք այլ դրության վերականգնման միջոցով: Օրենքի 99-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատասխանատվություն կրողը վնասը հատուցում է դրամական միջոցներով, եթե հետևանքների վերացումը հնարավոր կամ բավարար չէ, կամ հետևանքների վերացման համար անհրաժեշտ են ավելի մեծ ծախսեր, քան պատճառված գույքային վնասը: Վկայակոչված նորմերի համադրված վերլուծությունից բխում է, որ վնասի հատուցումն իրականացվում է վարչարարության ամբ առաջացած հետևանքները վերացնելու կամ դրամական միջոցներով հատուցելու եղանակով: Ընդ որում՝ վնասը դրամական միջոցներով հատուցելու եղանակի կիրառումը պայմանավորված է վարչարարության ամբ առաջացած հետևանքները վերացնելու անհնարինության հանգամանքով: Այսինքն՝ անձին պատճառված վնասի հատուցման հարցի լուծման ուղեգծում օրենսդիրը հատկորոշել է հատուցման եղանակները. դրանք են՝ վարչարարության ամբ առաջացած հետևանքները վերացնելը կամ դրամական միջոցներով վնասը հատուցելը: Սակայն, այնուամենայնիվ, օրենսդիրը կանխորոշել է նշված եղանակների կիրառման հերթականությունը՝ ամրագրելով, որ վնասը

<sup>1</sup> Դատական ակտերի կատարման համար սահմանված կարգի նպատակահարմարության հարցին անդրադարձ չենք կատարում, քանի որ այն ներառված չէ սույն աշխատության նպատակների մեջ:

հատուցվում է դրամական միջոցներով, եթե հետևանքների վերացումը հնարավոր կամ բավարար չէ, կամ հետևանքների վերացման համար անհրաժեշտ են ավելի մեծ ծախսեր, քան պատճառված գույքային վնասը: Սա նշանակում է, որ հետևանքների վերացման միջոցով կամ դրամական միջոցներով վնասը փոխհատուցելու եղանակները հավասար հարթության վրա չեն գործում (դրանց ընտրության հարցում համիրավունքյունն առկա է), այլ սուբսիդիար են՝ երկրորդն առաջինի նկատմամբ: Յետևապես ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով անձին պատճառված վնասը դրամական միջոցներով հատուցելու հնարավորությունը կարող է իրացվել բացառապես այն դեպքում, երբ անհնար է վերացնել այդ ոչ իրավաչափ վարչարարության հետևանքը՝ վերականգնել նախկին դրությունը: Ըստ այդմ՝ պատասխանատու վարչական մարմին՝ դրամական միջոցներով անձին պատճառված վնասը փոխհատուցելու պարտականությունը ծագում է ոչ իրավաչափ վարչարարության հետևանքը վերացնելու անհնարինության դեպքում: Նման կանոնակարգումն ինքնանպատակ չէ: Վարչական մարմնի վրա դնելով ոչ իրավաչափ վարչարարության հետևանքները վերացնելու, առաջին հերթին՝ մինչև անձի իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելու միջոցով նրան պատճառված վնասի հատուցման պարտավորությունն՝ օրենսդիրը ըստ էության, երաշխավորել է անձին իր գույքային դրությունը պահպանելու իրավունքը, որպիսի հայեցակարգի ամրագրումը ծառայեցվում է ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով երաշխավորված անձի՝ իր գույքից անարգել օգտվելու իրավունքի պահպանմանը: Եվ միայն այդպիսի դրության վերականգնման անհնարինությամբ պայմանավորելով դրամական միջոցներով վնասի հատուցման վարչական մարմնի պարտականությունը՝ օրենսդիրը երաշխավորվել է անձի՝ իր ունեցած գույքի անվերադարձ օբյեկտիվ կորստի պայմաններում՝ ամեն դեպքում համարժեք հատուցում ստանալու հնարավորությունը<sup>1</sup>:

Այսպիսով, վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման հարցում հետևանքները վերացնելու եղանակով վնասի հատուցումը ունի առաջնայնությունն դրամական միջոցներով հատուցման

<sup>1</sup> Տես ՎԴ/0770/05/11 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 14.03.2014թ. վճիռը:

Նկատմամբ, քանի որ դրամական միջոցներով հատուցման համար անհրաժեշտ պայման է համարվում վարչարարության առաջացրած հետևանքների վերացման անհնարինությունը: Սակայն հարկ է նկատել, որ օրենքում առկա հակասական կարգավորումները կարող են խնդիրներ հարուցել վարչարարության հետևանքների վերացման հարցում: Խնդիրը, մասնավորապես, վերաբերում է նրան, որ, ինչպես արդեն իսկ նշվել է, վնասի հատուցման դիմումը քննարկում և լուծում է ոչ իրավաչափ վարչարարությունն իրականացրած վարչական մարմինը՝ վնասը հատուցելու կամ դրա հատուցումը մերժելու մասին վարչական ակտ ընդունելով: Եթե դրամական միջոցներով վնասը հատուցելիս այդ մասին համապատասխան վարչական ակտ ընդունելը տրամաբանական է, ապա նույնը չի կարելի ասել վարչարարության հետևանքների վերացմանն կապակցությամբ: Խնդիրն այն է, որ վարչարարության հետևանքները վերացնելը շատ հաճախ կարող է անհնարին լինել վարչական ակտի ընդունման միջոցով, և դրա համար պահանջվի վարչական մարմնի կողմից այս կամ այն գործողության կատարումը: Որպես ասվածի օրինակ՝ կարող ենք դիտարկել թիվ ՎԴ/9829/05/13 վարչական գործով վարչական վերաքննիչ դատարանի 17.03.2015թ. որոշումը: Մեզ հետաքրքրող մասով այդ գործի լուծման համար էական է եղել հետևանքների վերացման եղանակով վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման հնարավորության հարցը: Որպես վարչարարությամբ պատճառված վնաս է դիտվել փաստացի դրության փոփոխությունը՝ ի վնաս հայցվորի, ինչը դրսևորվել է նրանում, որ վարչական մարմնի՝ տույժ նշանակելու մասին որոշման հարկադիր կատարումն ապահովելու նպատակով հարուցված կատարողական վարույթի ընթացքում հայցվորի գույքի վրա արգելանք է դրվել: Յետագայում տույժ նշանակելու մասին որոշումը վերացվել է, սակայն արգելանքը պահպանվել է: Իր կայացրած որոշման պատճառաբանական մասում կատարված վերլուծություններով ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը այն իրավական դիրքորոշումն է արտահայտել, որ անվավեր ճանաչված վարչական տույժ նշանակելու մասին որոշման կատարման արդյունքում դրված արգելանքը իրականացված սխալ վարչարարության հետևանքն է, որը հնարավոր է վերացնել պահանջատիրոջ՝ վարչական մարմնի կողմից կատարողական թերթը

վերադարձնելու, կատարողական թերթի պահանջից հրաժարվելու մասին դիմում ներկայացվելու կամ պարտապանի հետ հաշտվելու արդյունքում:

Ակնհայտ է, որ քննարկվող գործով ոչ իրավաչափ վարչարարության իրականացման՝ անվավեր վարչական տույժ նշանակելու մասին որոշման ընդունման հետևանքները վերացնել կարելի է վարչական մարմնի կողմից որոշակի գործողություն կատարելու միջոցով: Տվյալ դեպքում վարչական մարմինը չի ընդունում վարչական ակտ կատարողական թերթը վերադարձնելու, կատարողական թերթի պահանջից հրաժարվելու կամ պարտապանի հետ հաշտվելու մասին, այլ այդ ուղղությամբ կատարում է համապատասխան գործողություններ: Մինչդեռ գործող օրենսդրական կարգավորումից բխում է, որ պատճառված վնասի հատուցում տրամադրելու վերաբերյալ դիմումը բոլոր դեպքերում ենթակա է քննարկման և լուծման վարչական վարույթ հարուցելու մասին դիմումի համար սահմանված կանոններին համապատասխան, և բացառություն չի նախատեսվում այն դեպքերի կապակցությամբ, երբ հետևանքների վերացումը հնարավոր է ոչ թե վարչական ակտի ընդունման, այլ որոշակի գործողության կատարման միջոցով: Վերոշարադրյալի առնչությամբ առաջարկում ենք Օրենքի 98-րդ հոդվածում կատարել լրացում առ այն, որ վարչարարության հետևանքների վերացման նպատակով վարչական մարմինը ձեռնարկում է օրենքով նախատեսված անհրաժեշտ գործողություններ: Նման կարգավորումը վարչարարության առաջացրած հետևանքների վերացման հնարավորությունը կդարձնի իրական, քանի որ, ինչպես նշվեց, վարչարարության հետևանքների վերացումը գործնականում շատ հաճախ կարող է անհնարին լինել վարչական ակտը ներկայացնելու միջոցով:

**§3. ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ՎՆԱՍ ՊԱՏՃԱՊԱՃ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԻՐԱԿԱՆԱԶՈՐԴՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ**

Օրենքի 100-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ վնասի հատուցման պահանջը պետք է ներկայացվի այն վարչական մարմին, որի վարչարարության հետևանքով պատճառվել է դա: Այս հոդվածի

բովանդակությունն ից հետևում է, որ վարչարարությունը ամբ պատճառված վնասի հատուցման շուրջ հանրային-իրավական հարաբերություններ են առաջանում վնաս պատճառված վարչարարությունն իրականացրած վարչական մարմնի և այդ վարչարարությունն ից վնաս կրած անձի միջև: Ինչպես հայտնի է, յուրաքանչյուր իրավահարաբերություն իր գոյության ընթացքում որոշակի իրավաբանական փաստերի ազդեցությամբ զարգացում է ապրում՝ սկսած իրավահարաբերության ծագումից մինչև դրա դադարումը: Իրավահարաբերությունների զարգացումն արդյունք է դրատարրերի վրատարբեր իրավաբանական փաստերի ազդեցության, և այդ ազդեցության բնույթից կախված՝ որոշվում է իրավահարաբերության զարգացման դինամիկան: Վարչական մարմնի և վնաս կրած անձի միջև ձևավորված իրավահարաբերության զարգացման լույսի ներքո հետաքրքրություն է ներկայացնում այն հարցը, թե արդյոք այն դեպքերում, երբ վնաս պատճառված վարչական մարմնը դադարում է գոյությունն ունենալուց վերակազմակերպման կամ լուծարման արդյունքում, դահանգեցնում է այդ մարմնի և վնաս կրած անձի միջև ձևավորված իրավահարաբերության դադարման, և, ըստ այդմ, արդյոք այդ իրավահարաբերության բովանդակությունը կազմող իրավունքներն ու պարտականությունները դադարում են, թե դրանք պահպանվում են այլ տեսքով:

Իրավահարաբերությունների դինամիկայի վերաբերյալ իրավաբանական գրականության մեջ արտահայտվել են տարաբնույթ դիրքորոշումներ: Արտահայտված կարծիքների միջև եղած հիմնական տարբերությունը հանգում է նրան, որ մի խումբ հեղինակների բնորոշմամբ ցանկացած իրավահարաբերություն իր զարգացման ընթացքում կարող է անցնել միայն երկու փուլ՝ առաջացման և դադարման, իսկ մյուս խումբը կազմող հեղինակների պնդմամբ իրավահարաբերության զարգացման փուլերից է պետք համարել նաև իրավահարաբերության փոփոխությունը: Վ. Ա. Բելովը գրում է, որ առաջացումը և դադարումը այն հիմնական, առանցքային հասկացություններն են, որոնց օգնությամբ կարող է բնութագրվել իրավահարաբերության դինամիկայի ցանկացած դեպք՝ ներառյալ իրավահարաբերության մեջ իրավահաջորդության

դեպքերը<sup>1</sup>: Ս. Բ. Կուլիտիշևը ևս բացառում է իրավահարաբերության փոփոխության հնարավորությունը՝ նշելով, որ իրավահարաբերության յուրաքանչյուր տարրի փոփոխությունն հանգեցնում է սկզբնական իրավահարաբերության դադարման և դրա փոխարեն նոր, ինքնուրույն իրավահարաբերության առաջացման<sup>2</sup>:

Այսպիսով, նշված երկու հեղինակների դիրքորոշման համաձայն՝ իրավահարաբերության առաջացումից հետո դրա հետ տեղի ունեցած ցանկացած փոփոխություն՝ անկախ նրանից, թե այդ փոփոխությունը իրավահարաբերության որ տարրի հետ է կապված, պետք է դիտել որպես հին իրավահարաբերության դադարում և դրա փոխարեն մեկ այլ իրավահարաբերության առաջացում:

Սակայն, ինչպես նշվեց, կան հեղինակներ, որոնք կողմ են հակառակ մոտեցմանը: Այդ հեղինակների հիմնավորմամբ հնարավոր է նաև իրավահարաբերության փոփոխություն: Իրավահարաբերությունը կարող է փոփոխվել ինչպես դրա բովանդակության, այնպես էլ սուբյեկտային կազմի տեսանկյունից: Ե. Մ. Դենիսևիչը գրում է, որ փոփոխությունը իրավահարաբերության զարգացման ոչ պարտադիր փուլ է: Այն հնարավոր է երկու ուղղություններով՝ իրավահարաբերության բովանդակության և (կամ) սուբյեկտային կազմի<sup>3</sup>: Այս մոտեցումը պաշտպանություն է գտել նաև այլ հեղինակների շրջանում: Դեմևս Գ. Ֆ. Շերշենևիչը նշել է, որ իրավահարաբերության փոփոխությունը դրա սուբյեկտների առումով ոչ թե պետք է դիտել այդ իրավահարաբերության դադարում և նորի առաջացում, այլ գոյություն ունեցող իրավահարաբերության փոփոխություն<sup>4</sup>:

Այսպիսով, նշված երկու հակադիր տեսակետներն ի մի բերելով՝ կարելի է եզրակացնել, որ դրանցից առաջինի համաձայն՝ իրավահարաբերության ցանկացած տարրի վերաբերող յուրաքանչյուր փոփոխության դեպքում գոյություն ունեցող իրավահարաբերությունը դադարում է, իսկ երկրորդ մոտեցման

<sup>1</sup> Տե՛ս Բелов В. А. Гражданское право. Общая часть. Т. 1. Введение в гражданское право: учебник /В. А. Белов. – М.: Издательство Юрайт, 2011, էջ 440:

<sup>2</sup> Տե՛ս Култышев С. Б. Распоряжение требованиями посредством уступки: автореф. дис. ... канд. юрид. наук. Томск. 2006, էջ 14:

<sup>3</sup> Տե՛ս Денисевич Е. М. Односторонние сделки в гражданском праве Российской Федерации: понятие, виды и значение: дисс. ... канд. юрид. наук, Екатеринбург, 2004, էջ 110:

<sup>4</sup> Տե՛ս Шершеневич Г. Ф. Общая теория права – Рига. 1924, էջ 668:

հիմքում ընկած է այն գաղափարը, որ իրավահարաբերության բովանդակության և (կամ) սուբյեկտային կազմի հետ կապված փոփոխությունը նշանակում է ոչ թե նոր իրավահարաբերության առաջացում, այլ գոյություն ունեցող իրավահարաբերության փոփոխություն:

Պետական մարմինների իրավաաջորդության դիտարկման համատեքստում մեզ հետաքրքրում է միայն իրավահարաբերության սուբյեկտի փոխվելու դեպքը: Արդյո՞ք իրավահարաբերության սուբյեկտային կազմի փոփոխությունը հանգեցնում է գոյություն ունեցող իրավահարաբերության դադարման, թե այդ նույն իրավահարաբերությունը պահպանվում է այլ սուբյեկտային կազմով: Մենք այն կարծիքին ենք, որ իրավահարաբերության կողմերից մեկի փոխարեն իրավահարաբերության մեջ այլ անձի ներգրավվելը չի կարող հիմք լինել իրավահարաբերության դադարման համար: Իրավահարաբերությունը նույնությամբ պահպանվում է, և ընդամենը տեղի է ունենում իրավահարաբերությունից որևէ հիմքով դուրս եկած կողմի իրավունքների և պարտականությունների անցում նրա փոխարեն իրավահարաբերության մեջ մտած մեկ այլ անձի: Այլ կերպ ասած՝ իրավահարաբերությունը նույնությամբ շարունակում է գործել դրանում որպես կողմ ներգրավված նոր անձի համար: Իհարկե, այս համատեքստում անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ինչպես իրավահարաբերության փոփոխության հնարավորությունն ընդունող հեղինակներն են նշում, փոփոխությունը իրավահարաբերության զարգացման պարտադիր փուլ է, և ցանկացած իրավահարաբերություն կարող է ծագել և դադարել առանց որևէ փոփոխության, մասնավորապես՝ սուբյեկտային կազմի առումով, ենթարկվելու: Իրավահարաբերության սուբյեկտային կազմի փոփոխման հիմքում կարող են ընկած լինել տարբեր իրավաբանական փաստեր: Մեր հետազոտության շրջանակներում մեզ հետաքրքրում է իրավահարաբերության կողմ համարվող վարչական մարմնի փոփոխությունը՝ դրա իրավաաջորդությամբ պայմանավորված: Վարչական մարմնի իրավաաջորդության հարց կարող է ծագել դրա գործունեության դադարեցման կապակցությամբ: Վարչական մարմնի գործունեությունը կարող է դադարեցվել այդ մարմնի



վերակազմակերպման կամ լուծարման մասին նորմատիվ իրավական ակտի հիման վրա:

Այսպիսով, վարչական մարմնի իրավահաջորդության մեջ պայմանավորված իրավահարաբերության փոփոխության և կողմերի իրավունքների ու պարտականությունների վրա ունեցած ազդեցության բնույթը հասկանալու համար անհրաժեշտ է պարզել, թե ինչ պետք է հասկանալ վարչական մարմնի իրավահաջորդության ներքո, և ինչ դեպքեր է այն ներառում:

Լ. Բ. Էսկինան պետական մարմինների իրավահաջորդության նյութաիրավական հիմք է համարում պետական կառավարման ոլորտում տեղի ունեցած փոփոխությունը՝ առաջին հերթին սուբյեկտային կազմի առումով, և պետաիշխանական բնույթի լիազորությունների անընդմեջ իրականացման պահանջմունքը<sup>1</sup>: Այս բնորոշումը հնարավորություն է տալիս բացահայտելու պետական մարմինների իրավահաջորդությանը բնորոշ մի քանի էական հատկանիշներ: Առաջին հերթին, պետական մարմինների իրավահաջորդության նկատմամբ կիրառելի չեն համանուն ինստիտուտը կարգավորող քաղաքացիաիրավական նորմերը: Դա պայմանավորված է մի քանի հանգամանքներով. նախ՝ եթե հիմք ընդունվեն քաղաքացիաիրավական նորմերը, ապա կստացվի, որ պետական մարմնի լուծարման դեպքում պետությունը կարող է ազատվել պատասխանատվությունից, այդ թվում՝ վարչարարության մեջ պատճառված վնասը հատուցելու պարտավորությունից, մինչդեռ իրավական պետությունում մարդը, նրա իրավունքներն ու ազատությունները բարձրագույն արժեքներ են, որոնց ճանաչման և պաշտպանության պարտականությունը կրում է պետությունը: Երկրորդ՝ պետական մարմնի լուծարումը չի կարող դիտվել և մեկնաբանվել քաղաքացիաիրավական համանուն ինստիտուտի նորմերի իրավակարգավորումների լույսի ներքո, քանի որ ի տարբերություն քաղաքացիաիրավական առումով լուծարման՝ պետական մարմնի լուծարումն ուղեկցվում է վերջինիս պատկանող իրավունքների և պարտականությունների փոխանցմամբ մեկ այլ

<sup>1</sup> St'u Eskinina Л. Б. Два правовых аспекта одной коллизийной ситуации (или комментарий к судебному решению). Журнал конституционного правосудия. 2009. N 4:

պետական մարմնի<sup>1</sup>: Դասական առումով, այսինքն՝ առանց իրավահաջորդության պետական մարմնի լուծարում կարող է ճանաչվել միայն դրա գործունեության դադարեցումը որևէ կոնկրետ ոլորտի պետարավական կարգավորումն իրականացնելու ց հրաժարվելու կապակցությամբ<sup>2</sup>:

Սահմանադրագետները ևս այն եզրահանգմանն են գալիս, որ քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսված իրավաբանական անձանց վերակազմակերպմանը և լուծարմանը վերաբերող կանոնները չեն կարող հիմք ընդունվել պետական մարմինների իրավահաջորդության հարցը լուծելիս, քանի որ ի տարբերություն քաղաքացիական իրավունքների օբյեկտների փոխանցման՝ պետական մարմինների պարագայում փոխանցվում է պետաիշխանական բնույթի լիազորությունը: Ըստ այդմ, քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված այն նորմը, որի համաձայն՝ լուծարումը իրավաբանական անձի գործունեության դադարեցումն է առանց նրան պատկանող իրավունքների և պարտականությունների՝ մեկ այլ սուբյեկտի անցման, պետական մարմինների պարագայում չի կարող կիրառվել, քանի որ այստեղ գործում է տրամաբանորեն հակառակ կանոնը. պետական մարմնի լուծարումը հենց պետք է առաջացնի իրավահաջորդության կարգով նրա իրավունքների և պարտականությունների անցում մեկ այլ պետական մարմնի<sup>3</sup>:

Այսպիսով, եթե ամփոփենք պետական մարմնի լուծարման առնչությամբ վերը նշված դատողությունները, ապա կարող ենք պնդել, որ բոլոր այն դեպքերում, երբ պետական մարմինը իրավասու մարմնի նորմատիվ ակտի հիման վրա լուծարվում է, սակայն վերջինիս կողմից իրականացվող պետաիշխանական բնույթի կոնկրետ լիազորությունը պահպանվում է և այն վերապահվում է մեկ այլ պետական մարմնի, ապա այս դեպքում պետական մարմնի լուծարմամբ վերջինիս մասնակցությամբ իրավահարաբերությունը չի դադարում, և լուծարված մարմնի փոխարեն

<sup>1</sup> St'u Камалов О. А. Реорганизация и реструктуризация органов государственной власти // Законы России: опыт, анализ, практика. 2006. N 8. цит. по СПС "КонсультантПлюс".

<sup>2</sup> St'u նույն տեղը:

<sup>3</sup> St'u Авакьян С. А. Заключение специалиста С. А. Авакьяна, цит. по Ливеровский А.А., Ескина Л.Б., Авакьян С.А., Стовповая Н.В., Стовповой А.Г. Комментарии к одному из решений Уставного суда. О проблеме правопреемства органов государственной власти субъекта Российской Федерации// Журнал конституционного правосудия. 2009. N 3

իրավահարաբերության մեջ ներգրավվում է այն պետական մարմինը, որի իրավասությանը վերապահվել է լուծարված մարմնի կողմից իրականացվող լիազորությունը: Այլ կերպ ասած՝ պետական մարմինների իրավահաջորդության հարցը լուծելիս որպես էլակետ պետք է ընդունել փոխանցվող լիազորության բնույթը: Եթե պետական համապատասխան լիազորությունը, որպես այդպիսին, չի վերանում, ապա լուծարված վարչական մարմնի փոխարեն վնասի հատուցման շուրջ ծագած իրավահարաբերության մեջ իրավահաջորդության կարգով պետք է մտնի այն վարչական մարմինը, որին փոխանցվել է այն լիազորությունը, որի իրականացմամբ ընդունված վարչական ակտը կամ որի իրականացմանն ուղղված գործողությունը կամ անգործությունը, որոնք վնաս են պատճառել, ճանաչվել են ոչ իրավաչափ: Վարչական մարմինների իրավահաջորդությունը հենց վերջիններիս կողմից իրականացվող լիազորությունների փոխանցման մեջ է, հետևաբար իրավահարաբերության մեջ մտնի համապատասխան լիազորությունն ստանձնած վարչական մարմինը:

Վերոհիշյալ դիրքորոշումը հավասարապես վերաբերում է նաև վարչական մարմինների վերակազմակերպմանը, հետևաբար վարչական մարմինների պարագայում, կարելի է ասել, նշանակություն չունի, թե նրանց գործունեությունը դադարեցվում է վերակազմակերպման, թե լուծարման հետևանքով: Այստեղ, ինչպես նշվեց, առանցքայինը լիազորության փոխանցման հարցն է:

Այսպիսով, պարզ դարձավ, որ վարչական մարմինների լուծարումը չի կարող հիմք լինել վերջինիս մասնակցությամբ որևէ իրավահարաբերության դադարման համար:

Այժմ վերադառնանք օրենքի 100-րդ հոդվածի 1-ին մասին: Դրանով, ինչպես նշեցինք, սահմանվում է, որ վնասի հատուցման պահանջը պետք է ներկայացվի այն վարչական մարմնին, որի իրականացրած վարչարարության արդյունքում պատճառվել է դա: Արդյոք եթե տվյալ վարչական մարմինը վերակազմակերպվել կամ, առավել ևս, լուծարվել է, ապա այդ հանգամանքը կարող է որևէ կերպ հիմք լինել անձին վնասի հատուցման մերժման համար: Եթե վնասի հատուցում տրամադրելու նպատակորեցնելու վերաբերյալ առկա է դատական գործ, ապա այդ դեպքում, մեր կարծիքով, խնդիր չի

առաջ անա, քանի որ հնարավոր կլինի պարզապես այդ դատական գործով իրականացնել դատավարական իրավահաջորդություն՝ դատավարության մեջ ներգրավելով այն վարչական մարմինն, որին փոխանցվել է համապատասխան լիազորությունը, և հարցը կլուծվի: Որոշակիորեն խնդրահարույց կարելի է համարել այն իրավիճակը, երբ առկա է դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտ՝ վարչական մարմինն վնասի հատուցում տրամադրելու և պարտավորեցնելու վերաբերյալ, սակայն վարչական մարմնի իրավահաջորդությունը տեղի է ունեցել այդ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո: Արդյոք նման պայմաններում վարչական մարմինը կարող է առարկել վնասի հատուցմանն այն հիմնավորմամբ, որ նախ՝ վնասը պատճառվել է ոչ իր վարչարարության արդյունքում, երկրորդ՝ տվյալ վարչական մարմինը չի մասնակցել վնասի հատուցում տրամադրելու վերաբերյալ դատական գործին, և, ըստ այդմ, այդ դատական գործով և դրա արդյունքում կայացված վճռով կապված չէ: Նշված հարցը դարձել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի քննարկման առարկա: Մասնավորապես՝ Մոլդովայի ճշմարիտ ուղղափառ եկեղեցին և այլոք ընդդեմ Մոլդովայի գործով<sup>1</sup> պատասխանող պետության առարկությունն այն էր, որ պետական մարմնի կողմից դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի չկատարումը պայմանավորված է եղել նրանով, որ այդ մարմինը նոր է ստեղծվել, գործի քննությանը չի մասնակցել, հետևաբար կայացված դատական ակտով կապված չէ<sup>2</sup>: Սակայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանը չի ընդունել պատասխանող պետության փաստարկները՝ այն հիմնավորմամբ, որ պարտապանը հենց պետությունն է, և այդ տեսանկյունից նշանակություն չունի, թե որ պետական մարմինն է նրա անունից մասնակցել գործի քննությանը և որն է պատասխանատու եղել վերջնական դատական ակտի կատարման համար:

<sup>1</sup> Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 27.02.2007թ. թիվ 952/03 վճիռը:

<sup>2</sup> Նշված գործով ներպետական դատարանը որոշում էր կայացրել կրոնական կազմակերպությանը գրանցելու մասին, սակայն դատական ակտը չէր կատարվել այն պատճառաբանությամբ, որ կրոնական կազմակերպությունների գրանցման լիազորությունը փոխանցվել է այլ մարմնի, որը գործի քննությանը չի մասնակցել:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նշված իրավական դատողությունները հիմք ընդունելով՝ կարող ենք նշել, որ մեր կողմից ամբողջ նյութի շարադրման ընթացքում վարչական մարմնին իրավահարաբերության կողմ դիտելը պայմանական բնույթ է կրել: Յանրային իրավահարաբերություններում, որտեղ խոսքը վերաբերում է պետության անունից իրականացվող իշխանական լիազորությունների իրականացմամբ ընդունված վարչական ակտերին կամ այդ լիազորությունների իրականացմանն ուղղված գործողություններին, իրավահարաբերության կողմը հենց պետությունն է՝ ի դեմ այս կամ այն մարմնի: Յետևաբար հիշյալ համատեքստում խոսք կարող է լինել իրավահաջորդության կարգով հանրային իրավահարաբերություններում պետության անունից հանդես եկող որևէ վարչական մարմնի լիազորությունների փոխանցման մասին մեկ այլ մարմնի: Այլ կերպ ասած՝ իրավահաջորդության արդյունքում փոխվում է միայն պետության անունից հանդես եկող մարմինը, իսկ պետությունը՝ որպես իրավահարաբերության կողմ, մնում է անփոփոխ: Այս ամենից եզրակացությունը մեկն է. որևէ նշանակություն չունի իրավահաջորդության պահը և այն, թե վնասի հատուցման վերաբերյալ դատական գործի քննության ժամանակ որ մարմինն է հանդես եկել պետության անունից, իսկ վճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո այն պետք է կատարի այդ, թե մեկ այլ մարմին: Իսկ վճիռը կատարելուն պարտավոր մարմինը որոշվում է ելնելով այն հանգամանքից, թե որ մարմնի իրավասությանն է տվյալ պահի դրությամբ վերապահված այն լիազորությունը, որի իրականացմանն ուղղված է եղել ոչ իրավաչափ ճանաչված և վնաս պատճառած վարչարարությունը:

Այսպիսով, խախտված իրավունքների վերականգնման պարտականությունը դրվում է այն մարմնի վրա, որի իրավասությանը վերապահվել է համապատասխան պետափշխանական բնույթի լիազորությունը: Այս մոտեցումը բնորոշվում է որպես գործառնության իրավահաջորդություն: Իշխանական լիազորությունների փոխանցմանը խախտված իրավունքների վերականգնման պարտականության հետևելու վերաբերյալ մոտեցումը

ամբողջությամբ համապատասխանում է իրավունքի գերակայության սկզբունքին, որտեղ արդարարատության իրականացման նպատակը խախտված իրավունքների, ազատության և օրինական շահերի արդյունավետ պաշտպանությանն է:

Այս կապակցությամբ տեղին ենք համարում վկայակոչել պետական մարմինների դատավարական իրավահաջորդության վերաբերյալ Ուկրաինայի փորձը: Ճիշտ է, խոսքը, ինչպես նշվեց, դատավարական իրավահաջորդության մասին է, սակայն քանի որ այն հիմնված է նյութաիրավական հարաբերությանն ենթարկում տեղի ունեցած սուբյեկտային կազմի փոփոխության հետ, իրավահաջորդության հարցի կարգավորման՝ Ուկրաինայում գործող տարբերակի դիտարկումը կարող է նպաստել պետական մարմինների իրավահաջորդության լիարժեք ընկալմանը: Խոսքն այն մասին է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վերոհիշյալ որոշման կայացումից հետո Ուկրաինայում պետական մարմինների իրավահաջորդության հետ կապված խնդիրն իր լուծումն ստացավ վարչական գործեր քննելիս վարչական դատարանի կողմից վարչական դատավարության օրենսգրքի առանձին դրույթների կիրառման պրակտիկայի վերաբերյալ Ուկրաինայի բարձրագույն վարչական դատարանի նախագահության 2008 թվականի մարտի 6-ի որոշման 9-րդ կետում: Դրանով, մասնավորապես, սահմանվում է, որ եթե գործի քննության ընթացքում հաստատվի, որ դատարանը է այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի գոյությունը, որի որոշումը, գործողությունը կամ անգործությունը բողոքարկվում է, ապա դատարանը պետք է դատավարության մեջ ներգրավի նրա իրավահաջորդին: Իրավահաջորդի բացակայության դեպքում դատարանը պետք է գործի քննությանը մասնակից դարձնի այն մարմնին, որի իրավասությանն առնչվում է անձի իրավունքների, ազատության և օրինական շահերի խախտման վերացման հարցի լուծումը:

Որոշման քննարկվող կետի բովանդակությանից կարելի է այն հետևություններն անել, որ պետական մարմնի իրավահաջորդի առկայության հարցը կապվում է այն հանգամանքի հետ, թե պետական մարմնի գործունեությունը դատարանից վերաբերյալ է վերակազմակերպման, թե լուծարման արդյունքում: Վերակազմակերպման դեպքում

իրավահաջորդ հստակ առկա է, իսկ լուծարման դեպքում, որպես այդպիսին, իրավահաջորդ պետք է համարել այն մարմնին, որին փոխանցվել է լուծարված մարմնի կողմից իրականացված համապատասխան լիազորությունը: Սակայն մենք կարծում ենք, որ տվյալ դեպքում էական չէ այն հարցը, թե պետական մարմինը լուծարվել է, թե վերակազմակերպվել: Էականն այն է, որ երկու դեպքում էլ նրա փոխարեն իրավահարաբերության մեջ է մտնում այդ մարմնի համապատասխան լիազորությունն ստանձնած պետական մարմինը:

Պետախշխանական լիազորության փոխանցումը որպես վարչական մարմինների իրավահաջորդության հիմք դիտելու հարցն առավել պատկերավոր ներկայացնելու նպատակով նպատակահարմար ենք գտնում վկայակոչելու ՌԴ դատական պրակտիկայից մեկ դատական գործ: Այդ գործով կայացված վճռով ՌԴ սուբյեկտներից մեկի գործադիր իշխանության մարմինը՝ պետական գույքի կառավարման հանձնաժողովը, պարտավորեցվել էր նախապատրաստել հողամասի օտարման վերաբերյալ պայմանագրի նախագիծ և այն սահմանված ժամկետում ուղարկել գործի մասնակից իրավաբանական անձին՝ պրտենցիալ ձեռքբերողին: Հետագայում հանձնաժողովը դիմել էր դատարան դատավարական իրավահաջորդություն իրականացնելու վերաբերյալ միջնորդություն և խնդրել իր փոխարեն դատավարության մեջ ներգրավել ՌԴ սուբյեկտի տեղական ինքնակառավարման մարմնին՝ այն հիմնավորմամբ, որ ՌԴ սուբյեկտի օրենսդրության մեջ տեղի ունեցած փոփոխությամբ պետական սեփականությունն հանդիսացող հողամասի օտարման լիազորությունը փոխանցվել է սուբյեկտի տեղական ինքնակառավարման մարմնին: Սակայն դատարանը մերժել էր գույքի կառավարման հանձնաժողովի միջնորդությունն այն պատճառաբանությամբ, որ ՌԴ սուբյեկտի հողի մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի եզրափակիչ դրոյթներով նախատեսված չէ այնպիսի մի նորմ, որով ՌԴ սուբյեկտի գործադիր մարմնի կողմից խախտված իրավունքի վերականգնման պարտականությունը կդրվեր տեղական ինքնակառավարման մարմնի վրա: Օրինական ուժի մեջ մտած դատական ակտից ծագող ՌԴ սուբյեկտի գործադիր մարմնի

պարտավորությունները չեն փոխանցվել տեղական ինքնակառավարման մարմնին:

Առաջին հայացքից կարող է թվալ, թե դատարանը չի իրականացրել պետական մարմնի դատավարական իրավահաջորդություն: Սակայն, մեր կարծիքով, այս պարագայում խնդիրը նրամեջ է, որ կայացված վճիռը վերաբերել է ոչ թե գույքի կառավարման հանձնաժողովին հողամասի օտարման պայմանագրի կնքելուն, այլ հողամասի օտարման պայմանագրի նախագիծը մշակելուն և մյուս կողմին ուղարկելուն պարտավորեցնելուն: ՌԴ սուբյեկտի հողի մասին օրենքում կատարված փոփոխությամբ հողամասի օտարման լիազորությունն է փոխանցվել սուբյեկտի տեղական ինքնակառավարման մարմնին, իսկ պայմանագրի նախագծի մշակումը չի ենթադրում դրա օտարում: Յետևաբար կարող ենք ասել, որ եթե կայացված վճիռը հանձնաժողովը պարտավորեցված է ինքն ոչ թե մշակելու հողամասի օտարման պայմանագրի նախագիծը, այլ կնքելու պայմանագիրը, ապա դատարանն այդ դեպքում թույլ կտար պետական մարմնի դատավարական իրավահաջորդություն:

Այս դատական գործի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ վարչական մարմինների իրավահաջորդության հետ կապված հարց կարող է ծագել ոչ միայն դրանց վերակազմակերպման կամ լուծարման, այլև այն դեպքում, երբ տեղի է ունեցել վարչական մարմնի մեկ առանձին վերցրած լիազորության փոխանցում այլ մարմնի, սակայն տվյալ վարչական մարմնի գործունեությունը չի դադարեցվել: Սա է պատճառը, որ Ուկրաինայի բարձրագույն վարչական դատարանի նախագահության վերոհիշյալ որոշումն առանձին կարգավորում է նախատեսում որևէ լիազորություն մեկ պետական մարմնից մեկ այլ մարմնի փոխանցվելու դեպքերի առնչությամբ: Մասնավորապես՝ դրանով սահմանված է, որ իշխանական լիազորության սուբյեկտի իրավասության ծավալի կրճատման դեպքում գործի քննությանը որպես երկրորդ պատասխանող ներգրավվում է այն պետական մարմինը, որի իրավասությանը վերապահվել է կամ առնչվում է խախտված իրավունքների, ազատությունների և օրինական շահերի վերակազմման հարցի լուծումը: Որոշման մեջ խոսք է գնում պետական մարմնին գործին որպես երկրորդ պատասխանող



ներգրավելու մասին, սակայն ակնհայտ է, որ երբ վեճը վերաբերում է որևէ կոնկրետ լիազորության իրականացման, որը փոխանցվել է այլ պետական մարմնի, ապա նախորդ մարմնի գործի մեջ մնալը որևէ իմաստ չունի, և այդ դեպքում ստացվում է, որ մյուս պետական մարմինը գործի մեջ մտնում է նրա փոխարեն:

Հաշվի առնելով պետափշխանական լիազորության փոխանցման նշանակությունը պետական մարմինների իրավահաջորդության հարցում՝ գիտության մեջ տարբեր առաջարկներ են արվում պետական մարմնի դատավարական իրավահաջորդությունը սահմանող իրավական նորմին այնպիսի ձևակերպում տալու առնչությամբ, որում կշեռտադրվի լիազորության փոխանցման հանգամանքը: Մասնավորապես՝ Ն. Ս. Բանդորինան առաջարկում է ՌԴ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի շարադրանքի մեջ ավելացնել ձևակերպում առ այն, որ դատարանի կողմից գործին մասնակցող պետական մարմնի դատավարական իրավահաջորդությունն իրականացնելու հիմք է նաև գործին մասնակցող պետական մարմնի փոխարեն վիճելի իրավահարաբերության մեջ այլ անվանմամբ, սակայն համապատասխան ոլորտում նույն իրավասությամբ օժտված պետական մարմնի մտնելը<sup>1</sup>:

Վերջում նաև կցանկանայինք հավելել, որ նույնիսկ պետափշխանական բնույթի լիազորության դադարումը չի կարող հիմք լինել պետությանը վնասի հատուցումից ազատելու համար: Այդ դեպքում, ինչպես նաև այն դեպքերում, երբ հնարավոր չէ որոշել իր գործունեությունը դադարեցրած վարչական մարմնի իրավահաջորդին, ապա գտնում ենք, որ անձը վարչարարությամբ պատճառված վնասի հատուցում ստանալու նպատակով պետք է համապատասխան դիմում ներկայացնի ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ որպես պատասխանատվություն կրող սուբյեկտի՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսական մարմնի:

#### **§4. ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԻ ԳՈՅՈՒԹՅԱՆ ՆԿՍՏԱՄԲ ՎՍՏԱՐՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ**

<sup>1</sup> Стн Бандорина Н. С. Органы исполнительной власти как субъекты гражданских процессуальных правоотношений. автореф. дисс. ... канд. юрид. наук, Саратов, 2010.

Գործնական առումով չափազանց կարևոր նշանակություն ունի վարչարարությունը ամբ պատճառված վնասի տարբերակումն այն վնասից, որն անձը կրել է ոչ իրավաչափ բարենպաստ վարչական ակտի գոյությունը վստահելու հետևանքով:

Վարչական ակտի գոյությունը վստահելու իրավունքի իմաստը դրսևորվում է նրանում, որ անձի իրավական վիճակը բարելավող (բարենպաստ) վարչական ակտը կարող է անվավեր ճանաչվել միայն այն դեպքում, երբ նրավստահությունն արժանի է պաշտպանության: Յուրաքանչյուր անձ մշտապես շահագրգռված է իր համար բարենպաստ վարչական ակտի գոյությունն պահպանման հարցում, իսկ վարչական մարմնի համար, ընդհակառակը, առաջնայինը օրինականության սկզբունքի պահպանումն է վարչական ակտը ընդունելիս: Հետևաբար վարչական ակտի հասցեատիրոջ և վարչական ակտն ընդունած վարչական մարմնի համար ել ակետերը տարբեր են: Եթե նույնիսկ վարչական ակտն ընդունվել է օրենքի խախտմամբ, սակայն դրանով անձին տրամադրվում են իրավունքներ, արտոնություններ, կամ նրավիճակն այլ կերպ բարելավվում է, ապա անձը կփորձի ամեն կերպ թույլ չտալ, որպեսզի այդ վարչական ակտն անվավեր ճանաչվի, մինչդեռ վարչական մարմինը կձգտի վերականգնել օրինական դրությունը՝ ակտը ճանաչելով անվավեր: Այսպիսով, բարենպաստ ոչ իրավաչափ վարչական ակտի գոյությունն պահպանման մասնավոր և օրինականության վերականգնման հանրային շահերը այս պարագայում հակադրվում են միմյանց, և յուրաքանչյուր կոնկրետ դեպքում վարչական ակտն անվավեր ճանաչելու հարցը լուծելու համար պետք է գնահատման առարկա դարձնել այն հարցը, թե այդ երկու հակադիր շահերից որն է գերակշռում: Եթե վարչական ակտի գոյությունն պահպանման մասնավոր շահն է տվյալ կոնկրետ դեպքում ավելի ծանրակշիռ, ապա ոչ իրավաչափ վարչական ակտի գոյությունն նկատմամբ ակտի հասցեատիրոջ վստահությունը արժանի է պաշտպանության, և վարչական ակտը չի կարող անվավեր ճանաչվել<sup>1</sup>: Վարչական ակտի գոյությունն նկատմամբ շահագրգիռ անձի վստահությունը պաշտպանությունն տրամադրելը կախված է նրանից, թե ինչ

<sup>1</sup> Տե՛ս Հովհաննիսյան Գ. Վստահության պաշտպանության սահմանադրական սկզբունքի դրսևորումը ՀՀ վարչական իրավունքում, էջեր 8-9:

հետևանքներ կառաջանան այդ անձի համար վարչական ակտն անվավեր ճանաչելու դեպքում և ինչպիսին կլինեն այդ հետևանքները պետության, հանրության կամ երրորդ անձի համար այդ ակտն ուժի մեջ թողնելու պարագայում: Կախված նրանից, թե երկու հակադիր կողմերում գտնվող նշված սուբյեկտներից ում համար վրահասնող հետևանքներն ավելի ծանր կլինեն կամ նրանցից որ մեկն ավելի մեծ վնաս կկրի, որոշվում է այն հարցը, թե արդյոք վարչական ակտն ուժի մեջ թողնելու մասնավոր շահը գերակայում է այն անվավեր ճանաչելու հանրային շահին, թե ոչ: Օրենքն ամրագրում է այն չափանիշները, որոնց հիման վրա յուրաքանչյուր կոնկրետ դեպքում իրավասու մարմինը պետք է պարզի, թե արդյոք վարչական ակտի գոյության նկատմամբ այդ ակտի հասցեատիրոջ վստահությունն արժանի է պաշտպանության, թե ոչ: Օրենքի 63-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ ոչ իրավաչափ վարչական ակտը չի կարող անվավեր ճանաչվել, եթե ակտի հասցեատերն իրավունք ունի վստահելու վարչական ակտի գոյությանը, և վերջինիս գործողության մեջ գտնվելը չի կարող վնաս պատճառել որևէ անձի իրավունքներին, Չայաստանի Չանրապետությանը կամ որևէ համայնքի:

Վարչական ակտի հասցեատերը վարչական ակտի գոյությանը վստահելու իրավունք ունի, եթե վարչական ակտի հիման վրա ստացածն արդեն իսկ օգտագործել կամ տնօրինել է, ինչպես նաև, եթե ակտի հիման վրա ստացածը հետ վերադարձնելը վնաս կպատճառի վարչական ակտի հասցեատիրոջը: Օրենքը, միևնույն ժամանակ, նախատեսում է այն հանգամանքները, որոնց առկայությունը բացառում է վարչական ակտի գոյության նկատմամբ վստահության պաշտպանությունը: Դրանք են՝ ա) ակտի հասցեատերը դրա ընդունմանը հասել է կաշառքի, սպառնալիքի կամ վարչական մարմնի պաշտոնատար անձին դիտավորյալ մոլորության մեջ գցելու միջոցով. բ) համապատասխան վարչական ակտի ընդունմանը հասել է կեղծ կամ ոչ լրիվ փաստաթղթեր ներկայացնելու միջոցով. գ) նախապես իմացել է վարչական ակտի ոչ իրավաչափ լինելու մասին կամ այդ մասին պարտավոր էր իմանալ՝ իր համար մատչելի տեղեկությունների հիման վրա:

Վերոհիշյալ հանգամանքներից ցանկացածի առկայության պարագայում անձը չի կարող հղում կատարել վարչական ակտի գոյությանը վստահելու իր իրավունքին, քանի որ վարչական ակտի գոյության նկատմամբ վստահությանը կարող է պաշտպանվել միմիայն այն դեպքում, երբ անձի համար բարենպաստ վարչական ակտի ոչ իրավաչափությանը վերջինիս պատասխանատվության շրջանակի մեջ չի մտնում, այլ կերպ ասած՝ պայմանավորված չէ նրա գործողության ներքով<sup>1</sup>:

Այսպիսով, օրենքը վարչական ակտի գոյության նկատմամբ ակտի հասցեատիրոջ վստահությանը պաշտպանության տրամադրում է հետևյալ պայմանների առկայության դեպքում՝ 1. անձը պետք է վարչական ակտի գոյությանը վստահելու իրավունք ունենա, որն առկա է այն դեպքում, երբ վերջինս վարչական ակտի հիման վրա արդեն իսկ ձեռք է բերել համապատասխան օգուտները կամ տնօրինել վարչական ակտի հիման վրա ձեռք բերված գույքը, և 2. վարչական ակտի ուժի մեջ մնալը չպետք է վնաս պատճառի ՀՀ-ին, որևէ երրորդ անձի կամ համայնքի: Մենք այն կարծիքին ենք, որ անձի վստահության պաշտպանության նման պայմաններ սահմանելով՝ օրենսդիրը ամբողջովին խեղաթյուրել է վստահության պաշտպանության սկզբունքի իմաստը: Առաջին հերթին, հարկ է նշել, որ այլ անձանց իրավունքների խախտման բացակայությանը ոչ մի դեպքում չէր կարող նախատեսվել որպես ակտի հասցեատիրոջ վստահության պաշտպանության նախադրյալ, քանի որ վստահության պաշտպանության սկզբունքի ամբողջ իմաստն այն է, որ վարչական ակտի գոյության նկատմամբ անձի վստահությանը պետք է պաշտպանվի հենց այն անվավեր ճանաչելու հանրային շահից: Անձի վստահությանը պաշտպանությանը կարող է տրվել միայն ոչ իրավաչափ վարչական ակտերի պարագայում, ինչը նշանակում է, որ այդ ակտով կարող են խախտվել երրորդ անձի շահերը, և պետությանը էլ մշտապես շահագրգռված է այդ անձի իրավունքների խախտման վերացման և օրինական դրության վերականգնման հարցում: Այստեղ պարզապես անհրաժեշտ է որոշել, թե արդյոք վարչական ակտի գոյության նկատմամբ անձի վստահությանը պաշտպանության արժանի է ոչ իրավաչափ վարչական

<sup>1</sup> Տե՛ս Հովհաննիսյան Գ., նշված աշխատ., էջ 12:

ակտն անվավեր ճանաչելու հանրային շահի համեմատությամբ: Եթե վարչական ակտն անվավեր ճանաչելու հետևանքները ակտի հասցեատիրոջ համար կլինեն ավելի ծանր, քան այն ուժի մեջ թողնելու հետևանքները՝ երրորդ անձանց համար, ուրեմն ակտը չի կարող անվավեր ճանաչվել:

Ամբողջ վերոշարադրյալից բխում է, որ բարենպաստ ոչ իրավաչափ վարչական ակտը բոլոր դեպքերում վնաս է պատճառում երրորդ անձանց կամ այդպիսի վնաս պատճառելու վտանգ է ներկայացնում, սակայն ակտի հասցեատիրոջ վստահությունն էլ հենց այն նպատակով է պաշտպանվում, որպեսզի վերջինիս երրորդ անձանց համեմատությամբ ավելի մեծ վնաս չպատճառվի: Հիշյալ համատեքստում կարելի է փաստել, որ վարչական ակտի գոյության նկատմամբ ակտի հասցեատիրոջ վստահության իրավունքն ամրագրող օրենքի հիշյալ հոդվածները ներկայիս ձևակերպմամբ ամբողջովին չեն արտացոլում վստահության պաշտպանության սկզբունքի էությունը: Առաջին հերթին, այնտեղ պետք է շեշտադրվեր այն հանգամանքը, որ վարչական ակտի գոյության նկատմամբ անձի վստահությանը պաշտպանություն պետք է տրամադրվի հենց այն անվավեր ճանաչելու հանրային շահից: Ներկայումս հոդվածում խոսք չկա այն մասին, որ ակտի հասցեատիրոջ՝ ակտն ուժի մեջ թողնելու շահը պետք է գերակայություն ունենա այն անվավեր ճանաչելու հանրային շահի նկատմամբ:

Վարչական ակտի գոյության նկատմամբ վստահության պաշտպանության սկզբունքն այդ տեսքով է իր ամրագրումն ստացել տարբեր երկրների օրենսդրությամբ: Մասնավորապես «Վարչական վարույթի մասին» Էստոնիայի օրենքի 67-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ բարենպաստ ոչ իրավաչափ վարչական ակտը չի կարող անվավեր ճանաչվել, եթե անձը, վստահելով այդ ակտի գործողությանը, օգտագործել է դրա հիման վրա ձեռք բերված գույքը, այդ գույքի տնօրինման գործարք է կնքել կամ այլ եղանակով փոխել է իր կյանքի պայմանները, և վարչական ակտն ուժի մեջ թողնելու նրա շահը գերակայում է այն անվավեր ճանաչելու հանրային շահի համեմատությամբ: Նույն հոդվածի հաջորդ մասով

սահմանվում է, որ վարչական ակտն անվավեր կարող է ճանաչվել՝ ելնելով հանրային շահի գերակշռությունից<sup>1</sup>:

Լատվիայի վարչական դատավարության օրենքի 86-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձի համար բարենպաստ ոչ իրավաչափ վարչական ակտը կարող է անվավեր ճանաչվել ներքոհիշյալ հանգամանքներից առնվազն մեկի առկայության դեպքում՝

1. ակտի հասցեատերը դեռևս չի իրացրել վարչական ակտով տրամադրված կամ հավաստված իրավունքները.

2. վարչական ակտն անվավեր ճանաչելու հնարավորությունը նախատեսված է օրենքով,

3. վարչական ակտը ուժի մեջ թողնելը շոշափում է հանրության էական շահերը<sup>2</sup>:

Լատվիայի օրենքի մեջբերված հոդվածից, ինչպես տեսանք, բխում է, որ վարչական ակտն անվավեր ճանաչելու հնարավորությունն ուղղակիորեն կապվում է նշված պայմաններից որևէ մեկի առկայության հետ: Դրանցից ցանկացածի առկայությունն արդեն իսկ կարող է բավարարել ինել բարենպաստ վարչական ակտն անվավեր ճանաչելու արգելքը հաղթահարելու համար: Այսինքն՝ անձը կարող է օգտված լինել ակտով իրեն վերապահված իրավունքներից, սակայն ակտը հակասի հանրության էական շահերին և ճանաչվի անվավեր: Նույն տրամաբանությունն է գործում նաև Էստոնիայի օրենքի պարագայում: Այնտեղ ևս վարչական ակտն անվավեր չճանաչելու համար, վարչական ակտով տրված օգուտները սպառելուց բացի, կարևորվում է նաև մասնավոր շահի գերակշռումը հանրային շահի համեմատությամբ: Այս երկու երկրների օրենսդրության համապատասխան հոդվածների վերլուծության արդյունքում, ինչպես նաև ելնելով անձի վստահության պաշտպանության սկզբունքի բուն էությունից՝ կարող ենք եզրահանգել, որ վարչական ակտի գոյության նկատմամբ անձի վստահությանը պաշտպանություն տրամադրելը ամբողջովին կախված է մասնավոր և հանրային շահերի համեմատումից, և այդ գործընթացում, առաջին հերթին, հաշվի է առնվում այն հանգամանքը, թե արդյոք ակտի հասցեատերը վարչական ակտով ձեռք

<sup>1</sup> Տե՛ս <http://zakon24.ee/zakon-ob-administrativnom-proizvodstve/>, 27.02.2016թ. դրությամբ:

<sup>2</sup> Տե՛ս [http://www.pravo.lv/likumi/06\\_apz.html](http://www.pravo.lv/likumi/06_apz.html), 27.02.2016թ. դրությամբ:

բերված օգուտները սպառել է, թե ոչ: Բնականաբար, այդ հանգամանքն առանձին դեպքերում կարող է որոշիչ լինել, քանի որ օգուտների սպառումը ակտի հասցեատիրոջ՝ ավելի մեծ վնասներ կրելու հավանականությունն ավելի մեծ է դարձնում՝ համեմատած այն անձանց վնասների հետ, որոնք վերջիններս կկրեն ակտն ուժի մեջ թողնելու պարագայում:

Այս ամենը մեր օրենսդրությամբ ամրագրված է լրիվ հակառակ տրամաբանությամբ: Նախ, ինչպես նշվեց, ոչ մի խոսք չկամասնավոր և հանրային շահերի հակադրման մասին: Ինչ վերաբերում է վարչական ակտով ձեռք բերված օգուտները սպառած լինելուն, ապամի դեպքում (63-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերությամբ) այն դիտվում է որպես անձի վստահությանը պաշտպանություն տալու անվերապահ հիմք, մեկ այլ դեպքում (64-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին պարբերություն)՝ վարչական ակտը դրան անվավեր ճանաչելու (ոչ թե ակտն ընդունելու) պահից ուժը կորցնելու հիմք անվավեր ճանաչման դեպքում: Յետևաբար անհասկանալի է, թե, ի վերջո, վարչական ակտով տրամադրված օգուտները սպառած լինելն արդեն իսկ բավարար է անձի վստահության պաշտպանության համար, թե այն ուղղակի հաշվի առնելով՝ իրավասու մարմինն ակտը անվավեր ճանաչելիս դրան ուժը դադարեցնում է անվավեր ճանաչելու, այլ ոչ թե ակտն ընդունելու պահից: Մենք այն կարծիքին ենք, որ վարչական ակտով ստացված օգուտներն սպառելը կարող է այլ հանգամանքների հետ մեկտեղ նպաստել այն հարցի ճիշտ գնահատմանը, թե ակտն ուժի մեջ թողնելու մասնավոր շահը արդյոք գերակայում է այն անվավեր ճանաչելու հանրային շահի համեմատությամբ, և, ըստ այդմ, արդյոք ակտի հասցեատիրոջ վստահությանը ենթակա է պաշտպանության, թե ոչ: Այս երկու շահերի համեմատության ժամանակ ամեն ինչ կախված է կոնկրետ հանգամանքներից և յուրաքանչյուր առանձին դեպքում դրանց կշռից, օրինակ՝ անվավեր ճանաչելու հետևանքները վարչական ակտով օգուտ ստացողի համար, անվավեր չճանաչելու հետևանքները հանրության ու երրորդ անձանց համար, վարչական ակտի տեսակը և ընդունման ձևը (ինչքան ավելի ձևականացված է վարչական վարույթը, այնքան ավելի շատ կարող է վստահել անձը վարչական ակտի կայունությունը), անիրավաչափության ծանրությունը, վարչական ակտի ընդունումից հետո անցած

ժամանակը<sup>1</sup>: Այսպիսով, անձի մասնավոր շահը և հանրության շահը համեմատվում են, առաջին հերթին, վարչական ակտն անվավեր ճանաչելու հետևանքների տեսանկյունից, իսկ այդ առումով ակտով ձեռքբերվածը սպառած լինելու հանգամանքը հաշվի առնելը խիստ կարևոր է:

Այսպիսով, անձի վստահության պաշտպանության հիմքը նրա մասնավոր շահի գերակայումն է հանրության շահի համեմատությամբ, ինչն էլ, իր հերթին, որոշվում է նրանով, թե արդյոք վարչական ակտն անվավեր ճանաչելը ավելի մեծ վնաս կառաջացնի ակտի հասցեատիրոջ, թե այն ուժի մեջ թողնելը՝ երրորդ անձի համար: Եթե այդ վնասն ավելի մեծ կլինի ակտի հասցեատիրոջ համար, ապա այն անվավեր չի կարող ճանաչվել, և հակառակը: Ինչ վերաբերում է օգուտները սպառած լինելու դեպքում վարչական ակտը անվավեր ճանաչելու պահից ուժը կորցնելուն, ապա դա տեղի ունի այն դեպքում, երբ, ամեն դեպքում, չնայած օգուտները սպառած լինելուն, գերակշռում է հանրային շահը:

Այսպիսով, եթե ամփոփենք վերը շարադրված դատողությունները, ապա կարող ենք նշել, որ վարչական ակտի գոյության նկատմամբ վստահության պաշտպանության սկզբունքի էությունը հանգում է հետևյալին.

1. Առաջին հերթին, պետք է բացակայեն վարչական ակտի գոյությանը վստահելու իրավունքը բացառող՝ Օրենքի 63-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանգամանքները: Դանշանակում է, որ անձը, գործելով բարեխղճորեն և ձեռնարկելով տվյալ ակտի ընդունման համար անհրաժեշտ բոլոր օրինական քայլերը, պետք է վստահություն ունենա, որ վարչական ակտի անվավերության հարց չի կարող ծագել վարչական մարմնի կողմից թույլ տրված խախտումների հետևանքով:

2. Անձը պետք է սպառած լինի վարչական ակտով տրամադրված օգուտները կամ տնօրինած լինի վարչական ակտի հիման վրա ձեռք բերված գույքը, և դրա արդյունքում հնարավոր չլինի այն վերադարձնել, կամ վերադարձնելը անձին էական վնաս պատճառի:

Չարկ է նշել, որ օգուտները սպառած չլինելու դեպքում, որպես կանոն, անձի վստահությանը պատճառված վնաս առկա չի

<sup>1</sup> Տե՛ս Հովհաննիսյան Գ., նշված աշխատությունը, էջ 17:



լինում, և բացի այդ, օգուտները սպառած լինելու հանգամանքի հաշվառումը շատ կարևոր է ակտի հասցեատիրոջ հնարավոր վնասների չափի որոշման և, դրա արդյունքներից ելնելով, հանրային շահի համեմատանձի մասնավոր շահի գերակշռման հարցի ճիշտ լուծման համար: Այդ է պատճառը, որ ինչպես արդեն իսկ նշեցինք, քննարկվող պայմանի առկայությունն ինքնին վարչական ակտի գոյության նկատմամբ անձի վստահությունը չի դարձնում պաշտպանության արժանի, սակայն բոլոր մյուս գործոնների հետ միասին կարևոր նշանակություն ունի այդ հարցի ճիշտ լուծման համար<sup>1</sup>:

3. Յուրաքանչյուր կոնկրետ դեպքում անձի վստահությունը պաշտպանության ենթակա լինելու հարցը լուծելիս պետք է հակադրել վարչական ակտն ուժի մեջ թողնելու մասնավոր և այն անվավեր ճանաչելու հանրային շահերը: Այդ երկու հակադիր շահերից որևէ մեկի գերակշռության հարցը որոշվում է այն հանգամանքից ելնելով, թե որ կողմի կրած վնասները ավելի մեծ կլինեն՝ ակտի հասցեատիրոջ վնասները այն անվավեր ճանաչելու դեպքում, թե երրորդ անձի վնասները՝ ակտը ուժի մեջ թողնելու դեպքում: Այս կապակցությամբ հարկ ենք համարում ընդգծել նաև, որ եթե նույնիսկ հաստատվի, որ երրորդ անձը ավելի էական վնասներ կկրի, սակայն վարչական ակտի հասցեատերը, վստահելով վարչական ակտի գոյանը, արդեն իսկ սպառել է վարչական ակտի հիման վրաստացածը և չի կարող որևէ կերպ վերադարձնել այն, ապա երրորդ անձը այլևս շահագրգռվածություն չի ունենա վարչական ակտն անվավեր ճանաչելու հարցում և պետք է դիմի իր իրավունքների պաշտպանության այլ եղանակի<sup>2</sup>:

Եթե վերոհիշյալ բոլոր գործոնների գնահատման արդյունքում իրավասու մարմինը գտնում է, որ վարչական ակտը պետք է ճանաչվի անվավեր, ապա ակնհայտ է, որ այդ ակտը անվավեր ճանաչելու արդյունքում վարչական ակտի հասցեատիրոջ համար

<sup>1</sup> Բացի այդ, եթե չնայած օգուտների սպառմանը՝ որոշվի, որ ակտը պետք է անվավեր ճանաչվի, քանի որ գերակա է հանրային շահը, ապա օգուտները սպառած լինելու դեպքում ակտը միայն անվավեր ճանաչելու պահից կարող է կորցնել իր ուժը:

<sup>2</sup> Նշված դեպքում, ինչպես նաև այն դեպքում, երբ վարչական ակտի հասցեատիրոջ վստահությանը պաշտպանություն է տրվում նրա հնարավոր վնասները ավելի մեծ լինելու կապակցությամբ, երրորդ անձի իրավունքների պաշտպանության հարցին կանդիդատանք ստորև:

կարող են առաջանալ տարաբնույթ վնասներ՝ սկսած վարչական ակտը ընդունելու համար նրա կատարած ծախսեից մինչև ակտի հիման վրա ստածացը վերադարձնելու համար կատարած ծախսերը: Վարչարարության մեջ պատճառված ընդհանուր վնասից այս պարագայում անձի կրած վնասի տարբերությունն արտահայտվում է նրանում, որ վնասը պատճառվում է ոչ թե ոչ իրավաչափ վարչական ակտ ընդունելու, այլ այն անվավեր ճանաչելու հետևանքով: Ակտի անվավերությունը, սակայն, պայմանավորված չէ շահագրգիռ անձի անօրինական գործողություններով, վերջինս իրավունք ուներ ակնկալելու, որ իր համար բարենպաստ վարչական ակտը միշտ ուժի մեջ կմնա, սակայն քանի որ վարչական մարմնի կատարած խախտումների հետևանքով վնաս է պատճառվում նաև այլ անձանց, ինչի արդյունքում պետք է անվավեր ճանաչվի անձի համար բարենպաստ ակտը, ապա վերջինս էլ պետք է հնարավորություն ունենա ստանալու իրեն պատճառված վնասների հատուցում: Այդ վնասը հատուցելու համար, բնականաբար, չի կարող գործել վարչարարության մեջ պատճառված վնասի հատուցման այն ընդհանուր կանոնը, որի համաձայն՝ նախ պետք է անվավեր ճանաչվի վնաս պատճառած վարչական ակտը: Այս պարագայում վնասն առաջացել է ակտն անվավեր ճանաչելու հետևանքով, ուստի վնասի հատուցում ստանալու նպատակով այն անվավեր ճանաչելու լրացուցիչ պահանջի ներկացումն իմաստագուրկ է: Նման իրավիճակում պատճառված վնասի հատուցում ստանալու հարցը իր կարգավորումն ստացել Օրենքի 110-րդ հոդվածով, որի 1-ին մասը սահմանում է, որ եթե ընդունվել է ոչ իրավաչափ վարչական ակտ, որն առ ոչինչ է կամ անվավեր է ճանաչվել, ապա վարչական մարմինը, շահագրգիռ անձի դիմումի հիման վրա, պարտավոր է նրան հատուցել այն գույքային վնասը, որն այդ անձը կրել է ոչ իրավաչափ վարչական ակտի գոյությունը վստահելու հետևանքով, բացառությամբ սույն օրենքի 63-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի:

Այսինքն՝ այս պարագայում մենք գործ ունենք անձի՝ վարչական ակտի գոյությունն կատարմամբ վստահությունը պատճառված վնասի հետ, որն առաջանում է վարչական ակտն անվավեր ճանաչելու հետևանքով:

Եթե օրենքը կարգավորում է այն հարցը, թե ինչ կարգով պետք է հատուցվի վարչական ակտի հասցեատիրոջ՝ վարչական ակտի գոյության նկատմամբ ունեցած վստահությանը պատճառված վնասը ակտն անվավեր ճանաչելու դեպքում, ապա որևէ կերպ իր լուծումը չի ստացել այն հարցը, թե ինչ պես պետք է հատուցվեն երրորդ անձի կրած վնասները վարչական ակտն ուժի մեջ թողնելու պարագայում: Ասվածը առավել պատկերավոր դարձնելու նպատակով ներկայացնենք հետևյալ օրինակը. վարչական ակտի հիման վրա անձին տրամադրվում է հողամաս, սակայն պարզվում է, որ այդ հողամասը իր որոշակի մասով համադրվում է մեկ այլ անձի սեփականությանը պատկանող հողամասի հետ: Ենթադրենք, դրանից հետո անձը օտարել է այդ հողամասը: Ակնհայտ է, որ ընդունվել է հասցեատիրոջ համար բարենպաստ վարչական ակտ, որը, սակայն, ոչ իրավաչափ է, քանի որ դրանով խախտվում են երրորդ անձի իրավունքները: Եթե նկարագրված իրավիճակում վարչական ակտն անվավեր ճանաչվի, ապա դրա հասցեատերը Օրենքի 110-րդ հոդվածի ուժով իրավունք կունենա պահանջելու վնասների հատուցում: Սակայն եթե վարչական ակտը անվավեր չճանաչվի դրագոյության նկատմամբ ակտի հասցեատիրոջ վստահության պաշտպանության հիմքով (այսինքն՝ այն հիմնավորմամբ, որ ակտն անվավեր ճանաչելու դեպքում դրա հասցեատիրոջ վնասներն ավելի մեծ կլինեն, քան երրորդ անձի վնասները ակտն ուժի մեջ թողնելու պարագայում), ապա երրորդ անձը, ում իրավունքները խախտվել են վարչական ակտի ընդունմամբ, չի ունենա հնարավորությունն իր կրած վնասների հատուցում ստանալու, քանի որ օրենքը նման հնարավորությունն չի նախատեսում: Օրենքի 110-րդ հոդվածը միայն ակտի հասցեատիրոջն է վերաբերում, քանի որ այնտեղ խոսվում է վարչական ակտի գոյության նկատմամբ անձի վստահությանը պատճառված վնասի մասին, իսկ վստահության իրավունք կարող է ունենալ միայն վարչական ակտի հասցեատերը: Երրորդ անձը իրեն պատճառված վնասների հատուցում ստանալու հնարավորություն կունենար միայն այն դեպքում, երբ վիճարկվող վարչական ակտը, այսինքն՝ հողամաս տրամադրելու վերաբերյալ որոշումն անվավեր ճանաչվեր, սակայն այս դեպքում այն անվավեր չի ճանաչվում ակտի հասցեատիրոջ՝ պաշտպանության արժանի վստահության

առկայ ու թյան հիմքով, ինչն էլ վնաս կրած երրորդ անձին զրկում է իր խախտված իրավունքների վերականգնման հնարավորությունից:

Մենք այն կարծիքին ենք, որ, քանի որ, ինչպես պարզվեց, վարչական ակտի նկատմամբ վստահություն պաշտպանություն դեպքում միջտառկա է վարչական մարմնի մեղքն այն առումով, որ վերջինիս կողմից օրենքի խախտմամբ թեկուզև բարենպաստ վարչական ակտ ընդունելու հետևանքով ակտի հասցեատիրոջը կամ երրորդ անձին վնաս է պատճառվելու, ապա վարչական մարմինը, ամեն դեպքում, պետք է կրի պատասխանատվությունն պատճառված վնասի համար՝ անկախ նրանից, թե ում է այդ վնասը պատճառվել: Եթե ակտը դրա հասցեատիրոջ համար բարենպաստ է, սակայն այն ընդունվել է օրենքի խախտմամբ և այդ առումով խախտում է այլ ոչ իրավունքները, ապա վերջիններս ևս պետք է հնարավորություն ունենան պաշտպանելու իրենց իրավունքները: Ներկայիս իրավակարգավորմամբ նման հնարավորություն առկա է, քանի որ վարչարարությունը պատճառված վնասի հատուցման նախապայմանը վնաս պատճառած վարչական ակտն անվավեր ճանաչելն է, իսկ վստահություն պաշտպանություն դեպքում այն անվավեր չի ճանաչվում: Երրորդ անձանց համար ևս իրենց իրավունքների պաշտպանություն համար գործունե մեխանիզմների նախատեսումն օրենսդրությամբ անհրաժեշտություն է, ուստի այդ կապակցությամբ մեր առաջարկը հետևյալն է. երբ վարչական ակտի ընդունմամբ խախտվում են երրորդ անձի իրավունքները, և նրան վնաս է պատճառվում, սակայն այդ ակտի վիճարկման արդյունքում, չնայած այն հանգամանքին, որ հաստատվում է ակտի ոչ իրավաչափ լինելը, սակայն այն անվավեր ճանաչելու մասին պահանջը մերժվում է ակտի հասցեատիրոջ՝ վարչական ակտի գոյություն նկատմամբ ունեցած վստահությունը պաշտպանություն արժանի լինելու հիմքով, ապա երրորդ անձին պետք է իրավունք տրվի պահանջելու իր կրած վնասների հատուցում: Այս կապակցությամբ առաջարկում ենք Օրենքի 110-րդ հոդվածի 1-ին մասում կատարել լրացում առ այն, որ վնասի հատուցման համար դիմելու իրավունք ունի ոչ միայն վարչական ակտի գոյությունը վստահած անձը, այլ և այն անձը, ով վնաս է կրել վարչական ակտի նկատմամբ վստահություն պաշտպանություն հիմքով այն անվավեր չճանաչելու հետևանքով:

Ուստի քննարկվող հոդվածում «ոչ իրավաչափ վարչական ակտի գոյությունը վստահելու հետևանքով» բառակապակցությունից հետո առաջարկում ենք ավելացնել «կամ վարչական ակտի գոյություն նկատմամբ վստահության պաշտպանության հիմքով այն անվավեր ճանաչելը մերժելու հետևանքով» բառակապակցությունը:

## **§5. ՀԵՏԱԴԱՐՁ ՊԱՐԱՆՁԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ՎՆԱԱ ՊԱՏՃԱՌԱՃ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱԿԱՆԱՑՐԱՃ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ԴԵՄ**

Օրենքի 108-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետությունը կամ համայնքը, որը հատուցել է պատճառված վնասը, իրավունք ունի հետադարձ պահանջներ ներկայացնելու վարչական մարմնի այն պաշտոնատար անձին, ում գործողությունները կամ անգործությունը հանգեցրել են ոչ իրավաչափ վարչարարության, և որի հետևանքով վնաս է պատճառվել անձին: Վարչական մարմնի պաշտոնատար անձի դեմ հետադարձ պահանջների ներկայացման կապակցությամբ առաջացող իրավահարաբերություններն օժտված են որոշակի առանձնահատկություններով, որոնք բացահայտելու նպատակով հարկ ենք համարում առավել մանրամասն կանգ առնել հետադարձ պահանջների ներկայացման հետ կապված առանձին հարցերի քննարկման վրա:

Ընդհանրապես, հետադարձ պահանջի ներկայացման կապակցությամբ առաջացող իրավահարաբերությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք ունեն ածանցյալ բնույթ<sup>1</sup>: Այս իրավահարաբերությունների ածանցյալ բնույթը դրսևորվում է նրանում, որ հետադարձ պահանջը ծագում է որևէ այլ պարտավորության կատարումից հետո և դրա կատարման հետևանքով: Այդ պարտավորությունը կարելի է անվանել հիմնական պարտավորություն, սակայն այդ անվանումն ընդամենը պայմանական է և չի կարող հիմք լինել ռեգրեսսային պարտավորությունը լրացուցիչ պարտավորություն ղիտելու համար: Ռեգրեսսային պարտավորությունը, ճիշտ է, ածանցվում է մեկ այլ

<sup>1</sup> Ст'я Смирнов В. Т. К понятию регрессных обязательств, էջ 2:

պարտավորութեան կատարումից, սակայն Լրացուցիչ պարտավորութեան ներքին տարբերում է նրանով, որ եթե վերջիններս կարող են գոյություն ունենալ այնքան ժամանակ, քանի դեռ առկա է հիմնական պարտավորութեանը, և դադարում են հիմնական պարտավորութեան դադարման հետ միաժամանակ, ապա ռեգրեսային պարտավորութեանը սկսում է գոյություն ունենալ «հիմնական պարտավորութեան» դադարումից հետո: Յան Սպիշիակն իրավացիորեն նշում է, որ հետադարձ պահանջի ծագումը պայմանավորված է հիմնական պահանջի առկայությամբ, որի կատարմամբ էլ առաջանում է հետադարձ պահանջը<sup>1</sup>:

Այսպիսով, եթե փորձենք ավելի պարզ բնութագրել ռեգրեսային պարտավորութեանը, ապա կարող ենք նշել հետևյալը. ռեգրեսային պարտավորութեանն առաջանում է մեկ այլ՝ պայմանականորեն հիմնական անվանվող պարտավորությամբ պարտատիրոջ առջև այդ պարտավորությամբ պարտապանի փոխարեն մեկ այլ անձի կողմից պարտավորութեան կատարում տրամադրելով, ինչի արդյունքում պարտավորութեանը կատարած երրորդ անձը հիմնական պարտավորությամբ պարտապանից իր կատարածը ետ պահանջելու իրավունք է ձեռք բերում: Իհարկե, պետք է նկատի ունենալ, որ հիմնական պարտավորությամբ պարտապանի փոխարեն պարտավորութեանը կատարելը որոշակի առումով պայմանականորեն է ասված, քանի որ չի բացառվում, որ այդ երրորդ անձը ևս լինի հիմնական պարտավորությամբ պարտապան: Օրինակ, վնասի համատեղ պատճառման դեպքերում, երբ վնաս պատճառողներից մեկն ամբողջությամբ հատուցում է պատճառված վնասը և մյուս վնաս պատճառողից նրա մեղքի աստիճանին համապատասխան պահանջում վնասի նրա բաժինը, ապա այս պարագայում վնաս պատճառող մյուս անձի նկատմամբ հետադարձ պահանջ ներկայացնող անձը ևս տուժողի առջև հանդես է գալիս որպես պարտապան: Սակայն հետադարձ պահանջի իրավունք ձեռք բերած անձը կարող է նաև հիմնական պարտավորութեանն ընդհանրապես չմասնակցել: Դատելի ունի, օրինակ, իրավաբանական անձի կողմից իր աշխատակցի կողմից պատճառված վնասը հատուցելու և վերջինիս հետադարձ պահանջ

<sup>1</sup> Ст'я Ян Спишиак. Регресс в отношениях социалистических организаций. «Советское государство и право», 1958, № II., էջ 71:

ներկայացնելու դեպքում: Այս համատեքստում հետաքրքիր է այն հարցը, թե արդյոք հիմնական պարտավորությունը պարտատիրոջը մենք կարող ենք համարել նաև ռեգրեսային պարտավորության կողմ: Մ. Մ. Ագարկովը, օրինակ, նշում է, որ ռեգրեսային պարտավորությունների առաջացմանը բնորոշ է պարտավորության երեք կողմերի առկայությունը<sup>1</sup>: Սակայն այդ կարծիքին դժվար է համաձայնել: Ռեգրեսային պարտավորության երեք կողմերի մասին մենք կարող ենք խոսել պայմանականորեն, երբ դեռևս առկա է, կատարմամբ չի դադարել այն հիմնական պարտավորությունը, որի կատարման արդյունքում ծագում է ռեգրեսային պարտավորությունը: Այդ հիմնական պարտավորության գոյության ընթացքում մենք կարող ենք ընդունել միայն ռեգրեսային պարտավորությունների պայմանական, հնարավոր առկայությունը: Այդ տեսանկյունից ստացվում է, որ պայմանականորեն գոյություն ունեցող ռեգրեսային պարտավորությունը մասնակցում է նաև դեռևս չդադարած հիմնական պարտավորությամբ պարտատերը: Սակայն երբ ռեգրեսային պարտավորության պայմանական գոյությունը փոխակերպվում է իրական գոյության, ապա հիմնական պարտավորությամբ պարտատերը այլևս չի կարող մասնակցել ռեգրեսային պարտավորությանը, քանի որ ռեգրեսային պարտավորության ծագման պահին հիմնական պարտավորությունն այլևս գոյություն չի ունենում:

Ըստ էության, ռեգրեսային պարտավորությունների առաջացման և զարգացման վերոհիշյալ առանձնահատկությունները դրսևորվում են նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքի կողմից վարչական մարմնի պաշտոնատար անձի դեմ հետադարձ պահանջներ ներկայացնելիս: Վարչարարությամբ պատճառված վնասի հատուցումից բխող իրավահարաբերությանը՝ որպես վնասը հատուցելուն պարտավոր կողմ, պետությունը կամ համայնքը մասնակցում է հանձինս իր մարմնի, որը տվյալ դեպքում վնաս պատճառած վարչարարությունն իրականացրած մարմինն է: Այս կապակցությամբ նշենք, որ դժվար է հիմնավորված համարել առանձին հեղինակների այն պնդումը, թե պետությունը պարզապես իր վրա է վերցնում պետական մարմինների ոչ իրավաչափ

<sup>1</sup> Տե՛ս Агарков М. М. Обязательство по советскому гражданскому праву, 1940, էջ 160.:

գործողությանը ներդրում ավանդաբանական վնասի համար պատասխանատվությանը և հանդիսանում երաշխավոր այլ սուբյեկտի կողմից հասցված վնասի հատուցման համար<sup>1</sup>: Վարչարարության ավանդաբանական վնասը հատուցելուց հետո պետության և պաշտոնատար անձի միջև արդեն ձևավորվում են մասնավոր իրավահարաբերությանը ներդրում գտնվող պարտավորական հարաբերությանը, որտեղ պետությանը հետադարձ պահանջի իրավունք է ձեռք բերում պաշտոնատար անձի նկատմամբ, սակայն, որպես, ֆիզիկական անձի:

Այսպիսով, իրականացված վարչարարության ոչ իրավաչափ ճանաչումը և պետության կամ համայնքի կողմից այդ վարչարարության ավանդաբանական վնասի հատուցումն այն պայմաններն են, որոնց առկայությանն անհրաժեշտ է պաշտոնատար անձի դեմ հետադարձ պահանջ ներկայացնելու համար: Այս տեսանկյունից որոշակի հետաքրքրության է ներկայացնում վարչարարության ավանդաբանական վնասի հատուցման տրամադրմանը պարտավորեցնելու վերաբերյալ դատական գործին պաշտոնատար անձի՝ որպես երրորդ անձի մասնակցության հարցը: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե դատական ակտն անխուսափելիորեն և ուղղակիորեն տարածվելու է նաև որոշակի անձանց կամ մարմինների վրա, ապա վարչական դատարանը պարտավոր է նրանց ներգրավել դատավարության մեջ որպես երրորդ անձ: Իրավաբանական գրականության մեջ տարբեր կարծիքներ են արտահայտվել գործի քննությանը երրորդ անձանց ներգրավելու չափանիշների վերաբերյալ: Ընդհանուր առմամբ, գործի քննությանը երրորդ անձանց որպես մասնակիցներ ներգրավելու հիմքը տվյալ գործով կայացվելիք դատական ակտի հնարավոր ազդեցությանն է կողմերից մեկի հանդեպ երրորդ անձանց ունեցած իրավունքների և պարտականությանը ներդրում գրա: Ակնհայտ է, որ այստեղ խոսքը վերաբերում է այն իրավունքներին և պարտականությանը ներդրում գրա, որոնք կազմում են դատարանի կողմից քննվող վիճելի նյութական իրավահարաբերությանը ներդրում կապված կամ դրանցից ածանցված դատավարության կողմերից մեկի հետ երրորդ անձի ունեցած նյութաիրավական հարաբերության

<sup>1</sup> Ст'у Халфина Р. О. Общее учение о правоотношении. М., 1974, էջ 166:



բովանդակությունը: Գործի քննությանը մասնակցելու՝ երրորդ անձի ունեցած շահը դրսևորվում է նրանում, որ այդ գործի քննության արդյունքում կայացվելիք դատական ակտով չփոփոխվի կամ չդադարեցվի այն իրավահարաբերությունը, որի մասնակիցն է հանդիսանում երրորդ անձը, կամ այդ փոփոխությունը չհանգեցնի երրորդ անձի իրավունքների և օրինական շահերի խախտման<sup>1</sup>:

Ե. Ա. Նեֆեդյեվը իրավացիորեն նշում է, որ երրորդ անձիք դատավարության մեջ ունեն իրենց ինքնուրույն շահը, և գործի քննությանը նրանց ներգրավելու հիմքը դատարանի կողմից այդ շահը որպես բավարար գնահատվելն է<sup>2</sup>: Յեղիևակը, սակայն, չի մատնանշում, թե դատարանը ինչ չափանիշներից էլնելով պետք է լուծի դատավարության մեջ ներգրավվելու՝ երրորդ անձի շահի բավարար լինելու կամ չլինելու հարցը:

Երրորդ անձին դատավարության մեջ ներգրավելու հարցը Վ. Ն. Արգունովը կապում է հետագայում իր սուբյեկտիվ իրավունքի պաշտպանությունն ապահովելու՝ երրորդ անձի սոցիալական պահանջմունքի առկայության հետ<sup>3</sup>: Շաքարյանն այդպիսի հիմք է համարում կայացվելիք վճռի՝ իր համար հնարավոր անբարենպաստ հետևանքների նախականիումը երրորդ անձի կողմից<sup>4</sup>: Վիկունտը կարծում է, որ երրորդ անձի մասնակցության հիմքում ընկած է իր համար ոչ ցանկալի նախադատելի փաստերի հաստատումը ժխտելու կամ, ընդհակառակը, ցանկալի փաստերի հաստատմանը հասնելու դատավարական շահը<sup>5</sup>:

Վկայակոչված բոլոր մոտեցումները ամփոփելով՝ կարող ենք փաստել, որ գործի քննությանը երրորդ անձին ներգրավելու հիմքերի վերաբերյալ արտահայտված տեսակետները բախվում են այն հարցում, թե որպես երրորդ անձի մասնակցության հիմք՝ պետք է դիտել վերջինիս դատավարական, թե նյութափրավական շահը: Մենք

<sup>1</sup> Տե՛ս Բочарова Н. С. Институты interventio accessoria и quasi interventio в современном процессуальном праве. вестн. моск. ун-та. сер. 11. право. 2013. № 4, էջ 49:

<sup>2</sup> Տե՛ս Нефедьев Е. А. Учебник русского гражданского судопроизводства. Краснодар, 2005. Сер. «Классика российской процессуальной науки». էջ 156:

<sup>3</sup> Տե՛ս Аргунов В. Н. Участие третьих лиц в советском гражданском процессе: Авто- реф. дис. ... канд. юрид. наук. М., 1980:

<sup>4</sup> Տե՛ս Комментарий к Гражданскому процессуальному кодексу Российской Федерации / Под ред. М.С. Шакарян. М., 2003. էջ 105:

<sup>5</sup> Տե՛ս Викут М. А. Участие третьих лиц в советском гражданском процессе: Автореф. дис. ... канд. юрид. наук М., 1953. էջ 16:

համաձայն ենք Ն. Ս. Բոչարովայի հետ, ով իրավացիորեն նշում է, որ դատարանի կողմից քննվող գործն ըստ էության լուծող դատական ակտը հաճախ դառնում է այն իրավաբանական փաստը, որից ծագում, փոփոխվում կամ դադարում են նյութական իրավահարաբերություններ երրորդ անձի և գործով կողմերից որևէ մեկի միջև: Երրորդ անձին ներգրավելու անհրաժեշտության հարցը լուծելիս դատարանը հենց պետք է գնահատման առարկա դարձնի այն հարցը, թե արդյոք իր կողմից կայացվելիք դատական ակտը կարող է դառնալ նման իրավաբանական փաստ, թե ոչ<sup>1</sup>: Որպես գործի քննությանը երրորդ անձի մասնակցության հիմք՝ անհրաժեշտ է դիտել կողմերից մեկի հետ նրա ունեցած նյութաիրավական կապը, և երրորդ անձը ցանկանում է ներգրավվել գործին իր նյութաիրավական շահի պաշտպանության նպատակով: Իհարկե, ասվածից չի բխում, որ պետք է լիովին բացառել գործի քննության մեջ երրորդ անձի ունեցած դատավարական շահը: Սակայն պետք է նկատի ունենալ, որ այդ դատավարական շահը, ըստ էության, սահմանափակվում է այս կամ այն փաստի հաստատման կամ չհաստատման ցանկությամբ, որպիսի հանգամանքը նույնպես, վերջին հաշվով, ուղղված է հենց երրորդ անձի նյութական շահի պաշտպանությանը: Այլ կերպ ասած՝ երրորդ անձը դատավարական միջոցն օգտագործում է իր նյութական շահի պաշտպանության նպատակով, քանի որ դատավարական միջոցի արդյունավետ օգտագործումից է ուղղակիորեն կախված քննվող գործով կողմերից մեկի հետ հետագա հնարավոր վիճելի նյութական իրավահարաբերության լուծումը:

Իրավաբանական գրականության մեջ խոսվում է նաև երրորդ անձին դատավարության մեջ ներգրավելու՝ դատարանի շահի առկայության մասին: Դատարանի շահը դրսևորվում է կայացված ակտի այն հիմքով բեկանման հնարավորության բացառման մեջ, որ դատական ակտը շոշափում է գործի քննությանը մասնակից չդարձված անձանց իրավունքները և պարտականությունները: Այս համատեքստում նաև կցանկանայինք ընդգծել հետևյալը. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածը դատավարության մեջ երրորդ անձին ներգրավելը դատարանի համար

<sup>1</sup> Ст'я Определение Московского городского суда от 14.02.2013 г. № 4г/9-1323/2013.

որպես պարտականություն դիտում է միայն այն դեպքերում, երբ կայացվելիք դատական ակտն անխուսափելիորեն և ուղղակիորեն է ազդելու երրորդ անձի իրավունքների և պարտականությունների վրա, իսկ դատավարական իրավունքի նորմերի խախտման կամ սխալ կիրառման արդյունքում դատական ակտի բեկանման հիմքերը սահմանող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածում դատական ակտի անվերապահ բեկանման հիմք է համարվում դրանով դատավարության մասնակից չդարձված անձանց իրավունքները և պարտականությունները շոշափվելը: Այսինքն՝ 152-րդ հոդվածը չի կատարում վերապահում, որ դատական ակտը պետք է բեկանվի, եթե ուղղակիորեն է շոշափում դատավարության մեջ չներգրավված անձանց իրավունքները և պարտականությունները: Այս տեսանկյունից որոշակի հակասություն է առաջ գալիս օրենսգրքի 19-րդ և 152-րդ հոդվածների միջև: Սակայն պետք է նկատի ունենալ, որ երրորդ անձանց ներգրավման՝ դատարանի շահը հենց նրանում է կայանում, որպեսզի այդ հիմքով վճռի բեկանման հնարավորությունը բացառվի, ուստի բոլոր այն դեպքերում, երբ հնարավոր է երրորդ անձի և քննվող գործով կողմերից մեկի միջև հետագա նյութափրավական հարաբերության առաջացումը, և քննվող գործի արդյունքում այդ նյութափրավական հարաբերության բովանդակությունը կարող է փոփոխվել, ապա դատարանը պետք է անձին ներգրավի դատավարության մեջ երրորդ անձի դատավարական կարգավիճակով:

Այսպիսով, վերոշարադրյալի ամփոփման արդյունքում հարելի է հանգել այն եզրակացության, որ վարչական մարմնի կողմից վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման չտրամադրումը անձի կողմից վիճարկվելու պարագայում վարչարարությունն անմիջականորեն իրականացրած անձը պետք է գործին ներգրավվի որպես երրորդ անձ, էանի որ այդ գործն ըստ էության լուծող դատական ակտը կարող է հիմք լինել հետագայում նրա և գործով կողմերից մեկի՝ տվյալ դեպքում համայնքի կամ պետության միջև նյութափրավական հարաբերության առաջացման համար:

Օրենքի 108-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պաշտոնատար անձի դեմ հետադարձ պահանջ ներկայացնելու հիմք է նրա գործողություններում կամ անգործությունում դիտավորության

կամ անփութություն առկայությունը: Այս համատեքստում կցանկանայինք վկայակոչել թիվ ԵԿԴ/0081/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 01.12.2011թ. որոշումը, որով վերաքննիչ քաղաքացիական դատարանն անդրադարձել է պաշտոնատար անձի գործողություններում անփութության առկայություն հարցին: Այդ գործով վնաս պատճառած վարչարարությունն անմիջականորեն իրականացրած պաշտոնատար անձի դեմ ներկայացված հետադարձ պահանջի դեմ վերջինս առարկում էր այն հիմքով, որ տվյալ դեպքում հետադարձ պահանջի բավարարման հիմքը օրինական ուժի մեջ մտած դատական ակտով պաշտոնատար անձի մեղքի հաստատումն է, իսկ տվյալ գործով առկա չէ նման դատական ակտ: Չնայած դրան՝ պաշտոնատար անձի կողմից ընդունված վարչական ակտն անվավեր ճանաչելու վերաբերյալ դատական ակտով հաստատված էր, որ վարչական ակտն անվավեր է այն հիմքով, որ պաշտոնատար անձը սխալ է մեկնաբանել և կիրառել կիրառման ենթակա իրավական նորմերը: Սակայն վկայակոչված գործով կայացրած որոշմամբ վերաքննիչ քաղաքացիական դատարանն արձանագրել է, որ վարչական ակտի անվավեր ճանաչման պատճառը պաշտոնատար անձի կողմից կոնկրետ իրավահարաբերությունները կարգավորող իրավական նորմերի սխալ մեկնաբանումն է, իսկ քանի որ իրավական նորմերի ճիշտ մեկնաբանումը մտնում է վարչարարություն իրականացնող պաշտոնատար անձի պաշտոնական պարտականությունների մեջ, ուստի այստեղ առկա է պաշտոնական պարտականությունները կատարելիս անփութության դրսևորում (ոչ քրեաիրավական իմաստով)<sup>1</sup>:

---

<sup>1</sup> Տե՛ս ԿԴ/0081/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 01.12.2011թ. որոշումը:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վարչարարությունը ամբ պատճառված վնասին առնչվող հիմնախնդիրների ուսումնասիրությունը և վերլուծությունը մեզ կարող են թույլ տալ կատարելու տեսական բնույթի դատողություններ և ձևակերպելու օրենսդրական փոփոխությունների առաջարկներ:

1. Վարչարարությունը ամբ պատճառված վնասի համար պատասխանատվությունը չի կարող նույնացվել քաղաքացիաիրավական պատասխանատվության հետ, քանի որ այն օժտված է քաղաքացիաիրավական պատասխանատվությանը հատուկ նախական խիչ, դաստիարակչական, փոխհատուցման և պատժիչ գործառնություններով:

2. Պետական մարմինների և դրանց պաշտոնատար անձանց գործողություններով վնասի պատճառման ոչ բոլոր դեպքերում է հարցը ենթակա կարգավորման հանրային-իրավական նորմերով: Պետական մարմինների և դրանց պաշտոնատար անձանց՝ վարչարարությունն չհանդիսացող, այլ տեխնիկական և այլ բնույթի գործողություններով պատճառված վնասի հատուցումն իրականացվում է քաղաքացիական օրենսդրության հիման վրա:

3. Քաղաքացիական իրավունքում գործող «գլխավոր դելիկտի» կանոնը, ըստ որի՝ վնասի պատճառման յուրաքանչյուր դեպք պետք է համարել իրավախախտում և պատճառված վնասի հատուցում պահանջելու իրավունքի ծագման հիմք, վարչարարության մեջ պատճառված վնասի պարագայում չի կարող գործել: Այստեղ այն բխվում է վարչարարության իրավաչափության սկզբունքին, որին էլ պետք է տրվի առաջնայնությունը: Հետևաբար վարչարարության իրականացման ժամանակ վնասների առաջացումն ինքնին չի վկայում դրանք իրավաչափ լինելու մասին: Վարչարարությունը ոչ իրավաչափ ճանաչելու համար անձի սուբյեկտիվ իրավունքների խախտումից բացի, անհրաժեշտ է նաև օբյեկտիվ իրավունքի խախտում: Քաղաքացիական իրավունքում կարևորվում է ոչ թե վնասի հանգեցրած գործողության բնույթը, այլ զուտ միայն վնասի առաջացման փաստը:

4. Եթե քաղաքացիական իրավունքում վնասի հատուցման պարտավորությունն ից ազատվելու համար անհրաժեշտ է ապացուցել վնասի առաջացման մեջ մեղքի բացակայությունը, ապա վարչարարության պարագայում վնասի առաջացման մեջ մեղքի բացակայության ապացուցումն իմաստազուրկ է, քանի որ, ինչպես նշվեց, վարչական մարմինը կարող է և նախապես իմանալ վնասի առաջացման հնարավորության մասին: Հետևաբար այստեղ վարչական մարմնի պաշտոնատար անձի մեղքի հարցը վնասի պատճառման դաշտից տեղափոխվում է արարքի հակաիրավականության դաշտ: Դրանից բխում է, որ վարչարարության մեջ պատճառված վնասի դեպքում վարչական մարմնի պաշտոնատար անձի մեղքի հարցը չունի այն նույն սկզբունքային նշանակությունը, ինչ քաղաքացիական պատասխանատվության կիրառման ժամանակ, քանի որ այն, ըստ էության, կլանվում է արարքի հակաիրավականության մեջ և մշտապես առկա է, եթե վարչարարությունը ճանաչվել է ոչ իրավաչափ:

5. Պետության համար վնասի հատուցման պարտավորության առաջացման համար պահանջվում է ոչ իրավաչափ ճանաչված վարչարարության և առաջացած վնասի միջև օբյեկտիվորեն անհրաժեշտ, ուղղակի պատճառահետևանքային կապի առկայություն:

6. ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված վնաս պատճառելուց բխող պարտավորություններին վերաբերող ընդհանուր դրույթները վարչարարության մեջ պատճառված վնասի հատուցման նկատմամբ կիրառելի են այն ծավալով, որքանով չեն հակասում Օրենքի դրույթներին:

7. Նորմատիվ իրավական ակտի իրավաչափության ստուգման արդյունքում ՀՀ վարչական դատարանի կողմից նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչելու մասին կայացված որոշումն ունի և՛ իրավակիրառ, և՛ իրավաստեղծ բնույթ. այն ուղղված է իրավական նորմերի վերացմանը:

8. Նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչելու մասին ՀՀ վարչական դատարանի դատական ակտի կատարում ասելով պետք է հասկանալ հետագայում անվավեր ճանաչված դրույթի չկիրառումը, ինչպես նաև այդ դրույթի կիրառմամբ ընդունված անհատական ակտերի վերանայումն օրենսգրքով սահմանված կարգով:

9. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածի 6-րդ և 8-րդ մասերի համադրված վերլուծություներից բխում է, որ վիճարկվող նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչելու մասին ՀՀ վարչական դատարանի դատական ակտին հետադարձ ուժ տալը նշանակում է, որ նորմատիվ ակտը ճանաչվում է ուժը կորցրած հենց ուժի մեջ մտնելու պահից: Հենց այդ պահին նախորդող վերջին երկու տարվա ընթացքում ընդունված վարչական և դատական ակտերն էլ ենթակա են վերանայման: Սակայն խնդիրն այն է, որ վարչական դատարանի որոշմանը հետադարձ ուժ տալու դեպքում նորմատիվ ակտի ուժի մեջ մտնելու և ուժը կորցնելու պահերը համընկնում են, քանի որ այն անվավեր է ճանաչվում ուժի մեջ մտնելու պահից: Արդյունքում ներկայիս օրենսդրական կարգավորմամբ ստացվում է, որ պետք է վերանայվեն նորմատիվ ակտի ուժի մեջ մտնելուն նախորդող վերջին երկու տարվա ընթացքում ընդունված վարչական և դատական ակտերը, որպիսի կարգավորումը, բնականաբար, անտրամաբանական է: Այդ կապակցությամբ առաջարկում ենք ՀՀ սահմանադրական դատարանի համանման որոշման օրինակով վերանայման ենթակա դիտել ոչ թե նորմատիվ իրավական ակտի ուժը կորցնելուն, այլ ՀՀ վարչական դատարանի որոշումը:

հրապարակելու նախորդող երկու տարվա ընթացքում ընդունված վարչական և դատական ակտերը:

**10.** Նորմատիվ ակտն անվավեր ճանաչելու մասին ՀՀ վարչական դատարանի որոշումը դրան հետադարձ ուժ չտրվելու դեպքում հիմք է նորմատիվ ակտի իրավաչափության ստուգման հարցով դիմած և այն անձանց վերաբերյալ ընդունված միայն անբողոքարկելի չդարձած վարչական ակտերի անվավեր ճանաչման համար, ովքեր վարչական դատարանի որոման հրապարակման օրվա դրույթով պահպանում են նույն հարցով դատարան դիմելու իրավունքը: Գտնում ենք, որ օրենսդրական կարգավորմամբ բեկանման ենթակա պետք է լինեն նաև այդ նույն ժամանակահատվածում ընդունված և օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերը:

**11.** Այն դեպքում, երբ նորմատիվ ակտի վիճարկվող դրույթը ինքնին ոչ իրավաչափ չէ, սակայն վարչական մարմինների գործունեության մեջ արմատավորված է դրա ոչ իրավաչափ կիրառման արակտիկան, ինչի արդյունքում այդ նորմի կիրառմամբ ընդունված վարչական ակտով պարբերաբար խախտվում են անձանց իրավունքները, ապա ՀՀ վարչական դատարանին պետք է հնարավորություն տրվի բացահայտելու այդ նորմի բովանդակությունը՝ դրա հետագա ճիշտ կիրառումն ապահովելու նպատակով: Նման որոշումը հիմք կլինի ինչպես վիճարկվող դրույթի սխալ կիրառմամբ ընդունված վարչական ակտերի վերանայման, այնպես էլ այդ դրույթի հետագա ճիշտ կիրառման համար:

**12.** Անձիք կարող են վնաս կրել ոչ միայն նորմատիվ ակտի դրույթի կիրառման, այլև իրենց իրավաչափ գործողություններով դրանց իրացման արդյունքում: ՀՀ օրենսդրությունը չի պարունակում դրույթ առ այն, որը հնարավորություն կտար նորմատիվ ակտն անվավեր ճանաչելու մասին որոշմանը հետադարձ ուժ տալ դրա անմիջական իրացման պարագայում: Գործնական կյանքում չեն բացառվում նաև այն իրավիճակները, երբ անձիք վնաս կրեն նորմատիվ ակտի իրացմամբ, ուստի վարչական դատավարության օրենսգիրքը պետք է կառուցակարգեր ամրագրեր նաև այդ վնասի հատուցման հնարավորության ապահովման նպատակով: Անհրաժեշտ համարելով դատավարական օրենքով նշված հարցի կարգավորումը՝



գտնում ենք, որ նման դեպքերում անձի իրավունքների պաշտպանության եղանակը Օրենքի 111-րդ հոդվածի հիման վրա վարչական մարմնի տիրապետմանն անցած գույքը վերադարձնելու պահանջ ներկայացնելն է՝ որպես անհիմն հարստացում:

**13.** ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով որպես գործողության կատարման հայցի առանձին առարկա պետք է սահմանվի նորմատիվ իրավական ակտ ընդունելուն վարչական մարմնին պարտավորեցնելը, իսկ որպես ճանաչման հայցի առանձին առարկա՝ նորմատիվ իրավական ակտ չընդունելու ձևով դրսևորվող անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելը:

**14.** Գտնում ենք, որ պետք է նախատեսվի ոչ միայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 191-րդ հոդվածով սահմանված նորմատիվ ակտերի, այլ նաև դրանց նախագծերի իրավաչափության ստուգման հնարավորություն:

**15.** Աշխատանքի մեջ հիմնավորվել է, որ վարչական ակտի հասցեատիրոջը պետք է հնարավորություն ընձեռվի վիճարկելու նաև բարենպաստ վարչական ակտերը՝ դրանց ընդունման հիմքում դրված հիմնավորումների մասով, եթե այդ հիմնավորումները ցանկալի չեն ակտի հասցեատիրոջ համար և այլ իրավահարաբերությունների շրջանակում կարող են խախտել նրա իրավունքները:

**16.** Առաջարկում ենք Օրենքի 102-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Վնաս պատճառած մարմնի կողմից վնասի հատուցման դիմումը չբավարարվելու, չքննարկվելու կամ այն դեպքում, երբ վնաս կրած անձը համաձայն չէ վնասի հատուցման չափին կամ եղանակին, ապա նա կարող է վնասի հատուցում պահանջել օրենքով սահմանված կարգով»: Դրանից կբխի, որ, քանի որ վնասի հատուցման հարցը լուծվում է վարչական ակտով, ապա վնաս կրած անձը կարող է պարտավորեցման հայցով պահանջել ընդունել բարենպաստ վարչական ակտ՝ վնասի հատուցում տրամադրելու մասին որոշում նաև այն դեպքերում, երբ վարչական մարմինը օրենքով սահմանված կարգով և ժակետում չի քննարկում դիմումը: Նման կարգավորում նախատեսելու անհրաժեշտության հիմնավորումն այն է, որ վարչական մարմնի կողմից սահմանված ժամկետում վնասի հատուցման պահանջի վերաբերյալ վարչական

վարույթ չհարուցելու և չիրականացնելու դեպքում դա պետք է դիտել որպես վնասի հատուցումից հրաժարում, և նման նշված վարույթի հարուցումն ու իրականացումը վնասի հատուցման պարտադիր պայման համարել նարհեստականորեն բարդացնում է անձի խախտված իրավունքների վերականգնումը:

**17.** ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ, թե ինչպես պետք է կատարվի վնասի հատուցում տրամադրելու մասին վարչական ակտը: Ներկայումս սահմանված կարգը վերաբերում է միան բյուջեից գումարի բռնագանձում նախատեսող դատական ակտերի կատարմանը, իսկ վարչարարության մեջ պատճառված վնասի հատուցումն իրականացվում է վարչական ակտով, որի կատարման վերաբերյալ կարգավորում նախատեսված չէ: Առաջարկում ենք վարչական ակտի հիման վրա հատուցում ստանալու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարությանը դիմելու հնարավորություն նախատեսել:

**18.** Առաջարկում ենք Օրենքի 98-րդ հոդվածում կատարել լրացում առայն, որ վարչարարության հետևանքների վերացման նպատակով վարչական մարմինը ձեռնարկում է օրենքով նախատեսված անհրաժեշտ գործողություններ: Նման կարգավորումը վարչարարության առաջացրած հետևանքների վերացման հնարավորությունը կդարձնի իրական, քանի որ, ինչպես նշվեց, վարչարարության հետևանքների վերացումը գործնականում շատ հաճախ կարող է անհնարին լինել վարչական ակտ ընդունելու միջոցով:

**19.** Վնաս պատճառած վարչական մարմնի գոյության դադարման դեպքում վնասի հատուցման պարտավորությունը պետք է անցնի այն վարչական մարմնին, որի իրավասությանը վերապահվել է վնասի հանգեցրած լիազորության իրականացումը: Այդ լիազորության դադարման, ինչպես նաև վնաս պատճառած վարչական մարմնին որոշելու անհնարինության դեպքում վնասի հատուցման դիմումը կարող է ներկայացվել ՀՀ ֆինանսների նախարարության:

**20.** Օրենքը կարգավորում է այն հարցը, թե ինչպես պետք է լուծվի վարչական ակտի գոյությանը վստահելու հետևանքով անձի կրած վնասի հատուցման հարցը, սակայն կարգավորված չէ այն դեպքը, երբ երրորդ անձի իրավունքները խախտող ոչ իրավաչափ վարչական ակտը ուժի մեջ է մնում դրա հասցեատիրոջ

վստահությանը պաշտպանություն տրամադրելու հիմքով: Երրորդ անձը, փաստորեն, վնաս է կրում այն բանի հետևանքով, որ ոչ իրավաչափ վարչական ակտն ուժի մեջ է մնում ակտի հասցեատիրոջ վստահության պաշտպանության հիմքով: Վերջինիս կրած վնասի հատուցման անհրաժեշտությունից ելնելով՝ առաջարկում ենք Օրենքի 110-րդ հոդվածի 1-ին մասում կատարել լրացում առ այն, որ վնասի հատուցման համար դիմելու իրավունք ունի ոչ միայն վարչական ակտի գոյությունը վստահած անձը, այլև այն անձը, ով վնաս է կրել վարչական ակտի նկատմամբ վստահության պաշտպանության հիմքով այն անվավեր չճանաչելու հետևանքով: Ուստի քննարկվող հոդվածում «ոչ իրավաչափ վարչական ակտի գոյությունը վստահելու հետևանքով» բառակապակցությունից հետո առաջարկում ենք ավելացնել «կամ վարչական ակտի գոյության նկատմամբ վստահության պաշտպանության հիմքով այն անվավեր ճանաչելը մերժելու հետևանքով» բառակապակցությունը:

**ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ, ԳՐԱԿԱՆՈՒ ԹՅԱՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ  
ՆՅՈՒ ԹԵՐԻ ՑԱՆԿ**

**ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ**

***Հայ աստանի Հանրապետության իրավական ակտեր.***

1. ՀՀ սահմանադրություն, ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում մ ՅՌդ. 1118:

2. ՀՀ սահմանադրություն, ՀՀՊՏ 2005.12.05/ Հատուկ թողարկում Հոդ. 1426
3. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիա (04.11.1950թ.), ՀՀՊՏ 2002.06.05/17(192) Հոդ. 367:
4. ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք (05.12.2013թ.), ՀՀՊՏ 2013.12.28/73(1013) .1 Հոդ.1186.1:
5. ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք (28.11.2007թ., ուժը կորցրել է), ՀՀՊՏ 2007 .12.19/64(588) Հոդ.1300:
6. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, ՀՀՊՏ 1998.08.10/17(50):
7. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, ՀՀՊՏ 2004.03.31/18(317):
8. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենք, ՀՀՊՏ 1998.06.15/12(45):
9. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենք, ՀՀՊՏ 2006.06.21/32(487) Հոդ.64:
- 10.«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, ՀՀՊՏ 2002.05.21/15(190) Հոդ.344:
- 11.«Օրգանական գյուղատնտեսության մասին» ՀՀ օրենք, ՀՀՊՏ 2008.05.14/28(618) Հոդ.451:
12. «Բյուջե տային համակարգի մասին» ՀՀ օրենք, ՀՀՊՏ 1997.08.11/18:
- 13.«Դատական ակտերի հիման վրա ՀՀ պետական բյուջեից բռնագանձման ենթակա գումարների դիմաց փոխանցելի մուրհակների տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 07.08.2000թ. N 436 որոշում, ՀՀՊՏ 2000.08.29/20(118):
- 14.«ՀՀ-ում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման և իրացնելու կարգն ու և իրացնելու հաստատելու և ՀՀ կառավարության 2007 թվականի մարտի 22-ի N655-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 11.12.2014թ. N 1471-Ն որոշում, ՀՀՊՏ 2014.12.27/74(1087).1 Հոդ.1248.7:

***Օտարերկրյ ահրավական ակտեր.***

1. Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգիրք, [https://www.consultant.ru/document/cons\\_doc\\_LAW\\_5142/](https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_5142/):

2. Ռուսաստանի դաշնության քաղաքացիական դատավարության օրենսգիրք, [https://www.consultant.ru/document/cons\\_doc\\_LAW\\_39570/](https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_39570/):

3. ՌԴ սահմանադրական դատարանի 27.01.2004թ. թիվ 1-П որոշում, [http://www.consultant.ru/document/cons\\_doc\\_LAW\\_46311/ca1820d99f2c758e82d835816b28c0a34417dc33/](http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_46311/ca1820d99f2c758e82d835816b28c0a34417dc33/):

4. ՌԴ սահմանադրական դատարանի 2014 թվականի մարտի 5-ի թիվ 589 որոշում, <http://www.garant.ru/products/ipo/prime/doc/70537350/>:

5. «Կատարողական վարույթի մասին» ՌԴ օրենք, [https://www.consultant.ru/document/cons\\_doc\\_LAW\\_71450/](https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_71450/):

6. Լատվիայի վարչական դատավարության օրենք, [http://www.pravo.lv/likumi/06\\_apz.html](http://www.pravo.lv/likumi/06_apz.html):

7. «Վարչական վարույթի մասին» Էստոնիայի օրենք, <http://zakon24.ee/zakon-ob-administrativnom-proizvodstve/>:

## **ՏԵՍԱԿԱՆ ԱՂՔՅՈՒՐՆԵՐ**

1. **Այվազյան Ն., Եղյան Ռ.** ՀՀ գործադիր իշխանության ունը փոփոխված Սահմանադրության համատեքստում: Իրավագիտության հարցեր (Вопросы правоведения), N4 հոկտեմբեր-դեկտեմբեր, Երևան, 2006, Էջեր 23-29:

2. **Բարսեղյան Տ. Կ.** Գույքային պատասխանատվության ինստիտուտի Էվոլյուցիան և արդիական հիմնահարցերը: Երևանի պետ. համալսարան: Երևանի համալս. հրատ., Երևան, 2006, 304 էջ:

3. **Դանիելյան Գ.** Վարչական վարույթ և դատավարություն: Ուսումնական ձեռնարկ /Եր.: Տիգրան Մեծ, 2011, 384 էջ:

4. ՀՀ վարչական իրավունք: Ուսումնական ձեռնարկ /ընդհանուր խմբագրությամբ՝ **Գ. Դանիելյանի.** – Երևանի պետ. համալս. – ԵՊՀ հրատ., 2012, 704 էջ:

5. **Եղյան Ռ.** Վարչական իրավունքը ՀՀ իրավունքի համակարգում /Դասախոսությունների կուրս, Հեղինակային հրատարակություն, Երևան, 2006, 160 էջ:

6. **Հովհաննիսյան Գ.** Վստահության պաշտպանության սահմանադրական սկզբունքի դրսևորումը ՀՀ վարչական իրավունքում, 22 էջ:

**7. Մանասյան Ա. Ա.** Սահմանադրական դատարանի որոշումների տեղը ՀՀ իրավական համակարգում և դրանց դերը Սահմանադրության կայունության ապահովման գործում /Ա. Մանասյան, Եր.-ԵՊՀ. հրատ., 2013, 248 էջ :

**8. Օհանյան Վ.** Իրավունքի աղբյուրների հիմնախնդիրը ՀՀ-ում (տեսագործական վերլուծություն), Ատենախոսություն, Երևան, 2009, 170 էջ :

**9.** Հարցեր և պատասխաններ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի վերաբերյալ (Երկրորդ լրամշակված հրատարակություն), Եր. 2007, 278 էջ :

**10. Авакьян С. А.** Заключение специалиста С. А. Авакьяна, цит. по Ливеровский А. А., Ескина Л. Б., Авакьян С. А., Стовповая Н. В., Стовповой А. Г. Комментарии к одному из решений Уставного суда. О проблеме правопреемства органов государственной власти субъекта Российской Федерации// Журнал конституционного правосудия. 2009. N 3:

**11. Агарков М. М.** Обязательство по советскому гражданскому праву, 1940, 192 էջ :

**12. Александрова Л. Н.** Толкование юридических норм и его влияние на судебную практику, изд-во Российский государственный педагогический университет имени А. И. Герцена, էջ Եր 20-25:

**13. Алексеев С. С.** Механизм правового регулирования в социалистическом государстве. - М.: Юрид. лит., 1966, 187 էջ :

**14.** Комментарий к Гражданскому процессуальному кодексу Российской Федерации [Текст] /Алехина С. А., Боннер А. Т., Блажеев В. В. [и др.] ; отв. ред. М. С. Шакарян. - М. : ТК Велби, Изд-во Проспект, 2003. – 688 էջ :

**15. Алешкин А. А.** Применение исковой давности как способ сокращения срока рассмотрения дела, Вестник Челябинского государственного университета. 2011. № 35(250). Право. Вып. 30, էջ Եր 65-67:

**16. Анишина В. И.** Правовая природа актов судебного правотворчества//Журнал российского права. 2006. N 10, էջ Եր 124-133:

**17. Андреев Ю. Н.** Ответственность государства за причинение вреда: цивилистические аспекты, "Юридический центр Пресс, 2013, 194 էջ :

**18. Антимонов Б. С.** Основания договорной ответственности социалистических организаций. М., 1962, 176 էջ :

**19. Аргунов В. Н.** Участие третьих лиц в советском гражданском процессе: Авто- реф. дис. ... канд. юрид. наук. М., 1980, 18 է շ :

**20. Бандорина Н. С.** Органы исполнительной власти как субъекты гражданских процессуальных правоотношений. автореф. дисс. ... канд. юрид. наук, Саратов, 2010, 212 է շ :

**21. Баранов В. М., Лазарев В. В.** Конкретизация права: понятие и пределы//Конкретизация законодательства как технико-юридический прием нормотворческой, интерпретационной, правоприменительной практики. Н. Новгород, 2008, է շ էր 16-33:

**22. Безлепкин Б. Т.** Возмещение ущерба, причиненного гражданину незаконными действиями органов дознания, предварительного следствия, прокуратуры и суда. М., 1985, 44 է շ :

**23. Бек О. А.** Производство по делам об оспаривании нормативных правовых актов: автореф. дис. канд. юрид. наук. М., 2007, 27 է շ :

**24. Бекбаев Е. З.** Проблема начала в теоретическом познании правовой системы (попытка обоснования). Астана. 2009, 51 է շ :

**25. Белов В. А.** Гражданское право. Общая часть. Т. 1. Введение в гражданское право: учебник /В. А. Белов. – М.: Издательство Юрайт, 2011, 1093 է շ :

**26. Бочарова Н. С.** Институты *interventio accessoria* и *quasi interventio* в современном процессуальном праве. вестн. моск. ун-та. сер. 11. право. 2013. № 4, է շ էր 48-71:

**27. Брагинский М. И., Витрянский В. В.** Договорное право: общие положения. М., 1997, 682 է շ :

**28. Бурков А. Л.** Акты судебного нормоконтроля как источники административного права, дисс. канд. юрид. наук, Тюмень-2005, 200 է շ :

**29. Викут М. А.** Участие третьих лиц в советском гражданском процессе: Автореф. дис. ... канд. юрид. наук М., 1953, 21 է շ :

**30. Гаврилова Ю. А.** Конкретизация правовых норм и толкование права по объему, изд-во ВолГУ, 2007, է շ էր 40-48:

**31. Денисевич Е. М.** Односторонние сделки в гражданском праве Российской Федерации: понятие, виды и значение: дисс. ... канд. юрид. наук, Екатеринбург, 2004, 173 է շ :

**32. Ершов В. В.** Административное право: теоретические, правотворческие и правоприменительные проблемы//Теоретические и практические проблемы

административного правосудия. Материалы науч.-практ. конференции. М., 2006, *Стр* 62-70:

**33. Ескина Л. Б.** Два правовых аспекта одной коллизии ситуации (или комментарий к судебному решению). Журнал конституционного правосудия. 2009:

**34.** Научно-практический комментарий к Гражданскому процессуальному кодексу Российской Федерации/под ред. **Жуйкова В.М., Пучинского В.К., Треушникова М. К.**, 1088 *Стр* :

**35. Ильин И. А.** Общее учение о праве и государстве. О сущности правосознания. Том 4. Москва, 1994, 413 *Стр* :

**36. Иоффе О. С.** Обязательственное право. М., 1975, 880 *Стр* :

**37. Исаева Е. В.** Процессуальные сроки в гражданском и арбитражном процессе. М., 2005, 224 *Стр* :

**38. Исаенкова О. В., Гришина Я. С.** Судебные акты по делам, возникающих из публичных правоотношений: законная сила и исполнимость//Исполнительное право. 2006. N 1, *Стр* 19-24:

**39. Камалов О. А.** Реорганизация и реструктуризация органов государственной власти // Законы России: опыт, анализ, практика. 2006. N 8. цит. по СПС "КонсультантПлюс".

**40. Клепикова М. А.** Проблемы правового положения органов принудительного исполнения в исполнительном производстве: автореф. дис. ... канд.юрид. наук. Екатеринбург, 2001, 197 *Стр* :

**41. Кожевников С. Н.** Реализация права, юридическое толкование, законность. - Н.Новгород: Издательство «Общество «Интелсервис», 2002, 100 *Стр* :

**42. Култышев С. Б.** Распоряжение требованиями посредством уступки: автореф. дис. ... канд. юрид. наук. Томск. 2006, 25 *Стр* :

**43. Кун А. А.** Противоправность и вина в обязательствах по возмещению вреда, причиненного гражданину актами власти // Правоведение. - Л.: Изд-во Ленингр. ун-та, 1984, № 3. – *Стр* 91-95:

**44. Курбатов А.** Субсидиарная ответственность руководителей при несостоятельности (банкротстве) возглавляемых ими кредитных организаций // Хозяйст- во и право. – 2007. – № 7, *Стр* 3-17:

**45. Лупарев Е. Б.** Добробаба М.Б., Мокина Т.В. Общая теория публичных правоотношений: монография, 2011, 280 *Стр* :

**46. Маковский А. Л.** Гражданская ответственность государства за акты власти //Гражданский кодекс России. Проблемы. Теория. Практика: Сборник памяти С. А.



Хохлова /Отв. ред. А. Л. Маковский. Исследовательский центр частного права.-М.: Международный центр финансового-экономического развития, 1998, 5 с. : 67-113:

**47. Мальцева Л. В.** Применение права в современном обществе, 5 с. :

**48. Марченко М. Н.** Источники права. М., 2008, 760 с. :

**49. Матвеев Г. К.** Основания гражданско-правовой ответственности. М., 1970, 312 с. :

**50. Михайленко О. В.** Имущественная ответственность за вред, причиненный осуществлением публичной власти: теоретические аспекты и проблемы ее реализации на практике, Волтерс Клувер, 2007, 352 с. :

**51. Мицкевич А.В.** Акты высших органов советского государства: юридическая природа нормативных актов высших органов государственной власти и управления СССР / А.В. Мицкевич. – М.: Юридическая литература, 1967, 172 с. :

**52. Невзгодина Е. Л.** Вред как условие возникновения деликтных обязательств в гражданском праве. Вестник Омского университета. Серия «Право». 2009. № 3 (20), с. 28-32:

**53. Невинский В. В.** Конституционный Суд РФ и правотворчество в России / В.В. Невинский // Вестник Конституционного Суда РФ. – 1997. – № 3, с. 69-72:

**54. Невский И. А.** Исполнимость судебных постановлений как внутреннее проявление результата судебной деятельности//Исполнительное право. 2006. N 3, с. 19-27:

**55. Нерсисянц В. С.** О правоприменительной природе судебных актов//Судебная практика как источник права. М., 1997, с. 34-41:

**56. Нефедьев Е. А.** Учебник русского гражданского судопроизводства. Краснодар, 2005. Сер. «Классика российской процессуальной науки», 470 с. :

**57. Никитин С. В.** Судебный контроль за нормативными правовыми актами в гражданском и арбитражном процессе, 186 с. :

**58. Панов И. А., Михайлова К. А.** Юридическое значение судебного акта по делу об оспаривании нормативного правового акта: российское законодательство и зарубежный опыт, 23 с. :

**59. Подопригора А. А.** Реабилитация в уголовном процессе России. Дисс. канд. юрид. наук. Ростов-на-Дону. 2004, 179 с. :

**60. Попова Ю. А.** Теоретические проблемы судопроизводства по делам, возникающим из публично-правовых отношений: автореф. дис. . д-ра юрид. наук. М., 2001, 46 с. :

**61. Потапенко С. В.** Разграничение нормативных и ненормативных правовых актов при рассмотрении дел, возникающих из публичных правоотношений//Российская юстиция. 2003. N 6, 12 с. 30-31:

**62. Приходько И. А.** Доступность правосудия в суде первой инстанции: основные проблемы. СПб., 2005, 672 с.:

**63.** Гражданское право. Учебник. Под. Ред. **Сергеева А. П., Толстого Ю. К.** Часть 1. М., 1996, 600 с.:

**64. Сергун А. К.** Проблемы исполнительного производства в советском гражданском процессе: автореф. дис. ... д-ра юрид. наук. М., 1980, 33 с.:

**65. Серков П. П.** О нетипичности формы некоторых нормативных правовых актов//Российское правосудие. 2008. N 2, 12 с. 13-19:

**66. Скобычкина Н. Р.** Возмещение вреда, причиненного федеральными государственными органами, а также их должностными лицами. Дисс. ... к.ю.н., Екатеринбург-2007, 246 с.:

**67. Скворцов А. В.** К вопросу о применении части 4 статьи 198 АПК РФ

**68.** Гражданское право. Том 1, 3-е издание, отв. ред. **Суханов Е. А.** Wolters Kluwer, М., 2010, 736 с.:

**69. Смирнов В. Т.** К понятию регрессных обязательств, //Правоведение. - 1960. - № 1, 12 с. 62-72:

**70. Спишиак Ян** Регресс в отношениях социалистических организаций. «Советское государство и право», 1958, № П

**71. Тарановский Ф. В.** Энциклопедия права. 3-е изд.- СПб.: издательство «Лань», 2001, 553 с.:

**72. Федорович Б. А.** О последствиях несоблюдения срока обращения в арбитражный суд с заявлением о признании ненормативного правового акта недействительным.

**73. Халфина Р. О.** Общее учение о правоотношении. М., 1974, 340 с.:

**74. Черновол Е. П.** Возмещение вреда, причиненного незаконными действиями государственных и общественных организаций, а также должностных лиц. Дис. ... канд. Юрид. Наук.-М., 1983, 186 с.:

**75.** Комментарий к Гражданскому процессуальному кодексу Российской Федерации / Под ред. **Шакарян М.С.** М., 2003, 688 с.:

**76. Шершеневич Г. Ф.** Учебник русского гражданского права. Казан, 1896, 2-е издание, 556 с.:

**77. Шершеневич Г. Ф.** Общая теория права – Рига. 1924, 805 с.:

**78. Элькинд П. С.** Толкование и применение норм уголовно-процессуального права. – М., 1967, 192 էջ :

**79. Ярков В. В.** Право апелляционного и кассационного обжалования лицами, не участвовавшими в деле, в гражданском и арбитражном процессе: сравнительный анализ//Арбитражные суды: теория и практика правоприменения. Сб. ст. к 75-летию Арбитражного суда Свердловской области. Екатеринбург, 2006, էջ 28-42:

**80. Cassese S.** New paths for administrative law: A manifesto. Int J Constitutional Law (2012) 10 (3): 603-613 doi:10.1093/icon/mos038.

**81. Pünder H.** German administrative procedure in a comparative perspective: Observations on the path to a transnational ius commune proceduralis in administrative law. Int J Constitutional Law (2013) 11 (4): 940-961 doi:10.1093/icon/mot045.

**82. Szwedo P.** Global administrative law through the Polish lens: From practice to theory. Int J Constitutional Law (2015) 13 (1): 156-179 doi:10.1093/icon/mov006.

**83. Zumbansen P.** Administrative law's global dream: Navigating regulatory spaces between "national" and "international". Int J Constitutional Law (2013) 11 (2): 506-522 doi:10.1093/icon/mot016.

## **ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՆՅՈՒԹԵՐ**

### ***Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներ.***

1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 27.02.2007թ. վճիռ՝ Մոլդովայի ուղղափառ եկեղեցին և այլոք ընդդեմ Մոլդովայի գործով (<http://hudoc.echr.coe.int/>):

2. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 29.06.2004թ. վճիռ՝ Պիվենս ընդդեմ Ուկրաինայի գործով (<http://hudoc.echr.coe.int/>):

3. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 06.12.2007թ. վճիռ՝ Լյուկս և Լյուկս ընդդեմ Ռուսաստանի գործով (<http://hudoc.echr.coe.int/>):

4. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 05.07.2007թ. վճիռ՝ Յիրշհորն ընդդեմ Ռումինիայի գործով (<http://hudoc.echr.coe.int/>):

5. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 25.06.2008թ. վճիռ՝ Անդրեևան ընդդեմ Լատվիայի գործով (<http://hudoc.echr.coe.int/>):

6. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 07.05.2002թ. վճիռ՝ Բուրդովս ընդդեմ Ռուսաստանի գործով (<http://hudoc.echr.coe.int/>):

7. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 23.01.2014թ. վճիռ՝ EAST/WEST ALLIANCE LIMITED ընդդեմ Ուկրաինայի գործով (<http://hudoc.echr.coe.int/>):

**ՀՀ սահմանադրական դատարանի, վճռաբեկ դատարանի և վերաքննիչ դատարանի որոշումներ.**

1. ՀՀ սահմանադրական դատարանի 22.02.2011թ. թիվ ՍԴՈ-942 որոշում,

ՀՀՊՏ 2011.03.02/12(815) Հոդ.177:

2. ՀՀ սահմանադրական դատարանի 05.04.2011թ. թիվ ՍԴՈ-947 որոշում,

ՀՀՊՏ 2011.04.13/20(823) Հոդ.391:

3. ՀՀ վճռաբեկ դատարանի 29.10.2010թ. որոշում՝ թիվ ԵԲԴ/0736/02/08 վարչական գործով (<http://www.arlis.am/>):

4. ՀՀ վճռաբեկ դատարանի 28.12.2015թ. որոշում՝ թիվ ԼԴ/0435/02/13 քաղաքացիական գործով (<http://www.arlis.am/>):

5. ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2010թ. որոշում՝ թիվ ՎԴ/0277/05/09 վարչական գործով (<http://www.arlis.am/>):

6. ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2010թ. որոշում՝ թիվ ՎԴ/3280/05/09 վարչական գործով (<http://www.arlis.am/>):

7. ՀՀ վճռաբեկ դատարանի 25.06.2010թ. որոշում՝ թիվ ՎԴ2/0278/05/09 վարչական գործով (<http://www.arlis.am/>):

8. ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015թ. որոշում՝ թիվ ՎԴ/2085/05/12 վարչական գործով (<http://www.arlis.am/>):

9. ՀՀ վճռաբեկ դատարանի 02.04.2010թ. որոշում՝ թիվ ՎԴ2/0216/05/09 վարչական գործով (<http://www.arlis.am/>):

10. ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013թ. որոշում՝ թիվ ՎԴ/2731/05/11 վարչական գործով (<http://www.arlis.am/>):

11. ՀՀ վճռաբեկ դատարանի 08.06.2012թ. որոշում՝ թիվ ԵԿԴ/0102/01/11 քրեական գործով (<http://www.arlis.am/>):

12. ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015թ. որոշում՝ թիվ ԵԿԴ/2128/02/13 քաղաքացիական գործով (<http://www.arlis.am/>):

13. ՀՀ վճռաբեկ դատարանի 25.12.2009թ. որոշում՝ թիվ ՎԴ/5017/05/08 վարչական գործով (<http://www.arlis.am/>):

14. ՀՀ վճռաբեկ դատարանի 19.03.2014թ. վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշում՝ թիվ ՎԴ/3981/05/13 վարչական գործով (<http://datalex.am/>):

15. ՀՀ վճռաբեկ դատարանի 23.12.2015թ. վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշում՝ թիվ ՎԴ/1761/05/14 վարչական գործով (<http://datalex.am/>):

16. ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 07.10.2014թ. որոշում՝ թիվ ՎԴ/9652/05/13 վարչական գործով (<http://datalex.am/>):

17. ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 30.10.2014թ. որոշում՝ թիվ ՎԴ/4657/05/12 վարչական գործով (<http://datalex.am/>):

18. ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 17.03.2015թ. որոշում՝ թիվ ՎԴ/9829/05/13 վարչական գործով (<http://datalex.am/>):

19. ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 27.10.2011թ. որոշում՝ թիվ ՎԴ/3961/05/10 վարչական գործով (<http://datalex.am/>):

20. ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 11.02.2015թ. որոշում՝ թիվ ՎԴ/3186/05/14 վարչական գործով (<http://datalex.am/>):

21. ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 30.09.2014թ. որոշում՝ թիվ ՎԴ/0220/05/12 վարչական գործով (<http://datalex.am/>):

22. ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 01.12.2011թ. որոշում՝ թիվ ԵԿԴ/0081/02/11 քաղաքացիական գործով (<http://datalex.am/>):

23. ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.09.2014թ. որոշում՝ թիվ ԵԿԴ/1108/02/13 քաղաքացիական գործով (<http://datalex.am/>):

24. ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.07.2011թ. որոշում՝ թիվ ԵԿԴ/1762/02/09 քաղաքացիական գործով (<http://datalex.am/>):

### ***Այլ վատարդթեր.***

1. ՀՀ վարչական դատարանի 14.03.2014թ. վճիռ՝ թիվ ՎԴ/0770/05/11 վարչական գործով (<http://datalex.am/>):

2. ՀՀ վարչական դատարանի 03.11.2014թ. վճիռ՝ թիվ ՎԴ/2040/05/12 վարչական գործով (<http://datalex.am/>):

3. Տավուշի մարզի առաջին ասյանի ընդհանուր իրավասույթյան դատարանի 27.02.2014թ. վճիռ՝ թիվ ՏԴ1/0093/02/13 քաղաքացիական գործով (<http://datalex.am/>):

4. ՀՀ վարչական դատարանի 05.10.2015թ. վճիռ՝ թիվ ՎԴ/2143/05/14 վարչական գործով (<http://datalex.am/>):

5. ՀՀ վարչական դատարանի 27.03.2014թ. վճիռ՝ թիվ ՎԴ/0220/05/12 վարչական գործով (<http://datalex.am/>):

6. ՀՀ վարչական դատարանի 25.12.2015թ. վճիռ՝ թիվ ՎԴ/0872/05/15 վարչական գործով (<http://datalex.am/>):

7. ՀՀ վարչական դատարանի 25.12.2015թ. վարչական գործի վարույթը կարճեւում մասին որոշում՝ թիվ ՎԴ/0872/05/15 վարչական գործով (<http://datalex.am/>):

8. ՀՀ վարչական դատարանի 30.07.2013թ. վճիռ՝ թիվ ՎԴ/1189/05/12 վարչական գործով (<http://datalex.am/>):

9. ՀՀ վարչական դատարանի 11.06.2014թ. հայցադիմումը մասով վերադարձնելու, մասով դրա ընդունումը մերժելու մասին որոշում՝ թիվ ՎԴ/4657/05/14 վարչական գործով (<http://datalex.am/>):

10. Постановление президиума Челябинского областного суда от 18 мая 2005 года (надзорное производство 4г05-713) из архива Советского районного суда г. Челябинска (<http://www.sudpraktika.com/sudlist5.htm>):

11. Ռուսաստանի Դաշնության Բարձրագույն արբիտրաժային դատարանի նախագահության 31.05.2011թ. թիվ 145 տեղեկատվական նամակ ([http://www.arbitr.ru/as/pract/vas\\_info\\_letter/37489.html](http://www.arbitr.ru/as/pract/vas_info_letter/37489.html)):

12. Ուկրաինայի բարձրագույն վարչական դատարանի նախագահության 2008 թվականի մարտի 6-ի թիվ 2 որոշումը վարչական գործեր քննելիս վարչական դատարանների կողմից Ուկրաինայի վարչական դատավարության օրենսգրքի առանձին դրույթների կիրառման պրակտիկայի վերաբերյալ (<http://hr-lawyers.org/index.php?do=print&id=1267097663>):

